# ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿ
## ՆՈՒԹԾ ՍՐԲՈՅՆ ՍՐԲՈՑՆ
## ՅՈԳ ՈՍՄԱՆԻ:

Շարադրեցեալ ի Խաչատրոյ Էր
զրումեցւոյ Մխիթարեան վարդապետէ
ըստ մեկնութեն գերազանցից վարդա
պետաց աստուածաբանից եկեղեցւոյ:

Յորոց անուանքն են այսոքիկ. սբն Օգոս
տինոս՝ սբն Գրիգոր Նիւսացին՝ սբն Գրի
գոր Հռոմայ Հայրապետն. սբն Ամբրոսիոս՝
սբն Բեռնարտոս՝ Յերոփիմոս՝ սբն Թովմա
Աքուինացին՝ սբն Բարսեղ՝ սբն Հերոնիմոս
Բեդէ Թայ քահանայն՝ Ռուպերտոս՝ սբն Ան
սելմոս, Կասիոդորոս՝ սբն Եպիփան, սբն
Կիւրեղ, Թէոդորոս՝ սբն Կիպրիանոս՝ սբն
Ֆրանչիսկոս՝ սբ Բոնավենտուրա: Այլ և մա
նաւանդ տէրինոս 'ի փառս մեծագոյնս Այ:

Ի Հայրապետութեան Տեառն
Նահապետի Կաթուղիկոսի
ամենից Հայոց:

Ի Կոստանդնուպօլիս: ի Ղալաթի:

---

և թուականութեան Հայոց: ՌՃԽԹ:
յունուարի ամսոյն Ը:
և ի թուին փրկչին. 1700: յունուարի ԺԸ

Բան առ Ած՝ առ գերամոյքն նաառ հէս.

Տէր իմ. և Ած իմ, որ ես վախճան ամենեցուն, աղբիւր լուսոյ՝ և պարգևիչ ամ յաջողութեանց, ըզ գուզնաքեայ զգործս իմ զայս ուղղեմ 'ի փառս քո. 'ի վերյարգութիւն Ածածնի, և 'ի պատիւ սրբոց քոց՝ և հայցեմ 'ի քէն զլոյս մտաց. և զյաջողումն գործոյս՝ զի կարիցեմ նա և այսու փառաւորել զամենամբ անուն քո։ Նաև զքեզ տիրամայր՝ որ ես բարեխօս վասն ամենեցուն, աղերսանօք աղաչեմ, զի արժանաւորեսցես հաճիցիս լինել ձեռնտու ինձ անարժանիս։ Նաև 'ի ձէնջ սրբք Ածյ մաղթանօք խնդրեմ, զի ինձ լինիցիք միջնորդութեամբ ձերով 'ի յայսմիկ գործառութեան հզօրք աջակցանք։

Բան առ ընթերցօղ.

Մինն 'ի սրբ գրոց է գիրն երգոյ երգոց սողոմոնի։ Գիրս այս է լի՝ ամենամեծ խորհրդովք. առատէ երկնային իմաստութեամբ. չահաւէտ բազմապատկաբար. բացայայտէ զգաղտնիս օրինակօք՝ և բոլոր բոցէ զսէր։ Վասն որոյ զհամառօտ մեկնութիւն սորին ընձեռեմ, և կարկառեմ ածասիրութեան ձերում. և աղերսանօք հայցեմ. զի սիրով ընդունիցիք. և պտղաբերութեամբ վայելիցէք.

Երգ

Երգ Երգոց սողոմոնի · որ է օրհնութիւն օրհնութեանց · որ ներբողեցելքն տան աշխարհի ·

Գիրս այս կոչի երգ երգոց՝ այնու զի է պատուականագունեղ · ազնուագունեղ՝ և քաղցրագունեղ · քան զի է հոգևոր խօսակցութիւն՝ որ լինի 'ի մէջ քրի · որ է հոգևոր փեսայ՝ և եկեղեցւոյ նորա որ է հոգևոր հարս · և իւրաքանչիւր բարեպաշտ հոգւոյ՝ որ է անդամ եկեղեցւոյ ։ Արդ՝ քս աստ կրկնակի զինքն ունի՝ զի զերկեակ պաշտօն կատարէ այսինքն 'ի վարդապետի՝ և փեսայի · քան զի երբեմն հանգոյն իմաստնագունեղ վարդապետի աւանդէ աշակերտուհւոյ իւրում զընտիր՝ և զպատուական վարդապետութիւն հաւատոյ՝ բարի վարուց՝ և սրբութեան · և երբեմն հանգոյն սիրողագունեղ փեսայի զսիրելագունեղ հարս իւր գովաբանէ հիանալի գովասանօք զարդարէ, և գեղեցկացուցանէ բնագանցական շնորհօք, և հարստացուցանէ, և փարթամացուցանէ առատ պարգևօք ։ Իսկ եկեղեցի եռակի զինքն ունի · զի զերրեակ պաշտօն կատարէ · այսինքն՝ աշակերտուհւոյ՝ հարսի՝ և վարդապետուհւոյ · կամ ընկերուհւոյ · քան զի երբեմն հանգոյն հպատակագունեղ աշակերտի լսէ քաղցրագունեղ վարդապետին իւրում

քրի

քրիստոսի. երբեմն հանգոյն սիրողագու-
նեղ հարսի վառի՛ և բորբոքի սիրով
պատուականագունեղ փեսային իւրոյ
քրիստոսի. և երբեմն հանգոյն վարդա-
պետի. կամ ընկերի զայլ հոգիսն իմաստ-
նացուցանէ. զորս սովորէ կոչել երիտա-
սարդասունհիս՝ որք հայերէն օրիորդք ա-
սին. կոչէ և ս զնոսա դստերս ե՟մի. Ձե-
ռնարկութիւն խօսակցութեան. որպէս
այնպիսի անձանց վայելէ. է՛ վսեմ, բերկ-
րական՝ օգտակար. և զանազան. քան զի
զոր ինչ աւանդեցին մեզ կամ մարգարէք.
կամ աւետարանիչք. կամ առաքեալք ըղ
խորհրդոց հաւատոյ. զուղղութենէ վա-
րուց. և զկատարելութենէ կենաց՝ այսու
երգով բացայայտի. կամ ազդ առնի.
յորմէ երևի՝ թէ սողոմոն յօրինեաց զեր-
գըս զայս վասն կատարելոց. կերպ խօսե-
լոյ այսր երգոյ է սիրողական՝։ Նմանու-
թիւնք, որք 'ի սմա գտանին. առեցեալք
են 'ի հարսանեաց վասն ծանուցանելոյ
զմեծութիւն սիրոյ՝ որովք զիրեարս
սիրեն քրիստոս՝ և եկեղեցի։ Երգս այս
երևեցուցանէ զսէրս, և զղամբարս՝ վառե-
ցեալս հրով. որով բորբոքին սերովբէք. զոր
քրիստոս եկն արկանել յերկիր. և որով
սրբագոյն հոգիք հանգոյն եղնայի վեր յա-
փշտակին յերկինս։ Երգս այս ցուցանէ
զսիրողական խօսակցութիւն՝ որ է 'ի մէջ

ա՟ծութեան

ածութեան և մարդկութեան քրիստոսի. զսէր, որ է 'ի մէջ քրիստոսի՝ և եկեղեցւոյ. զսէր որ է 'ի մէջ քրիստոսի՝ և որդար հոգւոց. զսէր որ է 'ի մէջ քրիստոսի՝ և այնորիկ՝ որ ընկալեալ է զնա արժանապէս 'ի սուրբ հաղորդութեան. զսէր որ է 'ի մէջ քրիստոսի՝ և ածածնի. և ըզսիրողական խօսակցութիւն, որ է 'ի մէջ այ, և երանեցելոց. քան զի է լի՛ սիրով.





Ցնծաւ բերկրել ընդ հրեշտակաց.
'Ի յառագաստն օրիորդաց.
Յիւսեակ հարսին սիրով հիւսոյ,
մարգարտահիւս և լուսատու,
Փեսայն իջման ցօղատարափ,
համբուրէ զտիպն լուսայարփ.
Ի՜ աղջը կոչելով ծաղկաւք,
Ընծ նիւթական տարեալ քաղաք.

Գլուխ առաջներորդ.

Սկսանի հարսն զխօսակցութիւն
առ փեսայն հեղեալ զերրեակ
աղաչան. որով առաջին վեց
տամբք խնդրէ զնախա սկզբու-
նս, զմիջոցս, և զծայրս համայ-
նս փրկութեան. և կատարելու-
թեան իւրոյ. իսկոյն փեսայն 'ի յեօթն երոր-
դումն տան պատասխանելով փափագանաց
հարսին, ներ հմտացուցանէ զնա. որով
Ճանապարհաւ կարիցէ առ հասանել կա-
տարելութեան, որում այնքան սաստկա-
պէս տենչայ: Եւ նախ քան զճիմ խոս զը-
նաղան

ծագման նմանութեամբք յանձնէ զբանս ընտիր առաքինութեանց, որք վայելեն կացութեան նորա, մինչև 'ի մետասաներորդումն ։ անտի մինչև 'ի վախճան գլխոյ և առաւել զարթուցանեն զինքեանս հակադարձական գովասանօք առ ջերմագոյն սէր.

Բն. Համբուրեսցէ զիս 'ի համբուրից բերանոյ իւրոյ. վասն զի բարի են ստինք քո քան զգինի. Լատիներէն այսպէս է. Համբուրեսցէ զիս համբուրիւ բերանոյ իւրոյ, քանզի բարեգոյնք են ստինք քո քան զգինի, հոտաբուրք իւղովք բարեգունեղիւք։

Մեկ. Եկեղեցի հոգևոր հարսն Քի փափագանօք հայցէ 'ի վարդապետէն, և 'ի փեսայէն իւրմէ, զի արժանաւորեցեալ հաճիցի հմտացուցանել զնա բանիւք. և համբուրել համբուրիւք բերանոյ ոչ օտարականէ, այլ իւրոյ. փափագի, զի 'ի բերանոյ նորա ելանիցէ առ նա իմաստութիւնն այն, որ ասաց զինքենէ. Ես ելի 'ի բերանոյ բարձրագունեղի. տենչայ ունիլ զիմաստութիւնն այն, որ է համեղ գիտութիւն. և է ճանաչումն Այ, որ ոչ միայն լուսաւորէ զմիտ. այլ և վառէ, և բորբոքէ ըղձամ. ըղձայ ընդունել 'ի յինքն զիմաստութիւնն այն, որ է բնազանցական պարգև հոգւոյն սրբոյ. որ է խորհրդական Ածաբանութիւն. որ է օծումն, որ ուսուցանէ

մեզ

մեզ զքմ̃ իբրեւ հարկաւորս առ փրկութիւն.
եւ օգտակարս առ 'ի ստանալոյ զարդիւնս.
որ լուսաւորէ զմիտ. եւ շարժէ զսիրտ. զի
ընդունիցի զճանաչեցեալ բարիս, եւ իւրով
սիրոյ ծանէ զկամեցողութիւն. համբոյ
րս այս, որով փեսայն երկնաւոր համբու
րէ զսիրական հարսն իւր, է բազմապա
տիկ. քանզի բազմապատիկք են պարգեւք,
որովք ած̃ ընդ մեզ միաւորի. առաջինն
է համբոյրն ներ մարմնութեան, որով
որդին այ̃ անձնաւորական միաւորութբ̃
միաւորեցաւ ընդ մարդկային բնութեան։
Երկրորդն է սրբացուցման, որով հոգին
սբ̃ ներքսագունեղապէս միաւորի ընդ հո
գիս իւրաքանչիւրոց։ Երրորդն է հաշ
տեցման ընդ այ̃, որով դք միաւորի ընդ
այ̃ 'ի ձեռն մկրտութեան, կամ ապաշխա
րութեան։ չորրորդն է ներհմտացուցման
որով դք միաւորի ընդ այ̃ միջնորդութբ̃
ներքին լուսաւորմանց, յայտնութեանց,
խրատուց, եւ օրինակաց այլոց։ Հինգե-
րորդն է ընտանութեան. որով դք ընտա
նաբար միաւորի ընդ այ̃ 'ի ձեռն ներքին
կենցաղավարութեան, 'ի ձեռն սբ̃ համար
ձակութեան, 'ի ձեռն հաղորդական խորա
խութեան, 'ի ձեռն այլոց հոգեւորական
բերկրութեանց. վեցերորդն է աճեցման
յարակայականի սիրոյ, եւ բարեկամութբ̃,
որով հոգի արդարոյ հզօրապէս ընդու
նուցեալ.

տուեցեալ առանձնական օգնականութեամբք, քաջապէս զօրացուցեալ երկնային նպաստտութեամբք, վերացեալ յերկինս մտ̃ խոկմամբք, և լցեալ բերկրութեամբք սրտի, պնդաբար միաւորի ընդ ա̃յ։ Եօթն երորդն, որ է վերջին, լիցի յաւիտենական երանութեան, որով ա̃ծային էութիւն կատարելագունեղապէս միաւորեսցի ընդ հոգւոյ մերում, և 'ի նմանէ մշտնջենաւորապէս վայելեսցի։ ասացելոց համբուրից այնու սաստկապէս փափագի խորհրդական հարս․ զի բարեպէս ճանաչէ, թէ մտ̃ համբոյրք ազնուագունեղ փեսային իւրոյ, որք են ստինք սիրոյ, և գգուանաց, են անուշագոյնք, և քաղցրագոյնք քան զա̃մ քաղցր, և անուշ։ համբոյրք երկնաւոր փեսային ասին երկու ստինք, զի 'ի յիւրաքանչիւրս նոցին գտանի հիանալի իմաստութիւն, և սէր ա̃ծային, յորոց իբր 'ի յերկուց անհատ, և ան սպառ ստեանց 'ի մեզ յառաջ բղխին ա̃մ պարգևք մարմնաւորք, և հոգևոր, բնականք, և բնազանցականք, ժամանակաւորք, և յաւիտենականք։ խորհրդական հարս ոչ միայն յիշատակէ զհամբոյրս, այլ և զստինս սիրական փեսային իւրոյ, զի իմանայցեմք, թէ սէր երկնաւոր փեսային ոչ միայն է հայրական, և օգտակար, այսինքն, հզօր, իմաստուն, և հաստատուն․ այլ և է մայրական, և 'ի

գական

գական, այսինքն, քաղցր, անուշ. և գգո
ւական. արդարև ստինք ածային փեսայի
են պատուականագոյնք, ազնուագոյնք. և
քաղցրագոյնք, քան զգինի երկրային. և
ստեղծեցեալ գգուանաց. քանզի են կեն
դանիք, և կենդանարարք. երկնայինք, և
ածայինք. են աղբիւրք, յորոց բղխի մշ
տնջենաւոր սնուցիչ կաթն 'ի կեանս յաւի
տենականս. իսկ գինի երկրաւոր սիրոյ.
և գգուանաց 'ի յինքենէ է մեռեալ, ա-
մուլ, դատարկ, և բազմիցս վնասակար.
բազմիցս վառ է զմաղձ, զարթուցանէ բղ
բարկութիւն, վրդովէ զսիրտ, և պատ
ճառ է զշուայտութիւն. բազմիցս հո
տած է, և նեխած. իսկ ստինք երկնաւոր
փեսայի բուրեն զանուշահոտութիւն պա
տուականագունեղից իւղոց, այսինքն, պա
տուականագունեղից առաքինութեանց և
կատարելութեանց և ածային էութեան,
և մարդկային բնութեան քի, որք վերա
փայլին 'ի յիւրաքանչիւր պարգևս նորին.
գ. Իբր հոտ իւղոց քոց քան զամ խունկս. բն
իւղ թափեալ է անուն քո. վասն այնորիկ
օրիորդք սիրեցին զքեզ. Լատիներէն այս
պէս է. իւղ արտահեղեալ անուն քո. վս
այնորիկ մանկամարդք սիրեցին զքեզ.
Հարսն խորհրդական զանուն փեսային իւ մեկ
րոյ քարոզէ պարզագունեղ, և մաքրագու
նեղ իւղ, պարունակող ներ ինքեան զզօ
րութիւն

բութիւն, և զկատարելութիւն ա՟մ անուշա
հոտ իւղոց օծութեան, դիտէ զեկուցա
նել. թէ երկնաւոր փեսայն ոչ միայն է
օծեցեալ անուշահոտ իւղով. այլ է ինքն
իւղն օծութեան. ինքն անուշահոտ բու
րումն. որպէս է ինքն Ճշմարտութիւնն.
իմաստութիւնն, և բարութիւնն. քանզի
այսոքիկ ամենեքեան ոչ չափաւորապէս.
և մուրողաբար, կամ պատահաբար, որպէս
լինի մարդկանց. կամ հրեշտակաց. այլ
հարկաւորապէս, և էականապէս. և Թարց
ուրուք չափոյ յարմարին. և պատշաճին
նմա. ծանուցանէ. թէ է իւղ առատա
գունեղապէս արտահեղեալ. և Թափեալ
'ի բոլոր մարմին, 'ի յա՟մ զգեստս, 'ի յա
ռագաստս, 'ի սեղանս, 'ի ճանապարհս,
'ի յընտանիս, որպէս 'ի հնումն լինիւր.
այսինքն, 'ի յա՟մ ստեղծուածս ըստ ընդ
ունակութեան իւրաքանչիւրոյ միայն գոր
ծովք. և պարգևօք իւրովք. զորօրինակ.
բարերարութեամբ ստեղծման. պահման.
գործակցութեան, արդարացուցման, կամ
երանեցուցման իւրաքանչիւրոյ. իսկ և ին
քեամբ. և էութեամբ իւրով ամենայն ու
րեք ներկայ. ամենայն ուրեք հեղեալ է, և
ի յանչափ տրամահեղեալ. առանձնակին բա
նիւ եւ ՟քս ա՟ծ. և մարդ եղև իւղ և բա
նիւ անձնաւորական միաւորութեան և բա
նիւ կատարելագունեղից շնորհաց ա՟մ սե

ռի

ուխ, որովք 'ի հօրէ օծաւ ծայրագունեղ քահանայապետ, մարգարէ, թագաւոր, և ա՛ռ սրբոց։ Իւր հեղեալ մանաւանդ 'ի յամ մարդիկ 'ի սկզբանէ աշխարհի մինչև յաւիտեան. այսինքն. շնորհօք, և փառօք զորս իւրաքանչիւրոց նախարարութիւնաւորեցաւ ո՛չ ամենեցուն փրկիչ, և իշխան։ որ իւղ անուամբ քո. այսինքն, օծելոյ յատկապէս նշանաւորի. որպէս հեղուլն անուամբ յի. որդ ցուցանէ. թէ այսորիկ այնքան գգուանկանք, և սիրալիրականք համբոյրք. այնքան անոյշք, և հոտածաւալք ստինք, և իւղ այնքան ընդ արձակաբար, և առատապէս հեղեալ, այսինքն. այնքան մեծք, և այնքան գերազանցք բարերարութիւնք զիւրաքանչիւրս հաւատացեալ հոգիս տակաւին մատաղաշ, և տկարս 'ի հակադարձ սէր երկնաւոր փեսայն յափշտակեն։ վասն զի հանգոյն իւղոյ զարթուցանեն, և անուցանեն զբոց, լուսաւորեն, ջերմացուցանեն, բացամերժեն զխստութիւն, սփոփեն. յագեցուցանեն. հնչեն, բերկրեցուցանեն։ Իւր ո՛վ զայնքան առատաձեռն պարգևատու ոչ սիրեսցէ։ սակայն են ո՛չ սակաւք, որք բազմիցս զթշուառ հոգիս յամեցուցանեն. և բացաքարշեն։ են մարմնաւոր հեշտութիւնք. են պատիւք, և արժանապատուութիւնք, են ինչք. և հոգք աշխարհականք. են դեղք, են

են ցանկութիւնք, և անկարգ ախտք, որովք
գրեթէ տուամբք· ոտնակապօք, և ձեռ
նակապօք կապեցեալք արգելանիմք յերկ
րի· ոչ թոյլ տուեցեալ լինի կանգնիլ. և
ընթանալ առ տր· կամ ընդ կոչեցելոց
չկամիմք գնալ 'ի յընթրիս տանուտեառն.
վասն խափանելոյ զայս չար երկրորդա
բար հարսն աղաչէ.

բն 3. Նո՛ւ ձգեցին զքեզ· զհետ քո 'ի հոտ
իւղոյ քոց ընթասցուք· տարաւ զիս արքայ
'ի սենեակ իւր: ցնծասցուք, և ուրախ լի
ցուք 'ի քեզ: սիրեսցուք զստինս քո քան
զգինի: ուղղութիւն սիրեաց զքեզ: Լա
տիններէն այսպէս է. քարշեա զիս. զկնի
քո ընթասցուք 'ի հոտ իւղոց քոց: էմուծ
զիս արքայ 'ի պահարան իւր ցնծասցուք,
և ուրախասցուք 'ի քեզ, յիշեալք զստինս
քո 'ի վեր քան զգինի ուղիղք սիրեն ըզ
քեզ:

մեկ Հարսն խորհրդական հայցէ 'ի հզօրագու
նեզ փեսայէն իւրմէ. զի ինքն միայն երկ
նային օգնականութեամբ. և շնորհիւ իւ
րով զնա քարշեսցէ առ ինքն. զի մի գտեալ
տկար քարշեսցի 'ի յաշխարհէ. կամ 'ի մար
մնոյ: աղաչէ զփեսայն իւր իմաստնագու
նեզ, և սիրողագունեզ, զի ինքն լուսաւո
րեսցէ զմիտ նորա, և ինքն վառեսցէ. և բոր
բոքեսցէ զսէր նորա: աղաչէ զփեսայն իւր.
զի քարշեսցէ զնա կապանօք սիրոյ: հայցէ
'ի

'ի փեսայէն իւրմէ զհզօրագունեղ օգնու
թիւնս. որք զնա ընդոստուցանիցեն, և
զօրացուցանիցեն առ ներգործութիւնս
բարեգունեղս, պատուականագունեղս, և
ազնուագունեղս, նորս շարունակաբար,
և միացօրէն զինքն ներկրթիցէ, և միջնոր
դութեամբ նոցին հաստատապէս. և մշ
տնջենաւորապէս հետևիցի նմա. և 'ի նա
յենուցու։ ոչ միայն ցանկայ յարել 'ի փե
սայն իւր, և կապել ընդ նմա կապանօք սե
րոյ. այլ և շարժեցեալ 'ի յեղբայրասիրու
թենէ. կուսարթաբար, և զգաստաբար ջա
նայ և զայլս շահել. և ածել զնոսա առ ազ
նիւ փեսայն իւր. զի 'ի միասին ընթանայ
ցեն զհետ նորա, գնալով զկնի շաւղաց,
և հետոց նորա, պահելով զպատուէրս նր̃,
հպատակելով խրատուց նորա. և հետևե
լով օրինակաց նորա. առ այս ընդոստու
ցեալք, և զարթուցեալք 'ի նմանէ երկնայ
ին լուսաւորութեամբք, հոգևոր միխիթա
րութեամբք, բարեպաշտ ջերմեռանդու
թեամբք, և քաղցր ախորժութեամբք.
որք գոլով երկնային անուշահոտութիք,
են նշանք ներկայութ̃ե, և հրաւիրման ա̃ծայ
նոյ փեսայի. և ենգրէթէ գգուանք որովք
փեսայն երկնաւոր ձգէ առ ինքն զհոգիս
հաւատացելոց, հանգոյն աղաւնւոյ ընտա
նացելոյ, ունողի զթևս օծեցեալս հոտա
բեր իւղով, որ անուշահոտ բուրմամբ
իւրով

իւրով զվայրենի աղաւնիս ընդ քարշէ ան՟
աղաւնոց․ այսպէս և մեկնիլ կարէ․ աղա-
չէ հարսն զփեսայն իւր․ զի վերջապէս
զնա իբրև զամուսին իւր 'ի տուն իւր ներ-
մուծանիցէ․ ծանուցանելով նմա, թէ
յօժարութեամբ կամի հետևիլ նմա հան-
դերձ ամբոխիւ կուսանաց․ գգուեցեալ
անուշահոտ իւղովք նորին, զեկուցանէ
հարսն, թէ սիրական փեսայն իւր ընկա-
լաւ զաղաչան նորա․ և հաճեցաւ լնուլ
զփափագ նորա․ քանզի յուշ առնէ, թէ
ոչ միայն քաղցրաբար 'ի նա հայեցաւ, և
ընդգրկեաց զնա սնտաբար, այլ և տա-
րաւ զնա, և եմոյծ զնա 'ի ներքին սենեակ
իւր․ այսինքն, 'ի պահարան․ յորում պա-
հին անուշագունեղք․ և փափկագունեղք
ուտելիք, և ըմպելիք․ և բազումք գանձք
մեծագինք․ քանզի է պահարան արքային
արքայից․ մուծաւ հարսն 'ի ներքնագոյն
սենեակ, զի վայելիցէ զբարիս փեսային
իւրոյ․ և ճաշակիցէ զքաղցրութիւն պայ-
ծառ խրախութեան պատրաստեցելոյ 'ի
փեսայէ հանդերձ ընկերօք․ այսու նմա-
նաբանութեամբ իմացուցանէ հարսն, թէ
փեսայն երկնաւոր շնորհեաց նմա զշնորհս
և զպարգևս բնազանցական համանկատման
իւրաց երկնայնոց․ և խորհրդոց հաւատոյ․
և այլոց գաղտնեացն այ՟․ ուստի իսկոյն
շնորհաւորէ իւրեան․ և ընկերաց իւրոց

 զայնքանոյ

զայնքանոյ բարւոյ. ասելով. ցնծասցուք ուրեմն, և ուրախասցուք, ոչ 'ի յերկրային աղտեղութիւնս. և 'ի յունայն, և 'ի սուտ հեշտութիւնս. և բերկրութիւնս. այլ 'ի փեսային մերում, որ է միայն, մի. և ծայրագոյն բարի, որ է արժանի ամ̃ սիրոյ, որոյ քաղցրութիւն է գերազանցագոյն քան զամ̃ քաղցրութիւն, զոր 'ի բոլոր սրտէ սիրեն այնոքիկ, որք են ուղիղք դատաստանաւ, ուղիղք գիտաւորութբ̃. ուղիղք ըղձիւ, ուղիղք բանիւ, և ուղիղք գործով։ զնա սիրեսցուք, և զքաղցրութիւն նորին 'ի մտի մերում պահեսցուք.

Դ. Սեաւ եմ ես, և գեղեցիկ դստերք եՃմի, իբրև զվրանն կեդարու, և զխորրանն սաղոմոնի։ Մատիներէն այսպէս է։ սեաւ եմ, բայց գեղեցիկ դստերք եՃմի, որպէս զվրանս կեդարու, որպէս զմորթս սողոմոնի։ բն

Հարսն խորհրդական 'ի մէջ այլոց իրաց. զորս խօսելով ուսեալ էր 'ի ներքսագոյն սենեկի այ̃, զերկու իրս արտաբերէ, երն կերաց առաջադրէ։ նախ զսևութն̃ իւր, զոր համաքարշեաց կամ 'ի յապականեցեալ բնութենէ, կամ 'ի չարութենէ թէ մարդկանց, թէ դիւաց. զոր օրինակ, զսկզբնական մեղս, զմորակ ցանկութեան. զմեղս ներգործականս. զպատիժս մեղաց, զվիշտս, զփորձութիւնս, և զայլ թշուառութիւնս։ մէկ

խոստովանի, թէ ասացելովք սեւ է. երկրորդ զհոգևոր գեղեցկութիւն. զոր ընդունի 'ի շնորհէ, և 'ի պարգևէ ածայնոյ. ծանուցանէ, թէ այսոքիւք գեղեցիկ է. յորոց երևի. թէ հարսն հաւատարիմ ճանաչէ զվատթարութիւն, և զոչ ընչութիւն իւր. և այսու կրթէ զինքն 'ի խոնարհութեան. խոստովանի ևս զմեծութիւն ածայնոց բարերարութեանց. զորս ընկալեալ է 'ի փեսայէն իւրմէ, և այսու զարթուցանէ զինքն 'ի սէր փեսային իւրոյ. սակս ասացելոց նմանեցուցանէ զինքն վրանաց, և խորանաց դաշտայնոց, որք արտաքոյ սեաւք են. զի կիզեցեալք են տապով արեգական. և պաշարեցեալք են փոշեաւ, և աղտիւք. բայց 'ի ներքս են գեղեցկագունեղք. քանզի են զարդարեցեալք ոսկեաւ. մարգարտիւք, և զարմանալի արհեստաւորութեամբ.

բն Զ. Մ՚ի հայիք յիս. զի ես եմ սեւացեալ. վասն զի խեթիւ հայեցաւ յիս արեգակն. որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս, և եդին զիս պահապան յայգեստանի. զի զայգին իմ ոչ պահեցի: Աստիներէն այսպէս է. մի մտածէք զիս, զի թուխ եմ, քան զի այլագունեցայ զիս արեգակն. որդիք մօր իմոյ մարտեան ընդդէմ իմ. եդին զիս պահապան 'ի յայգիս. զայգին իմ ոչ պահեցի.

մեկ Հարսն պատուիրէ, մի այնքան հայիք.

զի

զի թուխ եմ արտաքոյ․ որքան, զի 'ի ներ
քս եմ գեղեցիկ։ Հայեցարուք 'ի ներքին
գեղեցկութիւն իմ, որով վայելչացուցեալ
է զիս Նազելի փեսայն իմ։ Թխութիւնս
այս չէ ինձ բնական, կամ մշտնջենաւոր,
այլ ժամանակաւոր, և պատահական։ զայս
ինձ պատճառեաց տապ, և ջերմութիւն
արեգական, որ այլագունեաց զիս․ և փո
փոխեալ զգոյն իմ սևացոյց զիս։ քանզի 'ի
վերուստ բոլոր լուսով իւրով, և ուղիղ
ճառագայթիւք 'իւրս ներհայելով, կիզեաց
զիս, և խանձեաց։ արդ անուամբ արեգա
կան կարէ իմանել կամ ածային նախախ
նամութիւն, կամ իւրաքանչիւր արտաքին
պատճառ, որ վնասէ։ վնասարարութիւն
տրի արեգական․ զի արեգակն ունելով
զզանազան յատկութիւն, և գոլով պատ
ճառ տարբեր գործոց, երբեմն օգտա
կար է, և երբեմն վնասակար։ Հարսն խոր
հրդական յետ ծանուցանելոյն զպատճառ
թխութեան իւրոյ, ցուցանէ զպատերազմ,
զոր ստիպի կրել 'ի ձեռաց եղբարց իւ
րոց․ այսինքն, 'ի ձեռաց այնոցիկ, որք են
նմա տոհմականք, ընտանեկիցք, ընկերա
կիցք, բնութենակիցք, և հաւատակիցք։
ցուցանէ զմենամարտութիւն․ որով ստի
պի մենամարտել ընդդէմ ածմ ներքին, և
արտաքին թշնամեաց, այսինքն ընդդէմ
ընկերաց, որք հակառակին․ և ընդդէմ

դգոյ

զգայութեանց, և զգայական ցանկութ՟ց, որք ընդդիմանան. ցուցանէ ևս զպատճառ այսր ընկերական, և ընտանական պատերազմի. զի ասէ, թէ կացուցին զինքն մշակ, և պահապան վասն գործելոյ, և պահելոյ զայգիս. այսինքն արարին զինքն մերակացու վասն կառավարելոյ զհոգիս. ուստի զեկուցանէ. թէ ոչ թոյլ ետուն նմա հանդարտ, և հանգիստ պարապիլ խոկման ներ ներքսագունեղի սեննկի փեսային իւրոյ, այլ ա՟յ այսպէս կամելով. հրամայեցին նմա 'ի յագարակս, և 'ի յայգիս տանիլ զհոգ հարկաւոր տնտեսութեան. և խրատու, զի մի ումեք իր ինչ հարկաւոր պակասիցի թէ 'ի կողմանէ ճարակի. և կերակրոյ, թէ 'ի կողմանէ կառավարութ՟. և հոգաբարձութեան. թէ 'ի կողմանէ այլոց իրաց. Նա՛ և զեկուցանէ, թէ մինչ ինքն գնայ նախախնամել. և հոգալ զայսոսիկ, մինչ իւրաքանչիւրոյ 'ի յընտանեաց համանշանէ զիւր չափն, իւրաքանչիւրոյ հօտի բաշխորոշէ զիւր ճարակս, ընդոստուցանէ զհեղգս, բացամտրակէ զպղերգս, սանձէ զկամակորս, և զան խրատս, իսկոյն յանժամ և 'ի յարտաքուստ թշնամանան նմա ընկերք մերձակայք, և 'ի ներքուստ ապստամբին 'ի նմանէ համայնք ընտանիք, և յարուցեալք ընդդէմ նորա զրպարտեն. և թշնամանեն զնա. աստուստ ծնանին կռիւք,

այս

աստուստ արտաքղխին մենամարտութիւնք,
և պատերազմք, աստուստ պատճառքն աղտք
աստուստ ելանէ այլագունութիւն դիմի։
սակս որոյ տաղտկացեալ. և զզուեցեալ
ձգէ զպահպանութիւն այգւոյ ինքեան
յանձնեցելոյ, և դիմէ առ փեսայն իւր։
6. Պատմեա ինձ, զոր սիրեաց անձն իմ. բն
ո՞ւր հովուես. ո՞ւր հանգուցանես 'ի մէջ
օրէի։ մի գուցէ լինիցիմ իբրև զընկեց
եալն 'ի հօտս ընկերաց քոց։ Լատիներէն
այսպէս է. ցոյց ինձ, զոր սիրէ անձն իմ,
ուր հովուիցես, ուր հանգչիցես 'ի մէջօ
րէի, զի մի սկսանիցիմ վարանիլ զկնի հօ
տից ընկերաց քոց։
Հարսն խորհրդական դիմէ առ փեսայն մեկ
իւր, զոր 'ի վեր քան զամ ինչ սիրէ, և
որոյ սիրոյն վառեցեալ է. և բորբոքեցեալ.
և հայցէ 'ի նմանէ զմխիթարութիւն. ըզ
խրատ, և զօգնութիւն. և այսպէս խօսակ
ցի ընդ սիրական փեսայն իւրում. եթէ
հետևէի փափագանաց իմոց. խնդրէի բո
լորովիմբ զերծանիլ 'ի յամ օտարական հո
գաբարձութենէ։ բայց սակայն քան զի
թուի, թէ այս սակս քեզ հաճոյանայ,
վասն այսորիկ աղաչեմ զքեզ, զի ուսուցա
նիցես ինձ այժմ, թէ որով կարիցեմ զայս
իր կատարել թարց այնքանոյ ցաւոյ, և
թարց վնասու իմոյ։ աղաչեմ, զի ոչ մի
այն բանիւ, այլ և ինքեամբք իրօք, և գրէ
թէ

թէ մատամբք ցուցանիցես ինձ, թէ դու
ուր զքեզ, և զամենեսին քոյս հովուէիցես,
և արածիցես, և թէ դու ուր հանգիցես
կատարեալ, և ուրախ հանգստեամբ, որ
սովոր է 'ի մէջօրէի որսանիլ, այսինքն․
լիով լուսով, և տապով ո՛չ միայն սիրոյ
ներքնայնոյ, այլ և հալածանաց, և անձկու
թեան արտաքնոյ։ 'ի յասացելոց բանից
իմանամք, թէ հարսն աստանօր խնդրէ
զպարգև հանապազորդական խոկման,
և կատարելագունեղի սիրման նոյ։ որով
կարիցէ ցանգ 'ի միասին հանգիլ ընդ Քի
'ի ծոց Հօր յաւիտենականի, և սակայն օրի
նակաւ, և օգնութեամբ նորին նա և հո
վուէիլ զհօտս ինքեան յանձնեցելս։ խըն
դրէ զայս հարսն․ և փափագի հասանիլ
այսմիկ, զի մի կրկին մեծագունեղիւք
ցաւովք իւրովք, և վնասուք, ոչ իւիք, կամ
սակաւ պտղով, վասն մուրանալոյ զխրատ
զմխիթարութիւն․ կամ զօգնութի, սկսա
նիցի անհանգստաբար վարանիլ, և տատա
նիլ զկնի հօտից ընկերաց նորա, այսինքն․
զկնի նմ ստեղծուածոց նորա, որոց օգ
նականութեամբ ներհմտանամբ, և յորոց
ընդունիմք զօգնութիւն։ քան զի սոքա
կամ գոլով անվարժք, և անհմուտք, կամ
զբաղեալք այլովք, ո՛չ կարեն, կամ գո
լով նախանձոտք, ո՛չ կամին, կամ ծուլա
նան օգնել նմա․ կամ եթէ երբեմն շնոր

հիցեն

հիցեն զիր ինչ, առնեն զայս յոյժ ժլա
տաբար, և ագահաբար ։ իսկ սիրական փե
սայն նորա թարց իրեք մնասու իւրոյ, և
ամենամեծ օգտակարութեամբ հարսին ։
կարէ օգնել նմա, շնորհելով նմա ։ և հօ
տից նորա զլուսադունեղ Ճարակ, և 'ի
միասին երանել, և երջանկացուցանել զնա
'ի հանգստարանի իւրում ընդ ինքեան
մշտնջենաւոր հանգստեամբ, խաղաղութ՟,
և բերկրութեամբք ։ մինչև ցաստ հարսն
խօսէր ։ արդ փեսայն սկսանի խօսիլ ։

7 . Եթէ ոչ ծանիցես զանձն քո գեղե ցիկդ 'ի կանայս ։ ել դու զհետ գարշապա րանացն հօտից, և արածեա զուլս քո 'ի վրանս հովուաց ։ Բն

Մատեններէն այսպէս է
եթէ անգիտես զքեզ ով գեղեցկագու
նեղդ 'ի մէջ կանանց, ել, և գնա զկնի ըն
թացահետից հօտից, և արածեա զուլս
քոյս ըստ վրանաց հովուաց ։

Փեսայն երկնաւոր զեկուցանէ սիրական Մեկ
հարսին իւրում, թէ ոչ պարտի անգի
տել, այլ պարտի յիշել, թէ ընկալեալ է
'ի նմանէ զբաւական շնորհս, և օգնութիս,
ոչ միայն առ 'ի կառավարելոյ զինքն, այլ
և զայլս ինքեան յանձնեցելոց ։ ուրեմն
յանձնառեալ զնեղութիւնս, և զաշխա
տանս պարտի հովուել զնոսա հետևելով
շաւղաց ընտիր հովուաց, որք թողեալք
են զկնի իւրեանց զազնիւ օրինակս հովը
ւելոյ,

ճելոյ, և կառավարելոյ և զինքն, և զայլս։ ուսանի այսպէս խօսակցի ընդ սիրական հարսին իւրում. եթէ տակաւին զքեզ անգիտես. յոյժ զարմանամ, և հիանամ։ մի՞թէ կարէ լինել. զի դու, որ ես գեղեցկագունեղ 'ի մէջ կանանց, որ գիտես զքեզ զարդարեցեալ գոլ յինէն այնքան շնորհօք, զորքանս արդ հաշէկէր քարոզիւք, տակաւին անգիտիցես զքեզ ընկալեալ գոլ յինէն զբաւական զօրութիւն, ուժգնութիւն, և քաջութիւն, զբաւական հանճարեղութի՛, հնարագիտութի՛, և հմտութի՛ և զբաւական օգնականութի՛, ասպնջականութիւն, և օժանդակութիւն, առ 'ի կառավարելոյ և հովուելոյ նա և զայլս։ կամ մի՞թէ անգիտես զանձային շնորհ արիլ ոչ առ միայն զարդ, այլ և առ զօրացումն. առ ներհմտացումն, և առ տեղեկացումն։ մի՞թէ անգիտես, զքեզ, թէ պէտ 'ի քէն զոչ ինչ կարիցես, սակայն ինև և ընդ իս զամ ինչ կարել։ մի՞թէ անգիտես, զքեզ ոչ քեզ միում, այլ և ինձ, այլ և հասարակութեան գոլ ծնեցեալ։ մի՞թէ անգիտես, զքեզ զոչ ինչ շահաւէտագոյն, զոչ ինչ քեզ փառաւորագոյն. զոչ ինչ ինձ հաճոյագոյն կարել առնել, քան 'ի փրկութեան հոգւոց ջանալով լինել ինձ գործակից. բայց ասես. հովուելն զայլս է գործառութիւն խիստ, և դժուար, և

է լի

է լի աշխատանօք, և տեղութեամբ, և
չարախօսութեամբ. և ձանձրութեամբ, և
ցաւով։ առ այս պատասխանեմ. մի՞ թէ
անգիտես, զքեզ մեղօք քովք բազմիցս նա
խարգելնաւորեալ գոլ զայնպիսիս. և զնո
վան արդար պատճառաւ, և յիրաւի այն
քան 'ի մասնաւոր բարին քո, որքան 'ի հա
սարակ բարին ամենեցուն, ընտրեալ գոլ
զայնպիսի կարգ իրաց. յորում այլք 'ի յայ
լոց թախանձիցին. բայց ասես. ցանկամ
հանապազ ներգործութեամբ սիրել ըզ
քեզ, ոչ երբեք զբաղիլ 'ի սիրելն զքեզ.
ոչ երբեք այսր. և անդր վարանիլ, և տա
տանիլ, զի պնդագոյն ընդ քեզ ներզուգի
ցիմ, և 'ի վերայ բազկաց քոց անխախտ
ներյենուցում, և 'ի ծոց հօր յաւիտենակա
նի ընդ քեզ ցանգ, և անվնաս բերկրիցիմ.
առ այս պատասխանեմ. մի՞ թէ անգիտես
զքեզ յառաջ քան զժամանակ խնդրել
զիրս. որք են 'ի վեր քան զկացութիւն
քո. արդ է ժամանակ պատերազմի, և է
ժամ աշխատանաց. եթէ քաջապէս մար
տիցես, և համատարմաբար աշխատիցես.
վերջապէս պսակեսցիս, և մտցես 'ի հան
գիստ. մխիթարեցից զքեզ պատշաճաւոր
մխիթարութեամբ նա և յայնժամ. յոր
ժամ 'ի հովուելն. և 'ի կառավարելն աշ
խատիս. 'ի կենի յայսմիկ մխիթարութիւն,
և հանգստութիւն գտանի 'ի բարեպաշտ

աշխատանս․ արդ ուրեմն թուիր առ աշ-
խատանս․ և առ նեղութիւնս վասն իմ։ և
գտցես զովացումն ընդ հովանեաւ թևոց
իմոց․ ուրեմն կանգնեաց 'ի խոկմանէ, և
'ի բազկաց իմոց քաջապէս ել 'ի յագարակ,
զի կատարեսցես զպաշտօն, զոր քեզ հրա-
մայեալ եմ․ եթէ սիրես զիս, արածեա
զգառինս իմ, արածեա զոչխարս իմ․ հո-
գա զնոսա, և կառավարեա․ զտկարն զօ-
րացո՛, և քաջալերեա․ զհիւանդն առող-
ջացո՛, և բժշկեա․ զբեկեալն կապեա, և
ամրացո՛, զձգեցեալն վերածեա․ և ընկալ
զանկեալն կանգնեցո՛, զմոլորեալ խնդրեա
ա̃մ հոգաբարձութեամբ, և զգաստութ̃բ
վասն սիրոյ իմոյ արածեա ո՛չ միայն զգա-
ռինս, և զոչխարս, այլ և զհոտեալ, զան-
վարժ, և զթախանձիչ ուլս քոյս․ քանզի
սոքա և են մեր․ Ի՛ւ եթէ տակաւին
երկբայիցես զտեղւոյ ձարակաց, կամ զե-
ղանակէ հովուելոյ, ունիս զվրանս հո-
վուաց եկեղեցւոյն իմոյ արդ 'ի վաղնջուց
պայծառագունեղից վարդապետութեամբ,
սրբութեամբ, և առաքինութեամբ, ունիս
զազդեցմունս․ զխրատս, և զօրինակս մար-
գարէից, առաքելոց, և այնքան եպիսկո-
պոսաց, որք սրբագունեղապէս, և երջան-
կագունեղապէս կառավարեցին զհօտ իմ․
ըստ հաճոյից նոցա և դու արածեա զհօտ
քեզ յանձնեցեալ։

Զիոյն

8. Ձիոյն իմոյ 'ի կառսն փարաւոնի նմա — բն —
նեցուցի զքեզ մերձաւոր իմ։ լատիններէն
այսպէս է. Հեծելութեան իմոյ 'ի կառսն
փարաւոնի նմանեցուցի զքեզ բարեկամ իմ։
Փեսայն երկնաւոր խրատէ զհարսն իւր, — մեկ —
և գովասանէ զնա։ ուստի այսպէս խօսակ
ցի ընդ նմա. մի երկնչիր, այլ քաջալե
րեաց. զի ես զքեզ այնքան զօրացուցեալ
եմ, զի նմանեցուցանեմ զքեզ հեծելու
թեան իմոյ, այսինքն, ազնուագոյն մասին
երկնային զօրաց իմոց, որք 'ի կարմիր ծո
վուն զա̃մ կառս փարաւոնի յաղթահարե
ցին, և կործանեցին։ այնքան զքեզ զօրա
ցուցեալ եմ, զի նմանիցիս զարհուրելի կար
գաւորեցեալ դասու բանակաց։ արդարև
է յոյժ հզօր սիրական հարսն Քի̃։ զի ամե
հիացմամբ ս̃ն բեռնարդոս։ որքան բա
նակ 'ի միում հոգւոջ այնքան սրբում, որ
քան կարգաւորութիւն 'ի յիղձս, որքան
իմաստութիւն 'ի վարս, որքան 'ի յաղօթս
սպառազինութիւն. որքան ահարկութին
'ի նախանձաւորութեան, որքան, հանա
պազորդութիւն ընդ դիմամարտութեանց,
և որքան բազմութիւն յաղթանակաց. բայց
ասէ օրոգինէս, թէ առ 'ի ստանալոյ զայսո
սիկ, ամենևին հարկաւոր է հարսին, զի
հանգոյն հեծելութեան բարւոք կարգա
ւորեցելոյ, անսայցէ կառավարչի, և դքսի
իւրում հանապազորդաբար, այսմիկ միում
լծիցէ

զո՛ւիցէ, և առ յաճախ շարժումն սանձի, նա և առ ակնարկումն, 'ի յամ կողմն զինքն ներձկիցէ: առ այսոսիկ մասնաւորապէս յանդիմանութիւնս, և մասնաւորապէս առատ գովասանս հարսն բոլորովիմբ ամաչեաց· բայց ամաչելով շատ գեղեցկագոյն երևեցաւ: ուստի փեսայն կրկին դրուատէ զնա և վն պարկեշտութեան 'ի լռելն, և վասն խոնարհութեան ոգւոյ 'ի յարհամարհելն զինքն, և վասն յօժարութեան 'ի հնազանդելն· քանզի յօժարութեամբ ընկալաւ, զոր ինչ ասացեալ էր փեսայն:

բն 9· Քանզի գեղեցկացան ծնօտք քո իբրև զտատրակի· պարանոց քո իբրև զմանեակ | ատիներէն այսպէս է· գեղեցիկք են ծնօտք քո որպէս տատրակի, պարանոց քո որպէս զմանեակս:

մէկ Փեսայն երկնաւոր գովաբանելով զսիրական հարսն իւր, նմանեցուցանէ զնա տատրակի, որ է ամօթխած, և պարկեշտ, միայնակեաց, և առանձնակեայ· որ 'ի մեռանիլ զուգակցին, մնայ մշտնջենաւորապէս մաքուր, սգաւոր, և ողջախոհ, և փոխանակ երգելոյ հեծէ, ուրեմն փեսայն երկնաւոր գովէ զսիրական հարսն իւր, այնու զի սիրէ զվարս պարկեշտս, սիրէ առանձնանալ· և փախչել 'ի յորոգայթից մեղաց, սիրէ զկեանս ողջախոհս, հեծելով ապաշխարէ· և ողբալով զպակասութիւնս ան

ցուցանէ զկնանս։ դարձեալ գիտելի է․
զի եբրայական բառս այս, Թօր, նա և
նշանակէ զկանացի զարդ, որ կախեալ 'ի
գլխոյ, և ներծրարոտեալ շուրջ զծնօտիւք
'իյօսկեղէն փոքրիկ շղթայից, 'ի մարգա-
տաց, և 'իյականց 'ի տեսակ տատրակի կեր
պաւորեցեալ է։ ուստի ըստ այսմ 'ի մաց
ման փեսայն երկնաւոր նմանեցուցանէ ըզ
հարսն իւր ասացեալ զարդու, այնու զի
գեղեցկացեալ է ընտիր, և ազնիւ առաքի
նութեամբ։ գովէ ևս զպարանոց նորա, զի
արագ, և յօժար, և խոնարհ հնազանդու
թեամբ ընդունի զլուծ պատուիրանաց,
զոր դնէ 'ի վերայ նորա փեսայն երկնաւոր
և պարանոցաւ իւրով տանի զնա, կատա
րելով զպատուէրս, և զհրամանս փեսային
իւրոյ։ դարձեալ գովէ զպարանոց հարսին
եկեղեցւոյ․ զի պարանոց նորա են հովիւք,
և վարդապետք, որք նը վարուք, և ընտիր
վարդապետութեամբք գեղեցկացուցեալք
են զեկեղեցի․

10․ Նմանութիւն ոսկւոյ արասցուք ըզ քեզ, հանդերձ կիտուածովք արծաթոյ։ բն

Լատիներէն այսպէս է․ զմուրենիդէս ոսկեղէնս արասցուք քեզ նաշխեցեալս արծաթով․

Մուրենիդէն է զարդ կանանցի ըստ նմանութեան մուրենայ ձկան․ որ արապեցեալ է գործով նախշեցելով․ նախշարար արհեստագոր մէկ

հաստագործութեամբ նկարեցեալ, արծա
թեղէն կոորկօք, կամ գծիւք կերտեցեալ
ոսկեաւ և ականմբք երևեցուցանողօք զպէս
պէս կերպարանս որդանց, և թռչնոց ծաղ
կեցեալ. և զարդարեցեալ. 'ի յաղջկական
պարանոցէ առ լանջ կամ որպէս այլք ա
սեն, 'ի յականջաց կախեալ. զարդս այս նշա
նակէ զհոգևոր զարդարանս, զիմանալի կար
գաւ, և արհեստիւ շինեցեալս 'ի յա՟յ, զարդար
ցեալս արծաթով ամօթխածութե՟, և խոնար
հութեան, գեղեցկացուցեալս ոսկեաւ սի
րոյ, և հնազանդութեան, և փայլեցուցու
ցեալս ականմբք պարգևաց հոգւոյն սրբոյ.
որովք հարսն եղև ազքօք խոնարհագոյն.
և այլովք առաքինութեամբք ձոխագոյն.
և առ ամ՟ պաշտօնս և գործական, և խո
կական կենաց յօժարագոյն. այսպէս և 'ի
յինքեան սրբագոյն, և գեղեցկագոյն, և
ամենեցուն հաճոյագոյն. արդ հարսն ա
ռաջիւք նորովք գովասանօք, և պարգևօք
մեծարեցեալ. զի հաճոյացուցանիցէ զինքն
այնքան պարգևատուին փեսայի, առժա
մայն ջանայ, զի համայնք 'ի յա՟յ ընդունե
ցեալք պարգևք ստորածիցին 'ի յազնուա՟
գունեղ ներգործութիս, 'ի գոհութի 'ի փառս,
և 'ի պատիւ փեսային իւրոյ, առ 'ի զուա՟ր
ճացուցանելոյ, և ուրախացուցանելոյ զնա.

բն

11. Մինչև արքայ 'ի գիրկս իւր ընկալցի
զքեզ. նարդոս իմ բուրեաց զհոտ իւր.
Յատիններէն այսպէս է. մինչ էր արքայ
'ի յառ

'ի յառբազմիլն իւրում, նարդոս իմ ետ
զհոտ իւր։

Հարսն պատմէ․ Թէ մինչ փեսայն բազ մ․կ
մեալ էր 'ի սենեկի խրախուԹեան․ կամ
հարսանեաց նարդոս առաքինուԹեանց,
և ա̅մ պարգևաց, զորս ընկալեալ էր 'ի ն֊
մանէ, բուրեաց զհոտ իւր․ այսինքն, սկսաւ
մեծագունեղապէս, և բարեգունեղապէս
վերաբուրել զանուշահոտուԹիւն հան
գոյն պատուականագունեղ ծխանելոյ,
և անուշագունեղ խնկոյ 'ի խորանի սրտի
իւրոյ 'ի ձեռն յարակայական ներգործու
Թեանց․ և կրԹուԹեանց առաքինուԹե̅ց
ա̅մ սեռի, առ 'ի բերկրեցուցանելոյ․ և զու
արճացուցանելոյ զփեսայն իւր 'ի յառա
գաստի իւրում, արդ առագաստք, և սե
նեակք փեսայի բազմապատիկք են․ առա
ջինն, է յաւիտենական 'ի ծոց հօր երկնա
ւորի․ երկրորդն, ժամանակաւոր 'ի յորո
վայնի երանեցեալ կուսին, յորժամ բանն
մարմին եղև․ երրորդն, 'ի բեԹղեհեմա
կան մսուրս․ չորրորդն, 'ի խաչի, և 'ի գե
րեզմանի․ հինգ երորդն, ընդ աջմէ հօր
'ի հրեղէն երկնի․ վեց երորդն, 'ի սրբա
գունեղ հաղորդուԹեան․ եօԹն երորդն,
'ի յիւրաքանչիւր բարեպաշտ, և սուրբ հո
գւոյ, յորում հանգի, և զուարճացեալ
բերկրի 'ի ձեռն շնորհի․ 'ի յայսոսիկ հա
մայնս առագաստս փեսայն զուարԹագու
նեղապէս

նեղապէս հոգայր, և ջանայր հարսն զո
ւարճացուցանել, և բերկրեցուցանել ըզ
փեսայն անուշահոտ նարդոսիւ իւրով. որ
է խոտ խնկական. սա արտաբուրէ զանու
շագունեղ հոտ, և ունի զզօրութիւն ջեր
մացուցանելոյ, և չորացուցանելոյ, և ըզ
պէսպէս հիւանդութիւնս բժշկելոյ. 'ի
ժամանէ լինի իւղ օծութեան պատուական
մեծագին, և լի հոտով. սովաւ 'ի հնումն
սովոր էին խրախճանակիցք ոռոգանել 'ի
խրախութիւնս. սա օրինակ է շնորհի. և
առաքինութեանց մեզ ներհեղելոց. որք
մանաւանդ յայնժամ բուրեն զհոտ իւ
րեանց. յորժամ արտադրեն զներգործու
թիւնս. և զգործս իւրեանց. վասն այսո
րիկ ասէ պօղոս. հոտ անոյշ եմք քրի ա
ծ. այսպէս աղօթ, որ լինի ջերմեռան
դաբար. տրամահեղու զհոտ հաւատոյ,
յուսոյ, սիրոյ, կրօնի, և այլոց բարեաց ներ
գործութեանց. այսպէս ողորմութիւն,
թէ հոգևոր, թէ մարմնաւոր, բուրէ
զհոտ ածասիրութեան, և ընկերասիրու
թեան. և այսպէս խօսելի է զայլոց ա
ռաքինութեանց.

բն 12. Ծրար ստաշխին եղբօր եղբօրոր
դին իմ ինձ. 'ի մէջ ստեանց իմոց հանգի
ցի. Լատիներէն այսպէս է. ծրար
զմռոյ սիրեցեալն իմ ինձ, 'ի մէջ ստեանց
իմոց համաբնակեսցի.

Ճարան տակաւին պատմէ, թէ սիրեցեալ մեկ
փեսայն իւր, որ եղև իւրեան ինքեան՝ մշ-
տնջենաւոր կապ վշտաց, ցաւոց, և աշխա-
տանաց յիրաւի կապ զմռոյ դառնագունե-
ղի, բայց անուշագունեղապէս զանուշահո-
տութի բուրողի, և զիմ ինչ 'ի յապականու-
թենէ պահողի, զայս շնորհ առնէ նմա,
զի և նմա գոնէ իցէ ծրար զմռոյ, խաղող
դակցութեամբ ոմանց նման աշխատանաց,
և ցաւոց, թէ 'ի նմանէ յղեցելոց, թէ պատ-
ճառաւ ճնշելոյ, և ուրանալոյ զինքն 'ի
գործարարութիւնս գործաւոր կենաց կա-
մաւորապէս յանձնառեցելոց, զորս վասն
սիրոյ նորա, և 'ի պատիւ նորա յօժարա-
գունեղապէս տանի, և ընդունի, և երկա-
քին բազկօք ընդգրկէ, և հանդոյն իրե
պատուականագունեղի, և սիրելագունեղի
և ինքեան շահաւէտագունեղի, դնէ 'ի մէջ
ստեանց իւրոց, զի համաբնակիցին, և առ-
պահիցին մտնջենաւորապէս 'ի ներքսա-
գունեղ շտեմարանի սրտի իւրոյ։ Հարսն զայս
առնէ, զի միայն խաչեցեալն Քս իցէ, և
բնակիցէ 'ի սրտի նորա։ զմուռս այս դառ-
նագունեղ, բայց շահաւէտագունեղ, զոր
հարսն կամաւ․ և յօժարութեամբ ընդու-
նի, և դնէ 'ի ներքսագունեղ շտեմարա-
նի սրտի իւր, այսինքն․ խաչն․ վիշտն,
աշխատանքն, և չարչարանքն, զորս արդա-
րոյն հետևեալ օրինակին Քի․ յօժարութբ
ընդունի, և համբերութբ տանի․ մաքրե


զնա

զնա, և սրբէ ՚ի յամ շաղախմանէ մոլու
թեանց, և յոռութեանց․ ազատէ զնա, և
պահէ յապականութենէ մեղաց, և զոր
ծոց չարաց, և առնէ, զի բուրիցէ զանու
շահոտութիւն առաքինութեանց, և զոր
ծոց բարեաց առաջին իմ, և մարդկան, և
առնէ զնա հաճոյ, և ընդունելի Քի փե
սայի հոգեաց մերոց․

բն 13․ Ողկոյզ ծաղկեալ եղբօր որդին իմ
ինձ․ ՚ի մէջ այգեստանեաց Ենգադդայ․
Լատիներէն այսպէս է․ ողկոյզ կիպրոսի
սիրեցեալն իմ ինձ, ՚ի յայգիս Ենգադդայ․
մէկ Տակաւին հարսն խօսի, և գովաբանէ զփե
սայն իւր սիրականն․ բառս այս եբրայա
կան կոֆէռ նա նշանակէ զպայասան․
որ է ծառ հանդոյն որթոյ․ և ՚ի մնապէս
հանդոյն որթոյ արտաբերէ ողկոյզս յի
րաւի լիս հոտով․ նշանակէ ևս զծառ․ որ
իսկապէս կոչի կիպրոս, որոյ ծաղիկք լիք
են հոտով․ և զուգակցեալք հանդոյն խա
ղողոց շինեն ողկոյզս․ յորոց լինի ազնո
ւագունեղ իւղ օծութեան․ որ ասի կի
պրոսական․ արդ երկուքանչիւրն է յաճախ
՚ի յայգիս Ենգադդայ․ որ է վայելչագու
նեղ․ և պարարտագունեղ երկիր ՚ի յուդայ
եան ցեղում մերձ առ ծովն մեռեալ․
հարսն խորհրդական խօսի զմիոջէ այսո
ցիկ հոտաբեր ծառոց․ կարէ ևս պարզա
պէս ասել․ զհարսն խօսեցեալ գոլ յառակա
պէս

պէս զողկուզոյ որթոյ գերազանցագունիղէ, որպիսիք են ողկոյզք կիպրոսի կղզւոյն, որ կարաց անդրաքերիլ 'ի յայգեստանս Ենգադդայ․ կամ երևեցուցանել զկիպրոսականս նմանութեամբ, և անուշութբ․ արդ այսու նմանախօսութեամբ հարսն խորհրդական նշանակէ զկակուղ, և զփափուկ իղձ փեսայլն իւրոյ, զոր ունի առնա․ և զսիրտ․ որ ոչ միայն է հայրական․ այլ և ճշմարտապէս մայրական, ուստի ծանուցանէ, թէ սիրական փեսայն իւր ոչ միայն կամի լինիլ նմա ծրար զմռոյ 'ի ձեռռն դառն ներգործութեանց գործունեայ կենաց․ այլ և ազնուագունեղ գինի 'ի յանուշագունեղ ողկուզոց խոկական կենաց որով երկնայնով գինեաւ արբինայցէ․ բերկրեցուցանիցէ․ և զուարճացուցանիցէ զինքն, և հրճուեալ զմայլիցի, արդ փեսայն կամի․ զի հարսն 'ի յայսմիկ երկաքանչնիրումն կենի իցէ գերազանց․ ուստի 'ի միասին խոկոյն կցեալ զգործս երկաքանչիւրոյ․ զարմանալի եղանակաւ կրկին զնա գովասանէ։

14․ Ահաւասիկ ես գեղեցիկ մերձաւոր իմ։ ահաւասիկ ես գեղեցիկ․ աչք քո աղաւնւոյ։ Լատիներէն այսպէս է․ ահաւասիկ դու գեղեցիկ ես բարեկամ իմ, ահաւասիկ դու գեղեցիկ ես, աչք քո աղաւնեաց․ բն̅

Փեսայն

մեկ Փեսայն երկնաւոր յոյժ գովէ զսիրական հարս իւր. քանզի կրկնակի կոչէ զնա գեղեցիկ։ ուստի կամի ասել. այս երկեակ գեղեցկութիւն քո է այնքան մեծ, զի զիս, և զայլս ամենեսին հիացուցանիցէ։ Իւ արդարև միաւորութիւն երկաքանչիւրոյ գեղեցկութեան. որ զբարձր խոկացումն զուգաւորէ ընդ քաջ արարողութեն ընտիր, և յոյժ զարմանալի։ գովասանէ ևս զերկոսին այս հարսին։ զի ասէ երկոքեան աչք քո են որպէս զաչս աղաւնեաց, չեն անմաքուրք, չեն ամբարհաւաճք, չեն վարանեալք, չեն կեղծաւորք, չեն խորամանկք. այլ մաքուրք, այլ խոնարհք, այլ միամիտք, այլ ճշգրիտք, 'ի յասացելոցն 'ի մանամք. Թէ իմացականութիւն հարսն պայծառացեալ է լուսով երկնայնով հաւատոյ, և իմաստութեան. երկաքանչիւր իմացումն, և խոկականն, և գործաւորն գեղեցկացեալ է լուսով երկնայնով գիտութեան. և իմաստութեան. խոկականն տեսանէ զիրս խորհրդականս. և խոկալով ներածի 'ի գաղտնիս այ. գործաւորն կարգաւորէ զիրս բարոյականս. և առնելիս. և առաջադրէ կամեցողութեան. զի զնոսա գիտիցէ. և 'ի գործ ածիցէ. աղաւնիք ասորեստանեայց ունին զաչս նրբատեսս. գունոյ. և պայծառութիւն ազնուոյ. ուստի զի իմանայցեմք. Թէ հարսն

երկնաւոր

երկնաւոր փեսային մօտք է նրբատես. և
բարակահայեաց. գեղեցիկ հանճարեղու
թեամբ. և պայծառ իմաստութեամբ.
վասն այսորիկ աչք նորա բաղդատին ա-
ղաւնեաց. ո՞չ բեռնարդոս ասէ.
թէ մինչ փեսայն երկիցս անուանէ զհարսն
գեղեցիկ. և առաւել զաչս աղաւնեաց, այ
սու ինքեամբ սաստկելով իւրով. զերկեակ
գեղեցկութիւնն այն, և զպարզութիւն.
և զպայծառութիւն աչաց իսկ պարգևէ
նմա. վասն զի նա ասաց. և եղեն. ուստի
առժամայն հարսն այսորիկ պայծառա
գունեղիւք աչօք դիւրապէս էտես. զայ
նոսիկ գովս կատարեալ գեղեցկութեան
յոյժ առաւել իրաւամբ յարմարել փեսային
ուստի իսկոյն զառեցեալս վերաբերէ. և
վերահեղու 'ի յինքն գովիսն.

15. Ահաւադիկ ես գեղեցիկ եղբօրորդի ըն
իմ. և վայելուչ. Լատիններէն այսպէս է.
ահաւասիկ դու գեղեցիկ ես սիրեցեալ
իմ. և վայելուչ.

Հարսն գովասանէ զփեսայն իւր քարոզե մեկ
լով զնա գեղեցիկ, և վայելուչ. ուստի կա
մի ասել. ես յինէն սեաւ եմ. գեղեցիկ ոչ
եմ, եթէ ոչ պարգևաւ քով. որքանեաւ
և իցէ քև պայծառանայցեմ գեղեցկու
թեամբ, բաղդատմամբ քո ոչ ինչ եմ.
զկաթիլ մի ընկալայ 'ի յանչափ ովկիանոսէ.
զնշոյլ մի 'ի պայծառագունեղ արեգականէ

սաուէր

ստացեր քո եմ. և հաշիւ երևեցուցանող
պատկեր. և ոչ այլ ինչ: իսկ դու, սիրեցեալ
իմ, Ճշմարտիւ գեղեցիկ ես, նա և միայն
գեղեցիկ, որ ըստ ածութեան քո ես Ճա
ռագայթ փառաց հօր, փայլումն լուսոյ
յաւիտենականի. որ 'ի քէն, և զօրութե
նութեան քոյ 'ի յաւիտենից վայելես զան
հուն գեղեցութիւն, բարութիւն. զօրու
թիւն, իմաստութիւն. գիտութիւն, և
կատարելութիւն, թարց այլայլութեան,
և նորոգութեան. որ ես նախատիպ, նա
խագաղափար, յարացոյց, աղբիւր, և պատ
Ճառ ամ գեղեցկութեանց ստեղծեցելոց,
և կարելեաց: դու ես բոլորովիմբ գեղե
ցիկ. զի ես անստեղծ էակ, բան. և կեր
պարան հօր. աղբիւր բարութեան. ան
բաւ իմաստութիւն, անչափ զօրութիւն.
կատարեալ գեղեցկութիւն. անհուն քաղ
ցրութիւն. ազրաւ ուրախութիւն, Ճշմա
րիտ ցնծութիւն. ամենամեծ բերկրու
թիւն, Ճշգրիտ երջանկութիւն. և յաւի
տենական երանութիւն: դու կոչելի ես
գեղեցիկ. զի դու ստեղծող. իսկ ես ստեղ
ծուած. դու արարիչ. իսկ ես արարած.
դու ծով. իսկ ես հաշիւ առու. դու ան
հուն էութիւն, ես յինէն ոչ ինչ. քև
գոյացեալ. դու պարգևատու. ես ընդու
նող պարգևաց. դու հեղինակ շնորհի,
ես առող շնորհաց. դու սրբութիւն, ես

քև

քեւ սրբեցեալ. դու արդարութիւն, եւ
քեւ արդարացեալ. դու զօրութիւն. եւ
յինէն տկար, քեւ զօրացեալ. դու երջան
կութիւն, եւ յինէն թշուառ. քեւ քաջա
լերեցեալ յուսալ զերանութիւն: ուրեմն
ըստ ա̃ծութեան քոյ եւ անհունապէս գե
ղեցիկ: նա և ըստ մարդկութեան քոյ եւ
յոյժ գեղեցիկ. քանզի վասն մշտնջենա
ւոր միաւորութեան ընդ բանի, և երա
նական տեսութեան. և առատութեան
շնորհաց, համապաղ եղեր. և ես գեղ՚ցիկ
տեսլեամբ քան զա̃մ որդիս մարդկան. նա
և ես աղբիւր. և վտակ ա̃լ գեղեցկութե
որ է 'ի մարդում, թէ 'ի յերկրի. և թէ
'յերկինս: ուրեմն ա̃մ գեղեցկութիւն.
զոր յիս քարոզես, 'ի քէն է. դու ուրեմն
ես գեղ՚ցիկ. և աղբիւր գեղեցկութեան:
16. Ե՛ւ գահոյն մեր հովանաւորք. գե բն
րանք տանց մերոց մայրք, դարաւանդք
մեր նոճիք: Լատիներէն այսպէս է. ան
կողինկ մեր ծաղկաւէտ. գերանք մեր նո
ճեղէնք. դարաւանդք մեր կիպրականք:
Հարսն խոստովանի. թէ առատ պարգեւք մեկ
հարստագունեղ փեսային իւրոյ ոչ միայն
գեղեցկացուցեալք են զնա, այլ և զիւր զայ
նոսիկ. որք առ նա պատկանին: ուստի
այսպէս խօսակցի ընդ նմա. ոչ միայն քեզ
միում տուի, զի յիս ինքեան. կամ ներ ինձ
ինքեան իցեմ եւ գեղեցիկ, այլ և զի ա̃մ

կահք

կահք, վրանք. և պալատք մեր իցեն այնպէս գեղեցկապէս զարդարեցեալք, այնպէս անուշաբար հոտոտեցեալք, այնպէս հաստատապէս ամրացուցեալք, զի անկողնիկ մեր, թէ սեղանական. թէ հարսանական, իցէ ծաղկեալ. այսինքն, միտ մեր, յորում իբրև 'ի հաճոյագունեղ առագաստի ընդ իս 'ի միասին վերահանգիս. իցէ զարդարեցեալ ծաղկամբք առաքինական արարողութեանց. և փափագանաց. երախտաւորութեանց: քանզի զայսոսիկ չունիմ այլուստ, եթէ ոչ 'ի ծրարէ. և 'ի յողկուզոյ. և 'ի ծաղկանց կիպրոսի քո. նա և 'ի քէն միջէ է. զի գերանք տանց մերոց այսինքն. առաքինութիւնք հաւատոյ, յուսոյ. սիրոյ. և այլք, որք են հարկաւորք առ փրկութիւն. որովք իբրև գերանօք ամրացուցանին տունք մեր այսինքն. միտք կամք. և յիշողութիւն. նոյն ած 'ի միասին ընդ մեզ որպէս 'ի տաճարս. և 'ի տունս իւրս ներքնակի. իցեն նոճեղէնք. այսինքն հանգոյն նոճեղէն գերանաց. իցեն հաստատունք. ամուրք. և անգետք ողդանց. և ապականութեան: նա և 'ի քէն միջէ է. զի դարաւանդք մեր. այսինքն առաքինութիւնք վերածախեցման. որզան յորդորմունք աւետարանականք. փրկաւէտ խրատք կատարելութեան. և շնորհք ձրի տրեցեալք. որք ծառայեն առ 'ի զարդա

րելոյ

րելոյ զհոգի․ իցեն կիպրականք․ այսինքն
նմանաւ փայտիւ յայտնի գեղեցկութեան
և ամրութեան․ ոչ գիշատեսք․ ոչ անզարդք
ոչ ապականեցեալք․ ոչ նեխեալք․ այլ
հոտաբերք․ և բուրողք զանուշահոտու
թիւն։

## Գլուխ Երկրորդ․

Ի գլխոյ յայսմիկ լինի խօսակցութն
զգերազանցութե փեսայի, և հար
սի 'ի վերայ այլոց մարդկան, եզա
կանէ․ զգերաբարձր աստիճանէ
խոկման․ և սիրոյ այ, առ որ հարսն վերա
նայ 'ի ձեռն փեսայի․ զբազմապատկէ գա
լստենէ այ, և զներկայութենէ 'ի մէջ
մարդկան․ զնշանաց, որք յառաջեն․ և ըն
կերակցին իւրաքանչիւրում, զկոչմանէ այ
առ զանազան աստիճանս․ և կացութիս
առաքինութեանց․ զհալածչաց հարսի,
կամ եկեղեցւոյ, և զերջանիկ զարգացմա
նէ սորին մինչև 'ի կատարած աշխարհի։
Բ․ Ես ծաղիկ դաշտաց, և շուշան հով բն
տաց։ Լատիներէն այսպէս է․ Ես ծաղիկ
դաշտի․ և շուշան ձորոց։
Հաստատէ նսայի․ զոր ասա զինքենէ քա մեկ
րոզէ փեսայն։ զի ասէ․ Եւ բղխեսցի գա
ւազան յարմատոյն յեսսեայ․ և ելցէ ծա
ղիկ յարմատոյ անտի։ ուստի պատմէ փե
սայն

սայն հոգևոր, Թէ ինքն է ծաղիկ, ոչ մի
այնոյ հրեշտակական պարտիզի, ոչ ագարա
կի խոփաւ ակօսեցելոյ. կամ մաճով պա
տառեցելոյ. այլ դաշտի. առանց օգնակա
նութեան ձեռաց. կամ մարդկային հնա
րագիտութեան բուսեալ, յայտնապէս բա
ցադրեցեալ օդոյ, և կամաց իւրաքանչիւ
րոյ, զնա կտրել, և խլել, և իւրեան սե
փականել կարողի: արդարև Քս փեսայն եր
կնաւոր է ծաղիկ հասարակական դաշտի
քանզի է փառք, և վայելչութիւն բոլոր
աշխարհի: զի նա շնորհէ ամենեցուն զա
նուշահոտութիւն ուղիղ, և ճշմարիտ վար
դապետութեան. և բարի վարուց: է բա
ցադրեցեալ կամաց ամենեցուն: քանզի
ամենք կարէ ընդունիլ զանուշահոտութի
նորա: ուրեմն կամի ասել փեսայն երկնա
ւոր. և այսպէս խօսակցիլ ընդ հարսին իւ
րում. արժանապէս առատորեն ինձ զայս
ծառութիւն, և զանուշահոտ բուրումն
ծաղկաւէտ անկողնի մերոյ: քանզի ես եմ
անուշահոտ ծաղիկ. ես եմ. որ ծաղկեցու
ցանեմ զ ամենեսեան. ես եմ որ տամ ամենե
ցուն զանուշահոտութիւն. ես եմ ծաղիկ
ծաղկանց. ես եմ որ յիս ներպարունակեմ
զկատարելութիւն ամ ծաղկանց. ես եմ.
որ ստորահաստեալ վերապահեմ զհոտ. և
փչրեալ առ հաւաքեմ: սակայն ոչ կամիմ
փակել միայն 'ի նեղանկողնի խոկման. և 'ի
նոճեղէն

նոճեղէն. կամ կիպրական տան բերկրա
նաց, առ որ զիս հրաւիրես. այլ և կամիմ
'ի յարաձակ դաշտի տալ զիս բոլոր 'ի կեցու
թիւն. և 'ի փրկութիւն բոլոր աշխարհի.
կամիմ բանիւ. և օրինակաւ ներհտացու
ցանել. և զուարճացուցանել զամենեսին.
իմա. զի ես եմ արքայական ծաղիկ. գե
ղեցկագունեղ և անուշահոտագունեղ քան
զա՛մ ծաղիկս. եմ ես շուշան հովտաց. զի
'ի բարձրագունեղ աթոռոյ երկնից իջի 'ի
ստորնագունեղ ձոր աշխարհի. եթէ
մարդկայնով բնութեամբ պայծառ, ա՜ծ
այնով ոսկեղէն. հոտաբեր քարոզութե՟,
տարածեցեալ ծիրով. և ցածացեալ խոնար
հութեամբ. ես եմ շուշան անբաւ զօրու
թեան. որոյ փայլմամբ փախուցանի խա
ւար, որոյ շօշափմամբ սրբին բորոտք. և
բժշկին հիւանդք, որոյ հոտով մեռեալք
յարուցանին, փուշք ներմխեցեալք ելա
նեն. առաքինութիւնք ստանին. զայս. զոր
ես ունիմ յինէն, և բնականաբար, շնոր
հեմ. և պարգևեմ հարսին իմում հաղոր
դակցաբար.

2. Իբրև շուշան 'ի մէջ փշոց, այսպէս է քոյր իմ 'ի մէջ դստերաց. Լատիներէն այսպէս է. որպէս շուշան 'ի մէջ փշոց, այսպէս բարեկամն իմ 'ի մէջ դստերաց. բն

Զեկուցանէ փեսայն երկնաւոր զորպէ սութիւն սիրական հարսին իւրոյ. այսինքն մեկ

զեկեղ

զլինիլ նորին 'ի մէջ փշոց, զանվնաս մնալ նորին, և զնորին երևելի պայծառութիւ ուստի այսպէս ընդ նմա խօսակցիլ հաճի. որպէս շուշանն մնայ ապահով, և անվնաս 'ի մէջ փշոց աւծնեցելոց, կամ առադրեցելոց· այսպէս դու սիրական· և բարե կամ հարս իմ, մնաս ապահով, և անվնաս 'ի մէջ դստերաց, այսինքն· 'ի մէջ այլոց ստեղծուածոց· զի թէպէտ սոքա սովոր իցեն հանդոյն փշոց զքեզ խթել· և ծակ ծակել· և ծակոտել· արդ փշովք սուտ գովասանաց, և շողոքորթութեանց, արդ փշովք քամահմանց, պախարակութեանց, և չարախօսութեանց, արդ փշովք վատահամբաւութեանց, զրպարտութեանց, և անիրաւաբանութեանց, արդ փշովք հալածանաց, և աքսորմանց, արդ փշովք պէս պէս անիրաւութեանց, և չարութեանց, արդ փշովք դժուարութեանց, փորձութեանց, վշտաց ընդոստուցելոց 'ի մարմնոյ, 'ի սատանայէ, և 'ի յաշխարհէ· սակայն ոչ վնասեսցեն քեզ, այլ առաւել լիցին քեզ շահաւէտք, և օգտակարք։ զի լիցին քեզ փոխանակ ցանգոյ, և պարսպի ընդդէմ յուլութեան· և թուլութեան· ընդդէմ հեղգութեան, և պղերգութեան· ընդդէմ ծուլութեան· և անզգուշութե· ընդդէմ սնափառութեան· և փառամոլութեան· և ընդդէմ այլոց նրբագոյն· և

բարս

քարակագոյն յուռութեանց. եւ մոլութեանց.
որք լինին քեզ դարանակալք։ Նա եւ բաղ
դատմանէ փշոց երեւեցիս գեղեցկագոյն.
եւ պայծառագոյն. եւ առաւել ինձ նմանես
ցիս. որ է քեզ ծայրագոյն գովեստ։

3. Իբրեւ խնձոր 'ի փայտս անտառի. այն բն
պէս է եղբօրորդին իմ 'ի մէջ ուստերաց
ընդ հովանեաւ նորա փափագեցի. եւ նըս
տայ. եւ պտուղ նորա քաղցրէ 'ի կոկորդի
իմում։ Լատիներէն այսպէս է. որպէս
խնձորենի 'ի մէջ փայտին անտառից. այս
պէս սիրեցեալն իմ 'ի մէջ ուստերաց։ ընդ
հովանեաւ այնորիկ, որում փափագեցեալ
էի, նստայ. եւ պտուղ նորա քաղցր կոկոր
դի իմում։

Զարսն հոգեւոր նմանեցուցանէ զսիրական մեկ
փեսայն խնձորենւոյ, ծանուցանէ, թէ
նստեալ է ընդ հովանեաւ նորա, եւ ճաշա
կեալ է զքաղցր պտուղ նորա։ կամի զեկու
ցանել, թէ որքան ջամբէ փայտից ան
տառականաց ծաղկաւէտ, հոտաւէտ. եւ պտղ
ղաբեր ծառ, զայնքան բաշխէ սիրական
փեսայն իւր այլոց ամենեցունց մարդկանց
արդ. բաղդատէ զնա խնձորենւոյ ծառոյ
որ է ցած, եւ խոնարհ, առաւել, քան նո
ճւոյ, կիպրոսի փայտի, սօսոյ, կամ արմա
ւենւոյ, որք են ծառք երկայնք, եւ բար
ձունք։ քանզի խնձորենին նշանակէ զսէր.
ուստի կամի ծանուցանել, թէ սէրն, ո-
րով

րով փեսայն երկնաւոր սիրէ զնա, և զա̃մ
մարդիկ, է բերկրական, և քաղցր․ քան
զի բերկրեցուցանէ․ և քաղցրացուցանէ․ զե
կուցանէ, թէ փորձառութեամբ ծանա
չեալ, և գիտացեալ է, որպիսի ծառ իցէ
սիրելին իւր․ քանզի զերկար ժամանակ
հանգիստ․ ապահով․ և ուրախ ընդ հովա
նեաւ հաւատոյ, և նսեմացեալ խոկման,
և ա̃ծութեան․ և մարմնոյ նորա․ որ է ստո
ւեր ա̃ծութեան․ մնացեալ է․ խոստովա
նի․ թէ հովանին այն․ ընդ որով նստեալ
է․ է յոյժ տարբեր 'ի հովանեաց ծառոց
այսր աշխարհի, որք ոչ պաշտպանեն 'ի
տօթոյ ցանկութեանց, այլ աճեցուցանեն
զջերմութիւն․ և զտապ․ որք ոչ շնորհեն
զհանգիստ, այլ յարուցանեն, և զարթու
ցանեն զպատերազմս․ որք ոչ զովացուցա
նեն․ այլ ծարաւեցուցանեն․ որք ոչ յա
գեցուցանեն․ այլ չարչարեն․ և տանջեն․
որք ոչ մնան, այլ փախչին, և ունայնանան
խոստովանի ևս՝ թէ անհամեմատաբար
է ազնուագոյն քան զստուերս հնոյ կտա
կարանի․ որք էին ամուլք, և անպտղա
բերք․ որք նշանաւորէին․ և խոստանային
զշնորհս․ բայց չտային․ իսկ հովանի ք̃ի
փեսային իւրոյ է յոյժ պարարտ․ և պտղա
բեր․ զի ընդ հովանեաւ նորա հաւաքեաց
զբազմապատիկ պտուղ յոյժ քաղցր կոկոր
դի իւրում․ նախ, զբառնիլ յանցանաց․

երկրորդ

երկրորդ, զսրբացուցիչ շնորհս հանդերձ
ամենիւք պարգեւօք, եւ պտղովք հոգւոյն
սրբոյ․ երրորդ․ զիրաւունս առ փառս, եւ
առ յաւիտենական ժառանգութիւն․ չոր
րորդ, զհանգստութիւն, զհամբերութի̃․
եւ զուրախութիւն 'ի վիշտս, եւ 'ի յանձկու
թիւնս․ հինգ երորդ․ զերկնային կենցա
ղավարութիւն ընդ հրեշտակս, եւ ընդ ին
քեան ա̃յ․ 'ի ձեռն մտածման․ 'ի ձեռն
խոկման․ եւ 'ի ձեռն յաճախ ընդգրկման,
եւ փարեցման․ խոստովանի եւս, թէ փեսայն
երկնաւոր ոչ միայն կերակրեալ է զնա
այնքան ախորժ կերակրովք, եւ պտղովք,
այլ եւ հաճեցեալ է արբուցանել նմա ըզ
բաժակ սիրոյ ազնուոյ ։

4․ Մուծէք զիս 'ի տուն գինւոյ․ կարգե բն
ցէք 'ի վերայ իմ զսէր։ Աւետներէն այս
պէս է․ էմոյծ զիս 'ի սենեակ գինւոյ,
կարգեաց յիս զսէր։

Հարսն ծանուցանէ․ թէ փեսայն երկնա մեկ
ւոր էմոյծ զնա 'ի բերկրականադունեղ
տեղի, եւ անդ մատոյց նմա զգինի ջերմե
ռանդութեան․ եւ սիրոյ, ոչ 'ի սափորոյ,
կամ բացորոշեցեալ չափով․ որպէս լինի
'ի սեղանոջ խորհրդոց․ եւ հասարակական
աղօթից․ այլ 'ի յինքեանց կարասաց մարդ
կութեան․ եւ ա̃ծութեան իւրոյ․ յորոց ար
բոյց նմա ոչ միայն առ յագեցումն, այլ
եւ առ արբեցումն, առ ապշութիւն․ առ
զմայլումն․

զմայլումն, մինչև առ քուն. բայց հոգև որ արթնացուս, և քունս այս ոչ աղարտեաց զանձն իշխանութիւն մարդոյ, ոչ շփոթեաց զուղիղ դատաստան. ոչ եղծեաց զբանաւորութիւն. և ոչ վնասեաց մտացական, և իմացողական զօրութեան, այլ վերացոյց զմիտ սիրով հալեցելոյ հարսին առ ածայինս. և յայտնեաց նմա զբազումս. որք են 'ի վեր քան զուժգնութիւնս մարդոյ. իսկ զարտաքին զգայութիւնս. և զներքին ախտս գրեթէ թմրեցոյց. 'ի յաւացելոցն իմանամք. թէ աստանօր փեսայն առատաբաշխէ, և առատաձեռնէ հարսին ի բուռն զպարգև մեծագունեղի, և զերանցագունեղի խոկման, ոչ միայն իմացականի ըստ եղանակի քերովբէից, որք փայլին լրմամբ գիտութեան. այլ և յղձականի հանգոյն սերովբէից, որք բոլորք բորբոքին սիրով, և արտաքոյ իւրեանց յափշտակին 'ի յած. պատմէ հարսն. թէ որպէս դուքս կարգաւորէ զբանակ զինուորաց, այսպէս փեսայն երկնաւոր կարգաւորեալ է 'ի վերայ նորա զբանակ երկաքանչիւր սիրոյ, այսինքն. և իւրոյ առ հարսն, որով զնա իւրեան ենթարկիցէ. և հարսին առ ինքն. որով զնա. և զած իւս, որք նմա պատկանին, 'ի յինքն յափշտակիցէ. և անդրաբերիցէ. առաջինն է ինքն էութիւն, և արմատ խոկման. յե

տինն է մնաւանդագունեղ պտուղ նորա 'ի յաւագին բանակի հաւաքին ստորոգելոց, և կատարելութիւնք ա̄յ· ա̄ծային բարերարութիւնք և ընդհանրականք, և մասնաւորք, ներքին լուսաւորութիւնք, և զարթեցուցմունք՝ 'ի յետնում, ընդ ձողով և պայրախաւ սիրոյ ժողովեցեալք առաքինութիւնք համայնք, և ուժգնութիւնք ոգւոյ, և մարմնոյ ճակատամարտին բարեգունեղինք իւրաքանչիւրովք ներգործութեամբք, արհեստիւք, և եղանակօք զբոլոր մարդ, և զա̄մ ստեղծուածս անդրաբերել 'ի յա̄ծ, արդիւնաւորել զա̄ծ· զո̄ր արձացուցանել զա̄ծ, և յիրաւի այնքանաւ ջանիւ, ընդդիմութեամբ, և յարատեւութեամբ սիրոյ, զի թէպէտ տկարանայցեն, նուաղիցին, և անզօրանայցեն· սակայն չկամիցին նա և զայդքանիւ թուլացուցանել· ուստի հարսն 'ի յըմբշամարտութե̄, և 'ի վիրաց սպառեցեալ հեւայ, և տենչայ զօրացուցանել:

ե· Պատսպարեցէք զիս իւղովք· հաւա — բ
քեցէք յիս խնձորս· վասն զի խանդակաթ —
եմ ես սիրով: | Ատիներէն այսպէս է·
ամրացուցէք զիս ծաղկամբք, պաշարեցէք
զիս խնձորովք· քանզի նուաղիմ սիրով. — մ
Հարսն վիրաւորեցեալ նետիւք ա̄ծայնոյ —
սիրոյ· զորոց ասի 'ի սաղմոսի, նետք քո
սրեալք են, ժողովուրդք 'ի ներքոյ քո

անկ

անկցին․ այսինքն սատակագունիւք ներաղ
դեցմամբք, փութականօք պայծառացուց
մամբք, և հզօրագունիւք սատարութեմբք,
որք ընդոստուցանեն զսէր, ներածին, և
ներմտանեն 'ի սիրտ սիրողի, խոցեն․ զնա
և վիրաւորեն, և առնեն զնա կաթոգի, և
ըղձակաթ․ հայցէ զանուշահոտ ծաղիկս
և խաղս օծութեան, և զքաղցրագոյն խըն
ձորս սիրեցելոյն իւրոյ, այսինքն, զքաղց
րագոյն պտուղս, և գործս ածայնոյ սիրոյ
որոց զուժգնութի․ և զզօրութիւն բաղ
միցս փորձեալ է․ զի նորօք բժշկիցին վէրք
իւր, և զօրանայցէ սիրտ իւր․ փեսայն լսէ
սիրական հարսին իւրում, հասանի 'ի թի
կունս նորա․ լինի նմա օգնական, և ապն
ջական, փոխանակ այլոց դեղոց մատուցա
նէ նմա զինքն․ և փոխանակ առագաստի
պատրաստեցելոյ, և յօրինեցելոյ ծաղկամբք
և խնձորովք, կարկառէ, և տայ նմա զբա
զուկս, և զծոց իւր, որովք ընդունի զնո
ւաղեցեալ, և զվիրաւորեցեալ հարս իւր,
և նորովք գգուեանօք գգուէ զնա, և
սփոփէ։

բն 6․ Ա՛հեակ նորա 'ի վերայ գլխոյ իմոյ․ և
աջ նորա պատեսցի զինև․ Լատիներէն
այսպէս է․ ահեակ նորա ընդ՝ գլխով ի-
մով, և աջ նորա գրկեսցէ զիս։

մեկ Ա՛հեկաւ իմանի մարդկութիւն քի, և
զոր ինչ վասն մեր 'ի մարմնի կամ արար,
կամ

կամ կրեաց, որդան, տնօրէնութիւնքն Ք̃ի գործքն նորա, և չարչարանքն նորա․ զորս յանձնէառ վասն մեր․ որովք հաստահի մնաբար կազդուրացուցանի․ զօրացուցանէ քաջալերէ, ամրացուցանէ, և կանգնէ հոգի, զի մի անկանիցի․ իսկ աջով իմանի ա̃ծութիւն նոյնոյ Ք̃ի, և համայնք իրք, որք պատկանին առ փառս, և առ մեծ վայելչութիւն նորա․ որովք անուշագունեղապէս կառավարէ, պահպանէ, և սփոփէ հոգի, և այնպէս միաւորի ընդ սիրողի իւրում, զի զնա ընդունիցի ներ ծոցոյ, և ներ սրտի իւրում, և ներ աղեաց իւրոց, կամ առաւել 'ի յիւրենէ ինքենէ բացաքարշեցեալ, բոլոր 'ի յա̃ծ բացագնայցէ, և բոլորիցէ ներ ա̃յ, մի ինչ ընդ նմա եղեալ․ և մոռացեալ զա̃մ իւր ստեղծեցեալս 'ի նմա միում վերահանգիցի, 'ի նա մի հայեցեալ, զմի սիրեալ, և նովաւ միով զմայլեցեալ։ Նա և յայնժամ ստորածնանի քունն այն ա̃ծային, որում տենչայր, և փափագիւր ինքեան հարսն։ Նա և այս ինքնին, և յօժարաբար պատահի նմա 'ի բարեգութ և 'ի յառատ ձեռանէ փեսայի․ բայց գետելիէ․ զի հարսն 'ի յայսմիկ քնոջ ոչ ամենևին թմբրեալ պառկի, և մնայ դատարկ որպէս զի զոչ ինչ իմանայցէ․ և զոչ ինչ մտածիցէ․ քանզի յայնժամ զարմանալի եղանակաւ ա̃ծ լուսաւորէ, և պայծառացուցանէ

ցուցանէ զմիտ հարսն, յորժամ զօրացուցա
նէ զիմացողութե՛ նր · ընդոստուցանէ, և
զարթուցանէ զկամեցողութիւն առ սաստ
կագոյն սէր · ջերմացուցանէ, և տաքացու
ցանէ զմիտ սիրով վառեցելով, և բորբո
քեցելով · վասն որոյ հարսն յայնժամ
իմանայ պայծառագոյն լուսով · սիրէ ջեր
մագոյն սիրով, և զուարճացեալ զմայլի
բերկրականագոյն խնդութե՛ · յայնժամ
հարսն իմանայ մօտօք, և սիրէ կամօք, քան
զի ա՛մ միաւորութիւն · գրկումն, քուն ·
յափշտակութիւն · ապշութիւն, կամ թմ
րութիւն, յորում միտ 'ի ներքս զոչ ինչ
ա՛ծային իմանայ, է ունայն, և դատարկ,
և ոչ յառաջանայ 'ի յա՛յ, այլ կամ 'ի չար
ոգւոյ, կամ 'ի նուաղմանէ անձին · և կամ
'ի տկար կազմուածոյ մարմնոյ ծնանի. քան
զի ա՛ծ ոչ երբեք կախըմբռնէ զշարժմու
նս մարմնոյ, և զպարարողութիւնս արտաքին
զգայութեանց · եթէ ոչ զի 'ի ներքուստ
դիւրագոյն, լաւագոյն · և հանդարտագոյն
լուսաւորիցէ զմիտ, և առ ինքն քարշիցէ ·
հարսն բարեկամ փեսայի քնացեալ երդ
մնեցուցմամբ հրամայի ոչ անհանգստացու
ցանել 'ի ձեռն դստերաց եղմի · 'ի ձեռն
քաղաքակցաց նոյնոյ մայրաքաղաքի, որ ա՛
սի տեսութիւն խաղաղութեան · որք վ՟
այնորիկ արդիւնաւորաբար պարտէին լինել
խաղաղութեան · և հանդարտ կենաց սի

րողք

բողք. բայց կամ 'ի յանդիմանութենէ. կամ 'ի յանխոհեմ նախանձուէ յառաջ շարժելոյ զգործունեայ կեանս, արհամարհեն, և խոտեն զհանդստութիւն. խոկական կենաց. ըստ այնմ. թէ ոչ ինչ է փոյթ քեզ. զի քոյր իմ միայն եթող զիս 'ի սպասու.

արդ ասա դմա, զի օգնեսցէ ինձ.

7. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք եէմի 'ի զօրութիւնս, և յուժգնութիւնս անդաստանի. եթէ յառնիցէք, զարթուսջիք զսէրն, մինչև կամեսցի: Ատինեբէն այսպէս է. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք եէմի, ընդ այծեմունս, և ընդ եղջերուս դաշտաց, զի մի յարուցանիցէք, և մի զարթուցանիցէք զսիրեցեալն, մինչև

ինքն կամիցի:

Երդմնեցուցանէ ընդ այծեմունս, և ընդ մեկ
եղջերուս. զի սոքա են կենդանիք, որք քան զայլս են մեղմագոյնք, գեղեցկագոյնք և հաճոյագոյնք որսորդաց, և հովուաց. որք առակաւ առ հրէայս առոցեին վասն այսմ իրի. որ ուրախագունեղ, և հաճոյագունեղ իւրաքանչիւրում պատահիւր. խորհրդաւոր իմանին նահապետք, մարգարէք առաքեալք, և այլք սրբք եկեղեցւոյ, կամ երանեցեալք հոգիք, և հրեշտակք. բարոյականապէս իմանին առաքինութիւնք, և պարգևք երկնայինք, ընդ որս, քանզի հաճոյագունեղք քաղաքացւոց խաղաղու-

թեան

թեան․ երդմնեցուցանէ զնոսա, զի մի խափանիցեն զհանգստութիւն հարսին, խռովելով զխաղաղութիւն նորա, թէ ներքին և թէ արտաքին, մինչև ինքն կամիցի, կամ կամաւորապէս, և ինքնին զարթիցի, այս ինքն յորժամ ուղիղ բան․ և սէր հրամայեսցէ, թէ պարտէ շուտով յառնել ՚ի քնոյ և ՚ի խօսակցութենէ ընդ ա̃յ, վասն օգնելոյ մերձաւորին․ փեսայն երկնաւոր սաստկապէս կամի, զի սիրական հարսն իւր իցէ ՚ի խաղաղութեան, և անսայցէ խոկական կենաց․ առ որ ձայնէ զնա օրինակօք նահապետաց, բանիւք մարգարէից, վարդապետութեամբք առաքելոց, յորդորմամբք սրբոց վարդապետաց, և գեղեցկութեամբ առաքինութեանց, նորա կրթել խոկացողն․ զի խոկական կեանքն բազմապատկաբար շահաւէտ է․ նախ, զի ՚ի նմա լուսաւորի միտ․ վառի ջերմեռանդութիւն բորբոքի սէր, ուղղի կամեցողութիւն, զօրանայ, և հանգստանայ սիրտ, մխիթարի, և սփոփի հոգի, ընդոստուցանին, և զարթուցանին ներքին ներգործութիւնք բազմազան առաքինութեանց, քաջանայ մենամարտիկ սպառազինի զինաւոր, և քաջալերի պաշտպան․ խնամատար, և հոգացող այլոց․ հաճի ևս փեսայն երկնաւոր, զի յորժամ բանավարութիւն հրամայէ, հարսն խորհրդական նա և անսայցէ գործունեայ կենաց

վասն

վասն օգնելոյ եղբօր. և մեծաւորի. քան
զի ցանկայ, զի ամենեքեան հասանիցեն
փրկութեան.

8. Ձայն եղբօր որդւոյ իմոյ. աՀաւասիկ ըն
սա եկն վաղելով 'ի վերայ լերանց, խայտա
լով 'ի վերայ բլրոց. նման է եղբօր որ
դին իմ այծեման, կամ որթուց եղանցն 'ի
վերայ լերանց բեթելայ. ‖ Լատիներէն այս
պէս է. Ձայն սիրեցելոյն իմոյ, աՀաւա
սիկ սա եկն թռելով 'ի լերինս, անդրա
թռելով զբլուրս, նման է սիրեցեալն
իմ այծեման, և որթու եղջերուաց.

Հարսն պատմէ. թէ սկսաւ լսել ձայն սի մեկ
րականն փեսայն իւրոյ. փեսայն երկնաւոր
փոքր մի բացադնացեալ էր, և թողեալ
էր զՀարսն. բայց շուտով արագագունե
ղապէս վերավազելով, առնէ, զի ձայն,
և Հնչիւն դարձման իւրոյ 'ի Հեռուստ
լսիցի. նա և ընծայէ զինքն տեսանելի, սա
կայն ոչ որպէս է 'ի յինքեան, այլ ընդ
ձևովք, օրինակօք, և նմանութեամբք օտա
րականօք, որզան, այծեման, և Հորթու
եղջերուաց, այսինքն իրաց գեղեցկագու
նից, և Հաճոյագունից. սակայն ոչ կացուն
օրէն. և մնացօրէն, այլ թռելով, և զմէջ
տալով. որովք ցուցանի. թէ որքան դուզ
նաքեայ, որքան նսեմական, և որքան ան
կայուն իցէ 'ի յայսմիկ մաՀկանացուում
կենի, խոկումն մեր, որով սատանօր խո

կամք

կամք զոտնային մեծ վայելչութիւն։ ատա
ցելովք նա և նշանաւորին բազմապատիկ
ձայնք, և նշանք գալստեան փեսայի և՚ի
յաշխարհ. և՚ի հոգի. նախքան զգալուստ
նորա ՚ի մարմին, և՚ի յարգանտ կուսին յա
ռաջեցին այնքան ձևք, այնքան օրինակք,
այնքան ծածախօսութիւնք, այնքան մարգա
րէութիւնք, այնքան փափագք, այնքան
տենչք, այնքան հառաչմունք հարց, և մա
նաւանդ յօհաննու մկրտչին, որ եղև ձայն
բարբառոյ յանապատի. նախ քան զգալ
ուստ հոգւոյն սրբոյ ՚ի դասս առաքելոց
՚ի յաւուր պենտէկոստէի, յառաջեցին սաս
տիկ հողմք, և հրեղէնք լեզուք. նախ քան
զգալուստ քի ՚ի խորհուրդ, և ՚ի սրբազն
ութիւն հաղորդութեան յառաջանան նը
շանք զգալիք, և գայ քս ՚ի սրբազնագու
նեղ խորհուրդ բանիւք սրբազնագործու
թեան. նախ քան զգալուստ քի ՚ի հոգի
մարդոյ յառաջեն տրամադրութիւնք առ
արդարացուցումն. և գայ քս արդարացուց
մամբ. նախ քան զգալուստ քի ՚ի մասնա
ւոր դատաստան, յառաջեսցեն հիւանդու
թիւն, և մահ. նախ քան զգալուստ քի ՚ի
վերջին, և ՚ի յընդհանրական դատաստան
յառաջեսցեն նշանք ՚ի յարեգական. և՚ի լու
սին. վերջապէս նշանաւորին զանազան,
ընտիր գործք խորհրդական թուման, զորս
փեսայն մեր ՚ի յիւրաքանչիւր գալուստ

արար

արար․ որք քանզի յոյժ բարձունք էին,
ասին եղեալք 'ի վերայ լերանց, և բլրոց․
այսպէս, որպէս նշմարեն մըն ամբրօսիոս
և գրիգոր, 'ի յերկնից թռաւ 'ի յորովայն
կուսի, 'ի յորովայնէ 'ի մսուր, 'ի մսրոյ 'ի
յորդանան, 'ի յորդանանէ 'ի խաչ, 'ի խաչէ
'ի գերեզման, 'ի գերեզմանէ դարձաւ յեր
կինս․ զնման թռչունս նա և 'ի յայլ գա
լուստս չե՞ն նշմարել մարթասցուք․ Ու յե
րաւի մինչև ցայժմ հարսն ետես զփեսայն
թռող․ և թռելով մերձեցող․ այժմ տե
սանէ նա և ներկայ․ և գրէթէ մատամբ
ցուցանէ այլոց․

9․ Ո՛հաւասիկ սա եկաց յետուստ որմոյն բն
մերոյ, յառեալ ընդ պատուհանսն, հայե
ցեալ ընդ վանդակապատսն․ Լատիներէն
այսպէս է․ ահա նա կայ յետ որմոյն մե
րոյ, յառեալ ընդ պատուհանսն, հայեց
եալ ընդ վանդակապատսն․

Հարսն քարոզէ, թէ փեսայն երկնաւոր, մեկ
բանն հօր, որդին միածին, ա՛ծն թաքու
ցեալ, զոր 'ի մարմնի, և 'ի յայսմիկ կենի
ոչ տեսանեմք երես առ երես, և դէմ յան
դիման, զի է յետ որմոյն մերոյ, հայի, և
նայի ընդ պատուհանս, ընդ լուսանցոյցս,
և ընդ վանդակապատս, այսինքն ընդ սա
եղծուածս համայնս, ընդ սբ գիրս, և
ընդ պատկերս խրաց հոգևորաց, որովք
ինքն զինքն երևեցուցանէ․ նսեմաբար

յայտ

յայտնէ զինքն 'ի ձեռն առեցեալ մարմնոյ
'ի ձեռն սրբազնագունեղ հաղորդութե̃,
'ի ձեռն երկնից, և'ի ձեռն այլոց արարա
ծոց։ ուստի գիտելի է. զի ասի. Թէ ա̃ծ
կայ յետ որմոյն մերոյ, այնու զի չկարեմք
զնա 'ի կենի յայսմիկ դէմ յանդիմանական
տեսութեամբ տեսանել։ քան զի տկարու
թիւն իմացողական զօրութեան մերոյ, և
հաւատն եղեալք են մեզ որմունք արգե
լիչք տեսութեան ա̃յ։ վասն որոյ կարօտա
նամք լուսոյ փառաց, որով վերանայցէ
իմացականն մեր առ տեսութիւն ա̃յ, որ
լոյս տրեսցի մեզ 'ի հանդերձեալ կեանս։
սակայն ասի, Թէ հայի առ մեզ ընդ լու
սանցոյցս, և ընդ պատուհանս, զի զինքն
յայտնէ մեզ միջնորդութեամբ պատուհա
նաց. արդ պատուհանք ասին իրքն այնո
քիկ, որոց միջնորդութեամբ գամք 'ի ճա
նաչումն ա̃յ. ուստի արարածք. և ստեղ
ծուածք են պատուհանք։ քանզի միջնոր
դութեամբ նոցին գամք 'ի ծանօթութի̃
Թէ գոյ ա̃ծ. գիրք ս̃րք են պատուհանք.
քանզի նոքօք առ մեզ խօսի ա̃ծ։ հաւատն
է պատուհան. քանզի նսեմաբար, և մԹա
բար յայտնէ մեզ զխորհուրդս ա̃ծայինս։
նշանք հաւատալութեան են պատուհանք
քան զի միջնորդութեամբ նոցին տրամա
դրիմք գալ 'ի ճանաչումն իրաց ա̃ծայնոց։
սա պարտ է նշմարել. Թէ եթէ այնքան

քաղցր

քաղցր է փեսայն երկնաւոր, մինչ հայի
ընդ պատուհանս․ որքան քաղցր, և անոյշ
լինի, յորժամ դէմյանդիման երևեսցի,
և տեսցի ։

10․ Պատասխանի տայ եղբօրորդին իմ բն
ինձ, և ասէ․ արի․ եկ, մերձաւոր իմ, գե
ղեցիկ իմ, աղաւնի իմ․ Լատիներէն այս
պէս է․ ահա սիրեցեալն՝ իմ խօսի ինձ․
արի․ փութա բարեկամ իմ, աղաւնի իմ,
գեղեցիկ իմ․ և եկ․

Հարսն պատմէ․ Թէ փեսայն երկնաւոր մեկ
հաճեցեալ է խօսիլ ընդ նմա մերձագոյն
յայտնագոյն, և պարզագոյն․ զարթուցա
նելով զնա 'ի քնոյ․ յարուցանէ, փութա
ցուցանէ, և ձայնէ զնա առ ինքն․ ուստի
ասէ ցնա, եկ առ իս․ եկ, զի ածիցեմ
զքեզ առ ծայրագոյն աստիճան կատարե
լութեան․ թող զամ ինչ, զոր ունիս առ
ստեղծուածս․ թող զայն ամ, որ զքեզ
ինձ ան նմանեցուցանէ, զի նմանիցիս ինձ
որքան կարասցես․ զարթիր 'ի յամ պակա
սութենէ․ և 'ի յամ անկատարելութենէ․
զի չհաճիմ 'ի սոսա․ կանգնիր 'ի յերաց ցա
ծաց․ և ջանա, զի վերանայցես առ իրս
բարձրագոյնս, և վսեմագոյնս, առ որս
կոչեմ զքեզ․ զգուշացիր, զի մի յամիցիս․
այլ փութա․ աճապարեա, և ըշտապեաց
առ այն, առ որ ձայնեմ զքեզ․ զի ամ յա
պաղումն է վնասակար․ ուրեմն մի լինիր,
և

և մի դադարիր, մինչև բոլորովիմբ ինձ
նմանիցես, և լինիցիս ընդ իս մի ինչ. իմա
զի այն, առ որ ձայնեմ զքեզ. է յոյժ շա
հաւէտ, և օգտակար քեզ. եկ առ իս. զի
դու հրաժարեցեալ. և հեռացեալ 'ի ցան
կութեանց մարմնոյ. 'ի կամաց սատանայի,
և 'ի յունայն գործոց աշխարհի, պարտիս
կապակցիլ ընդ իս առանձնականաւ կա
պանաւ սիրոյ. քանզի գնեցեալ արեամբ
իմով. եղեալ ես ինձ բարեկամ, դու ես
ինձ նմանեցուցանելի, և ընկերակցելի. քան
զի ես աղաւնի իմ. դու աղաւնի ես. քան
զի ես մեղմ, և հեզ. քանզի ես պարարտ,
և բաղմածին հոգևորապէս. քանզի ես
պարզ դիտաւորութեամբ. անմեղ կենօք,
անարատ վարուք, և բարի կենցաղավարու
թեամբ. հաճեցեալ եմ 'ի քեզ. քանզի ես
ինձ փեսային քում հաւատարիմ. և քանզի
ես գեղեցիկ, և վայելուչ հարսն իմ. յիս
տակ ես. քանզի լուացեալ, մաքրեցեալ,
և սրբեցեալ ես արեամբ իմով. գեղեցիկ
ես. քանզի զարդարեցեալ ես պայծառու
թեամբ շնորհի իմոյ, և փայլմամբ ա̄մ ա-
ռաքինութեանց որք զքեզ գեղեցկացու
ցեալք են, և ինձ հաճոյացուցեալք. ըզ
պարգևս, և զքանքարս, և զտաղանդս զոյ
սոսին չէ՞մ քեզ շնորհեալ. զի թաքուցանի
ցես զնոսա, այլ զի նոքօք շահիցիս զայլս
ուրեմն գոլով բարեկամ իմ, պարտիս հո
գալ

գալ զօգուտ, և զշահ իմ. գոլով աղաւ
նի իմ. պարտիս ինձ ծնանիլ զաւակս հո
գևորս. գոլով գեղեցիկ իմ, պարտիս ե_
լանել արտաքս, զի տեսանիցեն մարդիկք
զգործս քո բարիս. և փառաւորիցեն ըզ
հայր քո, որ յերկինս է։ աղաւնին հաւա
քեալ 'ի յագարակս զհատս, դառնայ առ
ձագս իւր, զի զնոսա բուծանիցէ. սնու
ցանիցէ, տածիցէ, և զօրացուցանիցէ. ըզ
նոյն և դու աղաւնի իմ առնել պարտիս։
որպէս եղեր պարարտ 'ի ծնանիլն զզաւա
կս. այսպէս պարտիս ես գոլ հոգաբարձ
'ի կերակրելն, 'ի պահելն, և 'ի յագեցուցա
նելն զնոսա։ ուստի հարսն քի հանգոյն
աղաւնւոյ ընտանացելոյ մեղմացուցեալ 'ի
քէ, և 'ի խոկման օծեալ զթևս իւր անու
շահոտ իւղովք, պարտի 'ի յաղաւնոցէ թը
ռիլ 'ի յագարակ, զի անդ ընկերակցեալ
վայրենի աղաւնեաց, անուշահոտ բուր
մամբ իւրով զնոսա առ քարշիցէ առ նոյն
աղաւնոց, և շահիցի զնոսա քի։

11 · ԺԱ Վասն զի ահա ձմեռն էանց։ անձրևք Բ
անցին, և գնացեալ մեկնեցան։ ¶ տոնտերեն
այսպէս է. վասն զի արդ ձմեռն էանց.
անձրևն բացագնաց. և հեռացաւ։

Փեսայն երկնաւոր առաջադրէ սիրական մեկ
հարսին իւրում, զպատճառս որովք շար
ժեցեալ գնայցէ առ նա։ ուստի այսպէս
խօսի ընդ հարսին իւրում. մի երկմտիր.

մի

մի յամիր արտելանել· զի է դիպողագու-
նեղ ժամանակ· քանզի հնչէ հով մեղմ,
հանդարտ, պաղ, ուրախարար, գարնանայ-
ին, պարզ, և զուարճացուցիչ· իսկ արգել-
մունք, և դժուարութիւնք, որք կարէին
զարհուրեցուցանել, արդ՝ շարաբարձան·
վասն զի ձմեռն փորձութեանց, չարչարա-
նաց, նեղութեանց, անձկութեանց, չո-
րութեանց, և թշուառութեանց ներքնա-
նոց այսր կենի էանց· անձրևն հալածա-
նաց արտաքնոց բացագնաց, և հեռացաւ։

բն 12· Ծաղիկք երևեցան յերկրի· ժամա-
նակ յատանելոյ էհաս։ ձայն տատրակի
լսելի եղև յերկրի մերում։ Լատիներէն
այսպէս է· Ծաղիկք երևեցան յերկրի
մերում, ժամանակ հատանման եկն· ձայն
տատրակի լսեցաւ յերկրի մերում։

մեկ Պատմի, թէ 'ի յերկրի մերում արդ ո՛չ
միայն տատասկք, և փուշք գտանին, այլ
և երևեցան ծաղիկք գեղեցկագունեղք·
քանզի երևեցաւ Քս, որ է գեղեցկագու-
նեղ ծաղիկ դաշտի· քանզի իբրև պատո
ւականագունեղ ծաղիկ բուրեաց զանու-
շահոտութիւն գերազանցագունեղի սր-
բութեան· և ազնուագունեղի իմաստու-
թեան· նա և տիրամայրն է ծաղիկ· քան
զի բուրեաց զանուշահոտութիւն գերա
զանցագունեղ առաքինութեանց· Սրբք ևս
են ծաղիկք· քանզի բուրեցին զանուշա
հոտութիւն

հոտութիւն առաքինական գործոց։ նա և առաքինութիւնք քրիստոնէականք. առաջադրութիւնք բարեպաշտք, և փափագք մըք։ որովք այնքան յոլովք այնքան ջերմաբար հևան փրկութեան իւրեանց, են ծաղիկք. քանզի ունին զանուշահոտ բուրումն։ եհաս ժամանակ յատանելոյ, և քաղելոյ զասացեալ ծաղիկս. այսինքն է ժամանակ, զի հարսն հետևեալ օրինակին ք̃ի, տիրամօրն, և այլոց սրբոց, բուսուցանիցէ զծաղիկս առաքինութեանց. և գործոց բարեաց։ եհաս ևս ժամանակ, զի ուռք անօգուտք հատանիցին. իսկ պտղաբերք սրբիցին. զի առաւել ևս պտղաբերիցեն։ լի ևս ձայն տատրակի, որ է նշան գարնան, հեծութեան, միայնակեցութեան, ապաշխարութեան, ամօթխածութեան, ողջախոհութեան, և այլոց առաքինութ̃եց։ որք յաճախել պարտին 'ի յագարակի ք̃ի, զի իմանիցի, թէ հաւատացեալ հոգի պարտի առնել զգործս գարնան, պարտի հեծել վասն պակասութեանց իւրոց, պարտի փախչիլ 'ի յունայն զբաղմանց, և առանձնանալ ա̃յ, պարտի ապաշխարել զյանցանս իւր, պարտի ընդգրկել զողջախոհութիւն, և պարտի իրակել զգործս այլոց առաքինութեանց։

13. Թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր։ այգիք մեր ծաղկեցան, և ետուն զհոտս իւրեանց։ բն

իւրեանց։ Լատիներէն այսպէս է. Թզենի առաջաբերեաց զխակ Թուզս իւր, այգիք ծաղկեցեալ ետուն զհոտ իւրեանց։

Կ Ծ՝անուցանի. Թէ Թզենին այն. որ ոչ անպտղաբերն հրամայեցեալ էր բացահատանել, արդ առաջաբերեաց զխակ Թուզս իւր, այսինքն զառաջին պտուղս, որք 'ի միասին ընդ տերևս ուժով ելանեն արտաքս, փութագոյն գան 'ի հասունութի. ուստի Թուզք առաջնոյ ժամանակի և կոչին կանխահասք, և քանզի են քաղցրագոյնք, առաւել սիրին, և ընդունելիք են 'ի բերկրութիւնս. ուստի ասի 'ի մարգարէութեան միքիայ. կանխահաս Թզոց փափագեցաւ անձն իմ։ Թուզքս այսոքիկ նշանաւորեն զնախնական պտուղս եկեղեցւոյ. որզան, զառաքեալս, զմարտիրոսս, զվարդապետս, զնահապետս կրօնաւորաց և զայլս սոյնպիսիս։ Ծ՝անուցանի ևս, թէ այգիք այնոքիկ, զորս վասն պահելոյ կացուցաւ հարսն պահապան, զորոց նամենևին յուսահատիւր, արդ ծաղկին, և ձգեն զառաջին ողկոյզս 'ի միասին ընդ ծաղիկս որք սփռեն զանոյշ, և զհզօր բուրումն. այգիքս այսոքիկ նշանաւորեն զմասնաւոր եկեղեցիս, և վանորայս. կամ զիւրաքանչիւր հոգիս ծաղկեցեալս առաքինութեք, և լցեալս անուշահոտութեամբք առաքինական գործոց։

14. Արի, եկ, մերձաւոր իմ, գեղեցիկ իմ. քն
աղաւնի իմ. եկ ընդ հովանեաւ վիմին.
մերձ առ նախապարիսպն. ցոյց զդէմս քո
և լսելի արա ինձ զբարբառ քո. վասն զի
ձայն քո քաղցր է. և դէմք քո գեղեցիկ.
Լատիներէն այսպէս է. արի, բարեկամ
իմ, գեղեցիկ իմ, և եկ, աղաւնի իմ, 'ի
ծերպս վիմի, 'ի փապարի պարսպի. ցոյց
ինձ զերես քո. հնչեսցէ ձայն քո 'ի յա
կանջս իմ. վասն զի ձայն քո քաղցր է.
և երես քո վայելուչ.

Փեսայն երկնաւոր ընդուսուցմամբք ամ մեկ
զգայութեանց դրդեալ էր զհարսն սիրա
կան, զի ելեալ 'ի թագստեանց իւրոց, դը
նայցէ 'ի տեառնական ագարակ. վասն զի
գեղեցկութեամբ ծաղկանց սփոփեալ էր
զտեսանելիս, այսինքն, զտեսողութիւն,
և զտեսողական զօրութիւն անուշահոտ
բուրմամբ նոյնոց ծաղկանց զհոտոտելիս
այսինքն զհոտոտողական զօրուն. նուագաւ
տատրակաց զլսելիս, այսինքն, զլսողուն, և
զլսողական զօրութիւն. քաղցրութեամբ
թզոց զճաշակելիս, այսինքն զճաշակողա
կան զօրութիւն. ջերմութեամբ. և անու
շութեամբ զշօշափելիս, այսինքն զշօշա
փողական զօրութիւն. արդ նորոգեք գգա
ճանօք դրդէ զնոյն սիրական հարսն իւր,
այսինքն ուրախարարութեամբ. և անու
շութեամբ տեղւոյ. առ որ արտաձայնէ

զնա։ կոչէ զնա առ ծերպս վիմի, առ
փապար պարսպի, առ այնոսիկ ծերպս,
և առ այն փապար, որք են նմա ծանօթք,
այսինքն առ վէրս ձեռաց ոտից, և կողի
իւրոյ, և հետևապէս բոլոր մարմնոյ իւրոյ։
դարձեալ ձայնէ զնա առ ծերպս, և առ
փապար․ այսինքն առ կատարելութիւնս
ա՟ծայինս, որք են 'ի Ք՟ս․ որովք փախչիմք
առ ա՟ծային մեծ վայելչութիւն․ դար
ձեալ ձայնէ զնա առ ծերպս վիմի, և առ
փապար պարսպի․ այսինքն առ հրեշտակա
կան պաշտպանութիւնս․ որովք այգիք
շրջապատին, և պահպանին։ դարձեալ կո
չէ զնա առ ծերպս, և առ փապար․ այս
ինքն առ գիրս ս՟բս․ որովք առ երկնայի
նս․ և առ ա՟ծայինս ջեռմեմք․ և գնամք։
աստանօր փեսայն երկնաւոր այսպէս կամի
խօսակցիլ ընդ հարսին իւրում․ ո՛չ արտա
ձայնեմ զքեզ, զի մշտնջենաւորապէս ար
տաքոյ շինի շրջիցես 'ի յագարակի, 'ի յայ
գիս, 'ի հանապազորդական աշխատանս,
և 'ի տօթում․ այդանօր ես քեզ նախատե
սի զգիւղին հանգստենէ, զուրախարար
զովացմանէ, զապահով թագստեանց։ ահա
'ի յագարակի․ 'ի յայգւոջ են բազում ծեր
պք վիմի, բազում փապարք պարսպի, յո
րս ըստ հաճոյից, և ըստ կամաց, և ըստ փա
փագանաց քոց թաքուցցես զքեզ․ և 'ի միա
սին ընդ իս համահանգիցես, և գոլով ա

զատ

զատ 'ի յորոգայթից. 'ի դաւաճանակալութե̅ց 'ի վրդովմանց, փափագեցեալ խոկման պարապեցիս. քանզի չկամիմ, զի դու այնպէս բոլոր ներընկղմիցիս 'ի յիրողութիւնս ընկերաց, զի ոչ 'ի վերայ ա̅մ իրաց քեզ ինքեանդ պարապիցիս. և ոչ այլապէս արարողութեան ներանսայցես, քան զի առ ժամայն զքեզ առ խոկումն վերընդունիցիս. ուրեմն ոչ միայն 'ի յաղօթարան, այլ և 'ի յայսոսիկ ծերպս, և փապարս զքեզ ներհրաւիրեմ. աստ 'ի բաց բարձեալ զա̅մ քող յագիտութեան, չարութեան, ամօթոյ, երկեւղի, և թիւր դիտաւորութեան. ցոյց ինձ զերեսս քո. հանապազ զերեսս քո առ իս դարձուցեալ, հայեաց յիս, որ ցանգ եմ քեզ ներկայ, և ընդգրկեմ զքեզ. և զերս քոյս միով բանիւ. շրջեաց առաջի իմ, և լեցիս կատարեալ. ձայն խոստովանութե̅ թշնամառութեանց. և մեղաց քոց. ձայն խոստովանութեան, և գովասանաց ա̅յ, ձայն աղօթից, և հառաչանաց առ իս. ձայն քարողութեան առ ժողովուրդն, և եղբայրական ներհմտացուցման, հնչեսցէ 'ի յականջս իմ. ձայնքս այսոքիկ յոյժ բերկրեցուցանեն զիս, և սփոփեն. բայց զա̅մ ձայն յաղթէ ձայն ըղձի, և սիրոյ վառեցելոյ դեպ 'ի յես 'ի միաւորման, և 'ի խոկմանքում յորում ըստ հաճոյից քոց լիցի քեզ լիակատար իշխանութի̅ն կրթելոյ զքեզ 'ի ծերպս վիմի,

վիմի, և 'ի փապարս պարսպի, առ որ հրա-
ւիրեմ զքեզ. ըստ այսմ մեկնութեան փե-
սայն աստանօր փափագի երեսաց, և ձայնի
հարսին. կարէ ևս ասել, թէ հարսն տեն-
չայ հասարակապէս տեսանել զերեսս փես-
այի. և լսել զձայն նորա. 'ի բրութէ ասիցէ.
հրաւիրես զիս առ 'ի տեսանել զծաղիկս,
և առ 'ի լսել զտատրակս. իսկ դու բացա
փախչիս յինէն առ լերինս. և առ բլուրս
երկնայինս. բայց ես յայտանեմ, թէ ոչ եր
բեք լինելոց է ինձ բաւական, եթէ ոչ յոր
ժամ տացես ինձ զփափագելագոյնեղ ե-
րեսս, և ձայն քո. ոչ միայն մարդկայնոյ,
այլ և ա՟ծայնոյ բնութեան քոյ, արդ ոչ ընդ
վանդակապատս, և ընդ պատուհանս սը
տեղծուածոց, ոչ ընդ օրինակս, և ընդ
ձևս, այլ երես առ երես. վասն զի զոչ
ինչ համարիմ քաղցր. եթէ ոչ զայս ձայն
զոչ ինչ գեղեցիկ. եթէ ոչ զայս երեսս քո.

բն 15. Կալարուք մեզ աղուէսունս փոքունս
զապականիչս այգեաց. և այգիք մեր ծաղ
կեսցին. Մատեներէն այսպէս է. կալա
րուք մեզ զաղուէսունս փոքրկունս, որք
ապականեն զայգիս. քանզի այգին մեր
ծաղկեցաւ.

մեկ Հարսն, որպէս ոմանք ասեն, կամ փե
սայն, որպէս այլք ասեն, հրամայէ, զի ա-
ղուէսսիկք, որոց դիտաւորութիւն. և ջան
է ապականել, քակտել, և յատակել զա՟մ
այգիս.

այգիս․ ըմբռնիցին, զի՛ մի ապականիցեն և
զայգի նոցա․ որ արդ ծաղկեցեալ է ։ աղո
ւեսունք այսոքիկ են դևք․ մարդիկք աշ
խարհականք․ և ցանկութիւնք մարմնոյ․
կամ ախտք, որք թէպէտ ամպարշտաց․ և
տկարաց երևեցին առիւծք, ինձք, գայլք,
վիշապք, որպէս զնոսա երբեմն կոչէ ս̃բ
գիրն․ սակայն զա̃ծ սիրողաց ոչ են․ եթէ
ոչ աղուէսիկք, չեն առիւծք․ քանզի են
անզօրք, են աղուէսիկք․ քանզի են նեն
գաւորք․ և խորամանկք․ հրամայէ․ զի
ըմբռնիցին քանզի եթէ չըմբռնիցին, ըմ
բռնեսցեն․ և խլեսցեն զպտուղս այգւոյ․
հոգ զասացեալ աղուէսունս ըմբռնելոյ
յանձնի նախ պահապան հրեշտակաց․ եր
կրորդ․ առաջնորդաց․ քարոզողաց, խոս
տովանահարց․ և վարդապետաց․ երրորդ,
իւրաքանչիւր հաւատացելոց․ որք ամենե
քին պարտին կանխաբար հոգալ․ և պահ
պանել զայգի իւրեանց․ քանզի դեղն 'ի
ժամանակի իւրում պարտի պատրաստիլ․
ոչ հրամայէ․ զի սպանանիցեն․ այլ զի ըմ
բռնիցին, քանզի ոչ եկն որդի մարդոյ կո
րուսանել զանձինս․ այլ կեցուցանել․ և
առաւել կամի․ զի ընդոստուցէք յոռու
թեանց համափոխիցին 'ի կիրառութիւն
առաքինութեանց․ քան, թէ չնջուցանիցին
կամ բոլորովին սպառիցին․ մինչ հարսն
բոլոր զբաղի 'ի յըմբռնելն․ 'ի կապելն․ և
'ի

'ի համապնտեղն զասացեալ աղօթսնիկս, ահա քեզ փեսայն 'ի ծերպս վիմի, և 'ի վապարի պարսպի, ուր ըստ ասացելոյն նախ սպասէ հարսին. ապա զնա ձայնէ առ ինքն. յետայնորիկ զնա ներմուծանէ. վերջապէս զնա ընդգրկէ. և գգուէ: ուստի

հարսն խոցեցեալ սիրով գոչէ.

բն 16. Եղբօր որդին իմ ինձ. և ես նմա. որ հովուէն 'ի մէջ շուշանաց: Մատենէրէն այսպէս է. սիրեցեալն իմ ինձ. և ես

նմա. որ հովուէ 'ի մէջ շուշանաց:

մեկ Հարսն պատմէ զն՟ փեսայի. թէ է նորա միայնակ փեսայ. և թէ է 'ինմանէ մանաւանդաբար սիրեցեալ: զոր այսպէս մեկնէ տէրն Բեռնարդոս. ինձ եղականապէս դեպէ. անսայ. տանի զհոգ: տէրն փուանչիսկոս այսպէս մեկնաբանէ. ինձ է տէր ինչ: է ստեղծող. վարդապետ, տէր, հովիւ. հայր, փեսայ. է ինձ Ճանապարհ. ճշմարտութիւն, և կեանք, է ինձ փրկութիւն, սրբարարութիւն, արդարութիւն. իմաստութի. է ինձ յոյս, կեցուէ. ուրախութի երանութիւն գերաբարձր տէրն Կիպրիանոս, որում համաձայնի և Ամբրոսիոս, ասէ բոլոր զգայութեամբք եմ նորա միայնոյ. և նա է ինձ բաժին իմ. ժառանգութիւն իմ. ստացուած իմ: նա միայն ինձ բաւականայ. զի 'ինմա զամ բարիս վայելեմ: Այս ես եմ նմա բաժին. և ստացուած

իւք

քուր· և գրեթէ ամ իբր նմա· բաւակա
նանամ նմա· որ բաց 'ի յինէն զոչ ինչ այլ
իր պահանջէ յինէն։ Եւ ես բոլոր գի
տեմ զպատիւ· զակնարկութի· զչահնս· հաւա
նս մանաւանդ այպէս նմա սիրեցեալ զայս ու
րեմն առել կամի հարսն· նա ինձ բաւա
կան է· և ես նմա։ է 'ի միջի մերում բա
րի պատշաճաւորութիւն· իրերօք շատա
նամք՝ շատանամ նովաւ· որ արածի 'ի
մէջ շուշանաց· և յաձախեցեալ վարդից
հանգոյն փոքրկան մեղուի· անտուստ ծո
ղովող· և հաւագող ինձ զքաղցրագունեղ
մեղր որով յետոյ զիս արածիցէ· արդ շու
շանք են գիրք ամք· խորհուրդք եկեղե
ցւոյ· առաքինութիւնք աւետարանականք
կատարելութիւնք ածայինք· և գաղտնիք
քրիստոնէականք՝ այսոքիւք ամենեքումբք
և ինքն փեսայն հոգւոց մերոց քս արածի
այսինքն բերկրի· և զմեզ արածէ· այսին
քն կերակրէ՝ սնուցանէ· պարարէ· և
բերկրեցուցանէ·

17 · Մինչ տիւն շնչեսցէ· և շարժեսցին բն
ստուերք՝ դարձիր· նմանեաց եղբօրորդի
իմ այծեման· կամ որթուց եղանց 'ի վե
րայ լերանց խնկաբերաց։ Ասորիներէն այս
պէս է· մինչև տիւն առ շնչիցէ· և խո
նարհեցուցանիցէն ստուերք՝ դարձիր· նմա
նեաց· սիրեցեալ իմ· այծեման· և որթու
եղջերուաց 'ի վերայ լերանց բեթերայ·

Ինձ

ԺԵԿ Լինի իմացումն. թէ սէրս այս. և ձայրա
կս անպական զարգացին. 'ի յալուսեկէ
առ լիակատար մէջօր այսինքն կէսօր. յոր
ժամ ստուերք ունայնանան այսինքն մինչև
առ ծայրագոյն կատարելութիւն. քանզի
ճանապարհք արդարոց իբրև զլոյս ծա
գին. առաջնորդեն. և լուսաւորեն. մինչև
տիւն ծագեսցի. տիւն ուրեմն աստանօր
խորհրդաբար նշանակէ զշնորհ. զեռանդ
ոգւոյ. և զաւետարանական կատարելու
թիւն. ստուերք նշանակեն զմեղս. զպա
կասութիւնս. զխնասաբեր իղձս մարմնոյ.
և զանկարգ ախտս. որք որքան առաւել
աճի շնորհ. եռանդ. և կատարելութիւն
այնքան առաւել նուազին. կամ տիւն նշա
նակէ զլոյս. և զգիտութիւն ներհեղեալ
'ի հոգւոյն սրբոյ. ստուերք նշանակեն
զտգիտութիւն. և զմոլորութիւնս. կամ
տիւն նշանակէ զպայծառութիւն յաւիտե
նականութեան. կամ զպայծառութիւն
այսր կենի. ստուերք նշանակեն. որ ինչ է
ունայն. սահական. և անցաւոր 'ի կեանս.
սորդ քանզի հարսն յայտնապէս գիտէր.
զփեսայն ուրախանալ մշտնջենաւոր փոփոխ
մամբ. և այժմ մատչիլ. այժմ բացագնալ.
այժմ այսորիկ. այժմ այնորիկ այցելու լի
նիլ. և զոչ ինչ նմա հանդիպիլ հաճոյագոյն
քան որով և կարեմք ճանապարհաւ. յառա
ջացուցանել զփրկութիւն այլոց. մանա

ւանդ.

բանդ այնոցիկ, որք են մեզ յանձնեցեալք
վառեցեալ այսու նախանձով, և զի զինքն
ընդ ամ իւր համակերպիցէ ակնարկութեց
փեսայի. ամենամեծ պատուով. և խոնար
հութեամբ ոգւոյ առաջադրէ փեսայի.
զի զինքն նա և առ այլս որոշիցէ. վասն
որոյ ասէ ցնա. դարձիր, սիրեցեալ իմ, 'ի
վերայ լերանց բեթեր, այսինքն բաժան
ման այսինքն որք բաժանեցեալք են բա
զում ձորովք, և փորածութեամբք կամ
այսպէս 'ի վերայ լերանց խնկոց այսինքն
որք լիք են խնկաբեր ծառովք. ուրեմն
հայցէ հարսն, զի զայնոսիկ պարգևս որո
վք զինքն առատապէս ճոյր, նա և այլոց
շնորհիցէ, և մանաւանդ հօտից իւրեանց
յանձնեցելոց, յորոց յոռութեամբ իւրով
գուցէ փախուցեալ էր զնա, արդ ըստ պա
հանջման իրաւանց վերստին լինիցի այցե
լու, արածիցէ ճարակաւ երկնայնով, դար
ձուցանիցէ զմեղաւորս, մխիթարիցէ զտրտ
մեալս, զօրացուցանիցէ զտկարս, զարթու
ցանիցէ զգաղջս, օգնիցէ վշտացելոց, մ-
տրակիցէ զընթացօղս, և ամենեցուն զամե
նայն իւր հարկաւորս, և օգտակարս տրա
մաբաշխիցէ, զի ամենեքին ընդ նմա ա-
սել կարիցեն. սիրեցեալն իմ ինձ, և ես
նմա. կարէ ևս իմանիլ զդարձմանէ քի 'ի
մահուանէ առ կեանս, 'ի լիմբոսէ 'ի յեր
կիր, յերկրէ 'ի յերկինս, 'ի յերկնից 'ի հա
ղորդութիւն.

զորդութիւն, 'ի հոգիս բարեպաշտ հաւատացելոց, և 'ի ձորն յոսափատու. և արարեալ զդատաստան վերստին 'ի հրեղէն երկին. բայց աղաչէ հարսն. զի փեսայն 'ի դարձման իւրում. կացուցանիցէ զինքն նման այծեման, և հորթու եղջերուաց. այսինքն նախ, արագադունեղապէս վազելով, և անձապարելով. երկրորդ, զաչս յաձախապէս յետս դարձուցանելով, և ըզգնացս իւրոյն առ ինքն շրջելով. երրորդ, զիւր ինքն ընծայելով գեղեցիկ. ուրախ, և ամենեցուն տենչալի, բերկրեցուցանելով զամենեսին առատութեամբ շնորհի.

և պարգևաց հոգւոյն սրբոյ:

## Գլուխ երրորդ.

Ի յայսմիկ գլխոյ ճառի զզանազան. և զարմանալի եղանակաց, որովք ած խնդրի, և գտանի 'ի յայսմիկ կենի. ըզ բազմապատիկ յառաջադիմութենէ հոգւորէ 'ի ձեռն գործոց թէ գործունեայ, և թէ խոկական կենաց. զլիակատար հոգալի կատարելութենէ. և ինքեան, և ընկերի. զխոկմանէ խորհրդոց, և կատարելութեանց քի. քանզի զորս երկուք առաջնովք գլխովք գրեթէ կարճառօտութեամբ համառօտեաց, զնոյնս վերջիւք գլխովք, որք հետևին, առատագոյն,

նրբագոյն

նրբագոյն, և պայծառագոյն. վասն որոյ նորովք փոխաբերութեամբք, և նմանութեամբք պայծառացուցանէ. որպէս յիշեցեալ է 'ի յառաջաբանութեան.

Գ. Ի յանկողնի իմում 'ի գիշերի խնդրեցի, ըն
զոր սիրեաց անձն իմ. խնդրեցի զնա. և ոչ գտի. կոչեցի զնա, և ոչ ետ ինձ զձայն

Լատիներէն այսպէս է. 'ի յանկողնկի իմում ընդ գիշերս խնդրեցի, զոր սիրէ հոգի իմ. խնդրեցի զնա, և ոչ գտի.

Այս կամի ասել հարսն հոգևոր. զերկ մեկ
նաւոր փեսայն իմ, որ 'ի վեր քան զամ ինչ սիրելի է. իբրև զծայրագոյն բարի, և զվերջին վախճան իմ խնդրեցի. քան զայս խնդիր 'ի կենի յայսմիկ ոչ ինչ վսեմագոյն. ոչ ինչ օգտակարագոյն, ոչ ինչ բերկրականագոյն. խնդրեցի զնա, բայց ընդ գիշերս, ոչ լոյ ագիտութեան. կամ չարութեան. քանզի որդ լուսաւորեցեալ էի լուսով հաւատոյ, և պայծառութեամբ շնորհի. այլ ընդ գիշերս վշտաց, ամայութեան. և ցամաքութեան. 'ի ստորաքարշելն Այ առ ժամանակ զլոյս ջերմեռանդութեան. և խոկման. ուրեմն գրեթէ 'ի խաւարի խարխափելով. խնդրեցի զնա նաև 'ի յանկողնկի իմում այսինք պղերգաբար, և հեշտաբար, սիրելով զհանգստութի. զհանգարտութիւն, և զհեշտութիւն իմ, նա և 'ի յազօթս, 'ի մտածման, և 'ի ջանս առաքինու

առաքինութեանց. և ինձ յոյժ խնայելով. ուստի թէպէտ խնդրեցի զնա, սակայն ոչ գտի. քանզի զանկողնիկ իմ շրջանակէր. և պաշարէր միայն իսկական սէր իմ ինքեան. իսկ ա՟ծային սէր խնդրելի է 'ի յանկողնկի ինքեան իսկ ա՟յ, և 'ի տեղւոջ, որ համարեցեալ է հանգստեան, և բերկրանաց նորա այսինքն 'ի յանկողնկի, որ ծաղկեցեալ է ընտիր. և ազնիւ ներգործութեամբք առաքինութեանց, ն՟բ. և մաքուր գիտաւորութեամբք, վառեցեալ փափագանօք. և բորբոքեցեալ սիրով. ուստի զրկեցեալ 'ի յուսոյ իմմէ, առ միուս ծայր ոլորեցի, ասելով.

բն 2. Յարեայց, և շրջեցայց ընդ քաղաքն, 'ի փողոցս, և 'ի հրապարակս. և խնդրեցից, զոր սիրեաց անձն իմ. խնդրեցի զնա, և ոչ գտի. կոչեցի զնա. և ոչ ետ ինձ զձայն. Լատիներէն այսպէս է. յարեայց, և շրջեցայց զքաղաքաւ. ընդ փողոցս, և ընդ հրապարակս խնդրեցից, զոր սիրէ հոգի իմ. խնդրեցի զնա. և ոչ գտի.

մեկ Հարսն հոգևոր զայս ասել կամի. անփոյթ արարեալ զջան աղօթելոյ, զիս բոլոր ներընկղմեցից իրողութեամբք արտաքնովք. ոչ անսրբովք, այլ համեստիւք. և կրօնաւորօք. և այնպիսեօք. որք են շահաւէտք, և օգտակարք ընկերի իմում. Բայց և ոչ սատանօր զնա գտի. հարսն և ոչ սատանօր

ծգիտ

եգիտ զնա ։ քանզի արտաքին զբաղմունք, որք անցանեն զչափով . ոչ ընկերակցեն ա̃յ, այլ բացաքարշեն . խզեն . պատառեն . վնասեն . և առս և եռ են երկրի . և ինքնասիրութեան ։ քանզի որքանք են անկարգ զբաղմունք, են այնքանք փուշք . են այնքանք առիթք ամբարհաւաճութեան , են այնքան զարթուցիչք վրդովման . և վարանման, որք ճեղեն . և տրամահերձեն զսիրտ 'ի զանազան . և 'ի յունայն հոգս ։

3 . Գտին զիս պահապանքն , որք շրջէին բն
ընդ քաղաքն մի՞թէ , զոր սիրեաց անձն իմ, տեսիք ։ ‖ ատեններէն այսպէս է . Գըտին զիս զոմարթունք, որք պահպանեն զքաղաք . մի՞թէ զոր սիրէ հոգի իմ, տեսիք ։

Զոմարթունք իմանին նոքա, որք կացու մեկ
ցեալք են 'ի յա̃յ առաջնորդք, և վերակացուք առ 'ի պահպանելոյ, և առ 'ի կառավարելոյ զեկեղեցի , և զհոգիս իւրաքանչիւրոց հաւատացելոց ։ ուստի են պաշտպանողականք հրեշտակք, մարգարէք , առաքեալք , հովիւք , առաջնորդք , վերակացուք , վարդապետք, խոստովանահարք , և խրատիչք . քանզի սոքա պահպանեն , և կառավարեն զեկեղեցի , և զհոգի իւրաքանչիւրոյ 'ի մէնջ . ուստի քաղաքն է եկեղեցի, կամ հոգի իւրաքանչիւրոյ ։ ուստի կամի ասել հարսն . այսոքիկ զոմարթունք

կամ

կամ 'ի ներշնչմանէ ա՜ծայնոյ, կամ 'ի ս՜բ գրոց, կամ 'ի տունտուճութենէ ուղիղ բանի, ուսուցին ինձ զճանապարհ. որով կարիցեմ գտանել զսիրեցեալն իմ, և վերատանալ զպարգևս երկնայինս առ ժամանակ ստորաքարշեցելոյս։ վասն զի ուսուցին ինձ նախ, արիաբար անսալ աղօթից, ոչ պատճառաւ հանգստութեան. կամ սփոփման իմոյ, այլ զի ընդ ա՜մ իւս հաճոյանայցեմ կամացն ա՜յ։ երկրորդ, տալ զիս զբաղմանց արտաքնոց զգուշութբ, խոհեմութեամբ, և խոհականութեամբ մեծաւ, և ոչ խորագոյն ներընկղմել զիս, այլ կամ իւկական շահաւէտութի, կամ կարևորութիւն եղբօր պահանջիցէ. ոչ զմխիթարութիս 'ի նոցանէ մուրալով, այլ վասն ա՜յ մաքրապէս ընդունելով. յանձնառնլով, և կատարելով. երրորդ, արածալ զա՜մ իւս ինձ կարելի. յայնժամ համբերութեամբ սպասել 'ի ձեռանէ ա՜ն, զոր ինչ նմա հաճոյ լինիցի պարգևել, համարելով զիս անարժան նա և փոքրագունեղի պարգևկի. իսկ արժանագունեղ պատժոց մեծագունեղից, տանջանաց, և թշուառութեանց։

բն 4. Իբրև փոքր ինչ անցի ընդ նոսա. գտի զոր սիրեաց անձն իմ, կալայ զնա, և ոչ թողից զնա. մինչև տարայց զնա 'ի տուն մօր իմոյ. և 'ի սենեակ յղացելոյն զիս։

Լատիներէն

ատեններէն այսպէս է. Իբրև սակաւիկ
մի՛ անցի ընդ նոսա. գտի, զոր սիրէ հոգի
իմ. կալայ զնա. ոչ թողից. մինչև ներմու
ծանիցեմ զնա 'ի տուն մօր իմոյ, և 'ի սե
նեակ ծնողի իմոյ ։

Օ այս ասել կամի հարսն, յորժամ ետու մեկ
զիս վերոյիշեցեալ, և նման խրատուց գոր
ծով կատարելեաց, և 'ի գործ ածելեաց,
և սակաւիկ մի անցի ընդ ասացեալ դժար
թունս, զի ածայնով կոչմամբ փեսայի
սակաւ մի բարձրագոյն ամբառնայցեմ
զիս, իսկոյն գտի, զոր սիրէի, և 'ի միա
սին գտի 'ի նմա զճշմարիտ խաղաղութի,
զհաստատուն հանդարտութիւն. և զլի
ուրախութիւն ։ Հարսն առ գիւտ փեսային
իւրոյ սակաւիկ մի էանց զդժարթնովք,
և ածայնով կոչմամբ փեսայի սակաւ մի
բարձրագոյն վերացաւ ։ քանզի այս է եզա
կան պարգև այ, և ոչ կարէ ստանիլ միայ
նով ներհմտացուցմամբ մարդկան. կամ
հրեշտակաց, կամ իսկականաւ ջանիւ ։ վա
որոյ վերախնդրի վերացումն 'ի ձեռն ած
այնոյ կոչման փեսայի ։ խաղաղութիւնն,
հանդարտութիւնն, և ուրախութիւնն,
զորս եգիտ հարսն 'ի գտեցեալ փեսայի,
վասն այնր մասին ժամանակի այնպէս յա
գեցուցանեն զհոգի, զի թէպէտ գիտիցէ,
զինքն ոչ գոլ ընդունեալ զծայրագոյն բա
րին, և ոչ որպէս է այդ, գոլ տեսեալ,
կամ

կամ զգացեալ. սակայն համարիցի, և ըզ-
գայցէ. զինքն վասն կցութեան այսր
կենի զնա առատապէս վայելել. և զինքն
այնպէս հասեալ գոլ փափագանաց. զի
լիապէս կարիցէ. և պարտիցի 'ի նմա հա
մահանգիլ. ուստի իսկոյն ստորադրէ. կա
լայ զնա. ոչ արձակեցից. կալայ զնա յա
ձախականաւ խորհմամբ, մտածմամբ, խոկ
մամբ, և անպակասականաւ սիրով. նմա
նութեամբ կենաց, և վարուց, համահետե
մամբ. և մշտնջենաւորաւ հպատակութ̅ե,
և ծառայութեամբ կամաց. և անձնարկու
թեան նորա. վ̅ս զի այսորիւք որպէս համ
բուրիւք, և ընդգրկանօք զնա ինձ առպն
տեցեալ. և ներքսագունեղապէս ընդ իս
ունիմ միաւորեցեալ. նա և զմի ինչ զիս
ընդ նմա առնեմ. արդարև հարսն գտեալ
զփեսայն իւր միանայ ընդ նմա սիրով.
քանզի սաստկութիւն սիրոյ հալէ զնա. և
միացուցանէ զնա ընդ փեսայի. վասն զի
որպէս սաստիկ ջերմութիւն հրոյ հալէ
զսառն, և զնա գրեթէ 'ի յատուկ բնու
թենէ բացաշարժէ, և առնէ զնա տրամա
հոսիլ, և համախառնիլ հողոյ. ներ նորա
ներըմպել, և ներծծիլ, և ընդ նմա գրե
թէ մի ինչ լինել. այսպէս սաստիկ սէրն
ա̅յ հալէ զհոգի, և առնէ զնա 'ի յինքենէ
գրեթէ տրամահոսել. և բոլոր այնպէս
ներծծիլ. ներկլանիլ. և ներըմպել 'ի յա̅յ.

զի երևիցին 'ի յերկուց լինիլ ամենևին մի ինչ։ աստուստ երբեմն ծնանի արտագնացումն 'ի յինքենէ․ մոռացումն իւրեան ; ապշութիւն հոգւոյ, անդրագնացումն 'ի յԱծ, յափշտակութիւն ; թռումն, քուն ; և հալումն հոգւոյ։ ուստի հոգի հայեցեալ սիրով, ասի նուազիլ 'ի յինքեան ; կորուսանել զիւր ինքն, վերածիլ 'ի յոչ ինչ մտանել 'ի յանդունդ Ածութեան, դառնալ, և անդրակերպիլ 'ի յԱծ, և 'ի յայն անստեղծ․ նախագաղափարական յաւիտենական գոյն։ ուստի հարսն հալեցեալ սիրով, և միաւորեցեալ ընդ փեսայի, ասէ․ կալայ ուրեմն այսպէս զսիրեցեալն իմ, ոչ թողի զիս զատիլ 'ի գրկանաց նորա․ նա և հաստատապէս 'ի մտի սահմանեցի ոչ արձակել զնա ; մինչև ներմուծանիցեմ 'ի տուն մօր իմոյ, այսինքն իմ․ մօր իմոյ կոչեմ վասն համեստութեան։ տունս, և սենեակս այս է սիրտ իմ․ է միտ իմ․ է ներքին խորհուրդ բնութեան իմոյ ; է մէջ սրտի իմոյ, է վերնագոյն, և ազնուագոյն մասն հոգւոյ իմոյ, ուր բնակին առաքինութիւնք Ածաբանականք, պարգևք հոգւոյն սրբոյ, և այլք ներքինք առաքինութիւնք․ 'ի սենեկի յայսմիկ հարսն տենչայ ունիլ զներքսագունեղ․ և զբարեկամագունեղ ընտանեկցութիւն ընդ փեսայի․ և առնել ընդ նմա զհոգևոր հարսանիս․ տեն

չայ մշտնջենաւորապէս վայելել զներկայ ութիւն նորա. արածել խօսակցութ̃ք նորա քաղցրագունեղիւք, ուսանել զգաղտ նիս. հրճուել ընդ նմա. և բերկրիլ, և ըզ մայլել անենչալի գրկամբք նորա ապահովա ցեալ: Եւ յիրաւի շուտով եհաս փափա գանաց իւրոց քանզի յափշտակեցեալ 'ի յապշութիւն խոկման, և սիրոյ, մտանէ

'ի յանուշագունեղ քուն.

բն 5. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Եմի 'ի զօրութիւնս. և յուժգնութիւնս անդաս տանի. եթէ յառնիցէք, զարթուցիք ըզ սէրն, մինչև կամեսցի. Լատիներէն այս պէս է. երդմնեցուցանեմ զձեզ դստերք Եմի, ընդ այծեմունս, և ընդ եղջերուս դաշտաց, զի մի յարուցանիցէք, և մի զար թուցանիցէք զսիրեցեալն, մինչև ինքն կա

միցի.

մեկ Փեսայն երկնաւոր սիրով ընդունի զայն, զոր արար հարսն, և խնդութեամբ հաճի 'ի յարարմունս նորա, և երդմնեցուցմամբ արգելու զնա վրդովիլ. բայց քանզի այն մեկ, որ այնքանաւ ջանիւ խնդրեալ էր զփեսայն, և գտեալ էր, և խոստացեալ էր զինքն զնա ոչ երբէք թող արձակելոց. և արդ 'ի լաւ մասին փեշերոյ 'ի բազուկս նր̃ համահանդուցեալ էր, զոչ ինչ այլ իր գործելով, ո՛չ վայելեաց, նա և 'ի տուըն ջեան նստել, և մնալ 'ի տան, մինչ փեսայն

աձա

աճապարելով ելանէ 'ի դուրս․ Հարկեղե-
նա 'ի միասին ելանել 'ի յագարակ, և 'ի
գիւղ, և ընկերակցել փեսայի, որ բա-
ցագնայ առ հոտս։ ուստի ելանէ արտաքս,
գնայ 'ի յագարակ, և 'ի գիւղ, ընկերակցի
փեսայի, և գնայ զհետ նորա։ վասն որոյ
ընտիր, ազնիւ, և պայծառ ընկերակիցք
նորա, զարմացեալք 'ի վերայ նոր գեղոյ
կուսութեան նորա, հիացեալք 'ի վերայ բա-
նաւոր արարմանց նորա, դրուատեալք
զշնորհալի, զհամեստ, և զպարկեշտ ըն-
թացս, և գնացս նորա, նշմարեալք զանու-
շահոտ բուրումն հանդերձից, և զգես-
տուց նորա, և նկատեալք զգովելի զառա-
քինութիւնս նորա, հարցանեն․

6․ Ո՞վ է սա, որ ելանէ յանապատէ, իբրև ըն
զատեղն ծխոյ խնկեալ, զմուռս, և կնդրուկ
յա̃մ փոշեաց իւղեփեցաց․ Լատիներէն
այսպէս է․ ո՞վ է սա, որ ելանէ ընդ անա-
պատ, իբրև զատեղիկ ծխոյ 'ի խնկոց ըզ-
մռոյ, և կնդրկի, և ա̃մ փոշւոյ իւղեփեցի։
Այս զեկուցանել կամին հարցանելով, մեկ
ո՞վ է սա, որ ելանէ ընդ անապատ, որ
'ի մէջ այնքան աշխարհական աղտեղուեց,
այնքան փշոց, այնքան տատասկաց, 'ի մէջ
անկողնոց վիշապաց, և ճարակաց ջայլա-
մանց, 'ի մէջ յուշկապարկաց․ համբարո-
ւաց․ և գխաւորաց․ 'ի մէջ առ ջուրց․ և
առ խծուց․ ոչ բնութեամբ․ ոչ ներ
գութեամբ․

գութեամբ. ոչ հեղգութեամբ. և ոչ ահիւ արգելանի. այլ հզօրեղապէս պարտեալ զԹշնամիս. յաղթեալ զհզօրս. զերծուցեալ զինքն ՚ի ձեռաց գարանակալաց պահեալ զինքն անարատ. և մաքուր ՚ի գարշելեաց. արհամարհեալ զինքասիրութիւն, զգուշացեալ ՚ի յունայնութեանց, անգոսնեալ զերկրաւորս, անխայթ արարեալ զժամանակաւորս, տենչացեալ երկնայնոց, ընտրեալ զյաւիտենականս, գեղեցկացեալ շնորհօք, զօրացեալ պարգևօք, զարդարեցեալ առաքինութեամբք, բորբոքեցեալ ջերմեռանդութեամբ, լուցեալ հրով սիրոյ ա̄ծայնոյ, ճախացեալ արդեամբք թևաթևացեալ ՚ի բեռանց, և վերացուցեալ անոյշ հոգւով, արագագունեղապէս, և ուղղագունեղապէս ելանէ յերկինս, առաթոռն. և առ ծոց հօր երկնաւորի. իբրև զատեղիկ ծխոյ, այսինքն հանգոյն խնկոյ շինեցելոյ ՚ի ծխանելեաց զմռոյ ուրացման իւրեան, Ճգնութեան. և Թախանձանաց գործունեայ կենաց. և ՚ի ծխանելեաց կնդրկի աղօթից. և խոկման. և ՚ի ծխանելեաց ա̄մ փոշեաց իւղեփեցաց. այսինքն ՚ի միասին ա̄մ առաքինութեանց. ըստ եղանակի ողջակիզի մշտնջենաւորի հրով սիրոյ սորա կիզեցելոյ. և ծախեցելոյ. բուրմամբ մեծագունեղի անուշահոտութեան ՚ի վերելանէ ոչ ցրուեալ զծուխ աստի անտի առ կողմունս. այլ հանգոյն ծխոյ. որ ուղղապէս

վերանայ

վերանայ 'ի բարձունս․ ուղղեալ զգիտա
ւորութիւն իւր առ ած․ հանդերձ մաք
րագունեղիւ տենչմամբ նմա միայնոյ հա
ճոյանալոյ․ և զնա միայն պաշտելոյ․ այսո
քիկ են առաջինք պտուղք շնորհեցեալք
հարսին 'ի յառագաստէ փեսային․ հետևին
և այլք պտուղք․ նա, որ երբեմն եղև
անկողին գաղտնաբարոյ, և զաղիր ախտից
այժմ է ողջ·խոհագունեղ․ և մաքրագու
նեղ․ և զգաստագունեղ․

7․ Ահա գահոյք սաղոմոնի վաթսուն զօ բն
րաւորք շուրջ զնովաւ 'ի զօրաւորացն իլի
Լատիներեն այսպէս է․ ահա զանկողնիկ
սողոմոնի վաթսուն հզօրք շրջապատեն 'ի
հզօրագունեղիցն իլի․

Նշանակի, թէ անկողնիկ սողոմոնի մեկ
հանգարտ, և խաղաղարար արքայի, չէ
պաշարեցեալ փշովք հին ծանր անօրէնու
թեանց, տատասկօք անհանգստացուցիչ
զբաղմանց, և հոգոց, և տրմկօք, և վրդով
մամբք ախտից հակաշնչողաց․ այլ է գօ
տևորեցեալ հանդարտ խաղաղութեամբ․
զարդարեցեալ արծաթով, ոսկեաւ, և ա-
կամբք պատուականօք շնորհաց երկնայնոց
և ծաղկեցեալ առաքինութեամբք ամենից
սեռից․ յորում իբրև 'ի տեղւոջ ինքեան
հաճոյագունեղի երկնային սողոմոնն․ իշ
խանն, և հեղինակն խաղաղութեան ճշ
մարտի, մշտնջենաւորապէս հանահանգի․

Եւ

և ընդ նմա հոգի. որ անսայ աղօթից, և խոկման, զուարձացեալ հրճուի. և բերկրի՛ արդ ոչ պարտին ինքեանց երկնչել հոգիք բարեպաշտք 'ի զարհուրանաց գիշերայնոց. այսինքն 'ի դիւաց, 'ի յաշխարհէ, և 'ի մարմնոյ, որք 'ի գիշերային ժամանակի, այսինքն 'ի խաւարի այսր կենցաղոյ, սովորք են մտսա զարհուրեցուցանել. քանզի որպէս զառագաստ երկրաւոր սողոմոն արքայի պահպահեն անապական վատսուն սպառազէնք,'ի յամենից ցեղից հինգ հինգհզօրագունեղք, այսպէս զանկողնիկ երկնաւոր սողոմոնի պաշտպանեն վատսուն անձնապահք, այսինքն անթիւ պահապանք, մասնաւոր արտաքինք, որզան, մարգարէք, առաքեալք, առաջնորդք, հովիւք, վարդապետք, քարոզիչք, խոստովանափարք, խրատիչք, և հրեշտակք պահապանք, և մասնաւոր ներքինք, հեկեն, առաքինութիւնք, իւրաքանչիւրք ընդդէմ իւրոյ հակառակ յոռութեան սպառազինեցեալք, ազնիւք առաջադրութիւնք. քաջաերաք մտածմունք, և իղձք, որք 'ի խորհմանէ, և խոկմանէ յառաջ ծորին, որք են հզօրագոյնք, և զուարթագոյնք պահապանք.

թն 8. Ամենեքեան ունին զսուր ուսեալք ըզպատերազմ. այր իւրանչիւր զսուր իւր 'ի վերայ ազդեր իւրոյ 'ի զարհուրանաց գիշերոյ

չերոյ։ Մատեներէն այսպէս է․ ամենեքին կալեալք զսուսերս, առ պատերազմս հմտագունեղք․ իւրաքանչիւրոյ սուսեր 'ի վերայ ազդեր իւրոյ վասն զարհուրանաց գիշերայնոց։

Այսպէս ցուցանի․ թէ պահապանք, Մ․Կ
որք պահեն, և պահպանեն զառագաստ, և զանկողին երկնաւոր փեսայի, այսինքն․ զսիրտ հոգւոյ արդարոյ․ են յոյժ զօրաւորք․ են զօրաւորք․ քանզի ունին զսուսեր․ քանզի պատրաստեալք են զսուսեր․ և քանզի ուսեալք են զպատերազմ․ են սուսերք բանք ածային․ քանզի նորօք հատանեմք զգլուխս թշնամեաց մերոց․ են սուսերք ածային օգնականութիւնք․ քանզի նորօք զօրանամք ընդդէմ այնոցիկ լրաց, որք ջանան մեզ վնասել․ են սուսերք քրիստոնէական առաքինութիւնք․ քանզի նորօք իշխեմք թելադրութեանց սատանայի չար օրինակաց աշխարհի, և ցանկութեանց մարմնոյ․ բարեպաշտք հոգիք սպառազինեցեալք են ասացեալ սուսերօք․ քանզի շրջապատեցեալք են պարսպօք ա՟ծ գրոց, քաջալերեցեալք են ածային օգնականութեամբք, և կազդուրեցեալք են գերբնական․ և բնազանցական առաքինութեամբք ուսեալք են զպատերազմ․ քանզի տեղեկացուցեալք են 'ի ա՟ծ գրոց, որովք կարիցեն յաղթել զթշնամիս ունել զսուսերս պատրաստեցեալս․ քանզի են պատրաստք սասցեալ

ցեալ մուսերք․ ամրացուցեալք են առա ցեալ սպառազինութեամբք վասն զարհու րանաց գիշերայնոց․ այսինքն զի մի մնասե ցեն նոցա աշխարհականք այսր խաւարի․

ԺԴ Գ․ Դ՛աշնաւորակ արար իւր արքայ սաղօ մոն 'ի փայտից լիբանանու․ Սատիներէն նոյնգունակ է․ դահոյս արար իւրեան ար քայ սողոմոն 'ի փայտից լիբանանու․

ԺԵ Յ․ անուցանի․ Թէ արքայն սողոմոն նա և արար զտանողական դաշնաւորակ․ քան զի երկնաւոր սողոմոն արար զգործ ար ժանի արքայական մեծ վայելչութեան, և անչափ իմաստութեան իւրոյ, զոր վասն կազմելոյ իրականաց զիրս պատուականագու նեղս․ քանզի զգործ իւր արար 'ի փայտից լիբանանու․ տանողական դաշնաւորակք, զորս արար երկնային սողոմոն, են առա քեալք, աւետարանիչք, վարդապետք, և քարոզիչք մեր․ քանզի որպէս նիւթական դաշնաւորակաւ երկրաւոր արքայ տարեալ լինիւր 'ի հրապարակի մեծագունեղիւ հան դիսիւ, Թարց աշխատութեան, և փոխա նորդութեան, 'ի միասին հանգստացեալ և Ճանապարհորդեալ․ այսպէս երկնաւոր արքայ կամի նորոք, որոց 'ի սիրտ 'ի ձեռն գիրոյ, և ոգւոց պարգևաց իւրոց համահան գէ, տարեալ լինել 'ի ծանօթութ 'ի բոլոր աշխարհէ Թարց խռովութ հանգստութ իւ րոց, և Թարց մնասուց այնոցիկ, որք զնա

քաց

բարձեալք տանիցին։ ուստի հարսն է ե-
կեղեցի․ փեսայն է Քս․ գահոյք են հո
գիք բարեպաշտք, տանողական գահաւո
րակք են վարդապետք նըք, որք առնեն,
ևուսուցանեն։ աք ասին տանողական գահա
ւորակք․ քանզի բարձեալք զարքայն երկնա
ւոր, տանին զնա 'ի ծանօթութիւն այլոց
'ի ձեռն քարոզութեանց իւրեանց, և ա-
ծեալք զնոսա 'ի յարդարութիւն, հանգու
ցանեն զնա 'ի սիրտս նոցա։ սոքա ասին
գործք յն արքայն։ քանզի նա առաքէ զնս
ասին շինեցեալք 'ի պատուականագունե
ղից փայտից։ քանզի փեսայն, և արքայն երկ
նաւոր տուեալ է նոցա զազնիւ բնութի․
շնորհեալ է զբարի հոգի, պարգևեալ
է գերազանց խելահասութիւն, և բաշ
խեալ է զհամայնս ընտիր տաղանդս։ զո
վասանի ուրեմն ոչ միայն ծաղկաւէտ, և
զոճարձացուցիչ անկողնիկ հարսնի, այլ և
տանողական գահաւորակ երկնաւոր սողո
մոնի։

10․ Օսիւնսն արար արծաթեղէնս, և բն
զնարսն ոսկեղէնս․ և զխարիսխն ծիրանի
և զմէջն ականակապ տարածեալ զսէր 'ի
դստերացն եէմի։ Լատիններէն այսպէս է
զսիւնսն նորա արար արծաթեղէնս, հյե
նարանն ոսկեղէն․ զելն ծիրանեայ․ զմէջս
տարածեաց սիրով վասն դստերացն եէմի
Երդ․ պատմէ զսեանց, զյենարանէ, զելէ մեկ
և

և զմիջոց տանողական գահաւորակի։ վասն
սեանց ասէ. Թէ արար զնոսա արծաթե
ղէնս, այսինքն ամուրս, և պայծառս։ սի
ւնքն են եօթն պարգևք հոգւոյն սրբոյ,
և ա̃ծաբանականք, և կարտինալականք ա
ռաքինութիւնք։ սոքա ասին սիւնք արծա
թեղէնք։ քանզի յոյժ ամրացուցանեն, և
պայծառացուցանեն զանձն, յորում գտա
նին, և են յոյժ շնորհաւէտք։ վասն յենա
րանի, նստարանի, և աթոռոյ, ասէ, Թէ
արար զնա ոսկեղէն, այսինքն պատուական
նստարանն է վերնագոյն մասն հոգւոյ։
ոսկեղէն ասէ. զի գեղեցկացեալ է ոսկեա
մտածման, և խոկման իրաց ա̃ծայնոց. յոր
ժամ հոգի վարդապետի, և ուսուցչի մտա
ծելով. և խոկալով զիրս ա̃ծայինս լինի նս
տարան երկնաւոր արքայի, յայնժամ և ա̃ծ
՚ի հոգւոջ վերահանգչի, և ինքն հոգին ՚ի
յա̃ծ վերահանգչի։ յայնժամ զովանայ հո
գի. և սփոփի, սնանի, և պարարի, զօրա
նայ, և քաջալերի, և կարողանայ լուսաւո
րել զայլս, և զլուսաւորեցեալս զովացուցա
նել. և հանգստացուցանել։ վասն ելի, այս
ինքն աստիճանաց։ որովք ելանի ՚ի գահա
ւորակ, ասէ, Թէ արար ծիրանեայս, այս
ինքն ծիրանեայ օթոցիւք, և ծիրանագոյն
ապրշումեղինօք զարդարեաց։ աստիճանք,
որովք ելանի ՚ի գահաւորակ, են համբե
րողական ձնշումն մարմնոյ, սպանումն երկ

րաւոր

բաւոր անդամոց, և հզօր տեւումն անձկու
թեանց, և նեղութեանց. քանզի սոքօք ճշ
մարտապէս լինիմք աջքայականք, և նմանի
մք արքային արքայից, այսինքն խաչելելոյն
յն. վասն միջաց, և ընդ միջականաց մա
սանց. այսինքն. որք են 'ի մէջ ելի, և յե
նարանի, այսինքն, որք են 'ի մէջ աստե
ձանաց, և նստարանի, նմանապէս և վասն
յատակի գահաւորակի, ասէ, թէ տարա
ծեաց զնոսա սիրով, այսինքն, իրօք, որք
ամենեցուն են հաճոյագունեղք, այսինքն
ակամբք, և մանեկօք պատուականագունե
ղիւք. ծանուցանէ. թէ զմիջոց գահաւո
րակի, այսինքն, զսիրտ վարդապետի, և
ուսուցչի ելից առաքինութեամբ սիրոյ,
որ է ջերմագոյն, և պայծառագոյն քան
զայլ առաքինութիւնս. և որ բաշխէ այ
լոց զջերմութիւն. և զպայծառութիւն.
և որ գեղեցկացուցանէ զայլս. քանզի հա
մայնք առաքինութիւնք զպայծառութի,
և զգեղեցկութիւն իւրեանց առնուն 'ի սի
րոյ. արքայն երկնաւոր զսիրտ վարդապե
տի, և ուսուցչի ելից սիրով վասն դստե
րացն եէմի, այսինքն վասն այլոց հոգեաց,
զի որ վառեցեալ. բորբոքեցեալ. և պայ
ծառացեալ է սիրով. զսէրն տանիցի նա
և 'ի յայլ հոգիս, որք սիրեն զխաղաղու
թիւն, զի և նոքա վառիցին, և բորբոքի
ցին սիրով, և պայծառանացեն առաքինու
թեամբք.

թեամբք. այս է ծայրագոյն արժանաւո
րութիւն հոգւոյ, գործակցիլ այ 'ի հո
գալն զփրկութիւն հոգեաց. արդ լուի՜
ցուք զքաղցրութիւն հարսին, որով զա՜մ
հաւատացեալս ձայնէ, և յորդորէ առ 'ի
տեսանել, սիրել, և պաշտել զերկնաւոր
փեսայն իւր.

բն 11. Ելէք, և տեսէք դստերք սիօնի յար
քայն սաղոմոն զպսակն, որով պսակեաց ըզ
նա մայր իւր յաւուր փեսայութեան իւ
րոյ, և յաւուր ուրախութեան սրտի ն՛ր.
Ատիններէն այսպէս է. Ելէք արտաքս, և
տեսէք դստերք սիօնի զարքայն սողոմոն
'ի պսակումն, որով պսակեաց զնա մայր իւր
'ի յաւուր փեսայութեան նորա, և 'ի յաւ
ուրաուրախութեան սրտի նորա.

մեկ Զարմն հոգևոր զդստերս եկեղեցւոյ հրա
ւիրէ առ փեսայն ք՜ս. զայս նոցա ծանու
ցանել կամի, և այսպէս առ նոսա խօսիլ
դիտէ. ո՜վ հոգիք, որք մակագրեցեալք
էք վերնայնոյ քաղաքի, որք հաւատայք
ք՜ի, և յուսայք զերկնային երանութիւն,
'ի տանց, և 'ի փապարաց յոռութեանց, և
վատթարութեանց, 'ի ձեռն ապաշխարու
թեան ելէք արտաքս, 'ի բաց ձգեցէք
զիրս զայնոսիկ, որք հեռացուցանեն զձեզ
'ի հոգալոյ զփրկութիւն, և զկատարելու
թիւն ձեր. հրաժարեցարուք, և հեռացա
րուք 'ի վատթար գործոց, 'ի յանկարգ ցան
կութեանց.

կութեանց, և 'ի յաւելորդ զբաղմանց, որք
ձեզ յոյժ վնասեն հոգևորապէս. դատար
կացուցէք զմիտս ձեր 'ի սնոտի մտածմանց
և մտեալք 'ի ճանապարհ փրկութեան մտա
ծեցէք զիրս հոգևորս, խոսեցարուք զբա
րիս, և անսացէք իրաց, որք են գովելիք
ազնիւք, և ընտիրք, որք շնորհեն զպայծա
ռութիւն, և պարգևեն զբերկրութիւն,
որք զուարճացուցանեն զմիտ. և հանդար
տեցուցանեն զմիտ, և տան զհանգստու
թիւն խղճի մտաց. տեսէք զարքայն երկ
նի, և երկրի, զթագաւորն ձեր, զփեսայն
ձեր երկնաւոր. զխորհրդական սողոմոնն.
զտենչալին ամենեցուն. զգեր 'ի վերոյ փա
ռաւոր արքայն. զփրկիչն աշխարհի զյս՟.
հայեցարուք 'ի յարքայական պսակ նորա.
այսինքն 'ի յիմ կատարելութիւնս ա՟ծայնոյ
և մարդկայնոյ բնութեան նորա. զորս զա
նազանս 'ի զանազան ժամանակս յայտնեաց
աշխարհի: հայեցարուք 'ի պսակն. որ կայ
'ի գլխոջ նորա: զի 'ի վերայ գլխոյ նորա
կան պսակք բազումք. որովք մայր նորա
պսակեաց զնա 'ի յաւուր փեսայութեան
նորա: քանզի 'ի յաւուր յաւիտենականու
թեան. ա՟ծային պարարտութ՟ի պսակեաց
զնա ա՟ծութեամբ իւրով: 'ի յաւուր ներ
մարմնութեան. պսակեաց զնա և կոյսն
մայր. և հայրն երկնաւոր մարդկութեամբ
նորին. հանդերձ լիութեամբ իմաստու

թեան

թեան. և շնորհաց. 'ի յաւուր չարչարանաց
պսակեաց զնա մայր ժողովրդանոց փրկե
ղէն պսակաւ. հանդերձ թագմօք գանիւք
վիրօք. և նախատանօք. 'ի յաւուր յարութե̃
պսակեաց զնա ա̃ծային արդարութիւն
պսակաւ փառաց. 'ի յաւուր դարձման հո
գեաց, պսակեաց զնա 'ի յերկրի եկեղեցի
զինուորեալ պսակաւ հաւատացելոց. այս
ինքն գոտևորեաց զնա բազմութեամբ հա
ւատացելոց. իսկ 'ի յերկինս եկեղեցի փա
ռաւորեալ պսակեաց զնա պսակաւ սրբոց.
հայեցարուք 'ի փառաւոր, և 'ի վայելուչ
մշտնջենաւոր պսակ երկնաւոր արքայի,
զորմէ ասէ եսայի. զամենեսին զնոսա իբրև
զպատմուճան զգեցցիս, և արկցես զնոսա
զքև իբրև զզարդ հարսին. եղիցիս պսակ
վայելչութեան 'ի ձեռին տ̃ն, և թագ ար
քայութեան 'ի ձեռին ա̃յ քոյ. ուրեմն դս
տերք սիօնի ելէք արտաքս առ այսոսիկ
տեղիս ձեզ արժանիս, և ա̃յ հաճոյս, և
ընդունելիս. քանզի սոքա են հզօրք, և
զօրաւորք, առ 'ի յարտաքսարշելոյ զձեզ 'ի
յունայնութեանց, և 'ի ստութեանց այսր
կենցաղոյ, առ գրկանս, և առ ծոց երկ
նաւոր փեսայի.

Գլուխ

## Գլուխ չորրորդ․

Ի գլխոյ յայսմիկ դրուատի հարսն, գո
վասանին եզականք մասունք նորա,
գովասանօք մտրակի հարսն առ իւր
բարձրագոյնս և հրաւիրի առ փառա
ւորագոյն պսակ․ մանաւանդ առ ՚ի հո
գալ զփրկութիւն ընկերաց․ և առ ՚ի յանձ
նառնուլ զաշխատանս, և զցաւս վասն
Քի․ և իրակին զանազան փոխաբերութիւք
և նմանութիւնք, որպէս և ՚ի յայլս գլուխս
այսր երգաբանութեան լինի, զի որ ոչ
կարէ միով փոխաբերութեամբ, և նմա
նութեամբ բաւականապէս բարզաբանիլ
՚ի ձեռն բազմազան, և պէսպէս նմանու
թեանց․ որքան կարիցէ․ բացատրիցի․

1․ Ահա ես գեղեցիկ մերձաւոր իմ․ ահա բն
ես գեղեցիկ, աչք քո աղաւնեայ բաց ՚ի
լռութենէդ քումմէ․ վարսք քո իբրև
զհօտանս այծից, որք երևեցան ՚ի գաղայա
դէ․ Լատիներէն այսպէս է․ որքան գե
ղեցիկ ես բարեկամ իմ, որքան գեղեցիկ
ես․ աչք քո աղաւնեաց, բաց ՚ի յայնմանէ
որ ՚ի ներքուստ թաքչի․ վարսք քո իբրև
զհօտանս այծից, որք ելին ՚ի լեռնէ գա
ղայադի․

Փեսայն երկնաւոր տեսեալ զջանս հարսի մեկ
ջանացողի զայլ գստերս սիօնի ձգել ՚ի
սէր փեսայի, այնպէս հաճի ՚ի նա, թէ
զար

զարմանաւոր գովասանէ զնա ։ զի այսպէս
խօսի ընդ նմա ․ դու սիրական հարսն իմ
որ ես ինձ հաւատարիմ բարեկամ ․ ես
յոյժ գեղեցիկ ․ քանզի գեղեցիկ ես մտած-
մամբ , գեղեցիկ ես խոկմամբ , գեղեցիկ
ես բանիւք , և գեղեցիկ ես արարողութե
գեղեցիկ ես մտածմամբ ․ քանզի մտածես
զհոգևորս ։ գեղեցիկ ես խոկմամբ ․ քանզի
խոկաս զա̅ծայինս ։ գեղեցիկ ես բանիւք ։
քանզի խօսիս զբանաւորս խօսս ։ գեղե
ցիկ ես արարողութեամբ ․ քանզի առնես
զգործս ա̅ծահաճոյս ։ գեղեցիկք են և
աչք քո ․ քանզի նմանին աչաց աղաւնեաց ։
վասն զի ունին զպարզմտաւորութիւն ,
զուղիղ հայեցողութիւն , և զխորհուրդս
մաքուրս , և բազմապտուղս ․ զիս դիտես ,
՚ի պատկեր իմ հայիս , և վասն փառաց իմոց
աշխատիս ։ գովելի ես արտաքսապէս , զի
գործես զգովելիս ։ գովելի ես և ներքսա
պէս ․ զի լցեալ ես շնորհօք երկնայնովք ,
և առաքինութեամբք բնազանցականօք ։ ու
րեմն գովելի է և ներքին մասն քո ։ քան
զի ունի զառատութիւն ընտիր շնորհաց
երկնայնոց , զորս ընդունիս յինէն վասն
ազնուագունեղից ըղձից , և վասն աղաւնա
կան գործոց քոց ․ իմա , զի որպէս սէր , և
ներքին բարի նախանձ քո է յոյժ մեծ , և
թաքուցեալ է ՚ի մարդկանէ ․ այսպէս
ես վարձ , որով վարձատրեմ զնոսա , է

յոյժ մեծ, և գաղեցել է 'ի ներքս 'ի գաղտնւոյն, և չէ յայտ ումեք, և ոչ քեզ ինքեան։ քանզի են գաղտնիք, զորս չէ օրէն մարդոյ խօսել։ դրոշմատելի է և խոհեմ լռութիւն, և զլռակացութիւն քո որով լռես լեզուաւ. բայց սրտիւ, փափագանօք, և հեծեծանօք աղաղակես։ այսու լռութեամբ առաւել զքեզ ինձ ծանուցանես, առաւել ինձ հաճոյանաս, և առաւել զօրանաս ընդդէմ թշնամեաց քոց. զայնպիսի լռակեցէ ասի. Նստիր միայնակեաց. և լռեր. քանզի համբարձ զինքն 'ի վերայ իւրեան։ եղև լռութիւն 'ի յերկինս այսինքն 'ի հոգւոյն կենցաղավարողն 'ի յերկինս, զժամ մի. հերք. և վարսք գլխոյ քոյ այսինքն մտածմունք, և իղձք, որք բղխեն 'ի հոգւոյ քումմէ, որպէս են բազումք, զանազանք, գեղեցիկք, և պարարտք այսպէս մեծագունեղի հոգացողութ̅բ չարակարգին, և ուղղին 'ի քէն առ մի վաղճան փառացն այ̅, որպէս հօրանք այծից, որք թէպէտ բնութեամբ իւրով իցեն արձակք, և ազատադոյն վազիցեն, և թռիցին. սակայն զուարթ հոգաբարձութեամբ հովուի ժուժկալին, և արգելանին, և այս լինի 'ի յարօտս պարարտագունեղս, և փրկաւէտագունեղս. որպիսիք են 'ի հովտի, և 'ի բարձրագունեղ լերին գաղոյադի, այսինքն կարկառոյ վկայութեան

այսինքն 'ի սբ գիրս, նորս համակուտին ած վկայութիւնք զայ, զքէ և զած խորհրդոց հաւատոյ, շուրջ զորովք ցանգ պարտին շրջիլ մտածմունք, և լիզէք սրբոց. զի ծնանիցին զճշմարիտ նազօրացիս, և զօրացուցանիցեն, և զարդարիցեն պայծառագոյնս, և սպիտակագոյնս քան զձիւն, և գեղեցկագոյնս քան զշափիւղայ:

բն 2. Ատամունք քո իբրև զերամակս կտրելոց, որք ելանեն 'ի լուացեաց, ամենեքեան երկուորիք, և անորդի ոչ գոյ 'ի նոսա: Լատիներէն այսպէս է. ատամունք քո իբրև զերամակս կտրելոց, որք ելին 'ի լուացարանէ. ամենեքեան էքիզօք ծննդովք և ամուլ ոչ գոյ 'ի մէջ նոցա:

մեկ Փեսայն երկնաւոր դրուատէ նա և զատամունս հարսին. ուստի այսպէս խօսի ընդ նմա. ատամունք քո, որք են գործիք ծամելոյ, և խօսելոյ, այսինքն ջանք քո, որովք անսաս սբ գրոց, մտածմունք քո, որովք մտածես. և վերամտածելով գրէթէ ծամես զբանս ածայինս. և աղօթք քո. որովք խօսակցիս ընդ այ. նմանին երամակաց ոչխարաց կտեցելոց. լուացելոց. և բաղմածնից. տենչք. մտածմունք. և աղօթք քո կոչին ատամունք. քանզի հանգոյն ատամանց. են սպիտակք պայծառութեամբ լուսոյ. են շարունակք բանաւոր շարակարգութեամբ. են կիցք վայելուչ կարգաւ.

են

են հզօրք հոգևոր ուժգնութեամբք. և
են յօրինեցեալք առ 'ի ծամելոյ. ուտելոյ
և խօսելոյ զբանս Ածային. բաղդատի՛ն
երամակաց. քանզի են յոյովք. նմանեցու-
ցանին ոչ խարաց խուզեցելոյ. քանզի հա-
տեալք են 'ի նոցանէ անկատարելութիւնք.
նմանին լուացելոց. քանզի չունին զաղտե-
ղութիւն, և զզազրութիւն չարութեան.
այլ են յստակք, սուրբք, և մաքուրք. վա՛ն
զի յստակեցեալք, և մաքրեցեալք են հրով
սիրոյ, և ջերմեռանդութեան. համեմա-
տին բազմածնից. քանզի են պարարտք,
և բազմածինք. վասն զի ծնանին 'ի միտս
զճշմարիտ ճանաչումն. ծնանին 'ի կամս
զջերմեռանդ սէր. և ծնանին 'ի յընկերոջ
զհաստատուն առաքինութիւն.

3. Իբրև լար կարմիր են շրթունք քո, և — բն
խօսք քո գեղեցիկք. իբրև կեղև նռան
այտք քո, բաց 'ի լռութենէդ քումմէ.
Լատիներէն այսպէս է. իբրև զխակալ
կարմիր, շրթունք քո, և խօսք քո քաղցր.
իբրև բեկտոր նռան, այդպէս այտք քո,
բաց 'ի յայնմանէ. որ 'ի ներքոյ գաղի.
Փիլոսայն երկնաւոր գովէ սա և զշրթունսն — մկն
զխօսս. և զձայնս հարսին. զի այսպէս խօսի
ընդ նմա. շրթունք քո, որք են գործիք
համբուրելոյ, և խօսելոյ, այսինքն ներքին
կենդանականութիւն քո, որով ներքսա-
պէս կենդանականիս ընդ Այ, համբուրե-
լով.

լով զնա համբուրիւք սիրոյ, և խոկման,
մտածելով զկատարելութիւնս նորա կա
պակցելով զքեզ ընդ նմա կապանօք սիրոյ
խօսակցելով ընդ նմա խօսակցութեամբ
ջերմեռանդ աղօթից, տենչալով կատա
րել զկամս նորա, և փափագելով դէմ յան
դիմանական տեսութեան նորա. և արտա
քին ընձեռումն քո, որով ընձեռես. ճա
ռես, պատմես, և խօսիս բերանով զՏ̃ր,
գովելով զնա արտաքսապէս, և փառաբա
նելով, ծանուցանելով, և բացադրելով
զկատարելութիւնս, և զբարերարութիւնս
նորա. և քարոզելով զպատուէրս նորա.
չունին զթխութիւն մեղաց, զդեղնութի
չարութեան. և զգարշելութիւն անօրէն
ութեանց. այլ են գեղեցիկք, և նմանին
գլխակապի կարմրոյ: են գեղեցիկք. քան
զի գեղեցկացուցեալք են զքեզ ներքսա
պէս, և արտաքսապէս: նմանին գլխակա
պի. քանզի շաղկապեալք են զքեզ ընդ
Տ̃յ, որ է արարիչ քո, Տ̃ր քո, հայր քո,
դատաւոր քո, իշխան քո, և արքայ քո.
նմանին կարմրոյ. քանզի կարմրացեալք են
հրով սիրոյ Ա̃ծայնոյ. քանզի ճաշակեալք
են զսէր, և արբեալք են զարիւն միածնի
և. քանզի հանդոյն վարդի վառեցեալք են
կարմրութեամբ, և բոցով Ա̃ծայնոց բա
նից: սակս որոյ խօսք քո քաղցունք են
առ ականջս Տ̃յ: քանզի են նմա հաճոյք,
և

և ընդունելիք, նա և քաղցունք են մարդկան։ քանզի յօժարութեամբ լսեն նոցա։ սոյնպիսի շրթունք վայելեն մանաւանդ քարոզչաց, խոստովանահարց, և այլոց պաշտօնէից եկեղեցւոյ։ վասն զի սոցա պատշաճի, և յարմարի առ քարշել, և առկապել զամ կարմիր գլխակապօք ոչ միայն ընդ իւրեանս 'ի ձեռն ներքսագունեղի միաւորութեան, և ընտանեկցութեան ընդ նմա․ այլ և ընդ ընկերի իւրեանց 'ի ձեռն յորդորման, 'ի ձեռն ներհմտացուցման․ 'ի ձեռն կապման վիրաց, և 'ի ձեռն թողութեան յանցանաց, և չարագործութեանց։ այտք քո, որք են աթոռ․ և նստարան ամօթոյ, այսինքն մաքուր․ և զգաստ ողջախոհութիւն քո․ պարկեշտ․ և համեստ ամօթխածութիւն քո, և խոհեմ, հանճարեղ, և խոհունակ կենցաղավարութիւն քո նմանին կոտորոյ․ կամ կեղևոյ նռան, այսինքն են մանաւոր պայծառք, մասնաւոր կարմիրք, և գեղեցիկք ծիրանեայ գունով, լիք հատովք բժշկականօք, և հիւթով քաղցրագունեղիւ, և փրկաւէտագունեղիւ, թէպէտ հանդերձ արտաքնով անհամիւ, խստաւ, և ոնտաւ կեղևով․ վասն կարծրութեան ջինութեան, և ապաշխարութեան․ որովք միայնովք ողջախոհութիւն․ և զգաստութիւն ապահով համապահի․ և պահպանի․ գովելի է և ա

լա

յուսկացութիւն քո. և ներքին գեղեցկու-
թի՛ քո, և ծածուկ կատարելութիւն. և
առաքինութիւն քո. 'ի յասացելոցն իմա
նամք, թէ փեսայն երկնաւոր դրոշմատէ
զջերմեռանդութիւն, զսէր, զբարի մը
տածմունս, զնէր փափագս, զբարեպաշտ
խոկմունս, զաղօթասիրութիւն, զբանաւոր
զխոհեմ, և զհանճարեղ խօսս, քաղցրու-
թիւնս. և բանս. զմաքրութիւն, զողջա
խոհութիւն, զհամեստութի՛. զպարկեշ
տութիւն. և զամօթխածութիւն. զմխա
կցութիւն. և զգաղտնի առաքինութիւնս.
և կատարելութիւնս հարսին 'ի ձեռն նմա
նութեանց.

ըն 4. Իբրև զաշտարակն դաւթի պարանոց
քո. որ շինեալ է 'ի թալպիոթ. հազար
վահան կախեալ են 'ի նմա. և ամ նետք
զօրաւորաց. Լատիններէն այսպէս է. իբրև
զաշտարակն դաւթի պարանոց քո, որ շի
նեցեալ է հանդերձ մարտկոցիւք. հազար
վահանք կախին 'ի նմանէ. ամ սպառազէ
նութիւն զօրաւորաց.

ժե-կ Փեսայն երկնաւոր գովէ և զպարանոց
հարսին. զի այսպէս խօսի ընդ նմա. պարա
նոց քո. որ է գործի վասն տանելոյ ըզ
լուծ. այսինքն հնազանդութիւն քո. որով
պատրաստեցեալ ես տանիլ զլուծ պատո
ւիրանացն իմ. և գեղեցիկ. և ուղիղ. և
երկայնաձիգ. և հաստատուն. և բոլոր.
և

է հզօր. է լի զինուք. և սպառազինութք ամ սեռի. և նմանի աշտարակի. զոր շինեաց արքայն դաւիթ 'ի լերին սիօնի. որ 'ի մջ գլուխ կոչի ամրոց սիօնի. և պէտոյանայր փոխանակ գետանոցի վասն շրջաւը տեսելոյ զամ իրս, և փոխանակ ամրութե քաղաքի վասն բացահերքելոյ, և բացամերժելոյ զթշնամիս, և ունէր զզանազան պատերազմանոցս, զբազմազան վահանս, զյոլով սուսերս, և գրեթէ զայլ անթիւ սպառազինութիւնս, կախեալս 'ի պարսպաց, և 'ի յորմոց, կամ 'ի զարդ բերթի, կամ 'ի յոգնութիւն զօրաց 'ի ժամանակի հարկաւորութեան։ հնազանդութիւն քո է գեղեցիկ. զի գեղեցկացեալ է շնորհօք զարդարեցեալ է առաքինութեամբք, և պայծառացեալ է սրբութեամբ։ է ուղիղ. զի յիս հայեցիս ուղղես զդիտաւորութիւն քո. և վասն սիրոյ իմոյ ընդունիս յօժարութեամբ զլուծ պատուիրանաց իմոց։ է երկայնամիտ. զի համբերութեամբ, երկայնմտութեամբ, և յարատեւութեամբ պահես զպատուէրս իմ, և կատարես զհրամանս իմ։ է հաստատուն. զի հաստատուն և կայուն մտօք ծառայես ինձ։ է բոլոր. զի ամբողջաբար կատարես զկամս իմ, և 'ի յամ կողմանէ հպատակիս ինձ։ է հզօր զի աղարտեալ խորտակէ զթշնամիս քո. և փշրէ զզօրութիւնս նոցա։ է լի զինուք

զի

զի սպառազինեցեալ է սատարութեամբ, նպաստութեամբ. և սոյն ջանականութեամբ երկնայնով, այսինքն օգնականութեամբն իւր. նման է աշտարակի դաւթի, և ամրոցի սիոնի. զի հանգոյն ամուր աշտարակի, և ամրոցի ես զնա ամրացուցեալ եմ. կացուցեալ եմ 'ի նմա զդիտանոցս խոհեմութե̃, հանճարեղութեան. խոհականութեան. գիտութեան. և իմաստութեան. և շինեալ եմ 'ի նմա ընդդէմ թշնամեաց զպատերազմանոցս հանճարոյ. բարեխառնութե̃. արդարութեան. և արիութեան. զօրացուցեալ եմ զնա վահանաւ հաւատոյ, քաջալերեալ եմ զնա սուսերաւ սբ̃ գրոց. և զզօրս առաքինութեանց նմա ընկերակցելոց կազդուրեալ եմ զինուք օգնականութեան իմոյ.

Բն 5. Երկու ստինք քո իբրև զերկուս ուլս այծեման. որք արածին 'ի շուշանս. Լատիներէն այսպէս է. երկու ստինք քո. որպէս երկու ուլք էքիզք այծեման. որք արածին 'ի շուշանս.

Մեկ Փեսայն երկնաւոր գովասանէ նա և զստինս հարսին. զի ասէ ցնա. երկու ստինք քո որք են հանգամանակք սիրոյ. և գգուանաց են գեղեցիկք. մաքուրք, պայծառք. կայտառք, գիրգք, փափուկք. ամօքք և անոյշք. և նմանին երկուց ուլից այծեմա̃ էքիզաց. որք արածին 'ի շուշանս. այսինքն 'ի յարօտս զուարճացուցիչս. պարարտացուցիչս

տացուցիչս․ և հոտաբերս․ որպիսի արօտք
են 'ի խոտաւ ձորս․ և հովիտս․ ուր բու
սանին շուշանք․ վասն զի ուլք․ որք արա
ծեցեալք են 'ի յայսպիսի արօտս․ սովորք
են լինել գէրք․ ստուարք․ յղփք․ պարար
տք, և հաճոյք տեսութեան․ ստինք հար
սին են երկու սէրք հոգւոյ բարեպաշտի,
որովք սիրէ զա՟ծ, և զընկեր․ այսինքն ա՟ծա
սիրութիւն, որով սիրէ զա՟ծ 'ի վեր քան
զա՟մ ինչ․ և վասն իւրեան․ և եղբայրասի
րութիւն, որով սիրէ զընկեր վասն ա՟յ․
սոքա ստինք կոչին․ քանզի արտահոսի 'ի
նոցանէ կաթն սիրեցման․ սոքա երկուո
րեակք ասին․ քանզի են քորք 'ի միասին ծնե
ցեալք․ քանզի որք պարտաւորիմք սիրել
զա՟ծ, պարտաւորիմք սիրել և զընկեր վասն
ա՟յ․ սոքա արածեցեալք շուշանիւք պայ
ծառագունեղիւք, և գեղեցկագունեղիւք
ա՟ծայնոց խորհրդոց, ուռին, մեծանան, և
աճին հատուցանել զփոխարէն ա՟մ եղա
նակօք, որովք կարիցեն, և ա՟յ, և ընկերի
վասն ա՟յ․ են գեղեցիկք․ զի գեղեցկացու
ցանեն զհոգի․ են մաքուրք․ զի են հա
մեստք, և ս՟րք․ են պայծառք․ զի պայծա
ռացուցանեն, և հռչակաւորեն զհոգի ա-
ռաջի ա՟յ․ են կայտառք․ զի զուարթացու
ցանեն զմիտ․ են փափուկք․ զի ուրախա
ցուցանեն, բերկրեցուցանեն, և հանգստա
ցուցանեն զսիրտ․ են անոյշք․ զի ծնանին
զհոգևոր

զհոգևոր անուշութիւն։ Նման են ուլից ստաճարաց, պարարտաց, և արածեցելոց ի շուշանս. կի ստաճարացուցանեն, և գիրացուցանեն արդեամբք, պարարտացուցանեն պտղաբերութեամբ բարեգործութեանց, և արածեն շուշանիւք ս̃բ գրոց, ա̃ծայնոց բանից, և քրիստոնէական առաքինութեանց։

բն 6. Մինչև տիւն ծագեսցի. և ստուերքն շարժեսցին. գնացից ես առանձինն 'ի լեառըն զմռսոյ և 'ի բլուր կնդրկի։ Լատինէրէն այսպէս է. մինչև տիւն առ շնչեսցէ, և խոնարհեսցին ստուերքն, գնացից 'ի լեառըն զմռսոյ, և 'ի բլուր կնդրկի.

մեկ Ծանուցանէ, թէ հարսն ջանայ այնքան արածել շուշանիւք խոկման ս̃բ գրոց, մըտածման ա̃ծայնոց բանից, անսացման ջերմեռանդ աղօթից, և կրթեցման 'ի ներգործութիւն սիրոյ, մինչև տիւն կատարելութեան ծագեսցի, և բացաշարժեսցին ստուերք անկատարելութեանց, և պակասութեանց, զի 'ի յա̃մ կողմանէ իցէ հաճոյ, և ընդունելի փեսային իւրում. վասն որոյ կոչէ զնա փեսայն երկնաւոր. զի թողեալ զլեառն լիպանոս իսկական կամի, և մասնաւոր օգտի, անցանիցէ ընդ նմա 'ի բարձրագունեղ լեառն զմռոյ ձգնութեան. անձկութեան. նեղութեանց, և վշտաց, և 'ի միասին 'ի բլուր կնդրկի. այսինքն աղօթից, մտածման, և խոկման. զայս նմա ծա

նուցանել

նուազանել գիտէ․ ով սիրական Հարսն իմ
կամիմ, զի ուրացեալ զյատուկ կամս քո․ և
զմասնաւոր օգուտ քո․ հայիցես 'ի յաղնո
ճագունեղ օրինակս իմ, զորս տուեալ եմ
վասն մեր առաքինութեանց, և քաջալերե
ցեալ հետևեցիս ինձ, ճնշելով զմարմին
քո, և բոլորովիմբ հնազանդեցուցանելով
զնա բանի․ համբերութեամբ տանելով
զնեղութիւնս․ և զանձկութիւնս, յօժա
րութեամբ յանձնառնլով զվիշտս, և զտա
ռապանս, բառնալով ուրախութեամբ
զխաչ քո․ քաջապէս զինելով ընդդէմ
դժուարութեանց, զմիտ քո կրթելով 'ի
յաղօթս, 'ի մտածմունս հոգևորս, և 'ի
խոկմունս Ա՟ծս, և արիացեալ ընկերիցես
ինձ 'ի վերս, ոչ խնդրելով զքեզ, այլ զիս
ոչ հայելով 'ի շահ քո, այլ 'ի պատիւ, և 'ի
փառս իմ, և ջանալով ինձ 'ի յամ՟ն կողմանէ
հաճոյանալ, և այսպէս ելանիցես 'ի լեառն
ազնիւ առաքինութեանց, և անտառանա
կան կատարելութեանց, և ընտիր գործոց
ց․ Ամենևին գեղեցիկ ես մերձաւոր իմ․ բն
և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ․ Լատիներէն
այսպէս է․ բոլոր գեղեցիկ մերձաւոր իմ,
և արատ ոչ գոյ 'ի քեզ․

Փեսայն երկնաւոր զեկուցանէ․ թէ հար մեկ
սն իւր է բոլոր գեղեցիկ․ և չունի զարատ
ուստի այսպէս ընդ նմա խօսակցիլ գիտէ
ոչ միայն 'ի վերոյ յն, շեցեալ անդամս քոյս
վերափայլէ

վերափայլէ գեղեցկութիւն, այլ և 'ի յայլս ամենեսին անգամս բոլոր մարմնոյ քոյ. վ̃ զի ելեալ ընդ իս 'ի լեառն զմռոյ. ուր ցանգ զմարմին քո ճնշես. և ճմլես զանձն քո, բացամերժես. և բացահերքես 'ի քէն զամ̃ զաղիր խորհուրդս, զամ̃ աղտեղի խօսս, և զամ̃ գարշելի գործս. սակս որոյ արատ ինչ կամաւոր մեղաց ոչ գոյ 'ի քեզ. այլ բոլոր գեղեցիկ ես. գեղեցիկ ես ներքսապէս, գեղեցիկ ես արտաքսապէս. գեղեցիկ ես ներքսապէս. զի ներքին մասն քո գեղեցկացեալ է շնորհօք, պայծառացեալ է պարգևօք հոգւոյն սրբոյ, և պերճացեալ է առաքինութեամբք. գեղեցիկ ես արտաքսապէս. զի արտաքին մասն քո վայելչացեալ է բանաւոր խօսիւք և արդար գործովք. գեղեցիկ ես հոգւով. զի ունիս զհոգի ներկերպաւորեցեալ շնորհօք արդարացուցչօք. գեղեցիկ ես պարգևօք, զի գտանին 'ի քեզ պարգևք հոգւոյն սրբոյ. գեղեցիկ ես մտօք. զի մտածես. և խոկաս զա̃ծայինս. գեղեցիկ ես յիշողութեամբ. զի յիշես զմշտնջենաւորս գեղեցիկ կամօք. զի կամիս զբարին. գեղեցիկ ես փափագաւ. զի փափագիս արբութեան, արդարութեան, և ճշմարիտ երանութեան. գեղեցիկ ես առաքինութեամբք. զի զգեցեալ ես զգերբնական, և զբնազանցական առաքինութիւն. գեղե

ցիկ

ցիկ ես հաւատով. զի ուղղափառ դաւա
նիս: գեղեցիկ ես յուսով. զի յուսաս զեր
կին: գեղեցիկ ես սիրով. զի ջերմաբար
սիրես զա̅ծ, և զընկեր վասն ա̅յ. գեղեցիկ
ես ջերմեռանդութեամբ. զի սիրես զհո
գևորս: գեղեցիկ ես խոնարհութե̅. զի հանձա
րեղաբար դատես: գեղեցիկ ես բարեխառ
նութե̅ զի բարեխառնես զմարմնաւոր արար
ղութիս: գեղեցիկ՝ ես արդարութե̅. զի իւրա
քանչիւրոյ զիւրն հատուցանես: գեղեցիկ
ես արիութեամբ. զի պատրաստ ես յան
ձնառնուլ զմահ վասն արդարութեան:
գեղեցիկ ես և այլովք առաքինութեամբք
զի են ընտիրք: գեղեցիկ ես ներքին զգա
ութեամբք. զի վարիս նոքօք 'ի փառս ա̅յ:
գեղեցիկ ես բանիւք, զի են բանականք:
գեղեցիկ ես մարմնով. զի ծառայեցուցա
նես զնա ա̅յ: գեղեցիկ ես արտաքին զգա
ութեամբք. զի հնազանդեցուցանես զնո̅
հրամանաց իմոց: գեղեցիկ ես տեսանելեօք.
զի հայիս պարկեշտաբար: գեղեցիկ ես
լսելեօք. զի լսես յօժարութեամբ զվար
դապետութիւնս աւետարանականս: գե
ղեցիկ ես բերանով, և լեզուաւ. զի զիս
խօսիս, և զիս ճաշակես: գեղեցիկ ես հո
տոտելեօք, զի զգաս զանուշահոտ բու
րումն հոգևոր ծաղկանց. գեղեցիկ ես
ձեռօք. զի առնես զարդարութիւն: գե
ղեցիկ ես ոտիւք. զի գնաս 'ի ճանապարհ
ուղիղ:

ուղիղ․ գեղեցիկ ես ներգործութեամբք զի են մեք․ գեղեցիկ ես արտագործութեամբք, զի են բարիք․ վերջապէս գեղեցիկ ես դիտաւորութեամբ, զի է ուղիղ․ ուրեմն բոլոր գեղեցիկ ես․ ուրեմն 'ի յամ կողմանէ, գեղեցիկ ես․ գեղեցկութիւնս այս անպական աճի 'ի բոլորջ կնդրկի․ ուր ստանաս զնոր շնորհս, և զարդ․

բն 8․ Եկ 'ի լիբանանէ հարսն․ եկ 'ի լիբանանէ․ եկեսցես, և անցցես 'ի սկզբանէ հաւատոյ․ 'ի գլխոյ սանիրայ, և հերմոնի․ 'ի մորեաց առիւծուց, և 'ի լերանց ընձուց

Լատիներէն այսպէս է․ եկ 'ի լիբանանէ հարսն իմ․ եկ 'ի լիբանանէ, եկ․ պսակեսցիս 'ի գլխոյ ամանայ, 'ի գագաթէ սանիրայ, և հերմոնի, 'ի բանից առիւծուց, 'ի լերանց ընձուց․

մեկ փեսայն երկնաւոր ձայնէ զհարսն առ կատարելութիւն, և առ պսակ․ ուստի խօսի ընդ նմա, ասելով․ եկ եկ եկ․ այսինքն․ փութագունեղապէս, և արագագունեղապէս եկ 'ի լիբանանէ յատուկ կամաց, և միանաւոր օգտի, և եկ ընդ իս առ ծաղլերին զմռոյ, և առ գագաթ բլրոյ կնդրկի, զի 'ի վերնագունեղի աստիճանի ըմբռնեցես զամ առաքինութիւնս․ և զայնոսիկ․ որք պատկանին առ կատարեալ ուրացումն անձին քոյ, և զայնոսիկ, որք պատկանին առ պաշտութիւն այ, և առ ներհմտա

ցուցումն

ցուցումն ընկերի։ Եկ ուրեմն սիրական
հարսն իմ, որ ես ինձ կարի յոյժ սիրելի։
կոչեմ զքեզ հարսն իմ նոր մականուանմբ.
զի աւատրիցեմ զնոր մորակս. և զնոր սէրս
և զի յիշիցես, թէ զորհանապազ պարտիս
ինձ ծնանիլ զհոգևոր զաւակ։ զոր եթէ
առնիցես, պսակեսցիս նախ 'ի կենի յայսմիկ
գերաղանցագունեղիւ, և ազնուականագու
նեղիւ պսակաւ որդեաց գեղեցկագունե
ղեց, և պարգևաց, և շնորհաց պայծառա
գունեղեց, յետոյ պսակեսցիս և 'ի հանդեր
ձելում անթառամ պսակաւ փառաց յա
ւիտենականաց։ պսակեսցիս 'ի գլխոյ, կամ
'ի գագաթէ լերանց, ամանայ. սանիրայ,
և հերմոնի, այսինքն. ծաղկամբք հաւաքե
ցելովք 'ի յանմատոյց, և 'ի յանկոխ գագա
թէ սասցեալ երից լերանց, որք են մի
մեանց կիցք, և 'ի միասին բաղկացուցանեն
զլեառն լիբանոս։ վասն զի մին բարձրա
գունեղ ծայր լիբանոսի կոչի ամանա,
միւսն ասի սանիր, կամ սարիոն. և երրոր
դըն ասի հերմոն։ լիբանոս է հանգանակ
հպարտութեան։ ամանա նշանակէ զբար
ձրութիւն, որում ամ հպարտք ամբարհա
ւանին։ սանիր, այսինքն ճրագ, նշանաւո
րէ զլեառն գիտութեան նանրոյ, և զպայ
ծառութիւն անուան։ հերմոն, այսինքն.
նուիրել, ուխտ ւ նշանակէ զլեառն հեշ
տութեան մարմնականի, որում աշխարհս
սէր

սէր մարդկինք զինքեանս բոլորս նուէրեն
և ուխտեն․ զայսոսիկ ամենեսին լերինս,
և զբնակիչս նոցին բարեպաշտ աղաչանօք
քովք բարի օրինակաւ քով՝ ներհմտացուց
մամբ, և յորդորմամբ հնազանդեցուցես
ինձ, և քեզ, և զամենեցունց վերաբերցես
զյաղթանակ, և զպսակ, ըստ այնմ եսայ
եայ․ փառք լիբանանի տուաւ նմա, վայ
ելչութիւն կարմէլայ, և սարօնի․ ոչ միայն
զհասարակ ամբոխն, կամ զտկարաց, և
զանզօրաց, այլ և զաւելածուց, և զընձուց
այսինքն, զհզօրագունեղից, զխորամանկա
գունեղից, և զգազանաբարոյագունեղից․
9․ Արտացուցեր զմեզ քոյր իմ հարսն․ սր
բն տացուցեր զմեզ, միով ակամբ քով, և մի
ով քառամանեկաւ պարանոցի քոյ․ Լատի
ներէն այսպէս է․ վիրաւորեցեր զսիրտ
իմ քոյր իմ հարսն, վիրաւորեցեր զսիրտ
իմ 'ի միում ականց քոց, և 'ի միում հերում
պարանոցի քոյ․

Մեկ Փեսայն երկնաւոր զեկուցանէ զսաստիկ
սէր, որով սիրէ զսիրական հարսն իւր․
ուստի այսպէս ընդ նմա խօսիլ դիտէ․
սէր քո վիրաւորեաց, և խոցոտեաց զսիրտ
իմ․ սէր քո զարթոյց, և ընդոստոյց ըզ
սիրտ իմ․ զի սիրիցեմ զքեզ՝ գեղեցկու
թիւն քո ետ ինձ զսիրտ, զի սիրիցեմ ըզ
քեզ․ ազնիւ գեղ քո այնպէս ձգեաց զսէր
իմ առ քեզ, թէ եբարձ յինէն զսիրտ․

Եբարձ յինէն զսիրտ. զի 'ի քեզ կեայ սիրտ իմ։ ընտիր տեսիլ. և վայելուչ գեղեցկութիւն քո. և մանաւանդ յօժար. և պատրաստ հնազանդութիւն քո. որով արագապէս, և շուտով լսես ինձ ձայնողի զքեզ առ նոր պատերազմս, եւ ինձ ըզ սիրտ, և զխրախուսութիւն, զի համարձակաբար 'ի քեզ. և քև սկսանիցիմ իրակել զկրս դժուարինս. բացադրիցեմ զքեզ դժուարագունեղից ճակատամարտունց. մաքառմանց. և վտանգից ընդդէմ առիւծուց, և ընձուց, և ապահովուճաբար յանձնիցեմ քեզ զիրողութիւնս ծ սնրագունեղս թագաւորութեան իմոյ. հաւատարմութեամբ քով զայնպիսի ոք զքեզ ցուցեր ինձ. զի հաւատայցեմ քեզ զգործառութիւնս դժուարագունեղս, և ծանրագունեղս. նետք սիրոյ քո այնքան ներքսապէս մտին 'ի սիրտ իմ, և 'ի յաղիս իմ ներմխեցան. զի թէ հարկաւորիցեմ զասացեալ գործս իմ քեզ յանձն առնել, սակս այսր իրի կոչեմ զքեզ նա և քոյր իմ. զի ծանուցանիցեմ քեզ, թէ ոչ միայն նոյնոյ ա͞ծայնոյ բնութեան եղեալ ես ընդ իս մասնակից. այլ և եղեալ ես ինձ ընկերակից 'ի յիրողութիւնս յայնոսիկ, որք են հօրն երկնաւորի, զի այսուհետև մշտնջենաւորապէս իբրև քոյր ընդ եղբօր զբաղիցես 'ի յաճեցուցանելն. 'ի լայնատարածելն, և

'ի վարդարելն զհայրենական ժառանգութիւն, 'ի յաղթահարելն. 'ի խորտակելն, և 'ի կործանելն զհասարական թշնամիս, և 'ի հետևելն յաղթութեանց: կոչեմ զքեզ հայր, և քոյր, սիրեմ զքեզ յոյժ սաստկապէս. և յանձնեմ քեզ, զիրողութիւնս թագաւորութեան իմոյ. զի միով ակամբ քով վիրաւորեցեր, և սրտացուցեր զսիրտ իմ: մի ակն քո, այսինքն մաքուր, անբաժան, ուղիղ, և պարզ գիտաւորութիւն քո բաւական է, զի բոլոր, և ամբողջ սիրտ իմ յափշտակիցի 'ի սէր քո: ուղիղ գիտաւորութեամբ քով, որով ուղղապէս 'ի յիս հայիս. և ոչ յայլ ինչ. ցուցանես զմաքրութիւն, և զկատարելութիւն սիրոյ քոյ, և ամենևին յափշտակես զսիրտ իմ, և բոլորոքես զսէր իմ: նա և մին հեր, այսինքն մին ընտիր, և քաջ մտածումն. կամ մին ազնիւ և քաջ տենչ, որ զարդարէ զպարանոց հպատակութեան քոյ, որով յօժարաբար կատարես զկամս իմ, և ենթադրես զքեզ լծոց պատուիրանաց իմոց, առ այս ինչ բաւականանայ: յայսմանէ իմանալ կարես. թէ որքան վառիցեն, բորբոքիցեն, վիրաւորիցեն. և յափշտակիցեն զիս համայնք առաքինութիւնք քո 'ի միասին կցեցեալք. և անթիւ ներգործութիւնք, և արտադրոծութիւնք ամենից առաքինութեանց քոց ապաւորեմն յոյժ առաւել խոցոտեաց ըզ-

սիրտ

սիրտ իմ, և սրտացոյց զիս միութիւն, և
շարակապումն, զոր ունիս 'ի մէջ իւրեանց
ակունք քո, այսինքն ակն խորհրդական,
և վարքական, ակն տեսական, և գործա
կան, խոկումն, և արարողութիւն. Նմանա
պէս միութիւն հերոց, և վարսից, այսինքն
մտածմանց. և ըղձից քոց ուղիղ դիտաւո
րութեամբ ընդ միմեանս շաղկապեցելոց։
10. Ո՜ի գեղեցկացան ստինք քո քոյր իմ ըն
հարսն. զի գեղեցկացան ստինք քո 'ի գի
նւոյ. և հոտ հանդերձից քոց քան զամ
խունկս։ Ասորիներէն այսպէս է. որքան
գեղեցիկք են ստինք քո քոյր իմ հարսն։
գեղեցկագոյնք են ստինք քո քան զգինի.
և հոտ իւղոյ քոց քան զամ խունկս։
Փեսայն երկնաւոր գովասանէ զգեղեցկու մհ
թիւն ստեանց հարսին, և զանուշահոտու
թիւն իւղոց նորին. զայս նմա զենկուցա
նել կամի. զոր առաւել քան զայլս դրո
հատեմ. է գեղեցկութիւն ստեանց քոյ.
որովք արածես. կերակրես, բուծանես. և
մնուցանես զորդիս իմ. և քոյս. այսինքն,
է գեղեցկութիւն ա̃ծասիրութեան. և
եղբայրասիրութեան քոյ, որովք վառե
ցեալ. և բորբոքեցեալ հոգաս զփրկութե̃
այլոց. տաս նոցա զկաթն ա̃ծայնոյ բանից
և աւետարանական վարդապետութեանց,
և բուժես զնոսա կաթամբ խորհրդոց եկե
ղեցւոյ, և զմխեցուցանես զնոսա արբմամբ
Ջրոյ

Ջրոյ կենդանւոյ․ և զովացուցանես զնոսա
գինեաւ քաղցրութեան առաքելականի,
և մեկնութեան սբ գրոց, և եղբայրական
խրատուց։ այսոքիկ ստինք քո են յոյժ գե
ղեցիկք․ քանզի առաւել քան զայլ ամ
նմանեցուցանեն զքեզ ինձ․ և ինձ հաճոյա
ցուցանեն զքեզ, և մերձեցուցանեն․ մայ
րական ստինք սիրոյ, զորս յօժարութբ
ընծայես, և մատուցանես եղբարց, այսինքն
քաղցր, և մեղրահոս խօսք, որովք շար
ժեցեալ 'ի սիրոյ կերակրես զեղբարս, և
զընկերս քոյս, են յոյժ գեղեցիկք, զի կեր
պաւորեցեալք են շնորհօք․ են ևս յոյժ
շահաւէտք․ զի ինձ ստանան զփառս, քեզ
հաւաքեն զարդիւնս, և ընկերաց պարգև
են զկեանս․ ստինքս այսոքիկ այնպէս հա
ճոյանան ինձ, զի դրոճատեցեմ զնոսա նոյ
նովք բանիւք, որովք դու 'ի մօտոյ դրո
ճատեցեր զստինս իմ։ զի ասեմ․ թէ գե
ղեցկագոյնքն են քան զգինի․ գեղեցկա
գոյնք են․ զի սէրն, որով սիրես զիս, և
զընկեր քո վասն իմ․ է պատուականա
գոյն քան զայլ ամ․ սէրն է գեղեցկագոյն
քանզի է ինձ հաճոյագոյն․ քեզ արդիւ
նաւորագոյն․ և ընկերաց շահաւէտագոյն․
է գեղեցկագոյն․ քանզի է թագուհի ա
ռաքինութեանց․ մայր արդեանց․ և գե
ղեցկութիւն բարեգործութեանց․ նա և
հոտ իւղոց քոց, այսինքն անուշահոտ բու

րումն

րումն ներքին առաքինութեանց քոց, ո֊
րովք օծեցեալ է հոգի քո. է պատուա֊
կանագոյն քան զա՟մ խունկս, և քան զա՟մ
անուշահոտ ծխանելիս. քանզի առաքինու֊
թիւնք քո ունին զհոգևոր անուշահոտու֊
թիւն, որ է պատուականագոյն անուշա֊
հութիւն.

11. Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, բն
քոյր իմ հարսն. մեղր, և կաթն 'ի ներքոյ
լեզուի քոյ. և հոտ հանդերձից քոց իբրև
զհոտ կնդրկի. Լատիներէն այսպէս է.
մեղր կաթուն շրթունք քո հարս, մեղր.
և կաթն 'ի ներքոյ լեզուի քո. և հոտ հան֊
դերձից քոց իբրև զհոտ կնդրկի.

Փեսայն երկնաւոր գովասանէ զանուշու֊ մեկ
թիւն շրթանց, և լեզուի հարսին, և զա֊
նուշահոտութիւն հանդերձից նորա. ուս֊
տի այսպէս խօսակցի ընդ նմա. շրթունք
քո մեղր կաթեցուցանեն, այսինքն աղօթ֊
քո է մեղրահոս, և բանք քո քաղցրունք
են. աղօթք քո է մեղրածոր. զի 'ի նմանէ
ծորի 'ի քեզ քաղցրութիւն սիրոյ, անու֊
շութիւն ջերմեռանդութեան. համեղու֊
թիւն հոգևոր մխիթարութեանց, խորինս
անոյշ մտածմանց, յօժարակ ա՟ծայնոց ներ֊
շնչմանց, և ներազդեցմանց, և մեղր քաղցր
ներգործութեանց առաքինականաց. ա֊
ղօթք քո են մեղրահոսք, քանզի են ինձ
քաղցրունք, և անոյշք. վասն զի յոյժ հա֊

ճիմ 'ի նոսա։ Բանք քո են քաղցունք. քանզի են ի՛ Ձ հաճոյք, և լսողաց ախորժք և բազմիցս ծնանին 'ի լսօղս զհոգևոր քաղցրութիւն։ ուստի ո՛չ միայն են քաղցունք այլ և օգտակարք. են քաղցունք. զի մխիթարեն զլսօղս, և զովացուցանեն զմիտս նոցա։ են օգտակարք. զի լուսաւորեն զըմիտս լսողաց. շարժեն զկամս առ բարեն դարձուցանեն զմեղաւորս. կերակրեն զըքաղցեալս, և պարարեն զհոգիս արդարոց. 'ի ներքոյ լեզուի քոյ գոյ ո՛չ միայն մեղր, այլ և կաթ. պատրաստեալ ես զեզ կաքանչիւրն. պատրաստեալ ես զմեղր առ ախորժութիւն ճաշակողաց. և պատրաստեալ ես զկաթ առ սնուցումն հոգեաց. 'ի մտերիմ շտեմարանի, և պահարանի պատրաստեցեալ պահես զյոլովութիւն, և զառատութիւն լիշեցեալ հիւթոյ, և անտի յորժամ. և որքան պիտոյանայ, 'ի յօգուտ եղբօր արտահանես, և արտաբերես։ ո՛չ միայն զայս գործես, այլ և առնես, զի 'ի հանդերձից քոց իբրև 'ի յաջնիւ, և 'ի պատուական կնդրկէ, բուրեսցի ընտիր անուշահոտութիւն, և ցանգ նուիրեսցի, անուշահոտ հանդերձք քոյք են արտաքին առաքինութիւնք քո, նորս անպակաս կըրթես զքեզ 'ի յերկրպագութիւն, 'ի պահոց, և 'ի փառս իմ։

քՆ 12. Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն.

պարտէզ փակեալ, և աղբիւր կնքեալ. Տնկերէն նոյնգունակ է. պարտէզ փակեցեալ քոյր իմ հարս, պարտէզ փակեցեալ, աղբիւր կնքեցեալ.

Փեսայն երկնաւոր զայս զեկուցանէ մեկ
դիտէ, եզրակացուցանելով զա՟մ գովս հարսն. ծվ սիրական հարսն իմ վերջապէս դու դրախտ ես. ունիս 'ի քեզ զջուրս քաղցրագունեղս երկնային իմաստութե՟ն, և ա՟ծայնոց բանից, զծառս պատուականագունեղս ընտիր առաքինութեանց, զծաղիկս անուշահոտագունեղս գովելի վարուց, և զպտուղս բարեգունեղս ազնիւ բարեգործութեանց. ամօք ուրախացուցանես. զուարճացուցանես, և բերկրեցուցանես զա՟ծ, և զմարդիկ. առ քեզ ոչ մատչին գողք, կամ գազանք. զի ունիս, որք արգելուն զմուտ նոցա առ քեզ. քանզի փակեցեալ ես կրկնակաւ ցանգով. վասն զի շրջապատեցեալ ես պարսպաւ, և նախապարսպաւ, այսինքն. հաստատագունեղիւ յուսադրութեամբ 'ի յա՟ծ, և խորագունեղիւ խոնարհութեամբ. ես աղբիւր կնքեցեալ կնքօք մշտնջենաւորօք խոհեմութեան, խոհականութեան, համձարեղութեան, և երկիւղի ա՟ն. առ աղբիւրս այս միայն ա՟ծ մատչի. զի նորա միայնոյ է. ուստի օտարականք ոչ մատչին. զի չէ նոցա.

Մաքուծն

բն 13. Առաքումն քո դրախտ նռնենեաց
համդերձ պտղօք ծառոց, ծաղիկ համ
դերձ նարդոսիւ։ Լատիներէն այսպէս է
արտառաքմունք քո դրախտ նռանց համ
դերձ պտղովք խնձորոց կիպրոսք համդերձ
նարդոսիւ։

մեկ Զբարունակս, զարտառաքմունս. և ըզ
պտուղս յիշեցեալ վայելչագունեղի դրախ
տի, և պարտիզի, սկսանի փեսայն երկնա
ւոր առաջադրել, նշանաւորել, և թուէ
զերկոտասանս։ երկոտասան արտառաքմու
նք պատուականագունեղի դրախտի, և
պարտիզի երկնաւոր փեսայի, են երկոտա
սան պտուղք հոգւոյն սրբոյ, որք են այ
սոքիկ, սէր, խնդութիւն, խաղաղութի,
համբերութիւն, քաղցրութիւն, բարու
թիւն, երկայնմտութիւն, հեզութիւն,
հաւատ, պարկեշտութիւն, ժուժկալու
թիւն, Ճնշումն։ կամ են երկոտասան պը
տուղք այնր ծառոյ. զորմէ պատմի 'ի
գիրս յայտնութեան երանեցելոյն յոհան
նու առաքելոյն. 'ի մէջ հրապարակի նորա
և յերկաքանչիւր կողմանէ գետոյն փայտ
կենաց, բերօղ զպտուղս երկոտասան, ընդ
իւրաքանչիւր ամիս հատուցանող զպտուղ
իւր. և տերևք փայտի 'ի բժշկութիւն հե
թանոսաց։ կամ են ութ աւետարանական
երանութիւնք, և չորք կարտինալական ա
ռաքինութիւնք, որք են այսոքիկ, լինիլ

ողջա

աղքատ հոգւով ․ հեզութիւն ․ սգաւորու
թիւն , քաղցութիւն , և ծարաւութիւն
արդարութեան, ողորմածութիւն, սրբու
թիւն սրտի, խաղաղարարութիւն, տեւումն
հալածանաց վասն արդարութեան , համ
բերութեամբ տանիլն զզրպարտանս , և
զչարախօսութիւնս , խոհեմութիւն , բա
րեխառնութիւն , արդարութիւն , և արի
ութիւն ։ կամ կարեն այսպէս առանձնա
բար , և որոշաբար բացատրիլ նուռքն են
պտուղք սիրոյ , խաղաղութեան , և եղբայ
րական միութեան ։ խնձորքն , որք ունին
զքաղցրագունեղ , և զհաճոյագունեղ համ ,
զպատուականագունեղ , և զանուշագունեղ հոտ
են պտուղք ա̃ծասիրութեան , և ա̃ծ պաշ
տութեան ։ կիպրոսն , որ է տունկ հոտա
բերագոյն, և ջերմագոյն, է խոկումն իրաց
ա̃ծայնոց ։

14․ Նարդոս, և քրքում, եղէգն, և կինա — բն
մոն ․ հանդերձ ա̃մ փայտիւք լիբանա
նու ։ զմուռս , և հալուէ ․ հանդերձ ա̃մ
առաջնովք իւղովք ։ ‖ ատեներէն նոյնգու
նակ է ․ նարդոս , և քրքումն , եղէգն , և
կինամոն հանդերձ ա̃մ փայտիւք լիբանա
նու , զմուռս , և հալուէ հանդերձ ա̃մ
առաջնովք իւղովք ։

Նարդոսն է յոյսն զ̃յ , և անյուսադրու — մեկ
թիւնն զիւրենէ ինքենէ , այսինքն , ոչ 'ի
յինքն , այլ 'ի յա̃ծ ապաւինիլն ։ քրքումն
է

է հաւատն, որով հաւատամք զա՟ծ· ա՟յ·
և 'ի յա՟ծ· անուշահոտ եղէգն է խոհեմու
թիւնն· որով հանճարեղաբար շարժիմք·
կինամոնն· որ ունի զտապ· և զհզօր բնու
թիւն· է արդարութիւնն· որով արդա
րապէս կենցաղավարիմք։ զմուռս· և հա
լուէն, որք բժշկեն, և փարատեն զհիւա
դութիւնս, և զախտաժէտութիւնս, են
արիութիւնն, և բարեխառնութիւնն, ո-
րովք արիաբար, և բարեխառնաբար ապ
րիմք· ա՟մ փայտք լիբանանու են այլք հա
մայնք առաքինութիւնք, որք զարդարեն,
գեղեցկացուցանեն, և պայծառացուցանեն
զհոգիս մեր։ ա՟մ առաջինք· կամ պատո
ճականագունեղք իւղք են ներգործու
թիւնք, և արտագործութիւնք առաքինու
թեանց, որք հանապազ շարակցին վերոյ
ասացեալ ներգործութեանց առաքինու
թեանց արդէն ասացելոց։ բարեպաշտ
հոգի, որ է պարտէզ, և դրախտ երկնա
ւոր փեսայի, արտառաքէ, և բուսուցանէ
զայսոսիկ պտուղս, որք ամենևին տարբե
րին, և զանազանին 'ի փշոց, 'ի խոպանաց·
'ի տատասկաց, և 'ի դժնկաց պարտիզաց
սատանայի, աշխարհի· և մարմնոյ։ մինչև
ցաստ ասացաւ զպտղոց պարտիզի· արդ
պատմեսցի զջուրց աղբեր կնքեցելոյ։

բն 15· Աղբիւր պարտիզաց· ջրհոր ջրոյ կե
նանւոյ· հոսեցելոյ 'ի լիբանանէ· Յառնե

րէն

րէն այսպէս է. աղբիւր պարտիզաց. ջր
հոր ջուրց կենդանեաց. որք հոսին ուժով
'ի լիբանանէ.

Աղբիւրս այս ասի աղբիւր պարտիզաց. մեկ
զի բաւականանայ 'ի միասին ոռոգել զբա
զում պարտէզս։ վասն զի ոչ արտաբղխէ
զջուրս մեռեալս, ապականեցեալս, շաղա
խեցեալս, պղտորեցեալս, հոտեալս, կամ
նեխեալս, այլ կենդանիս, յստակս, մաքու
րս, նուրբս, համեղս, և անոյշս, որք
մշտնջենաւորապէս բղխին, և թուին 'ի
կեանս յաւիտենականս։ աղբիւրս այս ար
տաբղխէ զջուրս իմաստութեան երկնայ
նոյ, և շնորհաց ածայնոց, և անշուշտ ճշ
մարտութեան. արտաբղխէ զջուրս մաք
րագունեղս, պայծառագունեղս, պատ
ճականագունեղս, և անպակասելիս. արտա
բղխէ զջուրս, որք անպակաս ծորին առա
նա ընդ ջրահոսս սբ գրոց, և խորհրդոց,
'ի լեռնէ լիբանանոսէ. այսինքն ապխտակա
փայլէ. 'ի վտակէ երկնայնոյ, և մշտնջենա
ւորէ, 'ի յաթոռոյ այ, և գառին։ Աւ աղ
բիւրս, և ջրհորս այս ծորին ասացեալ
ջուրքն ուժով սաստկագունեղս, առա
տութեամբ մեծագունեղս, արագութե
ծայրագունեղս, և վերաձգեցմամբ բար
ձրագունեղս։ վասն զի ջուրն կենդանի
այնքան բարձրագոյն թռի 'ի վեր, որքան
բարձրագոյն է տեղի, կամ ծոց. ուստի
իջանէ

իջանէ. բայց քանզի վասն տածելոյ, պա
րարտացուցանելոյ, և առաջացուցանելոյ
զայնքան ազնիւ, և զայնքան ուրախարար
պարտէզ ոչ բաւականանայ վերոյասացեալ
պահպանութիւն, կամ զուարթութիւն.
այլ խնդրի ևս վերնային, և ա̃ծային աս
պ̃ջականութեան. և օգնականութեան
առ շնչումն, և յաճախ առիթ իրակելոյ
զուժգնութիւնս. և զառաքինութիւնս.
վասն որոյ խնկոյն ստորատրէ փեսայն.

բն 16. Արի հիւսիս. և եկ հարաւ. շնչեա
'ի պարտէզ իմ, և բուրեսցին խունկք իմ.
Ի տօններէն այսպէս է. արի հիւսիս. և եկ
հարաւ. ընդ շնչեա 'ի պարտէզ իմ. և ար
ձակաբար ածիցեն խունկք նորա.

մ.-կ Այս իմացուցումն լինի. արի հիւսիս. այս
ինքն զարթիր անձկութիւն. զարթիր փոր
ձութիւն. կանգնիր ներքին անմխիթա
րութիւն, կանգնեաց արտաքին հալածան
բայց մերձ լիցիս 'ի միասին ընդ հարաւոյ,
այսինքն 'ի միասին ընդ հոգւոյն սրբոյ. և
ընդ առ շնչման նորին 'ի ձեռն ամենացեղ
պարգևաց. և շնորհաց. վասն զի եթէ այ
սոքիկ երկու հողմք 'ի միասին ընդ շնչի
ցեն 'ի պարտէզ. առատագունեղապէս. և
պարարտագունեղապէս խունկք նր̃ արձա
կեսցին. ածեսցին և տարածեսցին. որք այ
լապէս կամ ոչ լայնատարածեին. կամ ոչ
այնքան առատութ̃ ածեին. մեծանային, զար
գանային

գանայլին. և ծաւալելին. կամ գոնէ ոչ ճա
նաչելին. Հիւսիսն նշանակէ զանձկութիւն.
զնեղութիւնս. զտառապանս. զվիշտս.
զփորձութիւնս. և զհալածանս. Հարաւն
նշանակէ զհոգին սբ. և զպարգևս. և ըզ
շնորհս նորին. պարտէզն նշանակէ զհար
սն. խունկք պարտիզի նշանակեն զառա
քինութիւնս հարսին. փչէ հիւսիս. յոր
ժամ շրջապատեն, և պաշարեն զհարսն
վիշտք. փչէ հարաւ. յորժամ հոգին սբ
առատ պարգևօք և շնորհօք իւրովք պաշտ
պանէ զհարսն. յորժամ փչեն երկոքին
հողմքս այսոքիկ, առաքինութիւնք հար
սին լայնատարածին, ծաւալին, և արձա
կին 'ի յառատ, և 'ի յորդ ներգործութիւն,
և արտագործութիւնս. և լինին երևելիք,
յայտնիք, և հռչակաւորք.

## Գլուխ հինգերորդ։

Ի գլխոյ յայսմիկ ճառի զհրաւիրմանէ.
և զգալստենէ փեսայի 'ի պարտէզ. ըզ
իւր խորհրդական հնձմանէ. և զքաղցր
խրախութենէ, զքնոյ հարսի, և զյայտ
նութենէ այնոցիկ իրաց. որք հանդիպեին
հոգւոյ. յորժամ փեսայն հոգևորապէս
բաղխէ զդուռն նորա. և զմանաւանդա
գունեղին նշանաց, որովք փեսայն կարիցէ
նա և 'ի յայլոց ճանաչիլ. և գտանիլ. վասն

զի

զի երևի, թէ հարսն մանաւանդ զայս խնդ-
րէ․ մինչ 'ի մէջ խրախութեան պատմ-
օրհնորգաց․ և ընկերաց իւրոց զմոլորու-
թիւնս իւրս անցելոյ հասակի․ և զպէսպէս
պատահմունս․ և հանդիպմունս․ որք 'ի
նախնումն հանդիպեալք էին իւրեան 'ի
խնդրելն զփեսայն։

բն 1․ Մտցէ եղբօր որդին իմ 'ի պարտէզ
իւր, և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց․
մտի 'ի պարտէզ իմ հարսն․ կթեցի զմուռս
հանդերձ խնկօք իմովք․ կերի զհաց իմ
մեղու իմով․ արբի զգինի իմ կաթամբ
իմով․ կերայք մերձաւորք իմ, և արբէք․
արբեցարուք եղբօր որդեակք իմ․ Լատի-
ներէն այսպէս է․ եկեսցէ սիրեցեալն իմ
'ի պարտէզ իւր, և կերիցէ զպտուղ խնձո-
րոց իւրոց․ եկի 'ի պարտէզ իմ քոյր իմ
հարսն, հնձեցի զզմուռս իմ հանդերձ
խնկօք իմովք․ կերի զխորիսխ մեղու իմով
հանդերձ․ արբի զգինի իմ կաթամբ ի-
մով հանդերձ․ կերայք բարեկամք, և ար-
բէք, և արբեցարուք սիրելագունեղք․

մեկ Քանզի 'ի փչել հողմոյ հիւսիսայնոյ, և 'ի
յառաջնչել հարաւայնոյ, առատագունեղ զամ
բազմացեալք և աճեցեալք էին խունկք 'ի
պարտիզի հարսի, որ բաց 'ի միոջէ փեսայէ
ամենեցուն փակեցեալ էր․ վասն այսորիկ
հարսն յիշեալ զերախտիս, զի զուարճա-
ցուցանիցէ, բերկրեցուցանիցէ, և սփոփի
ցէ

ցէ զսիրական փեսայն իւր, ձայնէ զնա, և հրաւիրէ առ'ի ճաշակել զպտուղս պարտիզի իւրոյ․ և'ի միասին աղաչէ, զի լցուցանիցէ զդրախտ իւր փափագելագունեղիւ ներկայութեամբ իւրով․ ևնորովք շնորհօք բնազանցականօք․ ըստ այնմ․ դարմանտար սմա, զոր տնկեաց աջ քո․ փեսայն երկնաւոր հազիւ կոչեցեալ գտանի ներկայ, ըստ այնմ․ աղաղակեսցես․ և ասասցէ․ մերձ եմ․ ուստի ձայնեցեալ իսկոյն խօսի․ արդ եկեալ եմ․ ահաւասիկ մերձ եմ․ և գտանիմ ներկայ'ի պարտիզի իմում․ զոր ձեռամբ իմով կացուցեալ եմ, և արեամբ իմով գնեալ եմ, և ոռոգեալ․ զի ուտիցեմ'ի պտղոյ մրգաց իմոց, շնորհօք իմովք ստեղծեցելոց, և վաստն իմ, և'ի պատուիւ իմ արտադրեցելոց․ այսինքն, զի զամենայն գործս, իղձս, և առաքինութիւնս ինձ առնուցում, ներ ինձ պահիցեմ, 'ի ծածկութիւն երեսաց իմոց թաքուցանիցեմ, ներաղեաց, և սրտի իմում գաղիցեմ, և զամենեսին 'ի գոյացութիւն իմ դարձուցանիցեմ, գրեթէ մ̄ծացուցանելով զնոսա, և ընդունելով իբրև զառհաւատչեայս, և զարդիւնս կատարելագունի միաւորութե իմ ընդ հոգւոյ 'ի ձեռն շնորհի ներկայի, և փառաց հանդերձելոց․ արդ պտուղք, և աղնիւ կերակուրք, որք յոյժ հաճոյանան երկնաւոր փեսայի, են զմուռսք փո

խար

խարկեցեալք մեղրախառն խորիսխ, և կաթնահամ գինի։ ուստի նախ քան զնմ տարածէ զձեռն իւր 'ի զմուռս. վասն զի զմուռսով, այսինքն ճնշմամբ, ճգնութեամբ անձկութեամբ, վշտօք, և տառապանօք մեռոյք զարմանալի եղանակաւ զուարճանայ, և բերկրի. փեսայն երկնաւոր զմուռս ոչ միայն քաղէ զխուրձ մի, կամ զորայ մի այլ առեալ զգերանդի, և զմանկաղ հնձէ զորքան կարէ, վերանըլոց անտի նա և զամբողջ շտեմարանս, եթէ կարէր. արդ խունկք, կամ պտուղք առաքինութեանց հաղիւ համեղանան քիմի երկնայնոյ, եթէ առ համեղութիւն չիցէ առ ընթեր առատութիւն զմուռսոյ ընդունեցելոյ վասն սիրոյն քի. զմուռս ընդունեցեալ վասն սիրոյն քի. լինի խորիսխ քաղցրագունեղ. և գինի համեղագունեղ. քանզի անձկութի մինչ բուսանի, և աճի, է զմուռս. բայց հնձեցեալ գերանդեաւ սիրոյ ածայնոյ, լինի խորիսխ, լինի ախորժագունեղ հաց, և կերակուր հաճոյագունեղ քիմի հոգւոյ արդէն այլ ոչ դառնութեամբ իւրով տաժանէ. այլ սփոփէ, և հանգոյն հզօրագունեղի գինւոյ արբեցուցանէ. Թարց այսր խորտկի, և համեղագունեղի գինւոյ, խրախութիւն պատրաստեցեալ երկնաւոր փեսայի, յորում լիցեն կաթն. մեղր, շաքար քրքում կինամոն, և նմանք խունկք, կարէ

 ասիլ

տանիլ կանացի. և տղայական, բայց ո՛չ լիցի առնացի, հզօր, և արքունի։ քանզի պակասի հաստատուն կերակուր, և հզօր, և ազնիւ գինի. որ ուրախացուցանէ զսիրտ. և զմարդիկ. զայնպիսի խրախութիւն պատրաստէ աստ փեսայն երկնաւոր, զի ուսուցանիցէ հարսին, որպիսի խրախութեամբ ինքն ևս պարտիցի բերկրել. և որպիսի խրախութեամբ պարտիցի և զայլս զուարճացուցանել։ փեսայն երկնաւոր առ խրախութիւն, զոր պատրաստէ աստ, հրաւիրէ զընկերս հարսին. այսինքն զհամայնս հաւատացեալս։ ուստի այսպէս խօսի առ նոսա. դուք, որք եղեալք էք ինձ բարեկամք, կերայք 'ի խորսխէ. և 'ի մեղրոճէ իմմէ, մտադրաբար, և յուշիմաբար մտածելով զխորհուրդս հաւատոյ, և կրթելով զձեզ 'ի յա̃մ առաքինութիւնս, մանաւանդ 'ի յայնոսիկ, որք հային 'ի յեղբարս. և արբէք զգինի իմ հանդերձ կաթամբ իմով. հանդարտաբար խոկալով զա̃ծայինս. և ջերմաբար բորբոքելով զսիրտ ձեր սիրոյն երկնայնով. և ա̃ծայնով։ Ու եթէ տենչայք, և փափագիք լինել ինձ սիրելագունեղք, նա և արբեցարուք սիրովք. լցարուք բոլորովին սիրով. վառեցարուք ջերմեռանդութեամբ. աշխատեցարուք, զի միայն սէրն ա̃յ կեայցէ 'ի ձեզ. և զօրանայցէ զի զայն միայն մտածիցէք, և խոր

հեցիք, այնմիկ միայնում ըղձայցէք, և տեն
չայցէք, զայն միայն խօսիցիք, և արտաբե
րիցէք, և զայն միայն առնիցէք, և գործի
ցէք, որ պատուիրի 'ի նոյնոյ սիրոյ։

բն 2. Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ։
Ձայն եղբօր որդւոյ իմոյ բաղխէ զդուռն
բաց ինձ.քոյր իմ, մերձաւոր իմ, աղաւնի
իմ, կատարեալ իմ։ վասն զի գլուխ իմ
լցաւ ցօղով, և վարսք իմ տարափով գիշե
րոյ։ Լատիներէն այսպէս է. ես ննջեմ, և
սիրտ իմ հսկէ. ձայն սիրեցելոյն իմոյ բաղ
խողի. բաց ինձ.քոյր իմ. բարեկամ իմ,
աղաւնի իմ, անարատ իմ. զի գլուխ իմ լի
է ցօղով. և վարսք իմ կաթիլօք գիշերաց։

մե Հարսն հոգևոր քաջապէս արածեցեալ
մեղու, և կաթամբ երկնայնով. և կատարե
լապէս արբեցեալ գինեաւ հոգևորաւ, ի
կոյն մտանէ 'ի քուն, և 'ի խորագունեղ
հանգստութիւն։ ուստի ասէ. ես ննջեմ.
այսինքն. թողեալ առ ժամանակ ինչ զամ
արտաքին կիրառութիւնս, և գործառու
թիւնս, և թմրեցուցեալ զզգայութիւնս
առ ստեղծուածս, ետու զիս բոլոր հան
դարտ խոկման։ սակայն այնպէս ննջեմ.
թէ սիրտ իմ արթուն է, և հսկէ, այս
ինքն վերնագոյն մասն հոգւոյ դեդերեալ
և պարապեալ մտածման իրաց երկնայնոց,
և աստուածայնոց, տքնի, և հսկէ մշտնջենաւորա
պէս։ այնպէս հանգչիմ, թէ լսեմ։ ոչ պա
քայիմ,

բամպիմ, զի մոռացանիցեմ զպղերգութիւն,
և զհեղգութիւն, այլ զի առաւել հմտա-
նայցեմ, և իմաստնանայցեմ։ Հարսն զամ-
թեալ 'ի քնոյ, զի անուշադունիւ, և ջա-
հաւէտիւ խօսակցութեամբ կերակրիցէ
զընկերակիցս․ որք հրաւիրեցեալք 'ի փե-
սայէ արդ մանաւանդ նստեին մերձ առ-
սեղանն․ և կերակրեին կերակրովք, և ըմ-
պելեօք երկնայնովք, մանաւանդ զբաղ-
եալք այլովք իրողութեամբք, և հոգօք ա-
ջամեին, և յուղանային մաուշիլ, զի զայս-
սին գգուանօք շարժիցէ․ զայնուսիկ սփո-
փիցէ․ ազնիւ գեղեցկութեամբ աստ հրա-
պարակաւոր պատմէ զայլ 'ի նախնում-
քուն իւր․ և զծուլութիւն անցեալ կե-
նաց․ 'ի միասին և զմշտնջենաւոր արթնու-
թիւն փեսայի․ որով ոչ յառաջագոյն գա-
դարեցաւ խնդրելով․ ձայնելով․ և բախ-
խելով․ քան զընդ քարշելն զնա 'ի յուղ-
կանս իւրս։ Ուստի այսպէս խօսի հարսն։
մինչ գրեթէ թաղեցեալ պառկեի 'ի քնոյ
հեղգութեան․ և մեղաց․ մինչ կայի 'ի մէջ
խաւարի տգիտութեան․ և մոլորութեանց
իմոց․ լուայ զձայն սիրեցելոյն իմոյ․ զիմ
զանառակս․ և զկորուսեալս հոգացողաբար
խնդրողի․ գգուական․ և անոյշ ձայնիւ
բազմիցս ձայնողի․ և վերջապէս լուսաւո-
րելով զմիտ իմ․ և շարժելով զսիրտ իմ․
զդուռն իմ բախողի․ և զիս յորդորողի․
առելով։

ատելով. դու. որ այնքանիցս բացեր ըզ-
դուռն սրտի քոյ սատանայի. հաւանելով
թելադրութեանց նորին. աշխարհի. հե-
տեւելով օրինակաց նորին. մարմնոյ. կատա-
րելով զկամս նորին. գողից. եւ աւազակաց
որք գողացան, եւ յափշտակեցին զհոգեւոր
բարիս. գայլից, որք պատառեցին զհո-
գի. բռնաւորաց որք նեղեցին զքեզ. զա-
զիր շնացողաց, որք պղծեցին զքեզ. արդ
փակեա զնա նոցա, եւ ինձ միայնում բաց.
որ եմ փրկիչ քո, պահպանիչ քո, եւ նա-
խախնամիչ քո. եմ եղբայր քո, բարեկամ
քո, տ̃ր քո, եւ փեսայ քո։ դու. որ 'ի վա-
ղուց 'ի ձեռն մկրտութեան եղեւ ես քոյր
իմ. 'ի ձեռն սիրոյ բարեկամ իմ, 'ի ձեռն
ներհեղման հոգւոյն սրբոյ աղաւնի իմ,
'ի ձեռն մաքրման 'ի յա̃մ մեղաց, եւ սկզբ-
նականաց, եւ ներգործականաց, անարատ
իմ. բաց ինձ զսիրտ քո։ Թէպէտ զասա-
ցեալ պարգեւս արդ կորուսեալ իցես նոր
չարագործութեամբք, եւ անօրէնութ̃ք.
սակայն մերձ եմ գոլով պատրաստ վերա-
հաստուցանել քեզ հանդերձ տոկոսեաւ,
եթէ այժմ կամիցիս 'ի ձեռն ճշմարիտ ա-
պաշխարութեան բանալ ինձ. եւ տալ ըզ-
մուտ 'ի սիրտ քո։ եթէ չհայես 'ի պարգ-
եւս. եւ 'ի յօգուտ քո, գոնէ լեր ցաւակից
ինձ եղբօր, բարեկամի, տ̃ն, եւ փեսայի
քում. քանզի 'ի յերկար յամեցմանէ առաջի
դրանց քոց լցաւ գլուխ իմ ցօղով. եւ վարսք
իմ

իմ լցան տարափովք գիշերաց. վասն զի եմ 'ի յաշխարհն ինքն 'ի խորագունեղ. և 'ի ցրտագունեղ գիշերոջ. յորում որք անօրէնութեամբք իւրեանց զայրացուցանեն. և դառնացուցանեն զիս, կուտեն 'ի վերայ գլխոյ իմոյ զցօղ զառն. և զկարկուտ, մինչ զիս ցրտացուցանեն. և առնեն, զի մի սիրեցեմ զնոսա. այլ ատեցեմ. որպէս հակադարձաբար որք բարեպաշտ գործովք վերաջերմացուցանեն զիս, զկայծակունս հրոյ կուտեն 'ի վերայ գլխոյ իմոյ, մինչ զսէրն իմ, որով սիրեմ զնոսա, առաւել. և առաւել վառեն, և բորբոքեն, և բռնադատեն զիս, զի առաւել սիրեցեմ զնոսա. արդարև գլուխ իմ լցաւ ցօղով, և վարսք իմ լցան տարափովք, մինչ բաղխեմ զդրունս քոյս, զի յիրաւի ցուրտ ցօղ և ցուրտ կաթիլք ամ անօրէնութեանց քոց, և ցուրտ ցօղ. և ցուրտ կաթիլք ամ թշուառութեանց, նախատանաց, անարգանաց, կատականաց, հայհոյանաց, թքից, և չարչարանաց, զորս անմեղագունեղ գառըս վասն քո տարայ, ծանրացուցին ըզգլուխ իմ. զի ես վասն քո կրեցի զտանջանս. և տարայ զցաւս. ուրեմն բաց ինձ քոյր իմ հարսն ծանրացելոյ վասն քո այնքան թշուառութեամբք. բաց ինձ փեսայն քում զսիրտ քո. զի զթաց. զմաշեցեալ. և զխզեցեալ գլուխ իմ դնիցեմ 'ի

ծոց

ծոց քո, և ջերմացուցանիցեմ։

քն 3. Մերկացայ զպատմուճան իմ. զի՞ արդ
զգեցայց զնա. լուացի զոտս իմ. զի՞ արդ
աղտեղեցից զնոսա։ Լատիներէն նոյնգու
նակ է. մերկացայ զպատմուճան իմ. զի՞
արդ զգեցայց զնա. լուացի զոտս իմ. զի՞
արդ աղտեղեցից զնոսա։

մեկ Ի բանիցս յայսցանէ իմանամք. թէ հար
սն փոխեալ 'ի խստութէ որբագոյն կենաց. և
յաղթահարեալ է 'ի հեղգութէ և 'ի պղերգութէ
անփոյթ առնէ զաղաչանս փեսային. ուստի
այսպէս խօսի, մերկացայ զպատմուճան իմ,
այսինքն մերկացայ զպատմուճան որդւոցն
այ, զոր զգեցեալ. եղեալ էի որդի այ.
մերկացայ զպատմուճան շնորհի, որով զգե
ցեցեալ էր հոգի իմ. մերկացայ զպատ
մուճան սիրոյ, որով զարդարեալ էր սիրտ
իմ. մերկացայ զպատմուճան այլոց առա
քինութեանց, որովք զարդարեցեալ էր
անձն իմ. մերկացայ զպատմուճան գոր
ծոց բարեաց, և արդեանց ածահաճոյից
որովք ճոխացեալ. և հաստատեալ էի. մա
նաւանդ մերկացայ զպատմուճան ներգոր
ծութեանց ապաշխարութեան, և ճգնու
թեան, որովք ճնշէի զմարմին իմ. յոյժ
աշխատէի. և թախանձէի, եթէ զնոսա
վերազգենուի. անուշաբար նինջեմ 'ի հեշ
տութիւնս, և 'ի երկրութիւնս աշխար
հականս. յորժամ հանգստեալ եմ, 'ի սոսա

ների

ներընկղմեցեալ ընկողմնիմ, և պառկիմ. արդ ասըզք նեւ ջերմացայ. զի՞ արդ ուրեմն 'ի բաց թօթափեցից զնոսա. զի՞ արդ զատեցայց. և հեռացայց 'ի նոցանէ. զի՞ արդ ամբացուցից զթուլացեալ անդամս. զի՞ արդ մտից 'ի ներքոյ նոր աշխատանաց. զի՞ արդ վերադարձեցայց զառաջին պատմուճանն իմ. զի՞ արդ 'ի փափուկ, և 'ի ջերմ անկողնոյ թռայց 'ի խիստ, և 'ի ցուրտ օդն ապաշխարանաց, և ճգնութեանց: Նա և լուա՛ցի զոտս իմ. որպէս սովորք են առնել փափկասէրք, և հեշտասէրք. ուրեմն զի՞ արդ վերստին աղտեղեցից զնոսա, և շաղախեցից տղմով. և աղտեղութեամբք գետնոյ. արդէն ստացայ զսովորութիւն 'ի յերս փափուկս, բերկրականս, և անոյշս. չկամիմ տալ զիս վերստին աղտեղի, և խիստ գործոց ապաշխարութե. աստանօր յայտնի լինի գործ մարդոյ պղերգի, աշխարհասիրի, մարմնասիրի, և փափկասիրի. վ զի, զի մի՛ զրկիցի 'ի հեշտութեանց, և 'ի փափկութեանց մարմնոյ, և զի մի՛ անկանիցի 'ի ներքոյ աշխատանաց, և թախանձանաց նորոգեցեալ կենաց, առաւել կամի թողուլ զփեսայն իւր արտաքոյ դրանց, քան ձգել զձեռն իւր, և բանալ զնա զդուռն. յիրաւի առնէ զմեծագունել ապերախտութիւն փեսայէն իւրում. քանզի զկեանս, զկեցութիւնս, զփառս. զպա

տիւ, և զնոյն բարութիւն ունի 'ի նմանէ.
սակայն է յոյժ մեծ քաղցրութիւն երկնա-
ւոր փեսային. քանզի զտմարդի զապրելախտ
գծոյլ. զպղերգ. զհեղգ, և զքնասէր հար-
սըն. զոր թմ իրաւամբ կարէր մշտնջենա-
ւորապէս ձգել. այլով. և այլով ձայնա-
պարհաւ ջանայ ընդոստուցանել. և զար-
թուցանել առ սէր առաքինութեան։

Բն 4. Եղբօրորդի իմ յարկեաց զձեռն իւր
ընդ ծակոյն. և որովայն իմ խռովեցաւ
'ի նմա։ Յոյներէն այսպէս է. սիրեցեալն
իմ ձգեաց զձեռն իւր ընդ ծակոյն, և
որովայն իմ ներսարսեցաւ առ շօշափումն
նորա։

Մեկ Պատմէ հարսն զքաղցրութիւն, և զբա-
րերարութիւն փեսային իւրոյ. ուստի ասէ
սիրական փեսայն իմ, որ ոչ լքեր առնել
ինձ զբարիս. եարկ զձեռն իւր ընդ ծա-
կոյն. այսինքն ընդ ձեղքս դրանն. յիրաւի
զի կամ զիս ընկողմնեալս. և պառկեալս
խթիցէ. և ընդոստուցանիցէ. կամ ստու-
գիւ զփականսն վերածիցէ. այսինքն. զի
զանկարգ սէրն. որով յոյժ սիրեմ զստեղ-
ծուածս. բառնայցէ յինէն. և այսպէս
բանայցէ զդուռն սրտի իմոյ. զայս ընկու-
ցանել գիտեմ. սկսաւ հարկանել զիս անձ-
կութեամբք. վշտօք. հիւանդութեամբք
և այսպէս թշուառութեամբք ընդ զգա-
յութիւնս ներքսեցելովք. ձգեաց զձեռն
իւր

իւր. և շօշափեաց զոսկր. և զմարմին իմ։
անձկութիւնն ետ ինձ զմիտ։ զի առ շօշա
փումն նորա ներդողդողաց. սասանեցաւ.
տաքացաւ. և խռովեցաւ որովայն իմ։ յոր
ժամ զձեռն իւր մերձեցոյց յիս 'ի ձեռն
տառապանաց. երկեւղ տն եմուտ 'ի յորո
վայն իմ. լուսաւորեցաւ միտ իմ. բացաւ
ներքին ակն իմ. շարժեցաւ կամ իմ առ
ապաշխարութիւն. լցաւ սիրտ իմ սիրոյն
այ. և բարի նախանձու ընդդէմ յանցանաց
իմոց. 'ի բաց թօթափեցի զհեղգութիւն.
և զքուն մեղաց. և թուուցեալ ելի 'ի յան
կողնոյ։

ե. Յարեայ ես 'ի բանալ եղբօրորդւոյ րն
իմոյ, ձեռք իմ կաթեցուցին զմուռս. և
մատունք իմ լցան զմռսով։ Մատնեերէն
այսպէս է. յարեայ. զի բանայցեմ սիրեցե
լոյն իմում. ձեռք իմ կաթեցուցին զմուռս
և մատունք իմ լի են զմռսով փորձեցելա
գունեղիւ։

Զարսն ծանուցանէ զայն. զոր ընդոստու ճե
ցեալ արար. և զորս կրեաց։ ուստի ասէ.
յարեայ. զի բանայցեմ սիրեցելոյն իմում.
այսինքն, յարեայ, զի առնիցեմ զկամս փե
սային իմոյ սիրականի. զիս ձայնողի, յա
րեայ, զի հաճոյանայցեմ նմա. յարեայ, զի
կատարիցեմ զհրամանս նորա. յարեայ, զի
գտանիցեմ հնազանդ, և հպատակ փեսայ
ին իմում։ 'ի բաց ձգեցի զհեղգութիւն,

զքուն

զքուն. և զանհնազանդութիւն, սահմա
նադրեցի, առաջադրեցի, և խոստացայ հաս
տատուն կամօք այսուհետև այլ ոչ ընդդի
մանալ կամաց փեսային իմոյ սիրականի։
յորժամ շօշափեաց զիս փեսայն իմ, ձեռք
իմ կաթեցուցին զզմուռս, զզմուռս զայն,
զորմէ բաշխեաց ինձ առատապէս փե
սայն երկնաւոր։ յորժամ ձգեաց զձեռն
իւր ընդ ծակոյն. այսինքն յորժամ փեսայն
երկնաւոր հասոյց զձեռն իւր յիս, շրջա
պատեցին զիս ցաւք, պաշարեցին զիս թշո
ւառութիւնք, լցայ չարչարանօք, նեղու
թեամբք, տառապանօք, վշտօք, և անձ
կութեամբք։ յայնժամ ոչ միայն չարչարե
ցայ 'ի սրտի, այսինքն ոչ միայն կրեցի զներ
քին չարչարանս, այլ և չարչարեցայ 'ի ձեռս
այսինքն նա և տարայ զարտաքին չարչարա
նս։ ուստի չարչարեցայ սրտիւ, և չարչա
րեցայ իրօք, և գործովք։ այնպէս չարչա
րեցայ. թէ մատունք իմ լցան զմռսով
լաւագունեղիւ, դառնագունեղիւ, և ու
ժեղագունեղիւ։ Եւ այսպէս տարայ ըղ
ցաւս մեծագունեղս։

բն 6. 'Ի վերայ դրաց փակաղակին։ բացի եղ
բօրորդւոյ իմոյ։ եղբօրորդին իմ էանց,
և հոգի իմ ել ընդ բանի նորա։ խնդրեցի
զնա, և ոչ գտի։ կոչեցի զնա, և ոչ լուաւ
ինձ։ Ասորերէն այսպէս է. զփակաղակ
դրան 'իմոյ 'բացի սիրեցելոյն իմում. իսկ
նա

նա բացագնացեալ. և անցեալ էր։ Հոգի իմ հալեցաւ, յորժամ խօսեցաւ, խնդրեցի. ոչ գտի զնա. կոչեցի. և ոչ պատասխանեաց ինձ։

Հարսն հետևի խօսիլ. 'ի յաւէտ անդամս իմ, և 'ի յաւէտ գործս իմ կրեցի զցաւս. 'ի յաւէտ իրի, յորում զբաղեցայ, խոկոյն ընկալայ զանտանելի թախանձան. զսաստկագունեղ ցաւ, և զմեծագունեղ վիշտ։ սակայն 'ի յայսցանէ ցաւոց ոչ ընկալայ զվնաս. այլ զօգուտս մեծամեծս։ զի միջնորդութեամբ սոցին ընկալայ 'ի փեսայէն իմմէ զբարերարութիւնս մեծագունեղս։ վասն զի 'ի ձեռն դառնութեան, զոր գտացի 'ի մէջ վշտաց, փեսայն իմ երկնաւոր արտաքարշեաց զիս 'ի տղմոյ գարշելի, զաղբր, և տղտեղի հեշտութեանց, և փափկութեց զհիւանդս առողջացոյց, զխօթացեալս ապաքինեաց. զտկարս զօրացոյց, զփտեալս նորոգեաց. զխախուտս ամրացոյց, զաւերս շինեաց, հոտեալս, և նեխեալս շնորհեաց զուժգնութիւն բուրելոյ զանուշահոտութիւն։ վասն որոյ ուրախ. և զուարթ փութացեալ թռայ 'ի յանկողնոյ. և ընթացեալ առ վազեցի 'ի դուռն, 'ի վայր ածի զփականսն, և բացի զդրունս սիրեցելոյն իմոյ. բայց ցաւք, և վիշտք իմ վերանորոգեցան. վասն զի 'ի պատիժ նախկնոյ ծուլութե, և պղերգութեան իմոյ, արդէն սիրեցեալն մեկ

իմ

իմ բացագնացեալ. և անցեալ էր 'ի դրանէ այսինքն զազնիւ, և զընտիր հոգևոր լոյսն այն, որով արդ ակնեալ էր զիս պայծառացուցանել. զսաստկագոյն ներազդեցումն, որով զիս զքնաւէրս ընդոստուցեալ էր, վերստին յինէն եբարձ, թողեալ զիս անմխիթար, և զի վշտօք, ոչ արար զայս 'ի յատելութիւն անձին իմոյ, այլ վասն խրատելոյ զհեղգութիւն իմ, և վասն յանդիմանելոյ զտմարդութիւն իմ, զոր ցուցեալ էի նմա, և զի լինիցիմ զգուշագոյն 'ի յայլում ժամանակի, և 'ի միասին վասն հեռացման նորին առաւել վառիցի, և բորբոքիցի փափագ իմ, և հարկաւորիցիմ սիրել զնա ջերմագոյն, խնդրել զնա տենչագոյն, և համապահել զնա զգուշագոյն. արդ յորժամ սիրեցեալն իմ փութական բացագնացմամբ, և փախստեամբ իւրով. որով, գրեթէ բարձրագունեղ ձայնիւ. յանդիմանեաց, և կշտամբեաց զթմբրութիւն. և զյամեցողութիւն իմ, այսպէս խօսեցաւ, յիրաւի հալեցաւ հոգի իմ. այսինքն վասն տրտմութեան, ցաւոց, և ապշութեան եղէ արտաքոյ իմ, և գրեթէ պակասեցայ. սակայն տրտմութիւնս, և ցաւս այս ոչ ներբերեաց յիս զանյուսադրութիւն, կամ զվերայամեցումն, և ոչ եբարձ յինէն զուժգնութիւնս առ ի յառաջ հետևելոյ, և առ ի խնդրելոյ զսիրեցեալն.

ցեալն իմ, այլ առաւել աճեցոյց զզօրու-
թիւնս, և զուժս, և ստորատրեաց զխթա
նս, և զմտրակս. ուստի փութանակի յա-
ռաջ ընթացեալ. 'ի յամ կողմն խնդրեցի
զնա. բայց չգտի։ աղաչանօք. և փափա-
գանօք, և բարեպաշտ գործովք ձայնեցի,
և կարդացի զհեռացեալն. բայց ոչ պա-
տասխանեաց ինձ։ արդէն ոչ վերադառ-
նայի 'ի ջերմ. և 'ի փափուկ անկողին առաջ-
նոց հեշտութեանց. այլ ընդ տղմոտ հրա-
պարակս, և ընդ ցրտացեալ օդս, և ընդ-
թանձրախառն խաւար վազէի. լալով, ող-
բալով. կոծելով, ճչելով, կանչելով. ձայ-
նելով, գոչելով. և աղաղակելով. բայց ոչ
ձայնողիս պատասխանէր, և ոչ խնդրողիս
զինքն երևեցուցանէր. զի այսու ինքեամբ
կամեցաւ ինձ, որ զնա, մինչ խնդրէր, և
ձայնէր զիս, խիստ տմարդաբար արարի
երկարադունեղապէս սպասել. ուսուցա-
նել. թէ յարատևաբար պարտիմ խնդրել
և ձայնել զնա։

7. Գտին զիս պահապանքն. որք շրջեին ըն
'ի քաղաքին։ հարին, և վիրաւորեցին զիս.
առին զխլայն իմ յինէն պահապանք պա-
րսպաց։ Լատիներէն այսպէս է. գտին
զիս պահապանքն, որք շրջին զքաղաքաւ.
հարին զիս. և վիրաւորեցին զիս. բարձին
զձորձ իմ յինէն պահապանք պարսպաց։
Հարսն հոգևոր այսպէս խօսակցիլ դիտէ. մէջ
մինչ

մինչ մոլորէի ընդ փողոցս, և ընդ հրապարակս, պահապանքն, որք շրջեին զքաղաքաւ, այսինքն հրեշտակք, որք պահպանեն զխորհրդական քաղաք, կամ վարդապետք եկեղեցւոյ, որք քարոզեն զբանն կենաց, և առաջնորդք իմ. որք կացուցեալք են 'ի վերայ հոգւոյ իմոյ վերակացուք վասն հոգալոյ զնա. գտին զիս պահապան հրեշտակք, մինչ խնդրէի զփեսայն իմ 'ի ձեռն ս̃բ. գրոց, և աւետարանական վարդապետութեանց, ներազդելով ինձ զճանապարհ. որ ածէ առ փեսայն. գտին զիս վարդապետք, ցուցանելով ինձ զուղի, որ առաջնորդէ առ փեսայն. գտին զիս վերակացուք իմ, ջանալով հաստատել զիս փեսային. սոքա են շարժեցեալք նոյնով նախանձու. որով շարժեցեալ էր փեսայն իմ, հարին զիս, վիրաւորեցին, և մերկացուցին, այսինքն. քաջապէս կրթեցին զիս զանազան ապաշխարութեամբք, ձգնութեամբք, և անձկութեամբք. հարին զիս սուսերաւ ա̃ծայնոյ բանի. և սաստկագոյն կշտամբման, խրատելով. և յանդիմանելով զնախկին ծուլութիւն, պղերգութիւն, և անամօթութիւն իմ. յետոյ վիրաւորեցին զիս, այսինքն հրացեալ նետիւք ա̃ծայնոյ սիրոյ խոցոտեցին զսիրտ իմ, և առաւել ընդ[illegible]ցին. և շարժեցին զիս. զի միայն զփեսայն

իմ

իմ խնդրեցեմ։ վերջապէս բարձին յինէն զձորձ. այսինքն զկանացի հանդերձ. քօղ. վերարկու. և ծածկոց։ զայս դիտեմ ասել. բարձին յինէն զչար պատրուճակս. և զթիւր դիտաւորութիւնս 'ի խնդրելն ըզփեսայն իմ։ քանզի ուսուցին զիս, ուղիղ դիտաւորութեամբ, և մերկ ըղձիւ սիրոյ խնդրել զսիրեցեալն իմ, 'ի բաց ձգել զարգելմունս. և զա̃մ կրճիմն կատարելութե. այսինքն զայնոսիկ ամենեսին, որք արգելուն զկատարելութիւն։ ուսուցին զիս; խնդրել զփեսայն իմ, ոչ պատճառաւ բերկրութեան. և հեշտութեան իմոյ. այլ պատճառաւ միայնոյ ինքեան փեսայի։ ուսուցին զիս, խնդրել առաւել զանձն փեսայի. քան զպարգևս նորին։ այսպէս ընդունեցեալ. և այսպէս ներհմտացուցեալ. ջոգայ խնդրել զնա։ մինչ խնդրէի, հանդիպեցան ինձ դստերք եր̃մի, քաղոքակիցք. և ընկերակիցք իմք։

8. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք եր̃մի բն
'ի զօրութիւն, և յուժգնութիւն անդաստանի։ եթէ գտանիցէք զեղբօրորդին իմ, պատմեսջիք նմա. եթէ խանդակաթ եմ, 'ի սէր քո։ Լատիններէն այսպէս է. երդմնեցուցանեմ զձեզ դստերք եր̃մի. եթէ գտանիցէք զսիրեցեալն իմ. զի ծանուցանիցէք նմա. թէ նուաղիմ սիրով։

Հարսն երդմնեցուցմամբ աղաչէ զդստե մեկ

րքս

րըս եՃմի· այսինքն զմ̃տս, որք են յերկրի
և որք են յերկինս, զի բարեխօսիցեն վ̃ս
նորա առ փեսայն երկնաւոր, զոր ընդդր
կեալք են շնորհօք, կամ փառօք, և ծա
նուցանիցեն նմա զփափագ նորա, որով
սաստկապէս տենչայ փարիլ զփեսայիւ. ուս
տի այսպէս խօսիլ դիտէ· արդ 'ի ձեռն
ս̃բ գրոց· և ճշմարիտ վարդապետութ̃եց
ծանեայ զպատուականութիւն· և զանու
շութիւն փեսային իմոյ. վասն որոյ զգա
տացեալ դատապարտեմ զանզգուշութի
իմ, զամարդութիւն իմ· զապերախտութի
իմ, զծուլութիւն իմ· զհեղգութիւն իմ,
զթմբրութիւն իմ· և զպղերգութիւն իմ,
որով պղերգացայ ընդունիլ զգրկանս·
զորս յօժարութեամբ հաճեցեալ էր սա
կաւիկ մի յառաջ ընծայել ինձ փեսայն իմ·
արդ մեծագունիւ ըղձիւ, և սաստկագու
նիւ փափագաւ հեւամ· և հառաչեմ առ
գրկանս փեսայի իմոյ· տենչամ փարիլ
զնովաւ. սէր նորա այնպէս վառեցեալ,
և բորբոքեցեալ է 'ի սրտի իմում, թէ հա
լիմ, և նուաղիմ սիրով նորին. վասն որոյ
դիմեմ առ ձեզ· ով դստերք եՃմի, այս
ինքն մ̃տք, որք էք յերկինս· որք վայելէք
զդէմ յանդիմանական տեսութիւն երկնա
ւոր փեսայի· որք անդադար փարեցեալք
էք զնովաւ, և որք զգացեալք էք զանու
շութիւն գրկանաց նորա, և ունիք զհա

մարձակութիւն առաջի նորա. և որք եր-
կրաւորք. որք շնորհօք ընդգրկեալք զյս՟,
ճաշակեալք էք զհամեղութիւն նորա, ա-
ղերսանօք հայցեմ 'ի ձէնջ. և կողկողագին
աղաչեմ զձեզ. զի բարեխօսութեամբք,
և աղաչանօք ձերովք միջնորդիցէք վասն
իմ առ փեսայն երկնաւոր, և ծանուցանի-
ցէք նմա զփափագ իմ, որով տենչամ
դրկել զնա.

9. Զի՞նչ է եղբօրորդին քո յեղբօրոր- բն
դիս, գեղեցիկդ 'ի կանայս. զի՞նչ է եղ-
բօրորդին քո յեղբօրորդեաց. զի այդպէս
երդմնեցուցանես զմեզ։ [illegible]ատեներէն այս-
պէս է. որպիսի է սիրեցեալն քո 'ի սիրե-
ցելոյ, ո՞վ գեղեցկագունեղդ կանանց.
որպիսի է սիրեցեալն քո 'ի սիրեցելոյ. զի
այսպէս երդմնեցուցեր զմեզ.

Դստերք երմի հարցանեն զհարսն վասն մեկ
փեսայի. այսինքն, մբ՟ հոգիք, որք են դս-
տերք եկեղեցւոյ, որ է խորհրդական երմ,
հարցանեն զեկեղեցի վասն քի՟. այսպէս
խօսիլ դիտեն. ո՞վ եկեղեցի մբ՟. որ ես ան-
րական հարսն քի՟, որ ես գեղեցկագոյն
քան զամ՟ ստեղծուածս, որ յափշտակե-
ցեալ ես 'ի սիրոյն քի՟, և ընտրեալ ես զնա
քեզ սիրական 'ի վեր քան զամ՟ սիրելիս, և
սիրես զնա առաւել քան զամ՟ իրս. վասն
էր զսիրելին քո նախադասես ամ՟ սիրելեաց
և գովես զնա առաւել քան զամ՟ գովելիս

վասն էր սիրելին քո առաւել քան զամ սիրելիս յափշտակէ զքեզ 'ի սէր իւր. զի՞նչ է 'ի սիրեցելում քում այնքան ազնիւ, և պատուական, որ առաւել քան զայլ ամ սիրեցեալ իւր այդքան յափշտակէ զքեզ 'ի սէր նորա. վասն էր, զի հասանիցիս սիրեցելում քում, նա և երդմնեցուցանես զմեզ. զգովեստից, զգերակայութեանց, և զգերազանցութեանց սիրեցելոյ քոյ այսքան հոգացողաբար հարցանեմք զքեզ վասն բազում պատճառաց. Նախ, զի տայցեմք քեզ զառիթ դրուատելոյ, և գովասանելոյ զսիրելին քո, և զգովս նորա բացայայտելոյ, և հրատարակելոյ. երկրորդ, զի 'ի յիշեցմանէ իւրաքանչիւրոց կատարելութեանց փեսային քոյ, որք զնա առնեն արժանի մեծագունեղի սիրոյ, վառիցեմք և բորբոքիցեմք 'ի սրտի քում զաստուածոյն բոց սիրոյ. երրորդ, զի նա և զմեզ ինքեանս, որք ընտրեալք եմք մեզ զնոյն սիրական, և նոյնում փեսայի փափագեմք, յիշելով. և լսելով զգովասանս նորա. զուարճացուցանեմք, և բերկրեցուցանեմք, և 'ի սէր նոյնոյ առաւել. և առաւել զսիրտ մեր վառիցեմք, և բորբոքիցեմք. վերջապէս, զի ճանաչեալք զայնքան ազնիւ, ընտիր, և պատուական փեսայ, մեք ևս կարիցեմք զնոյն խնդրել. և զնոյն վայելել. երկիցս շարունակաբար հարցանեմք զքեզ. որպիսի

ոք

դք իցէ փեսայն քո․ քանզի ք՜ս աննման․ և պատուական փեսայն քո, գոլով ճշմարիտ ա՜ծ, և ճշմարիտ մարդ, նմանապէս կատարեալ ա՜ծ, և կատարեալ մարդ, ունի զերկու կատարեալ բնութիւնս ՚ի միում անձի, այսինքն զկատարեալ ա՜ծային բնութիւն․ և զկատարեալ մարդկային բնութիւն․ վասն որոյ տենչամք, զի զիւրաքանչիւր մանաւանդութիւնս, և գովեստս երկաքանչիւրոյ բնութեան բացատրեսցես մեզ։

10․ Եղբօրորդին իմ սպիտակ է․ և կար բն
միր, ընտրեալ ՚ի բիւրուց։ Լատիներէն
այսպէս է․ սիրեցեալն իմ սպիտակ, և կար
միր, ընտրեցեալ ՚ի հազարաց։

Հարսն սկսանի բացատրել զգովս փեսայի․ մեկ ուստի այսպէս բարբառէ․ փեսայն իմ երկնաւոր ըստ ա՜ծայնոյ բնութեան իւրոյ է սպիտակ, և պայծառ․ քանզի է ճաճանչ ա՜յ զօրութեան, և ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին, և նշոյլ լուսոյ մշտնջենաւորի, և անարատ հայելի ա՜յ ազդեցութեան, և պատկեր առատութեան նորա․ և է լոյս փառաց․ և նկարագիր էութեան ա՜յ․ և է բան, և իմաստութիւն ա՜յ հօր․ ըստ ա՜ծայնոյ բնութեան իւրոյ նա և է կարմիր․ զի կարմրացեալ է սիրով․ վասն զի ՚ի միասին ընդ հօր փչէ զհոգին ս՜բ, որ է սէր հօր, և որդւոյ․ զի ՚ի հօրէ, և՚ի յոր դւոյ

դւոյ յառաջագայն, և բղխէ։ փեսայն իմ
հոգևոր նա և ըստ մարդկայնոյ բնութե̅ն
իւրոյ է սպիտակ, և կարմիր։ է սպիտակ.
քանզի է պայծառ անմեղութեամբ իւ
րով. է կարմիր. քանզի կարմրացեալ է և
արեամբ յատկականաւ մարմնոյ իւրոյ, և
արեամբ այլականաւ մեղաց մարդկան, և
արիւնաթաթախ յաղթութեամբ, զոր փա
ռաւորագունեղապէս ստացաւ, աղբրտեալ
և յաղթահարեալ զսատանայ, զմարմին,
զաշխարհ, և զմեղս։ դարձեալ է սպիտակ.
զի է պայծառ կուսութեամբ։ է կարմիր
զի կարմրացեալ է մարտիրոսութեամբ, ոչ
միայն ՚ի յինքեան։ այլ և ՚ի յանդամս իւրս
դարձեալ է սպիտակ. զի պայծառ է սր
բութեամբ, և մաքուր վարդապետութե̅ն
է կարմիր. զի կարմրացեալ է սիրով. և
պատուիրանաւ նորոյ օրինի։ փեսայն իմ
երկնաւոր է ընտրեցեալ ՚ի հազարաց, և
՚ի տասն հազարաց. քանզի պայծառութե̅
և կարմրութեամբ իւրով գերազանցի զա
մենեքումբ և հրեշտակօք, և մարդկամբք։
քանզի պայծառագոյն, և կարմրագոյն է
քան զա̅մ հրեշտակս, և մարդիկ. ուստի
ասի զնմանէ. ՚ի լրութենէ անտի նորա
մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ
շնորհաց. Եւ այլուրեք ասի. ՚ի նմա հա
ճեցաւ ա̅մ լրումն ա̅ծութեան բնակել. ՚ի
նմա բնակի ա̅մ լրումն ա̅ծութեան մար
մնապէս.

Յեապէս ։ որ է գլուխ ա՟մ իշխանութե՟. և
պետութեան ։

11. Գլուխ նորա յոսկւոյ կեփազեայ. վարսք նորա կուածոյք սեաւ իբրև զագռաւ ։ բն

[ Ատեններէն այսպէս է. գլուխ նորա ոսկի
բարեգունեղ. վարսք նորա որպէս բարձ
բացեալք արմաւենեաց, սեաւք իբրև զա
գռաւ ։

Հարսն հետևեի խօսիլ. եթէ հարցանիցէք մեկ
զհասակէ նորա, է վեհագոյն. և բարձրա
գոյն քան զա՟մ ստեղծուածս, և յերաւեն
հանդերձ զարմանալի յարմարութեամբ, և
գեղեցկութեամբ ա՟մ մասանց ։ արդ սկս
այց 'ի ծայրագոյն գագաթնէ. գլուխ նորա
ըստ ա՟ծայնոյ բնութեան, ա՟ծ է. ըստ
այնմ պօղոսի. այն ա՟մ գլուխ ք՟ս է, և
գլուխ ք՟ի ա՟ծ ։ ըստ մարդկայնոյ բնութե՟
է միտն ք՟ի, այսինքն վերնագոյն մասն հո
գւոյ, յորում է պատկերն ա՟յ ։ 'ի ք՟ս երկա
քանչիւր գլուխ է բարեգունեղ ոսկի.
քանզի 'ի վեր քան զա՟մ իւս է ազնուա
գունեղ. պատուականագունեղ, բարձրա
գունեղ. և վսեմագունեղ. քան զոր ոչ'
ինչ մեծագոյն, ոչ ինչ բերկրականագոյն.
և ոչ ինչ գեղեցկագոյն բացատրածիլ կա
րէ ։ գլուխն ք՟ի փեսային իմոյ ըստ առա
ջին մտածման է բարեգունեղ ոսկի ։ քան
զի ա՟ծ է աղբիւր ա՟մ բարութեան, և ան
հուն ծով ա՟մ կատարելութեանց ։ նա և

ըստ

ըստ երկրորդ մտածման է կատարելագու նեղ. և բարեգունեղ. քան զի մարդկային միտն Քի է կատարելագոյն, վսեմագոյն. և գերազանցագոյն քան զամ ստեղծեցեալ միտս. որ է ճշմարտագունեղ և զգլխոյ Քի 'ի յինքեան նկատեցելոյ ըստ գոյացու թեան իւրոյ. և վասակէ ազնուագունե ղեց կատարելութեանց պսակողէ զգլուխ նորա. և վերջապէս զխորհրդական գլխոյ եկեղեցւոյ. քանզի գլուխն Քի ըստ ամե նից մտածմանց է ոսկի. զի է պատուա կանագունեղ, է բարեգունեղ. զի է կա տարելագունեղ. յորմէ ոսկեղէն գլխոյ բղխեն մշտնջենաւորապէս 'ի մարդիկ ամ ոգիք կենաց. շնորհաց, և առաքինութեց, ամ իմաստութիւն, ամ կարողութիւն, ամ զօրութիւն, ամ սէր, և ամ գեղեցկութիւ վարսք գլխոյ նորա, թէ ըստ որում է ած թէ ըստ որում է մարդ. այսինքն կատա րելութիւնք նորա. կամ զարմանալի, և հիանալի մտածմունք, դատաստանք, և խորհուրդք նորա. նա և բարերարութիւք և գործք նորա. որք անցանեն առ մար դիկ, նմանին բարձրագոյն, և փափկագոյն փոքրիկ ոստոց, որք 'ի բարձրաւանդակի, և 'ի գագաթան արմաւենեաց են, կամ նոր ծրարից, որոնք պտուղք արմաւենեաց նախ քան զհասանելն պարունակին, որք ունին զերաւ գոյն, և թուխ գրեթէ ան

համարք

Համարք են. բայց 'ի վայր կախեցեալք
դէպ 'ի կոճղն, և առ ստորագոյնս. վասն
զի ա͞ծ կատարելութիւնք, մտածմունք, և
բարերարութիւնք ք͞ի, որպէս են անթիւք
այսպէս և բարձրագունեղք, և գերազան
ցագունեղք են. բայց ամենեքին արտա
ծագեցեալք 'ի միջէ կոճեղէ, և արմա
տոյ ա͞ծութեան, դէպ 'ի վայր առ ստեղ
ծուա՛ծս կախք են, զի զինքեանս նոցա
հաղորդիցեն. դարձեալ նմանին բարձրա
ցեալ արմաւենւոյ, որ է հանգամանակ ստա
ցեալ յաղթութեան, զի իմանայցեն մար
դիկք, թէ նա փառաւորապէս յաղթա
հարեալ է զա͞մ թշնամիս. վարսք նորա
սեաւք են համգոյն ագռաւուոյ. զի փեսայն
իմ ծաղկեցեալ է զօրութեամբ. և կենօք
վասն զի վարսք սեաւք ցուցակք են երե
տասարդութեան. և ծաղկեցեալ կենաց.
ուստի սևութիւնս այս հերոց ցուցանէ.
թէ փեսայն իմ կայտառ է. նշանաւորէ
ևս զաստկութիւն. և խստութիւն, զոր
երբեմն փեսայն երկնաւոր հարկաւորի 'ի
կիր արկանել. և 'ի գործ ածել. նշանակէ
ևս զնսեմութիւն. և զխորութիւն խորհր
դոց. և դատաստանաց ա͞ծայնոց. քանզի
են խորագունեղք. և են անզննելիք 'ի
մարդկանէ.

12. Աչք նորա իբրև զաղաւնիս լուացեալ րն
կաթամբ. նստեալ 'ի վերայ լիութեան
ջուրց

ջուրց։ Լատիններէն այսպէս է. աչք նր̅
իբրեւ զաղաւնիս 'ի վերայ փոքրիկ առուոյց
ջուրց, որք լուացեալք են կաթամբ, և
վերանստին մերձ առ փոքրիկ հոսանս
լիագունեղս.

ժեկ Զարմն հոգևոր 'ի գովասանաց գլխոյ, և
հերոց փեսայի իջանէ առ գովս աչաց նր̅,
զորս այսպէս գովաբանէ. աչք նորա ծ̅ծ
այնք, այսինքն ծածային իմաստութիւն,
և նախախնամութիւն նորա. և աչք նորա
մարդկային. այսինքն վերադերազանց գի
տութիւն, և խոհեմութիւն նորա. որք
վասն բազմապատկի զօրութեան, և գոր
ծոյ իւրեանց եօթն ասին թուով. ըստ
այնմ. 'ի վերայ վիմին եօթն աչք են. այ
ազիկ են եօթն աչքն, որք հային ընդ
ամ̅ երկիր. ասին և հացեալք, ըստ
այնմ, և աչք նորա որպէս զծոց հրոյ. հրա
ցեալք, և բոցեղէնք ասին. զի սրին, և
վառին սիրով. և փայլին լուսով. և 'ի յին
քեանս, և 'ի մէջ. նորս, բացամերժեալք
դշրդութիւն, և զխաւար, վառեն զհուր,
և շըլոյս հաւատոյ, յուսոյ, սիրոյ, և այլոց
առաքինութեանց. նոյնք աչք նմանին ա
ղաւնեաց. քանզի են գեղեցիկք, սպի
տակք, պայծառք, արծաթապատք, մա
քուրք, պարզք, ողջախոհք, բայց պա
րզեռք, և բազմածինք. և են թարց

թարց

ատելութեան, Թարց լեղւոյ դառնութեան, Թարց նենգութեան, Թարց դաւաճանութեան, և Թարց խարդախութեան։ Այլ քանզի լիք են շնորհօք, և ճշմարտութեամբ, որք 'ինմ գիրս նմանեցուցանին ջուրց, վասն այսորիկ կոչին աղաւնիք, որք վերանստին մերձ առ առուս, և հոսանս ջուրց․ քանզի Քս է աղբիւրն այն ջրոց կենդանեաց, որոյ 'ի լրութենէ մեք ամենեքին առնումք․ է աղբիւրն այն յորմէ բղխեն շնորհք, որք տան զկենդանութիւն․ է վտակն այն, յորմէ ծորին իմաստութիւն, և գիտութիւն, որք ածեն առ կեանս․ կոչին աղաւնիք, որք լուացեալք են կաթամբ․ քանզի են գէրք, յիստակք․ և սպիտակք․ և քանզի պատճառեն զքաղցրութիւն, զպայծառութիւն, և զպտուղս պարարտս։

13․ Ծնօտք նորա իբրև զտաշտս խնկոց — բն
իւղեփեցաց բուրեալք զանուշահոտութիւ
շրթունք նորա շուշանք, բղխեն զմուռս լրութեան։ Լատիներէն այսպէս է․ Ծընօտք նորա իբրև զտաշտս խնկոց սերմանեցեալս 'ի յիւղեփեցաց․ շրթունք նորա շուշանք կաթեցուցանողք զզմուռս առաջին։

Հարսն խորհրդական յետ գովասանելոյ մէկ
զաչս փեսային իւրոյ, սկսանի դրուատել զծնօտս, և զշրթունս նորա․ ուստի ասէ

ծնօտք

ծնօտք նորա ածայինք, այսինքն էական
կատարելութիւնք նորա· և ծնօտք նորա
մարդկային, այսինքն գեղեցկութիւնք առա
քինութեանց նորա 'ի ներքին, և յարտա
քին մարդում, նմանին դաշտաց խնկոց
սերմանեցելոց 'ի յիւղեփեցաց· զի որպէս
դաշտք խնկոց սերմանեցեալք 'ի յիւղեփե
ցաց, բուսուցանեն զանուշահոտ խունկս,
և պտղաբերեն զխնկատու ծաղիկս, տրա
մադրեցեալս ընդ ակօսս գեղեցիկ կար
գաւ ձեւամբ հմուտ արուեստաւորի, որ
լինի 'ի բուրաստանս մեծամեծաց· այս
պէս և կատարելութիւնք· և գեղեցիկ ա
ռաքինութիւնք փեսային իմոյ երկնաւորի
'ի բուրաստանի եկեղեցւոյ, որ է պար
տէզ ամենամեծ արքայի, բուսուցանեն
զանուշահոտ խունկս շնորհաց, պտղաբե
րեն զգեղեցկայարմար առաքինութիւնս
քրիստոնէականս, և բուրեն զանուշահո
տութիւնս շնորհազարդ գործոց։ յորոց
երևի· թէ կատարելութիւնք· և առաքի
նութիւնք փեսային իմոյ են յոյժ գեղե
ցիկք, անոյշք· և հոտաբերք· շրթունք
նորա, այսինքն· բանք· խօսք, զրոյցք·
վարդապետութիւնք, և համբոյրք նորա
նմանին շուշանաց, որք գերազանցեն նա
և զփառօք սողոմոնի։ քանզի են սպիտակք
պայծառք, գեղեցիկք· հոտաբերք· անու
շահոտք· ճշգրիտք։ են սպիտակք· զի են
ճշմարիտք։

Ճշմարիտք. են պայծառք, զի լուսաւորեն
և պայծառացուցանեն զմիտ. են գեղե
ցիկք. զի խօսին զյարմար, և վայելուչ
իմաստութիւն. և ուսուցանեն զխոհեմ
հանճարեղութիւն. են հոտաբերք, և ա-
նուշահոտք. զի բերկրեցուցանեն, և ըղ
մայլեցուցանեն զլսօղս. են Ճշգրիտք. զի
ոչ պատրիլ. և ոչ պատրել կարեն. նմանին
և զմռսոյ առաջնոյ, այսինքն բարեգու
նեղից, և պատուականագունեղից. քանզի
են յոյժ շահաւէտք, և օգտակարք հոգւոյ
վասն զի բառնան զհոգևոր ժահահոտու
թիւն, սանձահարեն զախտս, օգնեն հոգ
ւոյ, ամրացուցանեն զշնորհս, զօրացուցա
նեն զառաքինութիւնս. քաջալերեն զսիրտ
արգելուն զապականութիւն, զոր պատ
ճառեն մեղք, և ծնանին զանուշահոտու
թիւն վարուց.

14. Ձեռք նորա ճախարակեալք ոսկե բն
ղէնք. լցեալ ակամբք Թարսսայ. որովայն
նորա տախտակ փղոսկրեայ ականակապ,
՚ի քարանց շափիւղայ. Լատիներէն այս
պէս է. Ձեռք նորա ճախարակեալք ոս
կեղէնք, լցեալք յակինթօք. որովայն նորա
փղոսկրեայ, զանազանեցեալ շափիղօք.
Նարօն յետ դրոշմատելոյ զծնօտս, և զշր մեկ
թունս փեսային իւրոյ, սկսանի գովել
զձեռս, և զորովայն նորա. զորս այսպէս
գովասանէ. Ձեռք նորա ծծայինք. այս
ինքն,

ինքն, բանն, և հոգին մր̃. կամ արարողական, և պահողական զօրութիւն, որով ըստ որում ա̃ծ արար, և պահէ զա̃մ ստեղծուա̃ծս. և ձեռք նորա մարդկայինք, այսինքն ջան զօրութեանց. և կարողութիւն սքանչելեաց, որովք հնանալի դիւրութե̃, և զարմանալի արագութեամբ, և ամբողջ կատարելութեամբք արար զզանազան սքանչելագործութիւնս. են ներգործականս պէս ճախարակեայք. ձեռք փեսային իմոյ յորջորջին այսպիսիք. քանզի փեսայն իմ երկնաւոր Թարց ուրուք արգելման, Թարց ուրուք յամեցման, միով բանիւ, և ծայրագոյն կատարելութեամբ զոր ինչ կամի, առնէ, 'ի յերկինս, և 'ի յերկրի. զօրութիւնք փեսայն իմոյ են ոսկեղէնք. քանզի են ա̃ծայինք, կամ ա̃ծամարդկայինք ձեռք նորա յիրաւի են ոսկեղէնք. քանզի չքնաղացեալք են ոսկեաւ սիրոյ: են և լցեալք յակինթօք ակամբք պատուականօք օդեղինի, և երկնեղինի գունոյ, գրեթէ եղ̃գամբք, և ակամբք զանազանեցեալք. քանզի զօրութիւնք նորա են պերճացեալք, և պա̃նեցեալք, և գեղեցկացեալք ակամբք, և մարգարտօք զանազան առաքինութեանց. մանաւանդ յակինթօք պաճուճեցեալք են. այսինքն ողորմութե̃ և գթութեամբ. զի յակինթն է հանգանակ ողորմածութեան. քանզի գոյն նորա

յորժամ

յորժամ երկին է ամպեղէն. խաւոլի. և պղտորի, գրթէ 'ի տխրիլ երկնի. իսկ յորժամ երկին է պարզ. փայլէ, և խնդայ։ որ է յատուկ ողորմութեան ։ ողորմածք ձեռք քո ո՛չ նուազ տարածեցեալք են 'ի մեզ աղքատս, որքան առ երկնայինս վերացեալս, զա՟մ իրս 'ի փառս այ՟ գործեալք առ երկինս զամենեսին յափշտակեալք։ որովայն, աթոռ եփման, մարսեցման, և ծննդեան, որ 'ի յայլ կենդանիս սովոր է լինիլ կակղագունեղ. եստորագունեղ մասն մարմնոյ, 'ի ք՟ս է հաստատագունեղ. և հզօրագունեղ ։ քանզի է փղոսկրեայ 'ի յամուր փղոսկերէ. այսինքն 'ի յոսկերէ փղոյ հզօրագունեղի կենդանւոյ. և է զանազանեցեալ շափիղօք։ ուստի որովայն նորա է հզօրագունեղ. և գեղեցկագունեղ. այսինքն մարդկային բնութիւն նորա է հզօրագունեղ. և գեղեցկագունեղ ։ որովայն ն՟ծ է տուփ փղոսկրեայ ։ քանզի մարդկային բնութիւն նորա է տուփ բանին, որ է ամենազօր ած՟ ։ որովայն նորա է տախտակ փղոսկրեայ, եդեալ, կամ հիմնեցեալ 'ի վերայ ական շափիւղայի, այսինքն 'ի վերայ անձին որդւոյն այ՟, որ է ճշմարիտ սափփիրոս, ամենեքումբք երևեցուցանող ըզգոյն երկնի պարզի, ոսկեղէնք կետիւք արտաւաքեալ գլոյս ։ որովայն նորա է տախտակ. զի մարդկային բնութիւն նորա է

ճշմարիտ

ճշմարիտ մարդկութիւն. որովայն նորա է փղոսկրեայ. զի մարդկութիւն նորա ամրացեալ. և զօրացեալ է առանձնական շնորհօք. որովայն նորա հիմնեցեալ է 'ի վերայ շափիւղայի. զի մարդկային բնութիւն նորա միաւորեցեալ է անձնաւորական միաւորութեամբ ընդ անձին բանին որդին այ յորջորջի սափիրոս. զի ունի զպարզ ածութիւն, և է իմանալի ամենապայծառ արեգակ. դարձեալ. զի սափիրոս է հանգամանք հրամանի, և իշխանութեան. վասն որոյ վեհապետաց, և կառավարաց, յորժամ ստեղծանին իշխանք եկեղեցւոյ, պարգևի շափիղայ. ուստի որդին այ կոչի շափիղա. զի իմանայցեմք, թէ նա է իշխան իշխանաց. ուրեմն տախտակ, կամ տուփ փղոսկրեայ մարդկութն քի ներկեցեալ սափիրոսի ածայնոյ անձին, ինքն ևս միջահիւսեցեալ շափիղօք իւրայնովք, անդրահեղու 'ի մէջ զամ գանձս երկնայինս.

բն 15. Սրունք նորա սիւնք կճեայք. հաստատեալք 'ի վերայ ոսկի խարսխաց. տեսակ նորա որպէս լիբանան. ընտրեալ իբրև զմայրս. Ատեններէն այսպէս է. Սրունք նորա սիւնք մարմարոնեայք, որք հիմնեցեալք են 'ի վերայ ոսկեղէն խարսխաց. տեսակ նորա որպէս լիբանանու, ընտրեալ իբրև զնոճս.

քարոն

Հարսն հոգևոր հետևի գովաբանել ըզ Մե͞կ
փեսայն իւր սիրական, և պատուական. ուս
տի ասէ. սրունք, և բարձք նորա, որք են
գործեալք առ ի ճեմել, շրջել, քայլել, և ըն
թանալ, նմանին մարմարինեայ սեանց.
քանզի են հաստատունք. ամուրք, և գէրք
զայս գիտեմ ասել. ամենայն ճանապարհք,
քայլք, գնացք, ընթացք, և արարողունք
ք͞ի փեսային իմոյ, են կայունք, և հզօրք.
քանզի են հաստատեցեալք, և հիմնեցեալք
՚ի վերայ խարսխաց, այսինքն ոտից, ոչ կա
ւեղինաց, այլ ոսկեղինաց, այսինքն գեղեց
կաց, պատուականաց, հզօրաց, և դիւրա
շարժից, հանգոյն ոսկւոյ, որ քան զայլ
հրահալելիս է հզօրագոյն, ազնուագոյն,
պատուականագոյն, և առաւել ձուլածու.
ոսկեղէն խարիսխք, և ոտք, որոց վերայ
հաստատեցեալք են ա͞մ ճանապարհորդու
թիւնք, և արարողութիւնք փեսային իմոյ
ք͞ի, են երկուորեակ, և երկեակ սէր ն͞ր,
այսինքն սէրն ա͞յ, և սէրն ընկերի. քան
զի նա ՚ի յա͞մ արարողութիւնս իւրս հայէր
՚ի փրկութիւն մարդոյ, և ՚ի փառաւորու
թիւն հօր. ոսկեղէն խարիսխ, և ոտք ն͞ր
նա և են ողորմութիւն. և արդարու
թիւն. քանզի ա͞մ արարողութիւնք նորա
նա և հիմնեցեալք էին ՚ի վերայ ողորմու
թեան, և արդարութեան. ասա վերանկա
տելի է. զի ոչ միայն գլուխն ք͞ի. այլ և
ձեռքն

ձեռքն. և ոտքն նորա ասին ոսկեղէնք.
քանզի մեծ վայելչութիւն, և գեղեցկու-
թիւն, և կարողութիւն, և ամ կատարելու-
թիւնք նորա հանապազ 'ի յամ կողմանէ
ծնանլոյք են նոյնք: վասն զի հանապազ
նոյնգունակ պայծառք, և պատուականք
են, և թագաւորութեան նորա. որ բոլոր
է ոսկեղէն, ոչ երբէք լինելոց է վաղճանի
մինչև ցաստ խոստեցաւ հարսն զիւրաքանչ-
իւր անդամոց փեսայի. արդ խօսի զամե-
նից 'ի միասին կցեցելոց, զի ասէ. տեսակ
նորա, այսինքն ունակութիւն, և կերպա-
րան բոլոր մարմնոյ նորա, յարմար, և ըմ-
բռն շարադրութիւն ամ անդամոց նորա,
հանճարեղ շարակարգութիւն շարժմանց
նորա, խոհական յարմարութիւն վարուց
նորա, պատշաճաւոր յօրինածութիւն գոր-
ծոց նորա, և գեղեցկազարդ վայելչութի
առաքինութեանց նորա, նմանի կանանչե-
ցեալ, ծաղկեցեալ, բարձրացեալ, և բերկ-
րական լերին լիբանանոսի, զանթիւ ծառս,
զպտղաբեր խնկական խոտս, և զգեղեցկա-
գունեղ ծաղիկս համազգեցելոյ. ըստ այնմ
փառքն լիբանանոսի տուաւ նմա, վայելչու-
թիւն կարմելայ, և սարօնայ: հաստատ նր
ընտրեալ է իբրև զնոճս, որք 'ի մէջ ամ
ծառոց լիբանանոսի բարձրութեամբ, անու-
շահոտութեամբ, և անապականութեամբ
գերազանցք են: նա և քան զնոճս, այսինքն

քան զՀրեշտակս, գերազանցագոյն է. զի
է բարձրագոյն քան զնոճս 'ի դրախտին
Այ։ քանզի շնորհ նորա է բարձրագոյն,
առաքինութիւն նորա անուշահոտագոյն,
և սրբութիւն նորա անապականագոյն։

16. Ըոկորդ նորա լի քաղցրութեամբ, և
ամենևին ցանկալի. այն է եղբօրորդին
իմ, և այն մերձաւոր իմ. դստերք Եմի։
Լատիներէն այսպէս է. կոկորդ նորա
քաղցրագունեղ, և բոլոր ցանկալի, այն
պիսի է սիրեցեալն իմ, և այն է բարեկա
մն իմ, դստերք Եմի.

Հարսն խորհրդական վերջապէս այսպէս
գովասանէ զփեսայն իւր. կոկորդ նր է
քաղցրագունեղ 'ի խօսելն. 'ի նուագելն.
'ի յաղաղակելն 'ի ճաշակելն, և 'ի շնչելն.
նա և մինչ շնչէ զզմուռս. և մինչ կարծրա
բար կշտամբէ, և մինչ պատժէ, բուրէ
զանուշութիւն, և փչէ զքաղցրութիւն։
է քաղցրագունեղ 'ի խօսելն. զի խօսի բղ
խոս կենաց, ուսուցանէ զերկնային իմաս
տութիւն, բարբառէ զխօսս մխիթարա
կանս, և աւետարանէ զյաւիտենական ե
րանութիւն։ է քաղցրագունեղ 'ի նուա
գելն. զի վարդապետութեամբ իւրով
առաջնորդէ առ երգս մշտնջենաւորս։
է քաղցրագունեղ 'ի յաղաղակելն. զի ա
ղաղակէ ընդդէմ մեղաց. է քաղցրագու
նեղ 'ի ճաշակելն. զի է քաղցրութիւն

քաղցրութեանց. է քաղցրագունեղ 'ի չնչելն. զի փչէ զանուշահոտութիւն շնորհաց, և ամենայն առաքինութեանց։ է քաղցրագունեղ, մինչ հնչէ զզմուռս. զի լուծ նորա է քաղցր, և բեռն նորա փոքրոգի։ է քաղցրագունեղ 'ի յանդիմանելն. զի յանդիմանէ առ կեցութիւն հոգւոյ։ վերջապէս է քաղցրագունեղ 'ի պատժելն. զի պատժէ արդարապէս միով բանիւ սիրեցեալն իմ, ոչքան է, բոլոր ցանկալի է. վասն զի թէ նկատիցի իբրև զա̃ծ. թէ իբրև զմարդ, բոլոր ծայրագունեղապէս ցանկալի է, սիրելի է, երկրպելի է։ քանզի է բոլոր գեղեցիկ, բոլոր ս̃բ, բոլոր բարի, և բոլոր երկրպական. ա̃մ, որ է 'ի նմա, ոչ կարէ ծնանիլ զձանձրութիւն. և զթախանձան, այլ զուարճացուցանէ, և երկրպեցուցանէ. նա է տենչալին ազգաց և ցանկալին ամենեցուն։ ուստի վերջաբանեմ, ասելով. այնպիսի է սիրեցեալն իմ, որպիսի մինչև ցայժմ ցուցի ձեզ. 'ի գլխոյ մինչև ցոտս դրոշմանելով զնա։ մի զարմանայք. եթէ այնքան աշխատեցայ 'ի գովելն զնա, և այնքան քրտնեցայ 'ի խնդրելն զնա։ զի նա է բարեկամն իմ, նա է սիրելին իմ. նա է, զոր սիրեմ բոլորով սրտիւ և նա է. որ հակադարձաբար սիրէ զիս 'ի սրտէ։ նա է, որում կամիմ զբարիս, և նա է, որ արար, և առնէ ինձ զբարիս։

նա

Նա է լոյս մտաց իմոց, գանձ հոգւոյ, զօ
րութիւն անձին իմոյ, և մխիթարութիւն
սրտի իմոյ։
17. Ո՞ւր գնաց եղբօրորդին քո գեղե բն
ցիկդ 'ի կանայս։ ուր դիմեաց եղբօրոր
դին քո, և խնդրեսցուք զնա ընդ քեզ։
Լատիներէն այսպէս է. ո՞ւր բացագնաց
սիրեցեալն քո, ո՜վ գեղեցկագունեդդ կա
նանց. յո՞ խոյս ետ սիրեցեալն քո. և խնդ
րեսցուք զնա ընդ քեզ։
Դստերքն Երմի լուեալք զգովս 'ի բերա մեկ
նոյ հարսին, որովք առատապէս գովասա
նեաց նա զփեսայն երկնաւոր, վառւին, և
բորբոքին սիրով, և փափագաւ տեսանելոյ,
և վայելելոյ զնոյն փեսայ. ընդգրկելոյ զնա
և փարելոյ զնովաւ. և զմայլելոյ, և բերկրե
լոյ նովաւ, այսինքն որդիք եկեղեցւոյ ան
սալով վարդապետութեանց նորին, գան
'ի ճանաչումն պատուականութեան քի փե
սայի հոգւոց մերոց, և ճանաչեալք զգե
ղեցկութիւն, և զանազան կատարելութիս
նորա, վառւին, և բորբոքին սիրով նորին,
և փափագին ունել զնա, վայելել զնա,
ընդգրկել զնա, փարել զնովաւ, ճաշակել
զքաղցրութիւն նորա. բերկրել մտած
մամբ նորին. զմայլել խոկմամբ նորին, և
մխիթարել սիրով նորին։ ուստի զճանա
պարհ, զեղանակ, և զմիջոցս, որովք կարե
ցէ նա գտանել, խնդրեն 'ի նմանէ. հար
ցանելով

ցանկալով զնա. ո՞ւր բացագնաց սիրեցեալն
քո. յո՞ խոյս ետ նա, զի կամիմք ընդ քեզ
խնդրել զնա, ասա իմանամք. թէ որքան
զօրաւոր. և որքան օգտակար լիցի քարոզն.
քանզի բանայ զաչս հոգւոյ. լուսաւորէ
զմիտ, ընդոստուցանէ զփափագ. ջերմա
ցուցանէ զսիրտ, վառէ, և բորբոքէ զսէր
և առաջնորդէ առ ազնիւ փեսայն քո.

## ԳԼՈՒԽ ՎԵՑ ԵՐՐՈՐԴ.

Ի գլխոջ յայսմիկ ճառի զտեղւոյ, ուր
խնդրելի, և գտանելի է փեսայն, ըզ
նոր գովասանաց հարսին մանաւանդ 'ի
փեսայէ, մանաւանդ 'ի յընկերաց հար
սին, զըմբշամարտութենէ, և զճակատա
մարտութենէ հարսին ընդ ներքին, և ընդ
արտաքին թշնամիս, և զպայծառագու
նեղ յաղթութենէ, և յաղթանակէ զեր
կաքանչիւրոյ.

բն 1. Եղբօրորդին իմ էջ 'ի պարտէզ իւր
'ի տաշտս խնկոց. հովուել 'ի բուրաստանս
և ժողովել զշուշանս. Լատիներէն այս
պէս է. սիրեցեալն իմ էջ 'ի պարտէզ իւր
առ ակոս խնկոց, զի հովուեսցի 'ի բուրաս
տանս, և ժողովեսցէ զշուշանս.

մէկ Հարսն պատասխանէ դստերացն Երուսաղեմի,
ասելով. սիրեցեալն իմ էջ 'ի պարտէզ
իւր. զի ոչ գնաց 'ի հեռաւոր տեղի, այլ
էջ

էջ 'ի մերձակայ պարտէզ իւր, ուր սովոր է գնալ․ և ուր սովոր է լինիլ․ պարտէզս այս․ յորում սովոր է լինիլ փեսայն երկնաւոր, է կաթուղիկէ․ և առաքելական սբ եկեղեցի․ զի 'ի նմա միայնում գտանի քս, և 'ի նմա միայնում են ակոսք, և տաշտք խնկոց, այսինքն Ճշմարիտ խորհուրդք, փոքրագոյնք պտղաբերք պարտէզք սբ գիրք և շուշանք Ճշմարիտ առաքինութեանց․ ուստի որ խնդրէ զքս, պարտի խնդրել զնա 'ի կաթուղիկէ, և առաքելական սբ եկեղեցւոջ․ զի մինչ 'ի նմա միայնում գտանի, արտաքոյ նորա գտանիլ ոչ կարէ․ ուստի 'ի զուր աշխատին, որք զնա արտաքոյ Ճշմարիտ կրօնի խնդրեն․ զի ոչ գտցեն զնա․ բայց որք խնդրեն զնա 'ի մէջ կաթուղիկէ եկեղեցւոյ, կարասցեն գտանել զի անդ գտանիլ կարէ․ դարձեալ պարտէզ քի է հոգի իւրաքանչիւրոյ արդարոյ զի 'ի սրտի արդարոյ իբրև 'ի դրախտի իւրում զբօսնու քս․ 'ի բուրաստանի յայսմիկ ակոսք, և տաշտք, որք լիք են խնկօք, են կարողութիւնք, և զօրութիւնք հոգւոյ որզան․ միտք, յիշողութիւն, և կամք, որք են թաթախունագունեղք անուշահոտ խոտովք, և ծաղկօք բարեպաշտ փափագանաց, և կրթութեան, մանաւանդ զմուսով գործունեայ կենաց, և կնդրկաւ խոկական կենաց․ աստանօր նա և գոն բազում մաս

նաւոր

նաւոր պարտէզք իւրաքանչիւրոց առաքի
նութեանց ածաւանականաց, և բուրաստա
նաց, որոց պտղովք արածի քո. և ժողովէ
զշուշանս. այսինքն զամ գեղեցկագոյնս, և
ազնուագոյնս սեպհականէ, և խրախուսա
նէ ինքեան. առէ հարսն, առա իջի ջերմա
գունեղիւ սիրով. և խորագունեղիւ խո
նարհութեամբ. առա յետ այնքան շրջա
գայութեանց, և ոլորմանց գտանեմ, զոր
խնդրեալ էի։

բն 2. Ես եղբօրորդւոյ իմոյ, և եղբօրորդ
ւին իմ ինձ. որ հովուէն 'ի մէջ շուշա
նաց. Լատիններէն այսպէս է. ես սիրեցե
լոյն իմոյ, սիրեցեալն իմ ինձ, որ հովուէ
'ի մէջ շուշանաց։

մեկ Հարսն պատմէ, զոր արարեալ է ինքն
փեսային, և զոր փեսայն նմա արարեալ է.
ուստի ասէ. արդ ես գոլով ներկայ 'ի
յոյս, և 'ի բազուկս փեսային իմոյ, զիս
բոլոր տամ նմա. որպէս փոխանակապէս
և հակադարձաբար սիրեցեալն իմ, որ ա
րածի 'ի մէջ շուշանաց առաքինութեանց,
զինքն բոլոր ետ ինձ. ներկայացեալ. և մեր
ձեցեալ փեսային իմոյ, զիս բոլոր ընծայ
եմ նմա. և ընդգրկեալ զնա գրկմամբք սի
րոյ. զիս բոլոր նուիրեմ նմա. զիս բոլոր
տամ նմա. զի կամիմ ծառայել նմա խո
հրդով. բանիւ. և գործով. ծառայել
խորհրդով. զնա խորհելով. զկատարելու
թիւնս

Թիւնս նորա խոկալով. և զպատուէրս նր̃
մտածելով. ծառայել բանիւ, զնա խօսե-
լով. զկատարելութիւնս նորա գրուատե-
լով. և զվարդապետութիւնս նորա ուսու-
ցանելով. և ծառայել գործով. զհրամանս
նորա կատարելով, բարեաց հետևելով, և
զամ̃ գործս իմ 'ի նա ուղղելով: տամ նմա
զիս բոլոր. զի տամ նմա զհոգի, և զմար-
մին: տամ նմա զիս բոլոր. զի տամ նմա
զզմիտ. զմտածմունս, զյիշողութիւն, ըզ-
յիշեցմունս, զկամս, զփափագս. զսէր, ըզ-
սիրտ. զգիտաւորութիւն զխօսս, զարար-
մունս, զներքինս համայնս. և զամ̃ արտա-
քինս: նա և սիրեցեալն իմ զինքն բոլոր ետ
ինձ. զի բոլոր բնակի յիս, բոլոր ճաշա-
կի յինէն 'ի հաղորդութեան, բոլոր է 'ի
սրտի իմում, և բոլոր խոստացեալ է ինձ
'ի վարձ: սիրեցեալն իմ արածի 'ի մէջ շու-
շանոց. զի շուշանք առաքինութեանց հա-
ճոյական նմա: յորժամ ետու զիս բոլոր
սիրեցելոյ իմոյ, և ետ սիրեցեալն իմ ինձ
զինքն բոլոր. գտի զնաւահանգիստ, զան-
դորրութիւն, և զամ̃ բարի: Իսկ որ յայն
ժամ զիս նորապէս դարձուցեալս ընկալաւ
'ի փոքրիկ պարտէզս, և դաշտս զմւսոյ,
և կնդրկի, սակաւ յետոյ, յորժամ եղէ հզօ-
րագոյն, յառաջ կոչեաց զիս առ բարձրա-
գունեղ լեառն զմւսոյ, և առ ամբողջ-
բլուր կնդրկի. որպէս ասացեալ է: արդ-
գիտելի

գիտելի. հարսն 'ի վեր 'ի մէջ խրախու-
թեանց սկսաւ յանդ իմանել զպակասութիւն
իւրս գեղեցկայարմար բանիւք. և օրինա-
կօք այլոց քաղաքակցաց. և գովասանօք փե-
սային. և հեռաւմամբ իւրով ջանաց զընկե-
րակիցս իւրս ածել առ սիրական փեսայն
իւր. ուստի յոյժ հաճոյացաւ նմա. սակս
որոյ արդիւնաւորեցաւ զարմանալի գովասա-
նօք գովիլ 'ի նմանէ. յորմէ իմանամք, թէ
որք խնդրեն զյն, և ջանան, զի և այլք
զնա խնդրիցեն. յոյժ հաճոյանան նմա.

բն Յ. Գեղեցիկ ես մերձաւոր իմ. իբրև զա-
նուշահոտութիւն. գեղեցիկ ես իբրև զԵմ
որպէս հիացումն կարգեալ: Լատինսրէն
այսպէս է. գեղեցիկ ես բարեկամ իմ,
քաղցր, և վայելուչ իբրև զԵմ, զարհու-
րելի որպէս կարգաւորեցեալ զօրաժողով
բանակաց.

ճեկ Փեսայն երկնաւոր գովասանէ զհարսն.
ուստի ասէ. ո՛վ սիրական հարս իմ. դու,
որ եղեալ ես ինձ բարեկամ. և սիրելի 'ի
ձեռն արդարութեան. և սրբութեան. ա-
ռաջին աչաց իմոց ես գեղեցիկ. զի ունիս
զգեղեցկութիւն շնորհի. և առաքինութեց.
ես 'ի միասին անոյշ. զի ունիս զանուշու-
թիւն վարուց. և առաքինական գործոց.
անոյշ ես. զի ունիս զանուշաբանութիւն
և զքաղցրախօսութիւն. անոյշ ես. զի ու-
նիս զհամեղ իմաստութիւն. անոյշ ես ինձ.

զի հաճիմ 'ի քեզ. անոյշ ես հրեշտակաց. զի ջանաս նմանեցուցանել զքեզ նոցա. անոյշ ես սրբոց. զի հետևիս շաւղաց նոցին անոյշ ես մարդկան. զի հաճոյանաս նոցա հեզութեամբ. և քաղցրութեամբ քով. ես և ս անուշահոտ. զի բուրես զանուշահոտութիւն առաքինութեանց. և բարեգործութեանց. վայելուչ. և փառաւոր ես հանգոյն երուսաղէմի արքայանիստ քաղաքի. քանզի որպէս նա է վայելուչ առաջի մարդկան. այսպէս դու վայելուչ ես առաջի այ. հրեշտակաց. և սրբոց. որպէս նա է քաղաք երկրաւոր արքային. այսպէս դու ես քաղաք երկնաւոր արքային. որպէս 'ի նմա շինեցեալ էր պալատ. և գահ դաւթի. այսպէս 'ի քեզ կերտեցեալ է առագաստ. և աթոռ որդւոյ դաւթի. նմանիս երուսաղէմի. որ թարգմանի տեսութիւն խաղաղութեան. զի գործք քո ցուցանեն. և պատճառեն զճշմարիտ խաղաղութիւն. նմանիս երուսաղէմի. որ է քաղաք կատարեալ վայելչութեան. զի դու ունիս զհոգևոր վայելչութիւն. նմանիս երուսաղէմի. որ է ուրախութիւն բոլոր աշխարհի. զի 'ի վերայ քո ուրախանան բնակիչք վերին երուսաղէմի. նմանիս երուսաղէմի պայծառագունեղ քաղաքի. զի ես հոգևոր պայծառագունեղ քաղաք. հիմունք քո շափիղայ. քարինք քո կարկեհան. աշտարակք քո յասպիս. և դրունք

քո

քո անկունք պատուականք. դու. որ ոչ միայն հոգաս զգեղեցկութիւն քո. այլ և հոգաս զգեղեցկութիւն ընկերաց քոց. ստանաս զգերապանց գեղեցկութիւն. դու ոչ միայն գեղեցիկ ես առաջի իմ. և վայելչագունեղ առաջի մարդկան, այլ և զարհուրելի ես ընդդէմ թշնամեաց իմոց, և քոց, և ես որպէս կարգաւորեցեալ զօրաժողով բանակաց. զի ես պայծառագունեղ զինուք, և սպառազինութեամբք. ունիս ըզբաղում, և զզանազան զինուորս առաքինութեանց. ամենեքին ընդ միով ձողով սիրոյ զինուորին, և են միաբանք, և ունին զհրեշտակական, և զերկնային զօրութիւն և ուժգնութիւն. նա և ինձ ես ահաւոր քանզի սլաքօք գեղեցկութեան քոյ, և նետիւք աչաց քոց, սեւեռես, և վիրաւորես զսիրտ իմ, և զնա նուաճեալ, և յաղթահարեալ հնազանդեցուցանես քեզ.

բն 4. Դարձո զաչս քո առաջի իմ. վասն զի դոքա ընդոստուցին զիս. վարսք քո իբրև զերամակս այծից, որք երևեցան 'ի գաղայադէ. Լատիներէն այսպէս է. յայլուրէք դարձո զաչս քո յինէն. զի դոքա յայլուրէք թռուցին զիս. վարսք քո իբրև հօտ այծից. որք երևեցան 'ի գաղայադէ.

մե-կ Փեսայն յաղթեցեալ խնդրէ զժամանակ, զի, մինչև վերա շնչեցէ, սակաւիկ մի ծածկեսցէ զաչս, կամ յայլուրէք ոլորիցէ. ուստի ասէ.

ասէ. յայլուրեք դարձո՛ զաչս քո յինէն. զի
դողքա յայլուրեք թռուցին զիս, արտահա-
նին զիս յինէն, ևնուա՛ղեցուցին զիս. կամ
իմ ծանուցանել, թէ անըմբռնելի է գե-
ղեցկութիւն. զի տալով զքեզ խոկման, և
սիրոյ, հարի յոյժ գեղեցկացուցեալ ես ըզ-
քեզ. կամիմ ես քեզ զեկուցանել, թէ ըզ-
գուշութեամբ, և շրջահայեցողութեամբ
պարտիս վարիլ պարգևաւ խոկման. հանա-
պազ զգուշաբար, և խոհեմաբար պարտիս
անսալ խոկման. զաչս մտաց քոց հանձա-
րեղաբար, և խոհականապէս պարտիս հա-
մաձգել առ իս, պարտիս զգուշանալ, զի
մի անխոհեմ, և երկարագոյն յամեցմամբ
կամ ընկերի պակասիցես, կամ ունայնա-
բար բարձրամտիցես, կամ վարկպարազի
հետաքրքրութեան հետևիցես, կամ վեր-
ջապէս առողջութեան մնասիցես. քանզի
եթէ պակասիցես ընկերի, յորժամ պահան-
ջէ 'ի քէն խոհեմութիւն զօգնելն ընկերի
ունայնաբար հպարտանայցես. հետևիցես
հետաքրքրութեան, և մնասիցես առող-
ջութեան, զիս 'ի քէն բացաթռուցես.
զի այդպիսի անխոհականութիւն, և անհո-
գացողութիւն յոյժ անհաճոյանայ ինձ.
զայսոսիկ յիշեցի առ ի զգուշացուցանել
զքեզ. արդ եկից առ գովս քոյս. վարսք
քո նմանին երամակաց այծից, որք արա-
ծին 'ի լերինն գաղայադի. այսինքն մտած-
մունք

մունք քո, որովք մտածես զիս, բազումք
են, և միաբանք հանգոյն երամակաց այ
ծից՝ բազումք են. զի խոկաս զբազմա
զան կատարելութիւնս իմ՝ միաբանք են.
զի ամենեքին հային 'ի մի, և 'ինոյն վաղ
ճան՝ արածին. և ճարակին 'ի լերինն կար
կառոյ վկայութեան, զի մտածմունք քո
հիմնին 'ի վերայ ճշմարտութեան ա̃ծայնոյ
վկայութեան. և 'ի վերայ բարձրութեան,
և բազմութեան ա̃ծ գրոց՝

բն 5. Ատամունք քո իբրև զերամակս կտրե
լոց, որք ելանեն 'ի լուալեաց՝ ամենեքեան
երկուորիք են. և անորդի ոչ գոյ 'ինոսա՝
Լատիներէն այսպէս է. ատամունք քո
իբրև զհօտ ոչխարաց, որք ելանեն 'ի լո
ւացարանէ, ամենեքին էքիզօք ծննդովք,
և ամուլ ոչ գոյ 'ինոսա։

մեկ Փեսայն երկնաւոր որպէս վերստին գո
վեաց զաչս, և զհերս սիրական հարսին իւ
րոյ, այսպէս վերստին և գովէ զատա
մունս նորա՝ քանզի աչք, վարսք, ատա
մունք, շրթունք, և այտք հարսին այնպէս
հաճոյացան փեսային, թէ ոչ բաւականա
ցաւ միանգամ զնոսա կարգաւ դրուատել.
այլ հարկաւորեցաւ վերստին և դրուա
տել՝ ուստի ասէ. ատամունք մտաց քոց,
այսինքն ջանք, որովք ուղիղ դիտաւորու
թեամբ ջանաս իմանալ զբանս ա̃ծայինս,
և զխորհրդաւորութիւնս երկնայինս, նմա
նին

Նին երամակաց ոչ խարաց կտրելոց լուացելոց, և բազմածնից։ Նմանին երամակաց․ զի են բազումք, և համաձայնք։ Նմանին ոչ խարաց կտրելոց․ զի բացահատեալք են 'ի նոցանէ անկարգութիւնք։ Նմանին ոչ խարաց լուացելոց․ զի սրբեցեալք են 'ի յաղտեղութեանց մեղաց։ Նմանին ոչ խարաց բազմածնից․ զի են պարարտք, և բազմածինք։ վասն զի ծնանին զճշմարիտ ճանաչումն․ զջերմեռանդն սէր․ զճշգրիտ սրբութիւն, զբարեպաշտ երկիւղածութիւն, զաղօթասիրութիւն, զբարեսէր սիրտ, զգովելի վարս, զազնիւ բարեգործութիւնս, և զփրկութիւն ընկերի։

6․ Իբրև զկար կարմիր են շրթունք քո, բն
և խօսք քո գեղեցիկ․ իբրև զկեղև նռան
այտք քո, բաց 'ի լռութենէդ քումմէ։
Լատիներէն այսպէս է․ որպէս կեղև
նռան, այսպէս այտք քո բաց 'ի գաղտնեաց քոց։

Փեսայն երկնաւոր հետևի գովասանել մեկ
զհարսն իւր։ զայս դիտէ ասել․ շրթունք մտաց քոց, որովք համբուրես զիս մտօք, յորժամ մտածես զիս, և խոկաս զկատարելութիւնս իմ, կարմիրք են․ զի կարմրացեալք են սիրով։ ուստի ոչ միայն խոկաս, այլ և սիրես զիս։ խօսք քո, որովք խօսիս զիս, պատմես զբանս իմ, և ուսուցանես զվարդապետութիւնս իմ, գեղեցիկք են։

զի

զի են ինձ հաճոյք. քանզի խոհեմաբար, և վասն սիրոյ իմոյ խօսիս, պատմես, և ուսուցանես։ այտք, և ծնօտք քո, այսինքն պարկեշտութիւն, և ողջախոհութիւն քո, որովք պահես զքեզ մաքուր, և անարատ, են պայծառք, կարմիրք, և լիք աշխատանօք։ են պայծառք. զի են մաքուրք. են կարմիրք. զի կարմրացեալք են սիրով։ լիք են աշխատանօք, զի պահին աշխատանօք մեծօք։ վասն որոյ նմանեցուցանին կեղևոյ նռան։ ոչ միայն երևելի առաքինութիւնք, և բարեգործութիւնք քո, որովք տաս այլոց զբարի օրինակ, այլ և աներևոյթքն, որք թէպէտ գաղեցեալք են մարդկանց, սակայն յայտնիք են ինձ, են գովելիք, և գրուատելիք. զի մինչ զնոսա առնես վասն սիրոյ, և անուան իմոյ, տեսանեմ զնոսա, և հաճիմ 'ի նոսա, և ընդունիմ զնոսա։ վասն որոյ նոքա գոլով ինձ ընդունելիք, լինին գովելիք։

բն Է. Վաթսուն են թագուհիք, և ութսուն հարճք. և օրիորդք, որոց ոչ գոյ թիւ։ Լատիններէն այսպէս է. վաթսուն են թագուհիք, և ութսուն հարճք. և փոքրիկ երիտասարդուհեաց ոչ գոյ թիւ։

մեկ Ծանուցանէ, թէ 'ի տան սողոմոնի արքային թագուհիք, այսինքն նախնականք կանայք, և կողակիցք, որք ոչ միայն մասնակցելին արքայական անկողնոյ, այլ և կա-

ռավարութե

ռավարութեան տան, և բարեաց առն, 'ի
սկզբան թագաւորութեան սողոմոնի էին
միայն վաթսուն, սակայն յետոյ զթիւ նոց
'ի ծերանալն իւրում աճեցոյց մինչև 'ի
յեօթն հարիւր. իսկ հարճք, այսինքն եր
կրորդականք կանայք, և կողակիցք, որք
միայն մանկացեղն անկողնոյ, էին ութ
սուն. բայց փոքր երիտասարդուհեաց,
որք կամ ծառայէին 'ի տան, կամ բաղկա
ցուցանէին զկնախումբ, և զկնաժողով
յորմէ առնանէին թագուհիք, կամ հար
ճք, ոչ գոյր թիւ. արդ եկեսցուք առ հո
գևոր, և խորհրդական մեկնութիւն. 'ի
տան, այսինքն 'ի յեկեղեցւոջ քի փոքրիկ
երիտասարդուհիք են նոքա, որք վերա
ծնեցեալք 'ի ձեռն մկրտութեան, կամ
ապաշխարութեան, սկսանին ծառայել
այ. որպիսիք բազմաղեղք են, և են յոյժ
շատք. հարճք նոքա են, որք քաջապէս,
և հաստատապէս անսան ստացման առա
քինութեանց, և օրըստօրէ զարդանան։
նոքա են սակաւագոյնք. թագուհիք նք
են, որք արդ ստացեալք են զկատարելու
թիւն սիրոյ, և այլոց առաքինութեանց.
նոքա եթէ բաղդատիցին ընդ այլոց, են
սակաւագունեղք. 'ի մէջ կատարելոց են
ոմանք, որք փայլին առանձնականագու
նեղիւ, և գերազանցագունեղ սիրով.
զորս յոյժ սաստկապէս սիրէ քս. զի կարե

յոյժ.

յոյժ հաճոյանան նմա. ուստի զիւրաքանչ
իւրոց նոցին ասէ։

բն 8. Մի է աղաւնի իմ, կատարեալ իմ.
մի է մօր իւրոյ, ընտրեալ ծնողին իւրոյ։
տեսին զնա դստերք, և երանեցին նմա։
Թագուհիք, և հարճք գովեցին զնա։ Լա
տիներէն այսպէս է. մի է աղաւնի իմ,
կատարեալ իմ, մի է մօր իւրոյ, ընտրեալ
ծնողի իւրում. տեսին զնա դստերք, և քա
րոզեցին երանեցելագունեղ. Թագուհիք,
և հարճք, և գովեցին զնա։

մեկ Փեսայն երկնաւոր խօսի. մի է աղաւնի
իմ, կատարեալ իմ, որ փայլի գերազանցա
գունեղիւ մաքրութեամբ, գերազանցա
գունեղիւ սրբութեամբ, և գերազանցա
գունեղիւ կատարելութեամբ։ է ինձ ե
զաբար, և մանաւանդաբար սիրական, ոչ
միայնակ դուստրն է յոյժ սիրական մօր
իւրում, և ընտիր ծնողուհւոյ իւրում. այն
պէս սիրեմ զնա, որպէս թէ զոք այլ
ունենայի։ Նա ևս այսպէս զիս սիրէ, և
այսպէս ջանայ ինձ միայնում հաճոյանալ,
որպէս թէ ինքն միայն ընդ իս լինէր 'ի
յեսս։ Նա զինքն, և զամ արարածս առ իս
մի վերածէ. զիս միայն պաշտէ. միայն
զփառս իմ խնդրէ. և ջանայ կատարել մի
այն զկամս իմ. ինև միով. և միայնով ճա
րակի, կերակրի, խնդայ, բերկրի, և զո
ւարճանայ. զիս միայն տանի 'ի սրտի. 'ի բե

րմնում. և 'ի յիշողութեան: երիտասարդուհիք. որք են դստերք Եդեմի. տեսին զնա զայնքան գեղեցիկն. զայնքան զարդարեցեալն. զայնքան սիրեցեալն յինէն. զսիրականն իմ. զնախագասեցեալն յինէն այլոց. սակայն վասն այսորիկ ոչ տրտմեցան, ոչ դրդեցեալք 'ի նախանձուէ չարախօսեցան զնմանէ, և ոչ զայրացեալք, և սրտմտեալք յարեան 'ի վերայ նորա: զի զայս անմիտք, և խելագարք առնեն, որպէս վկայէ յօհան ոսկեբերանն. կամ բասիլիսկոսք. որպէս սբն բեռնարդոս ասէ. կամ ևս առաւել դևք, որպէս ասէ սբն եփրեմ: նա և ոչ լռեցին, և ոչ անտես արարին զայնքան պարգևս. և զայնքան գովեստս հարսին իմոյ սիրականի: զի յայժամ և այս լինէր իմնապէս նախանձիլ: ոչ միայն երիտասարդուհիք, այլ և համայնք հարճք, և թագուհիք, որք գտանին 'ի տան իմում, տեսին զգեղեցկութիւն սիրականի աղաւնոյ և հարսին իմոյ, և 'ի միասին զաղաւնական աչս նորա. և զբարի նորա համարեալք բերև զբարի իւրեանց, և շարժեցեալք 'ի սիրոյ, սկսան 'ի սրտէ ուրախակցիլ նմա, և մեծամեծ գովասանօք երգաբանել զնա քարոզեցին զնա երանեցելագունեղ. և փառաւորեցին զնա. ասելով. բազումք դստերք ստացան զբազում մեծութիւնս. զբազում շնորհս. զբազում պայծառու-

թիւն. բայց դու առաւել եղեր. և մե
րանցեր զամենեքումբք. զերիտասարդու
հեաց. զհարճից. զթագուհեաց. և զմիա
մօր աղաւնւոյ այսպէս ևս մտածել կա
րեմք. երիտասարդուհիք են բարեպաշտ
հաւատացեալք, որք 'ի մէջ ոք եկեղեցւոյ
ծառայեն այ. հարճք են նոքա, որք հե
տեւին կատարելութեան. կամ ստացեալք
են զնա: թագուհիք են նոքա, որք սրբ
ութեամբ, և առաքինութեամբք ազնուա
գունեղեալք փայլին 'ի յեկեղեցւոջ. միամօր
աղաւնին է տիրամայր մր ածածինն. կամ
այսպէս. երիտասարդուհիք, և դստերք
եճմի են հասարակ հաւատացեալք 'ի քս.
հարճքնք են որքեն պայծառք առաքինու
թեամբք. թագուհին թագուհեաց է մա
րիամ կոյս. միամօր աղաւնին է մարդկու
թիւնն քի. Եւ յայնժամ բանն իմանի փե
սայ. հարսն զամ գով իւր անդրագրէ փե
սայի. զի քաջ գիտակ է. թէ զամ բա
րիս, և զամ պարգևս 'ի նմանէ է ընկալեալ
ուստի զամենամեծ գոհութիւն մատուցա
նէ, և ընկերակցեցեալ փեսայի իւրում,
տայ զինքն առ ի խնդրել, շահել, տածել,
և յառաջացուցանել զընկերակիցս իւրս.
վն որոյ ընկերակիցք նր աղաղակեն.
բն 9. Ո՞վ է սա, որ երևեալս է. իբրև զա
ռաւօտ, գեղեցիկ որպէս զլուսին. ընտիր
իբրև զարեգակն, իբրև զհիացումն կար

փեալ։ Մատենէրէն այսպէս է. ով է սա.
որ յառաջագնայ իբրև զառաւօտ յարու-
ցեալ, գեղեցիկ որպէս զլուսին, ընտիր
իբրև զարեգակն, զարհուրելի իբրև կար-
գաւորեցեալ զօրաժողով բանակաց։
Ընկերակիցք հիացմամբ գոչեն. ով է սա, մեզ
որ՝ շարունակօք մեծամեծօք գնացիւք, և
ընթացիւք յառաջ գնայ, և յառաջ ընթա-
նայ, և երևելաբար զարգանայ ՚ի յամ առա-
քինութեան, յառաջացուցանելով և զինքն
և զայլս ինքեան յանձնեցեալս։ ՚Ի վաղուց
գերազանցագունեղապէս մերեանց զամե-
նեքումբք ընկերակցօք, այնպէս թէ բաղ-
դատեցեալք ընդ նմա, հազիւ երևին։ թէ
պէտ այնքան գերազանցեալ իցէ. սակայն
տակաւին չլռէ յառաջացուցանել զինքն;
այլ ցանգ, և անպակաս մերանցանելով
բարձրագոյն զինքն յառաջ տանի։ Նա ա-
հաւասիկ շահեալ զամենեսին մեղաւորս;
յառնէ իբրև զառաւօտ, զկնի խաւարի
խորին գիշերոյ երաշխաւորելով, և խոստա-
նալով զլոյս, և զարեգակն. ուստի ուսուցա-
նելով տգիտաց, և քարոզելով մեղաւորաց։
փարատէ, և բացամերժէ ՚ի նոցանէ զխա-
ւար մեղաց; և տգիտութեան, և առաջնոր-
դէ նոցա առ լոյսն աշխարհի; և առ արե-
գակն արդարութեան Քս։ Նա այսպէս
է առաւօտ տգիտաց, և մեղաւորաց։ այնժ
ցիկ, որք յառաջանան, և զարգանան առաջ
մամբ

մամբ առաքինութեանց, է գեղեցիկ ոպ՟
զլուսին լցեալ, և բոլոր բոլորակաւ իւրով
լուսաւոր, 'ի վեր քան զայլ ամ՟ աստեղս
փայլուն լուսով, և փայլմամբ սրբութե-
արդարութեան. և առաքինութեանց այն
պէս յաղթէ զյառաջացօղս, և զզարգացօ
ղս, որպէս լուսին պայծառութ՟բ յաղթէ
զպայծառութիւն աստեղաց. այնոցիկ, որք
կատարեալք են, և որք հասեալք են կա
տարելութեան, է ընտիր իբրև զարեգա
կն, լուսով իւրով զամ՟ աստեղս խաւարե
ցուցանող, լուսաւորող զբոլոր աշխարհ,
և զբոլոր երկին, զուարճացուցանող, և
զարդարող, և ջերմութեամբ իւրով զամ՟
ստորագոյնս ջերմացուցանող, կենդանացու-
ցանող, պարարտացուցանող, և բոցակիզող.
խաւարեցուցանէ զաստեղս. զի 'ի լոյս նո
ոչ երևին. լուսաւորէ զաշխարհ. և զեր
կին. զի է պայծառ 'ի յերկրի, և 'ի յեր
կին. զուարճացուցանէ. և զարդարէ. զի
է ուրախութիւն. և զարդ եկեղեցւոյ. ջեր
մացուցանէ. զի ջերմութեամբ սիրոյ տա
քացուցանէ. կենդանացուցանէ. զի յա
րուցանէ զմեռեալս մեղօք. պարարտացու
ցանէ. զի առաջնորդէ առ առատ պտու
ղս բարեգործութեանց. բոցակիզէ. զի
ջերմեռանդացուցանէ զսիրտ. և կիզէ ըզ
մեղս. հարսն այնքան առատապէս հարս
տացուցեալ. և փարթամացուցեալ է 'ի փե

սայէն

սայէն իւրմէ. զի և ինքն զայլս փարթամա ցուցանել. և հաստատուցանել կարէցէ. օրինակաւ. աղօթիւք. աղաչանօք. ուսուցմամբ. և ուղղմամբ իւրով. Հարսն ոչ միայն է առաւօտ. լուսին. և արեգակն. այլ և է ահաւոր, և ահարկու թշնամեաց իւրոց, և թշնամեաց հօտի իւրոյ, իբրև զկարգաւորեցեալ զօրս բանակաց, հզօրեղապէս զինքն յանդիման կացուցանող թշնամեաց, խորտակող զարձակմունս, զարշաւմունս, զդարանս, զդարանակալութիս և զայլ հնարս, և զմեքենայս նոցա, փշրող և աղարտող զզօրութիւնս. զուժգնութիս և զսպառազինութիւնս նոցա. և կործանող զհոյլս նոցա. իսկ ինքն հանապազ մնացող անյաղթ. անահ. աներկիւղ. և անսասան ուստի հանապազ կարգաւորեցեալ. և գեղեցկագունեղապէս շարադրեցեալ.

10. Ի պարտէզս ընկուզաց իջի հայել 'ի յարմտիս ուղխից. տեսանել. թէ ծաղկեալ իցէ որթն, թէ ծաղկեալ իցեն նռնենիք. Լատիներէն այսպէս է. իջի 'ի պարտէզ ընկուզաց. զի տեսանիցեմ զմիրգս ձորոց. և ներհայեցիմ. եթէ ծաղկեալ իցէ այգի. և եթէ բողբոջեալք իցեն նռունք. ընկ

Հարսն սակաւիկմի բացազատեցեալ 'ի գրկանաց փեսային. անսայ հոգալ զպարտէզ իւր. քանզի հանապազ չէ ժամանակ մեկ

խրա

խոլախութեանց. և բերկրութեանց. այլ
գոյ նա և ժամանակ գործելոյ զպարտէզ.
այսինքն հարսն եղեալ 'ի խոկմանց. անսայ
հոգւոյ զայնոսիկ. որք յանձնեցեալք են
նմա. ուստի ասէ. իջի 'ի պարտէզ ընկու
զաց. դուք զիս նշմարէք 'ի բլրոջ կնդրկե
և 'ի գերկս փեսային. ուստի գովեստիւք
վերացուցիք զիս առ աստեղս, նա և 'ի վեր
քան զաստեղս. բայց ես ըստ կարողութե
իմում խոնարհեցուցի զիս, և ցածացուցի,
խոնարհութեամբ սրտի, և խոնարհ ցա
ծացմամբ իջի յիս, և ետու զիս բոլոր առ ի
հոգւոյ զաշխարհիկս իմ. իջի 'ի բլրոյ 'ի խո
նարհ պարտէզ. 'ի յանուշահոտ կնդրկե
առ դաւն, և խիստ ընկուզս, որք եդեալք
'ի ծայրում պարտիզի, առաջինք ընդունին
զպատկութիւն. և զմրրիկ հողմոց, և առա
ջել քան զայլ ծառս բացադրեցեալք են
անհրաւութեանց. ընկուզք 'ի պարտիզի
հոգւոյ են հինգ զգայութիւնք արտա
քինք. 'ի պարտիզի փարախի ինձ յանձնե
ցելոյ, են մեղաւորք. և աշխարհականք,
որք առ ձեռնեն զիրս աշխարհայինս, ո
րոց փրկութեան սկսեալ եի անսալ. իջի
'ի նոյն պարտէզ. զի տեսանիցեմ զմրգս
ձորոյ, և ուղխից. մրգքս այսոքիկ 'ի հո
գւոյ իմում, են պտուղք ցանկութեան
զգայականն երկրաքանչիւրոյ, այսինքն ցան
կականք, և ցասմնականք. 'ի պարտիզի
փարախի

փարախի, են նորապէս դարձուցեալքն, որք տակաւին չեն արտածեցեալք 'ի յուղ խից, կամ 'ի ձորոց վատթար ունակուեց, և չար սովորութեանց։ իջի 'ի պարտէզ հոգւոյ իմոյ. զի զարտաքին զգայութիւ իմ պահիցեմ անարատս, սանձիցեմ զնոսա զի մի ընդդէմ պատուիրանաց, օրինաց, և բանի զեր ինչ զգայցեն, ամրացուցանի ցեմ զնոսա երկիւղիւն տ̃յ, և գովելի ճնշ մամբ, և առնիցեմ, զի համաձայնիցեն օրի նաց, և պատուիրանաց, և զգայցեն զիւրս համեստս, պարկեշտս, ըմբռնս, պիտանա ցուս, հարկաւորս, շահաւէտս, օգտակա րս, և օրինաւորս։ դարձեալ իջի 'ի պար տէզ հոգւոյ իմոյ, զի տեսանիցեմ զներ գործութիւնս ցանկականին, և ցասումնա կանին, այսինքն զի սանձիցեմ զնոսա, և հնազանդեցուցանիցեմ զնոսա օրինաց, և բանի։ իջի և 'ի պարտէզ ոչխարաց իմոց, որք յանձնեցեալք են ինձ, զի դարմանի ցեմ զնոսա, և խնամիցեմ։ այսինքն զհիւ անդս բժշկիցեմ. զաղիրս լուսանայցեմ, զվիրաւորեցեալս առողջացուցանիցեմ, դը նելով զապեղանի 'ի վերայ վիրաց նոցա, ըզ մոլորեալս ուղղիցեմ, և զտկարս զօրացու ցանիցեմ։ զայս դիտեմ առնել. զի ջանայ ցեմ դարձուցանել զմեղաւորս, և զօրացու ցանել զնորապէս դարձուցեալս, բառնա լով 'ի նոցանէ զվատթար ունակութիւնս,

և

և զչար սովորութիւնս. դարձեալ իջի, զի ներհայեցիմ, եթէ ծաղկեալ իցէ այգի իմացողութեան, և կամեցողութեան իմոյ, այսինքն իմացողական, և կամեցողական զօրութեան, իմոյ, և մի թէ բղխիցէ անտի գինի ուրախացուցանող զմիտ, և զմարդիկ նմանապէս այգի, որ է ինձ հաւատացեալ, հոգեաց 'ի լաղուց 'ի յառաքինութե զարդացողաց. վերջապէս, արդեօք 'ի պտըտեղի հոգւոյ իմոյ. կամ 'ի պարտիզի այնոցիկ արդ կատարիլոց. որք յանձնեցեալք են ինձ, բողբոջեալք իցեն նուռք. այսինքն կոյս, և առատութիւն ամ առաքինութեանց. ուրեմն հոգացողութեամբ մեծաւ իջի 'ի պարտէզ: զի զգաստ քննութեամբ որոնիցեմ զամենեսին ասացեալսն, և լցուցանիցեմ. եթէ իր ինչ պակաս իցէ, արդ յորժամ իջի, գտի զամ իրս համաշարժեցեալս, խռովեցեալս, 'ի վէր, և 'ի վայր շրջեցեալս. նա և զյոլովս յինէն, այսինքն 'ի վերնադոյն մասնէ հոգւոյ, և 'ի խեռայէն իմմէ ապստամբս, և պատրաստօղս զպահարկու զօրս ընդդէմ իմ, այսոցիկ յիբաւի էս եղէ անգիտակ 'ի յանցեալ ժամանակի.

ըն 11. Ընդ. աւազ.քեզ պատրիս իմ. ոչ գիտաց անձն իմ, եդ զիս իբրև զկառսն ամինադաբայ. Աստիներէն այսպէս է. ոչ գիտացի. հոգի իմ վրդովեաց զիս վասն քառակրիմար

ռանրիվար կառուց ամինադաբայ . մեկ
Ձայրն հետեւի ասել . ոչ գիտացի զիր
ինչ . վասն զի ա̃մ ինչ եղեալ էր գաղտա
բար . և Թարց գիտութեան իմոյ . ուստի
ա̃մ ինչ եղեալ էր Թարց մեղաց . և մոլու
Թեանց իմոց . սակայն յորժամ նկատեցի,
և զգացայ զվերոյիշեցեալ անկարգութիւն
խռովեցաւ, և վրդովեցաւ անձն իմ . վ̃ն
զի յոյժ վշտացայ, և ցաւեցայ 'ի վերայ չա
րաց ներկայից, երկեայ 'ի յապագայից, և
լցեալ նախանձու ջանացի վերանորոգել
զամենայն իրս . մանաւանդ վրդովեցայ,
և խռովեցայ վասն քառանրիվար կա
ռուց ամինադաբայ, այսինքն ժողովր
դեան իմոյ յօժարականի, որ ոչ դրդեց
եալ . ոչ մորակեցեալ . և ոչ ընկալեալ յի
նէն զուխԹ ինչ . յարուցանէ զպատերազ
մն զայսոսիկ կամաւ, և յօժարութեամբ
իւրով . ուստի մինչ յարուցեալք են ընտա
նիք, և տնականք Թշնամիք, որոգայԹա
գոյն, և վտանգագոյն կռիւ առաջի կայ .
և հետեւապէս դժուարագոյն կարէ վերա
նորոգել խաղաղութիւն . քանզի չէ 'ի ձե
ռին իմում բառնալ զպատճառ չարի . զի
ոչ ետու զպատճառ ինչ . կամ վճարել
զանիրաւութիւն . զի ոչ ումեք արարի զա
նիրաւութիւն . սակայն նոքա լցեալք կու
րացեալ ատելութեամբ, բարկութեամբ,
և աղտամութեամբ զքառանրիվար կառս
իւրեանց .

իւրեանց. զորս կցեալք էին ընդ քառան
թիւլար կառս դժոխայնոց թշնամեաց, յա
րուցանէին 'ի վերայ իմ. ջանալով հնազան
դեցուցանել զիս ինքեանց, կամ կորուսա
նել: պատահեցաւ ինձ այս հետեւողի սր
բութեան, եւ կատարելութեան. զի մինչ
թոյլ տայ ամենայն նախախնամութիւն,
այսպէս բազմիցս պատահի անձանց նա եւ
սրբագունեղից, եւ կատարելագունեղից. սա
կայն վասն այսորիկ ոչ թուլացայ, ոչ ձգե
ցի զզէնս, եւ ոչ հպատակեցայ թշնամեաց.
այլ յիշեալ. թէ ամրացեալ եմ հանդոյն
աշտարակի դաւթի, յորմէ կախեալք կան
հազար վահանք, եւ ամենայն սպառազինութիւք
հզօրաց, հզօրեղապէս ընդդիմացայ, եւ մը
տեալ 'ի պատերազմ, այնպէս քաջամարտե
ցայ, թէ զամենայն դժոխային թշնամիս յաղ
թեցի, ցրուեցի, եւ խայտառակաբար փա
խուցի. իսկ զընտանի թշնամիս ամոչեցու
ցեալ. եւ ստրջացուցեալ 'ի յապստամբու
թենէ, եւ 'ի յանմտութենէ, վերստին ստո
րաբեցի, եւ հպատակեցուցի ինձ, եւ փե
սայն իմում, եւ արարի, զի որք բացամեր
ժեալք էին զիս թշնամաբար, արդ բարե
կամաբար հանդերձ պսակաւ, եւ յաղթա
նակաւ վերանայեցեն զիս առ յատուկ ա
թոռս, եւ թագաւորութիւն, ամենեքին
միաբանք 'ի միասին առ իս աղաղակելով.
ըն 12. Դարձիր, դարձիր սոմնացիդ. դար
ձիր

ձիր, դարձիր, և տեսցուք 'ի քեզ։ Սան
նորէն այսպէ է. դարձիր, դարձիր սու
լամիտիս. դարձիր, դարձիր, զի հայեցեմք
'ի քեզ։

Գ. Խօսն ասել. դարձիր առ քոյս. և առ
իրս քոյս, որ արդ այլ չես սունամիտիս.
այսինքն գերի, կամ անտես արարեալ. այլ
սուլամիտիս, այսինքն խաղաղաւար, զի սա
լեմ նշանակէ զխաղաղութիւն. Եւ քան
զի չորք չորք կարգք խոտորեցաք 'ի քէն.
նա և չորիւք չորիւք կրկմամբք ձայնի, դար
ձիր, դարձիր, արդ զքեզ վերստին վերա
ձայնեմք առ քոյս, և առ իրս քոյս։ Եւ
զի մի իմն նման շարժուման վերստին 'ի մէջ
մեր յարիցէ, մնացիր, աղաչեմք, հանապա
զորդապէս ընդ մեզ, զի հայեսցուք 'ի քեզ
մշտնջենաւորապէս. և եթէ ոչ հանապազ
սիրով քո, ստուգիւ երկնաւորն, և աճիւ
քո ըմբռնեսցիմք 'ի պաշտօնի. երջանիկ հո
գի, որ այսպէս ծանեաւ յաղթահարել.
հնազանդեցուցանել. և սանձահարել ըզ
Թշնամիս իւրս։

Գլուխ եօթն երորդ։

Ի գլխոյ յայսմիկ ձառս զնոր գովասա
նաց հարսն 'ի յերրորդ պատերազմա
պայծառագունեղապէս գործեցելոց
'ի պարապտութէ զաւակն, 'ի ջանէ մնուցա
նելոյ

նելոյ, առաջացուցանելոյ, և կատարելա
գործելոյ զՀոգևոր զուակս․ զ՛ի ղանակէ
օգնելոյ սկսանողաց, զարգացողաց, և կա
տարելոց․ վերջապէս զօրէնակէ կատարե
լութեան, և զսեղանոյ պատրաստեցելոյ 'ի
Հարսէն փեսային։

բն 1․ Ո՜ ինչ տեսանիցէք 'ի սունամացին․ որ
եկեալ է իբրև զպարս բանակաց․ զի գե
ղեցկացան գնացք քո կօշկօք դուստր նա
բադայ․ յարմարումն բարձից քոց նմանու
թիւն ուլանց յեռելոց, գործոյ ձեռաց
արուեստաւորի։ Աստիներէն այսպէս է․
զի՞նչ տեսցես 'ի սունամացին․ եթէ ոչ ըզ
պարս բանակաց․ որքան գեղեցիկք են գը
նացք քո 'ի կօշիկս, դուստր իշխանի․ կցոր
դութիւնք բարձից քոց իբրև զմանեակս,
որք չինեցեալք են ձեռամբ արուեստա
ւորի։

մեկ Փեսայն երկնաւոր զսիրական Հարսն իւր,
որ յաղթող դառնայ 'ի պատերազմէ, գո
վասանօք իւրովք զարդարէ․ ուստի գիտէ
ասել․ Հայեցարուք դստերք Երմ 'ի սիրա
կան Հարսն իմ, որ յաղթահարեալ զԹշ
նամիս, դառնայ 'ի ճակատամարտութենէ․
զի տեսցէք 'ի նմա զիր արժանի տեսու
թեան․ քանզի տեսցէք 'ի նմա զիր գեղեց
կագունեղ․ երկրականագունեղ, և փա
ռաւորագունեղ․ վասն զի տեսցէք 'ի նմա
զգեղեցկագունեղ․ զփառաւորագունեղ․
և

և զհզօրագունեղ պարս, և դասակարգութիւնս բանակաց, այսինքն զբազմութիւն պարգևաց, զպատուազինութիւնս օգնականութեանց երկնայնոց, և զզօրս ազնիւ առաքինութեանց. ուստի սիրական հարսն իմ լեալ է ահարկու, հզօր, ազնիւ, փառահեղ. երևելի, և զարմանալի իբրև ըղկարգաւորեցեալ. և յօրինեցեալ զօրս բանակաց. տեսցէք ևս 'ի նմա զգեղեցկազարդև քաղցրանուա՛գ պարս երաժշտաց, այսինքն զդասս բարի վարուց, և զպարս անոյշ կերպից կենցաղավարելոյ ընդ մարդկան. սակս որոյ նա քաղցր, և հաճոյ է ամենեցուն. և ամենեքին զուարճանան նովաւ. յորոց իմանամք, թէ հոգի բարւոք շարադրեցեալ. յորում բան ստորատրի, և հպատակի ամ̃, և այլք համայնք կարողութիւնք հնազանդին բանի, է հիանալի, և բերկրականագունեղ տեսիլ. քան զոյնպիսի հոգի ոչ ինչ հզօրագոյն ոչ ինչ վայելչագոյն, ոչ ինչ հանդարտագոյն, ոչ ինչ անուշագոյն, և ոչ ինչ հաճոյագոյն ամ̃. հրեշտակաց, և մարդկան. վասն որոյ առժամայն աղաղակէ փեսայն. ո՛րքան գեղեցիկք են գնացք քո 'ի կօշիկս. ո՛վ դուստր իշխանի, դուստր արքային արքայից, և ամ̃ տերանց. արդ ոտք ընտիր, և պատուական հողաթափիւք կօշկաւորեցեալք նշանաւորեն զգործս անձին զարդարեցելոյ հաստատուն,

հաստատուն, և պատուճական առաքինու-
թեամբք, և այսպէս քայլողք առ գործս
իւրեանց, և առ մծ. գնացք գեղեցիկք
նա և ցուցանեն զպարկեշտութիւն. զծան
րութիւն. զհեղինակութիւն. և զմեծ վայ
ելչութիւն. 'ի միասին և զանսասան սիրա
հարսին ճեմողի մանաւանդ 'ի պատերազմ,
և 'ի յորս հոգեւոց. փեսայն երկնաւոր յետ
գովելոյ զգնացս հարսին, դրուատէ ըզ
կցորդութիւնս բարձից նորա. զի ասէ.
կցորդութիւնք բարձից քոց են իբրեւ ըզ
մանեակս, շինեցեալս ձեռամբ գերազանց
արուեստաւորի. զայս կամիմ ասել. ունիս
զմէջս ոչ անզօրս, և ծուռս, այլ հզօրս, և
յարմարագունեղապէս տրամադրեցեալս
առ ի յղանալ. և ծնանել մշտնջենաւորա
պէս զնոր հոգեւոր զաւակ. ոչ միայն ու
նիս զզարմանալի զօրութիւնս յղանալոյ, և
ծնանելոյ զհոգեւոր զաւակս. այլ և զյղա
ցեալս և զծնեցեալս կարող ես սնուցանել.
բուծանել. զօրացուցանել. զարգացուցա
նել. և զուարճացուցանել.

բն 2. Պորտ քո թակոյկ ճախարակեալ. ոչ
նուազեալ 'ի գինւոյ խառնելոյ. որովայն
քո, որպէս զշեղջ ցորենոյ փակեալ շու
շանաւ. Լատիններէն այսպէս է. պորտ քո
թակոյկ ճախարակեալ. ոչ երբեք կարօտ
եալ բաժակաց. որովայն քո որպէս զշեղջ
ցորենոյ, պաշարեցեալ շուշանօք.

Փեսայն

Փեսայն գովասանէ զպորտ, և զորովայն մէկ
հարսին. մասն այն, որ 'ի մայրական յար
գանդի ըմբռնէ, և տածէ զյղացեալ զա
ւակն, ասա համեմատաբար պորտ կոչի.
պորտն հոգևորապէս իմացեալ 'ի հոգւոյ
վերահայեցմամբ առ ինքն, նշանաւորէ ըզ
ջան տածելոյ, և կերպարանելոյ զբարե
պաշտ յղացմունս, փափագս, և առաջադ
րութիւնս. իսկ վերահայեցմամբ առ ըն
կեր, նշանաւորէ զհոգ, և զխելահասու
թիւն տածելոյ, տեղեկացուցանելոյ զնո
րապէս դարձուցեալս առ հաւատ, և առ
բարեպաշտութիւն. ուստի փեսայն երկնա
ւոր այսպէս ընդ հարսին խօսակցիլ դիտէ
պորտ հոգւոյ քոյ, այսինքն ջան, որով
կերպաւորես, և տածես զբարեպաշտ մը
տածմունս, զնոր փափագս, և զբանաւոր
առաջադրութիւնս. կամ հոգ, և խելա
հասութիւն քո, որով զնորապէս դարձու
ցեալս առ հաւատ, և առ բարեպաշտու
թիւն տեղեկացուցանես, հմտացուցանես,
դարմանես, խնամես, և տածես. է իբրև
զձախարակեայ թակոյկ, որ է յարմար առ ի
յընդունելոյ զխում, և առ ի մատուցանե
լոյ զնա այլոց, որ չէ գռեհկաշէն, կո
պիտ, անշնորհ, անզարդ, աղտեղի, և հե
տևապէս անհաճոյ, այլ գեղեցկաշէն, վա
յելչապէս բոլորիկ, կոփած, տաշած, և
յստակ, յորմէ բացամերժեալք են ամ

իրք

իրք վնասակարք, և աւելորդք. քանզի պորտ հոգւոյ քոյ, որ յղացեալ է զսաղմ բարի մտածմանց, և զսերմն մը փափագանաց, ընդունի զխումն ծծայնոց բանից, և վարդապետութեանց երկնայնոց. և մատուցանէ զնա այլոց ուսուցմամբ. է գեղեցկաշէն. զի գեղեցկացեալ է շնորհօք, պարգևօք, և առաքինութեամբք. է վայելչապէս բոլորիկ. զի բոլոր վայելուչ է. է կոփած. և փորած. զի եղեալ է ընդունարան վերնայնոց բարեաց. է տաշած. զի բացայայտեցեալք են 'ի նմանէ կոպիտութիւնք մեղաց, և համայնք իրք վնասակարք և աւելորդք. չէ իբրև զդատարկ թակոյկ զի չէ դատարկ. այլ է իբրև զթակոյկ, որ հանապազ լի է. որ ոչ երբէք կարօտի բաժակաց, այսինքն իրաց ըմպելեաց, որ ոչ նուազի 'ի գինւոյ խառնեցելոյ. այլ հանապազ ունի զգինի բարեհամ, և անոյշ 'ի պատրաստի, յարմարեցեալ առ ըմպելի. քանզի է լի գինեաւ, և բաժակօք հոգևոր բերկրութեանց, որովք և դու զուարճանաս բերկրիս, և զմայլիս. և զոհանաս, և զմառղաշս գգուես, տածես, և սփոփես. ասելով ցնոսա. եկայք, արբէք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ. ոչ միայն ունիս զսափոր գինւոյ խառնեցելոյ, այլ և ունիս զաման կերակրոյ. զի որովայն քո է իբրև զշեղջ. և զկոյտ ցորենոյ. վասն զի 'ի յորո-

վայնի հոգւոյ քոյ գոյ լնութիւն, և առա-
տութիւն ամ հոգևոր կերակրոց, որովք
և դու կերակրեցիս, և նոքա, որք տակա-
ւին են մատղաշք, կարիցեն սնանիլ զօրա-
նալ և աճիլ ։ որովայն քո է պահարան
հոգևոր կերակրոց ։ դու անձի արտահա-
նես զվարդապետութիւնս հնոյ, և նորոյ
կտակարանի, և նոքօք ճարակես զդեռա-
հաս մանկունս, և զստնդիայս, և զկաթնա-
սուն տղայս ։ որովայն քո չէ պաշարեցեալ
փշովք, և խուռնովք վայրենեօք մեղաց, և
յոռութեանց ։ այլ գեղեցիկ, և անուշա-
հոտ շուշանօք ողջախոհութեան, քաղցր
խառնութեան, և այլոց առաքինութեանց
որք զոլով նազելադրունեղք համեղութիւք,
զհոգևոր կերակուր որովայնի քոյ առնեն
համեղագոյն, և հաճոյագոյն ։ վասն որոյ
համարձակարար ձայնեմ առ քեզ զման-
կունսս ։ եկայք, կերայք 'ի հացէ իմմէ ։
զայսոսիկ իրակես վասն սնուցանելոյ, և
կերպարանելոյ, զզաւակս ; որք տակաւին
մատղաշք են ․

3 ․ Երկու ստինք քո, իբրև երկուս ուլս ԷՆ
երկուորիս այծեմնի ․ Լատիներէն նոյն
գունակ է ․ երկու ստինք քո, իբրև եր-
կուս որթս երկուորիս այծեմնի ։

Փ նոյն դրոշմատէ զստինս հարսին ․ ուս- ՄԷ
ցանէ ․ երկու ստինք քո, այսինքն ; ըղ-
ձաւորութիւն քո, որով սիրես զած, և

եղբայրասիրութիւն քո, որով սիրես զընկեր. որք ստինք ասին. զի լիք են կաթամբ երկնային քաղցրութեան, նմանին երկուց ուլից երկուորեաց այծեման. զի են գեղեցիկք սրբութեամբ. և մաքուր դիտաւորութեամբ, պարարտք պտղաբերութեամբ, կայտառք, և զուարթք խոկմամբք, և մտածմամբք, վայելուչք իմաստութեամբ, և գիտութեամբ, և էքիզք դստերք ամենայնոյ շնորհի. զայսոսիկ երկու ստինս հաստատագոյն սիրոյ ա̃յ, և ընկերի մատուցանես այնոցիկ, որք սակաւիկ մի զարգացեալք են առաքինութեամբ. այսինքն զզարգացեալս առաքինութեամբ ջանաս ածել առ հաստատագոյն սէր ա̃յ և ընկերի.

բն 4. Պարանոց քո, իբրև զաշտարակ փղոսկրեայ. աչք քո իբրև զծովս եսեբոնի 'ի դրունս դստերաց բազմաց. ունգունք քո իբրև զաշտարակն լիբանանու, որ դիտէ 'ի դէմս դամասկոսի. Լատիններէն այսպէս է. պարանոց քո իբրև զաշտարակ փղոսկրեայ. աչք քո իբրև զաւազանս 'ի յեսեբօն, որք են 'ի դրան դստեր բազմութեան. քիթ քո իբրև զաշտարակն լիբանանու, որ վերահայի ընդդէմ դամասկոսի.

մեկ Փեսայն գովասանէ զհարսն վերահայեցմամբ առ այնոսիկ, որք տակաւ զարգացեալք

ցեալք են 'ի յաւաքինութեան, զորս հարսն ջանայ ամրացուցանել 'ի ծառայութենայ 'ի ձեռն հնազանդութեան։ ուստի ասէ փեսայն. պարանոց քո, այսինքն հպատակութիւն քո նմանի փղոսկրեայ, այսինքն ամուր աշտարակի։ քանզի ամրացուցեալ է զքեզ 'ի գործս բարիս ընդդէմ թշնամեաց քոց, այսինքն ընդդէմ մեղաց, ընդդէմ մարմնոյ, ընդդէմ աշխարհի, և ընդդէմ սատանայի։ ոչ միայն դու 'ի ձեռն հնազանդութեան եղեալ ես փղոսկրեայ աշտարակ, այլ և զայլս, ուսուցանելով նոցա զհզօր հնազանդութիւն, ջանաս առնել փղոսկրեայ աշտարակ։ մանաւանդ աչօք քովք լինիս նոցա օգնական, և աստջական։ քանզի ներքին աչք քո են նրբատեսք, և բարակահայեացք։ աչք քո նմանին աւազանաց, որք են 'ի յեսեբոն 'ի մայրաքաղաքի գաղայադացւոյ յայնկոյս յորդանանու 'ի ցեղն ռուբենի, և որք են 'ի դրան դստեր բազմութեան, այսինքն 'ի դրան մայրաքաղաքի, որ է բազմամբոխ։ աչք քո նմանին աւազանաց, որոց ջուրք բազումք են, և առատք, և 'ի յարտաքոյագունեղ երևակայութեան են պարզք, հանդարտք, և պայծառագունեղք 'ի բերև զապակեղէն հայելիս։ նմանին աւազանաց, որոց ջուրք պարզապէս երևեցուցանեն զկերպարան երեսաց, և զպատութիւնս ներհայեցողաց։

ներհայեցողաց, և անցանողաց, և են յար-
մարք, և պիտանացուք առ արբումն, առ
լուացումն, և առ ուղղումն ագարակաց.
աչք քո, սիրական հարս իմ, նմանին այս
պիսի աւազանաց. զի դու ես պայծառա-
գունեղիք, և նրբահայեցագունեղիք ա-
չօք քովք, այսինքն խոհեմութեամբ, և
նախախնամութբ քով. զվերոյիշեցեալսն
հոգևորապէս կատարես. և սանես հնա-
զանդեցելոց քոց, զորս պարտիս խնամել.
և պաշտպանել. վասն զի պարզաբանութբ
և քաղցրախօսութեամբ քով ցուցանես նց
զոգեղութիւնս հոգւոց նոցին. լուանաս
զաղտեղութիւնս մեղաց նոցին, եթէ տա-
կաւին չեն մկրտեցեալք, միջնորդութբ
մկրտութեան. իսկ եթէ մկրտեցեալք ի-
ցեն, և յետ մկրտութեան աղտեղեալք ի-
ցեն զհոգիս իւրեանց մեղօք, միջնորդու-
թեամբ խորհրդոյ ապաշխարութեան. ար-
տասուօք ցաւակցութեան, որովք ընդ-
ոստուցանես 'ի նոսա զարտասուս զղջման,
և սիրոյ, որպէս զնոսա, և մաքրես. արբու-
ցանես ամենեցուն զջուր կենդանի, և ոռո-
գես զագարակս սրտից նոցա հեղեղաւ սր̃
գրոց, և երկնային վարդապետութեանցն
վերջապէս ստորաներկար, ուղիղ. և սրա
հոտոտ քիթ քո, այսինքն սուր միտ, հան-
ճարեղութիւն, և խելահասութիւն քո 'ի
ճանաչելն, և 'ի քանալն զդարանակալութս

զվերալագու-

զվերավազութիւնս, և զներարշաւմունս
թշնամեաց, և նախազգուշութիւն քո հա
կէ հանգստութեան։ բարւոյ նոցին։ վ̃
զի դու հնազանդեցելոց քոց ես փոխանակ
բարձր։ և հաւատարիմ լրտեսարանի։ և
դիտանոցի, որպէս էր հրէից այն փառա
հեղ աշտարակն, կանգնեցեալն 'ի բարձրա
գունեղ լերինն լիբանոսի, որ վերահայի
դէպ 'ի դամասկոս, 'ի մայրաքաղաքն ասո
րւոց։ յորում աշտարակի լինէին մշտնջե
նաւորք լրտեսք հրէից, որք զլրտեսեց
եալ իրն 'ի տաճարէն իմացուցանէին հրէ
ից։ զայսոսիկ առնես այնոցիկ, որք յառա
ջանան 'ի յառաքինութեան։

5. Գլուխ քո 'ի վերայ քո իբրև զկարմե
լոս։ հիւսք գլխոյ քո որպէս ծիրանի թա — բն
գաւորի։ թագ 'ի գլուխ յընթացս ասպա
րիզաց։ Լատիներէն այսպէս է. գլուխ
քո որպէս զկարմելոս։ և վարսք գլխոյ քոյ
որպէս զծիրանի թագաւորի կապեցեալ
ջրահոսիւք։

Փեսայն երկնաւոր արդ դրուատէ զսի
րական հարսն իւր վերահայեցմամբ առ — մեկ
այնոսիկ. որք են կատարեալք։ ուստի ա_
սէ. գլուխ քո, այսինքն միտ, և վերնագոյն
մասն հոգւոյ քոյ, է յարացոյց, և հայելի
ա̃մ կատարելութեան, որպէս զլեառն կար
մելոս, որ է մերձ առ տիւրոս, 'ի ցեղն
իսաքարայ, և է զուարճացուցիչ։ բարձր։
և

և առաւատագունեղ այգեօք, և ամենացեղ պտղովք, և է հռչակաւորագունեղ ընակութեամբ եղեմայն, և եղեմէի, իջմամբ հրոյ 'ի յերկնից, և կատարելագործութեամբ այնքան սքանչելեաց. մեր քո նման կարմելոսի. զի է բարձր իմաստութեամբ, վայելուչ շնորհօք, առաւել այգեստանօք առաքինութեանց, հարուստ հոգևոր պտղովք, և հռչակաւոր բազմազան պատճառանօք. նման կարմելոսի, որ նշանակէ զգիտութիւն թլփատութեան, կամ ըզ թլփատեցեալ գառն. քանզի մեր քո հանգոյն մաքրագունեղ. և թլփատեցեալ գառն, է յստակ. զի թլփատեցեալ է 'ի յամ վնասակար, անօգուտ, և զազիր իրէ. և ունի զգիտութիւն թլփատելոյ 'ի յամ ունայնութենէ, անկարգութենէ, աւելորդութենէ, և անհարկաւոր բազմութենէ, նա և զայնոսիկ, որք քեզ յանձնեցեալք են կու. քանզի թլփատութիւնս այս հարկաւոր է կատարեալ անձանց մանաւանդ 'ի հերս, որք 'ի գլխոյ 'ի վայր հոսին այսինքն 'ի մտածմունս, և 'ի յիղձս սրտի. վասն այսորիկ և վարսք քո թլփատեցեալք են 'ի վնասակար, 'ի յանօգուտ, և 'ի զազիր իրաց. զի մի երևիցի 'ի նոսա իր ինչ անկարգ, կամ անշարադիր, կամ աւելորդ, և կամ անյարմար, և անպատեհ. այլ վարսք գլխոյ քոյ հանգոյն գեղեցկացեալ հերոց հիւսեցելոց

ցելոց

ցելոց. և շարադրեցելոց. իբրև զծիրանի թագաւոր. իցեն թաթախեցեալք ներկեցեալք ծիրանեաւ խարտեաշ. և կարմիր սիրոյ. և յիրաւի սիրոյ թագաւորի. այսինքն ազնուո՛յ. պատուականի. և քան զամենեսին մեծագունի. և պայծառագունի. որպէս է յիս. որ եմ արքայ արքայից. և տ̃ր տերանց. իցեն և ոչ իբրև զթագաւորական ծիրանի. որ հնացեալ. և մաշեցեալ է այլ որ կապեցեալ է 'ի ջրահոսս. և 'ի ջրմուղս այսինքն որ նորապէս ներկեցեալ է. որպէս է. որ տակաւին 'ի յաւազանս ներկեցելոց տոռամբք առաջնտեցեալ տեսանի. կամ իցեն իբրև զթագաւորական ծիրանի. որ գեղեցիկ ասղանեօք. և փաթաթելեօք 'ի կերպ ջրահոսից հմտաբար զանազանեցեալ. և ծալեցեալ է. ջրահոսքս այսոքիկ են գիրք ս̃բք. են գաղտնիք. խորհուրդք. և սահմանադրութիւնք ա̃յ. են ա̃ծային կատարելութիւնք. և կատարելութիւնք տ̃ն ք̃ի. քանզի պատկանի կատարելոց. զմետածմունս. և զա̃մ իղձս իւրեանց. և զմետածմունս. և զա̃մ իղձս հնազանդեցելոց իւրոց. 'ի յասացեալ ջրահոսից ածանցել. և նոյնոց բոլորովիմբ համակերպել. 'ի յասացելոյն իմանամք. թէ հարսն վսեմացեալ շնորհօք. և իմաստութեամբ. գեղեցկացեալ հերովք. այսինքն մտածմամբք կարմրացելովք ա̃ծային սիրով. պատկեցեալ

ցեալ Թագիւ բազմազան արդեանց. և ջա
նացեալ զայնոսիկ. որք նմա յանձնեցեալք
են. վսեմացուցանել իմաստութեամբ. կա
մրացուցանել գերազանց սիրով. և հաս
տատուցանել հոգևոր գանձուք. 'ի յասպա
րիզի աշխարհի յառաջ ընթանալ 'ի բարե
գործութեանց 'ի բարեգործութիւնս, 'ի
յաղթութեանց 'ի յաղթութիւնս. Նոյն
այս է առաջինն, որ աստ պահանջի 'ի յան
ձին հարսի 'ի կատարեալ բարեկամաց փե
սայի. միւսն է, որ իսկոյն առաւորի.

բն 6. Որ անզի գեղեցկացար. և զի հրաշալի
եղեր. սէր 'ի փափկութեան քում. Նա
ներբէն այսպէս է. որքան գեղեցիկ ես, և
որքան վայելուչ սիրելագունեղ, 'ի փափ
կութիւնս.

մեկ Բայս իմացումն լինի. որքան գեղեցիկ, և
որքան վայելուչ ես 'ի փափկութիւնս, այս
ինքն կարի յոյժ գեղեցիկ. և վայելուչ ես
'ի փափկութիւնս. այսինքն 'ի ներքին ու
րախութիւնս. ցնծութիւնս. խնդութիւնս
բերկրութիւնս. և ուղխս փափկութեանց.
Թէ յայնոսիկ. զորս վայելեն 'ի գերազան
ցագունեղ գեղեցկութենէ քումմէ. և սե
րեցելոյն քո: և թէ յայնոսիկ. որովք ըզ
մեզ պատուարժանացուցանես. և բերկրեցուցա
նես 'ի յընտիր գեղեցկութենէ. վայելչու
թենէ. և քաղցրութենէ քումմէ. քանզի
գերակայանցիւք բերկրութիւն հոգւոյ պարտ

ով զք

ով որ անսայ կատարելութեան. յորոց իմա
նամք. թէ հարսն հայեցեալ 'ի յաննմանն
գեղեցկութիւն սիրական փեսային իւրոյ.
'ի յընտիր գեղ անձին իւրոյ. և 'ի բազմա
ջան աշխատանս. որովք հոգայ զայնոսիկ
որք յանձնեցեալք են նմա ընանի խնդու
թեամբք. ուրախութեամբք. և հրճուա
նօք. փափկութիւնքս այսոքիկ ոչ պակա
սին նա և 'ի միջոց թշուառութ̄ս. փորձու
թիւնս. և ցամաքութիւնս. որք կարեն
խռովել զստորնագոյն մասունս հոգւոյ. և
տրտմեցուցանել. և վշտացուցանել զնա.
բայց զվերնագոյնն ոչ կարեն. միայն թէ
այս մնայցէ այն իւրում հաստատապէս առ
պնդեցեալ. և ներյեցեալ. աստ կարէ լի
նել իմացումն նա և զարտաքին համեստ
սփոփանաց. որոց ևս երբեմն արք կատա
րեալք կարօտին. զի հզօրագոյն ծառայե
ցեն այ. և յօժարագոյն օգնիցեն ընկերի.
ուստի ասի 'ի սաղմոսի. արդարք ուրախ
եղիցին. և ցնծասցեն առաջի նորա. և զո
ւարճասցին յուրախութեան իւրեանց. յի
րաւի է նշան մեծի առաքինութեան. և
սրբութեան. նա և արտաքոյ երևեցուցա
նել զմշտնջենաւոր պարկեշտութիւն. ըզ
ծանրութիւն. և զտեսակ ճշմարտի ջերմե
ռանդութեան. 'ի յառատութենէ ներքին
բերկրութեանց. երրորդն. որով զհաս
տատեալն կատարելութիւն քո վկայեցեալ
առնես

առնես. և զայլս ուսուցանես. է.

բն 7. Նմանեցաւ մեծութիւն քո արմաւեն
ւոյ. և ստինք քո ողկուզաց : Ստիններէն
այսպէս է. հասակ քո նմանեցուցաւ ար
մաւենւոյ. և ստինք քո ողկուզաց :

մեկ Այս իմացուածս լինի. հասակ քո. որ 'ի հա
մաձայնութենէ 'ի միասին ա̃մ առաքինու
թեանց. մեծացեալ. վերացեալ. և կանգ
նեցեալ է 'ի բարձր. նմանեցուցաւ արմա
ւենւոյ բազում պատճառանօք. նախ. եր
կայնութեամբ. և բարձրութեամբ. որով
յաղթէ զայլ ծառս. երկրորդ. ուղղու
թեամբ դիտաւորութեան. որով զմ̃տ
քո ուղղէ առ ա̃ծ. երրորդ. քաղցրութ̃բ.
զօրութեամբ. և անյաղթ հաստատութ̃բ
ընդդէմ մրրկաց. որովք այնպէս զքեզ
զօրացուցանէ. քաջալերէ. կազդուրացու
ցանէ. և ամրացուցանէ. թէ ոչ հակիս.
և ոչ ծռիս 'ի վայր. այլ յաղթահարես զա̃մ
ծանրութիւնս. որք քարշեն առ ստորնա
գոյնս. ուստի է ևս հանգանակ յաղթու
թեան. չորրորդ. հանապազական կանան
չութեամբ. որով պահէ զքեզ ցանգ կա
նանչ 'ի հոգւոյ քում. հինգերորդ. խստու
թեամբ. և գրեթէ չորութեամբ կեղևոյ.
մերկ կոճեղբ սրացելով. և սպառազինեցե
լով փշովք ձնշմանց. որովք ձնշէ զստոր
նագոյն մասունս քոյս. և ընտիր գեղեցկու
թեամբ. և վայելուչ տեսլեամբ ոստոց.

և

և տերևոց արձակագունեղապէս բացելոյ
առաքինութեանց, որովք գեղեցկացուց
եալ․ և զհամարձակացուցեալ է զվերնագոյն
մասունս քոյս։ վեցերորդ, հաւասար գի
րութեամբ կոճեղ վերականգնեցելով ՚ի
գետնէ մինչև ՚ի գագաթ, որով պարարէ,
և գերացուցանէ զբոլոր հոգի քո։ եօթն
երորդ, տեսակաւ սուսերաձև տերևոց, ո
րովք զքեզ պերճացուցեալ․ և զարդարեալ
է․ ութերորդ, առատութեամբ, քաղց
րութեամբ, և գերազանցութեամբ պտղոց
առաքինական գործոց, որովք զքեզ ճո
խացուցեալ․ փարթամացուցեալ․ և հարս
տացուցեալ է․ ուստի առատրէ փեսայն․
ստինք քո, յորոց որպէս թէ ՚ի մշտնջենա
ւոր աղբերց արտահանես զճարակ ընկե
րաց քոց, նմանեցուցեալք են ողկուզաց,
այսինքն արմաւոց․ որք կախին ՚ի գագա
թէ արմաւենւոյ․ կամ նա ևս ողկուզաց
խաղողոյ որթոյ, որ տնկեցեալ առ ար
մատս արմաւենւոյ․ ՚ի վերայ ոստոց նոյնոյ
յենու․ և հաստատի։ վասն զի սովորք են
կատարեալք ոչ միայն յատուկ հոգւոյ,
այլ և ընկերաց իւրոց, զորս ներհմտացու
ցանեն, որպէս բեռամբ, և հոգով ծան
րանալ․ այսպէս և պտղովք զարդարել
ասէ ուրեմն փեսայն․ ահա ձեզ․ հանգա
նակ լի կատարելութեան ՚ի յարմաւենւոջ․
օրինակ ՚ի հարսն․ ոչ ասաց խելոյ․ քանզի

միոն

մինն 'ի մատղաշ երիտասարդուհեաց, յո-
րում բազումք այլք պարունակին, փափա-
գեալ կատարելութեան, այնքան ազնուոյ.
և այնքան դրուատեցելոյ պտղոյ, ասէ. և
ես զայնքան գեղազանց բարին շրջագայե-
լով խնդրեմ։

բն 8. Ասացի, ելից 'ի վերայ արմաւենւոյն,
կալայց զբարձրութենէ նորա. և եղիցին
ստինք քո իբրև զողկոյզ որթոյ. և հոտ
ռնգաց քոց իբրև զխնձոր։ Լատիներէն
այսպէս է. ասացի. ելից 'ի յարմաւենին.
և կալայց զպտուղս նորա. և եղիցին ստինք
քո որպէս զողկոյզս այգւոյ. և հոտ բերա-
նոյ քոց որպէս զխնձորոց.

մեկ Զայս դիտէ ասել. ասացի. այսինքն ըն-
տրութեամբ սահմանեցի. և հաստատա-
պէս սահմանադրեցի 'ի սրտի իմում զայս,
զոր բացադրելոց եմ արդ. ելից 'ի յարմա-
ւենիս յայս. այսինքն տաց զիս խրատու կա-
ռավարութեան. և ուսուցման այնքան ազ-
նիւ վարդապետուհւոյ. ունկնդիր եղէց,
և լուայց բանից նորա. ըմբռնեցից զգա-
գաթ նորա, յորում են արմաւք նորա. և
կալայց զպտուղս վարդապետութեանցն նո.
վասն որոյ ասեմ ցվարդապետուհին իմ.
որպէս տեղեկացեալ եմ բանիւք. և վկայ-
ութեամբ երկնաւոր փեսային, որ զիս արդ-
քեզ յանձնեալ է, ստուգիւ գիտեմ, թէ
ստինք քո, յորոց դիտեմ, և փափագիմ
ծծել,

ծծել զկաթնարատուց քոց. և հիւթք. և
այլք պտուղք անտի արտաբղխօղք, եղի
ցին ինձ քաղցունք, և փրկաւէտք հանգոյն
ողկուզաց և արմաւոց. և խաղողոց, որք
լիք են հիւթով սնուցանողաւ, զուարճա
ցուցանողաւ, և արբեցուցանողաւ։ ստու
գիւ ես գիտակ եմ, թէ հոտ բերանոյ
քոյ, և հոտ ռնգաց քոց այսինքն անոյշ
վարդապետութիւն, բուրող զանուշահո
տութիւն վարուց, որ ելանէ 'ի բերանոյ
քումմէ, եղիցի ինձ իբրև զհոտ խնծորոց
պահպանութիւն. և հետևումն մր խրա
տուց քոց. և նմանապէս օրինակաց. և գոր
ծոց, զորս 'ի բերանոյ. և 'ի ռնգաց սրտի,
այսինքն 'ի սիրոյ. և 'ի բարի նախանձուէ
քումմէ արտահանես. և արտաբղխես, է
ղիցի ինձ անոյշ. լի հոտով. և փրկաւէտ,
այսինքն զարմանապէս զուարճացուցէ,
բերկրեցուցէ, սփոփեսցէ. և զօրացուցէ
զիս, որպէս սովոր է առնել հոտ խնծո
րոց բժշկականաց. և մրգաց ոսկեղինաց.
զորոց ասացեալ է այլ ուրեք։ եղիցի ինձ
այս։ քանզի դու 'ի լիութենէ ներքին ջեր
մեռանդութեան. ամենայն եռանդի, և
շնորհալի լուսաւորման արտահանցես. և
արտաբղխեսցես ինձ զիւրս քաղցրագունե
ղս. և փրկաւէտագունեղս. զայս փորձիւ
գիտացի. քանզի յորժամ' ելի 'ի գագաթ
արմաւենւոյ, և սկսայ ճաշակել զծուծ
վարդապետու

վարդապետութեան քոյ․ ինքեամբք լիրք,
և մեծաւ մխիթարութեամբ․ և բարեաւ
խմոյլ զգացի․

բն Թ․ Իսկ կոկորդ քո իբրև զգինի ազնիւ եր
թալ ընդ եղբօրորդւոյ իմոյ յուղղութի․
բաւական լեալ շրթամբք իմովք․ և ատա
մամբք ։ Լատիներէն այսպէս․ կոկորդ
քո իբրև զգինի լաւագունեղ, արժանի
սիրեցելոյ իմոյ առ ի ըմպել․ և առ ի յորո
ճել շրթամբք․ և ատամամբք նորա․

ժեկ Այս իմացումն լինի․ կոկորդ քո․ այսինքն
վարդապետութի՛, ուսուցումն․ և խրատք
քոյք, որք բղխեն 'ի կոկորդէ քումմէ,
նմանին ազնուագունեղի, պատուականա
գունեղի․ և լաւագունեղի գինւոյ, այս
ինքն գինւոյ, որ ոչ է ապականեցեալ․ որ
ոչ է թթու, որ ոչ է խեղութափ․ և որ
ոչ է պղտոր․ այլ որ է պայծառագունեղ․
մաքրագունեղ, գեղեցկագունեղ, անուշա
գունեղ համեղագունեղ, հզօրագունեղ,
սփոփագունեղ, բերկրականագունեղ․ և
գերազանցագունեղ․ և որ է ամրացուցիչ․
սնուցիչ, կերակրիչ, ուժովացուցիչ․ և ար
բեցուցիչ, վարդապետութիւն քո է պայ
ծառագունեղ․ զի պայծառացուցանէ․ և
լուսաւորէ զմիտ․ նման գինւոյ․ զի զուա
ցուցանէ զհոգի․ է մաքրագունեղ․ զի
մաքրէ․ և սրբէ զմիտ 'ի յաղտեց մեղաց․
և մոլորութեանց․ դարձեալ է մաքրագու
նեղ․

նեղ, զի չունի զարատ․ և զբիծ ստութե․ և խաբէութեան․ այլ է անարատ ճշմարտութիւն։ է գեղեցկագունեղ․ զի ածէ առ հոգևոր գեղեցկութիւն․ այսինքն առ շնորհն այ․ որ է գեղեցկութիւն հոգւոյ։ է անուշագունեղ․ զի շնորհէ զանուշահոտութիւն վարուց։ է համեղագունեղ․ զի ախորժ է այնոցիկ, որք լսեն։ է հզօրագունեղ․ զի զօրացուցանէ․ և քաջալերէ զմենամարտիկս ընդդէմ սատանայի, աշխարհի, և մարմնոյ։ է սփոփագունեղ․ զի մխիթարէ․ և սփոփէ զվշտացեալս․ է բերկրականագունեղ․ զի բերկրեցուցանէ զուարճացուցանէ․ և զմայլեցուցանէ զլսօղս է գերազանցագունեղ․ զի գերազանցագոյն է քան զամ վարդապետութիւնս։ է ամրացուցիչ․ զի ամրացուցանէ զուսանողս է սնուցիչ․ զի սնուցանէ։ է կերակրիչ․ զի կերակրէ զհոգի։ է ուժովացուցիչ․ զի յօրացուցանէ զառաքինիս։ է արբեցուցիչ․ զի արբեցուցանէ գինեաւ սիրոյ։ ուստի նովաւ ոչ միայն սնանիմ, զարգանամ, աճիմ, մեծանամ, զօրանամ, քաջալերիմ․ և կարողանամ․ այլ և սփոփիմ, մխիթարիմ, զօրանամ, արբենամ․ և զմայլիմ։ առ այսոսիկ գովս իւրս ասէ հարսն․ սոյնպիսի գինի յարմարի, և վայելէ սիրեցելոյն իմոյ առ ի յըմպել։ քանզի պատուական ինչ պարտի մերձեցուցանիլ փափկացեալ շրթանց․

և

և ատամանց նորա առ 'ի յորոճել. ծամել. ծասկել. կլանել և ճաշակել. վասն զի փափկագունեղ քիմ փեսային իմոյ ոչ ընդունի, եթէ ոչ զիրս լաւագունեղս. և պատուականագունեղս. զայս դիտեմ ասել. փեսայն իմ երկնաւոր, որ է ճշմարտութի. և բան հօր. ուսուցանէ զպատուականագունեղ վարդապետութիւն. և բղխէ 'ի կոկորդէ իւրմէ զգինի ա՟ծային իմաստութեան. զի 'ի նմա բնակի լրումն ա՟ծութեան.

բն 10. Ես եղբօրորդւոյ իմոյ. և առ իս
դարձ նորա. Նախներէն այսպէս է. ես
սիրեցելոյն իմոյ. և առ իս դարձումն նր.

մեկ Ըստ բարոյն հոգևոր դիտէ ասել. տեսեալ ըզպատուականութիւն սիրեցելոյն. և նազելոյն իմոյ, ցանգ ջանամ, զի հաճոյանայցեմ նմա 'ի յամենայնում. որպէս զի. բոլորովիմբ լիցեմ նորա. քանզի նա այնպէս քաղցրաբար. և առատապէս հայի առ իս թէ անպակաս դարձուցանէ զինքն առ իս. եթէ ընկալեալ իցէ յինէն զիր ինչ առաքինագունեղապէս հատուցանէ զփոխարէնն. յորժամ տամ նմա զիր ինչ. զինքն բոլոր առ իս դարձուցանէ. զի լցուցանէ զիս առատատուր բարեօք. առատաձեռնիցէ ինձ զշնորհս, պարգևիցէ ինձ զտուրս, փարթամացուցանիցէ զիս ազնուագունեղիւք պարգևօք, զօրացուցանիցէ

զիս առատ ողորմութեամբ իւրով. և ան
ճեցուցանիցէ զիս պատուականագունեղիւ
գինեաւ վարդապետութեան իւրոյ։ Ջա
նամ, զի հաճոյանայցեմ նմա։ զի որպէս
ես նմա եմ. և նա այնպէս ընդ իմ լինի
ինձ։ որքան յօժարագոյն ծառայեմ նմա.
այնքան առատագոյն հայի յիս։ որքան ա
ռաւել կատարեմ զկամս նորա. այնքան ա
ռաւել հաճի յիս։

11. Եկ եղբօր որդի իմ, ելցուք յանդաս
տան։ հանգիցուք 'ի գեօղս։ Լատիներէն
այսպէս է. եկ սիրեցեալ իմ. ելցուք յա
գարակ, համաբնակիցուք 'ի գեօղս։

Հարսն տեսեալ զզարգացումն աշակերտու
հեաց, որք սակաւ յառաջ լեալք էին յօժ
անկարգք, թշնամականք, և ապստամբք,
որպէս ասացեալ է. ընանի ուրախութիւք.
և բերկրութեամբք, և սկսանի սփոփել,
հրճուել. և զուարճանալ. վասն որոյ ոչ
յապաղեալ երկարագոյն, վերաձայնէ զփե
սայն առ ինքն, զի 'ի միասին բերկրեսցին
'ի նոսա։ Հարսն առնէ զայս. զի զգաց,
թէ սովար յօժ հաճոյանայ փեսայի. ու
տի ասէ. եկ սիրեցեալ իմ, ելցուք 'ի յա
գարակ. և 'ի յանդաստան. և հոգւոյ իմոյ
յատկականի. և այլոց հոգեաց ինձ յանձնե
ցելոց։ զի այժմ 'ի նմա ոչ գոյ թշնամա
կան ինչ. ոչ գոյ խռովեցեալ ինչ։ լեալք
ապահովք համաբնակիցուք 'ի նոր գեօղս

յայսոսիկ, 'ի վայելուչ դաշտս, 'ի գեղեցիկ
անդաստանս. և 'ի բերկրական ձորակս.
քանզի էանց ցրտացեալ ձմեռն յոռուեց.
և բացամերժեցաւ տխրական գիշեր տգի
տութեան: Դու հոգի իմ. և հոգիք ինձ
յանձնեցելոց կանանչեցան առաքինութեք,
ծաղկեցան արդարութեամբ, և գեղեցկա
ցան շնորհօք:

բն 12. Մանկնեսցուք յայգիս. տեսցուք, թէ
ծաղկեալ իցէ որթն, ծաղկեալ իցէ նոճն
ծաղկեալք իցեն նռնենիք. անդ տաց ըզ
ստինս իմ քեզ: Մատեներէն այսպէս է.
յառաւօտուն յարիցուք յայգիս, տեսցուք,
եթէ ծաղկեցաւ այգին, եթէ ծաղիկք
բերեն զպտուղս, եթէ նուռք ծաղկեցան
անդ տաց քեզ զստինս իմ.

մեկ Հարսն հետևի խօսիլ. յառաւօտուն յարէ
ցուք 'ի յայգիս անձեցելոց, և մեծացելոց
առաքինութեանց այսինքն անձապարեալք
ելցուք 'ի տես հոգեաց, որք զարդացեալք
են առաքինութեամբք. տեսցուք, եթէ
ծաղկեալք իցեն այգիք, եթէ ծաղիկք
բերիցեն զպտուղս. այսինքն տեսցուք, ե
թէ հոգիք, որք զարդացեալք են առա
քինութեամբք, ծաղկեալք իցեն ծաղ
կամբք առաքինութեանց, և բերիցեն ըզ
պտուղս առաքինական գործոց. ներկայու
թեամբ մերով զուարճացուսցուք, բանիւք
մերովք զօրացուսցուք. և յորդորմամբք մե
րովք

բովք ընդունեսցուք զնոսա։ արդարև գտցես զնոսա կատարելս կամաց, և փափագանաց քոց։ տեսցուք 'ի միասին, եթէ նուննինք։ և նուռք ծաղկեալք իցեն այսինքն նոքա, որք պարտեին լինել կատարեալք հոյլիւ ամ առաքինութեանց, ժամանեալք իցեն վաղահասուկութեան։ զի յայնժամ նուռք համարին կատարեալք։ յորժամ 'ի գագաթան ունին զպսակ 'ի կերպ ծաղկի։ տեսցուք, եթէ նուռք բացեալք իցեն զինքեանս։ քանզի նուռք յորժամ հասանին, բանին տաքութեամբ, և ճեղքեցեալք բանան զինքեանս։ զայս դիտեմ ասել։ տեսցուք, եթէ նոքա, որք պարտեին լինել կատարեալք 'ի յամ առաքինութիւնս։ ստացեալք իցեն զյայտնի և զհաստուն առաքինութիւնս կարմրացեալ սիրով։ միաբանեցեալս դիտաւորութբ, և ամրացուցեալս համբերութեամբ, եւ կայնմնութեամբ, և յարատեւութեամբ։ անդ տաց քեզ զստինս իմ, այսինքն զսէր իմ։ զայս դիտեմ ասել։ 'ի յայսոսիկ բուրաստանս, 'ի յայսոսիկ պարտէզս, 'ի յայսոսիկ այգիս, 'ի յայսոսիկ ագարակս, ուր դու 'ի մօտոյ առաջադրեցեր ինձ զառատ և զվայելուչ խրախութիւն, այսպէս եւ այժմ ըստ կարողութեան, և ըստ չափոյ իմոյ քեզ պատրաստեցի։ փոխանակ զմաոյ։ կաթին։ և գինւոյ, զորս յայնժամ այն

քան

քան առատութեամբ առադրեցեր։ Ես
զստինս իմ, զստինս կատարեալ սիրոյ հայ
րականի։ և մայրականի, տաց և քեզ։ և ա
մենից տղայոց, և մանկանց քոց։

բն 13։ Մանրագորք ետուն զհոտս իւրեանց
առ դուրս մեր ա՟ծմ մրգաբերք, նոր առ
հնոյն։ զոր ետ ինձ մայր իմ։ պահեցի
քեզ եղբօրորդի իմ։ Մանիներէն այս
պէս է։ մանրագորք ետուն զհոտ։ 'ի
դրունս մեր ա՟ծմ միրգք։ զնորս։ և զհինս,
սիրեցեալ իմ, պահեցի քեզ։

մեկ Զայս դիտէ ասել։ փոխանակ խնկոց ա
ռադրեցից զմանրագորս քաջ առաքինու
թեանց զանուշահոտս, զառողջարարս,
զհամեղս։ և զհամոզիչս սիրոյ։ և պարար
տութեան։ վասն զի արդ ետուն զհոտ
իւրեանց։ քանզի մինչ են հասունք, բու
րեն զմեծագունեղ անուշահոտութիւն։ և
ցուցանեն զզօրութիւն։ և զուժգնութիւն
իւրեանց։ փոխանակ խորոխի։ և մեղու ա
ռադրեցից զա՟ծմ միրգս այսինքն զպտուղս։
և զարտաքին գործս ա՟ծմ առաքինութեանց
քանզի ամենեքին են 'ի դրունս մեր այս
ինքն 'ի ծածուկ անմատչելի պահարանաց
սրտի արտահանեցեալք են 'ի հրապարակ
'ի ձեռն զգայութեանց, և 'ի ձեռն այլոց
արտաքնոց կարողութեանց։ վերջապէս
զա՟ծմ իրս։ և զայնոսիկ, որք բուսան։ և ա
ծեցան 'ի պարտիզի հոգւոյ իմոյ։ և զայնո
սիկ

սիկ, որք աճեցան, մեծացան. և բազմա ցան 'ի յայգիս, 'ի պարտէզս, 'ի յագարակս և 'ի յանդաստանս այնոցիկ, որք յանձնե ցան ինձ, 'ի սկզբանէ տարւոյ մինչև ցվաղ ճան. զնորս. և զհինս. սիրեցեալ իմ, քեզ միում, և միայնում ամբողջս, և անխախտս պահեցի. և այժմ առաջարեմ քեզ. և քոյոց իպաշտօն քո միոյ. և ի պաշտօն քոյոց վ̃ քո. և իպատիւ. և իպաշտաւն. և 'ի փառս քո միայնոյ մատուցանեմ, ընծայեմ, ձօնեմ. և նուիրեմ. որ ինչ պատուական, որ ինչ մեծագին, որ ինչ ազնիւ, որ ինչ ընտիր, որ ինչ զուար ճացուցիչ. և որ ինչ անոյշ գտանի յիս. և 'ի յիմս. որ ինչ 'ի բնութենէ. և որ ինչ 'ի շնորհէ գտանի յիս, զբովանդակն առա ջարեմ քեզ. զի դու անտի խրախանայցես, դու զուարճանայցես, դու բերկրիցիս. և հրճուիցիս. զոչ ինչ պահեմ ինձ. զոչ ինչ առանձնացուցանեմ առ հեշտութիւն, առ փափկութիւն, առ փառս. և առ հան գստութիւն իմ. զամենեսին քեզ պահե ցի, տրամաբաշխելիս առ ակնարկութիւն և առ բարեհաճութիւն քո միայնոյ. զայ սոսիկ ամենեսին քեզ պարտիմ ընծայել միայնում. զի դու միայն ես ազնիւ. և նա զելի սիրականն իմ. 'ի յասացելոցն իմա նամք, թէ հարսն պատրաստէ զպատուա կանագունեղ. և զազնուագունեղ խրախու թիւն երկնաւոր փեսային. քանզի մաքրա գունեղ դիտաւորութեամբ, ջերմեռան

դագունեղ

դագունեղ սիրով. և կատարելագունեղ
կատարմամբ զամ իւր իւրս առաջրէ մի-
այնում փեսային իւրում.

## Գլուխ ութ երգոց.

Ի գլխոյս յայսմիկ ճառն զեռացեալ փա-
փագէ հարսն անպակաս վայելելոյ
զներկայութիւն փեսային, զխորախու-
թենէ, որով հարսն ընդունի զփեսայն
և զքնոյ անտի հեռանեցելոյ. զփառաց. և
բերկրութեանց հարսին. զօրինաց կատա-
րեալ սիրոյ. զհոգոյ, և զնախանձուն հար-
սին շուրջ զհոգւովք, որք յանձնեցեալք
են հոգաբարձութեան նորին. և զվերջին
փափագանաց հարսին.

ըն 1. Ո՞վ տացէ քեզ եղբօրորդի իմ, դիեալ
զստինս մօր իմոյ. գտեալ զքեզ արտաքոյ
համբուրեցից. և ոչ անգոսնեսցես զիս.
Լատիններէն այսպէս է. ո՞վ տացէ ինձ
զքեզ զեղբայրդ իմ ծծօղ զստինս մօր
իմոյ, զի գտանիցեմ զքեզ արտաքոյ. և
համբուրիցեմ զքեզ. և արդ ոչոք զիս ան-
գոսնեսցէ.

մեկ Հարսն յափշտակեցեալ ՚ի սէր փեսային. և
սաստկապէս տենչացեալ ցանգ ընկերակ-
ցիլ նմա, և համբուրել զնա նա և արտաքոյ
՚ի հրապարակի, աղաղակելով գոչէ առ
նա. ո՞վ տացէ զքեզ ինձ զեղբայրդ իմ.

ըմ

ճիլ արասցէ ինձ զայս շնորհ, և զայս բա
րերարութիւն, զի այլ ոչ փոփոխմամբ մի
այն, և միջանցմամբ, արդ 'ի պահարանն
գինւոյ, արդ գաղտաբար 'ի յանկողնոջ.
արդ 'ի յանկիւնս պարտիզի, բուրաստանի
և ագարակի, կցիցես ինձ, որպէս ըստ սո
վորութեան բարեկամաց երբեմն միմեանց
հակադարձաբար յայցելանողաց, մինչև
ցայժմ ինձ կցեցեալ ես, այլ անպակաս. և
անխափան ընտանաբար ինձ մերձ լինիցիս,
և անբաժ. և անանջատ առյննուցուս,
ըստ սովորութեան ստիր եղբօր, և տակա
ւին փոքրկի, ծծողի զստինս նոյնոյ մօր
իմոյ. զի մշտնջենաւորապէս. և ամենայն ու
րեք զքեզ ինձ ներկայ գտանիցեմ, նա և
արտաքոյ 'ի հրապարակի. և առաջի ամենե
ցուն. և շարունակաբար համբուրիցեմ ըզ
քեզ. և անահ գգուիցեմ զքեզ. և անխա
փան բերկրիցեմ քև, որպէս քեւ է օրէն
վայելել զփոքրիկ եղբայր իւր: եթէ ըզ
քեզ այսպէս վայելիցեմ, ոչոք զիս անգոս
նեսցէ: բայց անգոսնեն զիս այժմ: զի ան
գոսնէ զիս ա̃ծ. անգոսնեն զիս հրեշտակք
և ս̃րք, որք են յերկինս. և անգոսնեն զիս
արդարք. և կատարեալք, որք են յաշխար
հի. վասն այնորիկ սոքա անգոսնեն զիս.
զի զքեզ. որ ես ծայրագոյն բարի. և բեր
կրութիւն իմ, չխայպէս. և շարունակաբար
չվայելեմ: քանզի թէպէտ բազմիցս կցե
ցիս

ցիս ինձ 'ի ձեռն խոկման. և զուարճացու-
ցանիցես զիս հոգևոր բերկրութեամբք
քովք. և արբեցուցանիցես զիս երկնային
գինեաւ. բայց այս ոչ է բազմօրեայ. և
յոյժ հեռի է 'ի յուղխից փափկութեան,
որովք զովացուցանես 'ի պալատի քում
զորդիս քոյս. նա և մինչ այսպէս զիս եր-
բեմն սփոփես, բռնադատիմ առ ժամա-
նակ ինչ լռել. և դադարել 'ի յամ արտա-
քին իրակմանէ պաշտօնի ինձ յանձնեցե-
լոյ. և այսպէս ընդ ամուլ ռաքելի վայր
նստել 'ի տան քում. առաւել կամէի զեր-
կաքանչիւրն մշտնջենաւորապէս յիս կցել
զբերկրութիւնս ռաքելի. և զպարարտու-
թիւն լիայ. արդ կամ որպէս զամուլ ան-
գոսնեն զիս, կամ որպէս զխացակ ծաղ-
րառնեն զիս. թողում զայնքան արատու-
թիւնս, զայնքան մոլորութիւնս, զայնքան
հիւանդութիւնս. և զայնքան թշուառու-
թիւնս իմ, յորս վասն բացալինելութ-
այցելութեան քոյ, և ստորաքարշման. կամ
նուաղման շնորհի քոյ, անձապար սպրդիմ
մինչ իրակութեանց պարապիմ. վասն որոց
արժանապէս ծաղր առնիմ, և անգոսնիմ
'ի յամենեցունց. յորոց զերծանել, եթէ
ներ յենուլ քեզ մշտնջենաւոր կապակց-
մամբ, ընդգրկմամբ, և համբուրիւ, և
ծերս զհրեշտակս, և զերկնային պատմագա-
քորս քոյս ոչ զպատեհ կերակրաց քոց, մինչ
ծառայեմ.

Ծառայեմ որդեաց քոց. յորոց իմանամք,
թէ Հարսն տենչայ ելանել 'ի մարմնոյ. և
լինել ընդ Քի 'ի փառս յաւիտենականս.
իմանամք ևս, թէ հին եկեղեցին ջերմե
ռանդագունեղապէս փափագեցաւ գալս
տեան. և ներմարմնութեան որդւոյն այ.
փեսայն երկնաւոր լսէր զջերմեռանդ փա
փագս Հարսին. սակայն Ննայր անզանա
զան, գոլով սահման կատարել զփափագս
սիրեցելոյն իւրոյ 'ի ժամանակի իւրում.
առնէ զայս վասն բազմացուցանելոյ. և
աճեցուցանելոյ զհրաշս Նորին. զոր իբրև
ծանեաւ, ասէ Հարսն, մինչ յապաղի, ո
րում տենչամ, ընդգրկեցից, որ ընծայի.
2. Լուեալ ածից զքեզ 'ի տուն մօր իմոյ բն
և 'ի սենեակ յղացելոյն զիս. արբուցից քեզ
'ի գինւոյ իւղագործաց. յուշարակէ նռնե
նեաց իմոց. Լատիններէն այսպէս է. ըմ
բռնեցից զքեզ. և ածից 'ի տուն մօր իմոյ
անդ ուսուսցես զիս. և տաց քեզ զբա
ժակ 'ի գինւոյ շինեցելոյ. և զնոր գինի
նռանց իմոց.

Որպէս դիտէ խօսել Հարսն. կալայց, և մեկ
ըմբռնեցից զքեզ. պնդագունեղապէս ընդ
գրկեցից զքեզ մտօք. և կամօք և առկապեցից
զքեզ ինձ կապանօք. և առաւմբք սիրոց.
այսինքն ցանգ մտածեցից. և սիրեցից ըզ
քեզ. և ածից զքեզ 'ի տուն մօր իմոյ, այս
ինքն 'ի տուն իմ. և 'ի յատակ հոգւոյ իմոյ
անց.

անդ ուսուցես ինձ զմաքուր, զառաջին, զծայրագոյն․ և զամ ճշմարտութիւն։ անդ խօսեցիս ընդ իս, ոչ օտարականաւ, այլ յատկականաւ բերանով քով։ զի 'ի սրտի իմում ներշնչեսցես ինձ զյստակ ճշմարտութիւն։ անդ խօսեցիս ընդ իս, ոչ առակօք, այլ յայտնապէս։ անդ պատշական վարդապետդ հմտացուցես զիս աշակերտուհիս վարդապետութեամբք երկնայնովք։ ուսուցես ինձ գիտել զիս, գիտել զքեզ․ և գիտել զամ իրս, զորս կամեցիս, զի գիտիցեմ։ Իսկ ես հակադարձաբար անդ տաց քեզ զբաժակ լի գինեաւ պատուականաւ իւղագործաց, որ համեմացուցեալ է զանազան իրօք։ արբեցուցից քեզ զանուշագունեղ գինի․ որ բաղկացեալ է 'ի խառնմանէ ամ առաքինութեց տաց քեզ զհամեղագունեղ խում սիրոյ անուշացուցեալ ազնուագունեղ բարեգործութեամբք։ տաց քեզ նա և զնոր գինի․ և զյօշարակ նռանց իմոց, այսինքն զնոր․ և զառաջին խում ամ ներքին, և արտաքին ուժգնութեանց գործոց, և ըղձից իմոց․ զի քիմք քո փափագիչ բարեաց մեծագուներից․ պահանջէ զայնպիսի խումս։ անդ 'ի միասին խրախացուք․ և երկրիցուք․ և արբցուք զհամեղագունեղ․ և զանուշագունեղ գինի սիրոյ, որքան կարասցուք 'ի ներքոյ ժամանակի․ և այսպէս հրճուեսցուք։

ցուք․ և զուարճացուք ։

3․ Ահեակ նորա ընդ գլխով իմով․ և աջ նորա պատեսցէ զինև ։ Լատիններէն այսպէս է․ աՀեակ նորա ընդ գլխով իմով․ և աջ նորա ընդգրկեսցէ զիս ։

Օ այս դիտէ ասել հարսն․ սիրականն․ և և նազելի փեսայն իմ, զոր կոչեցի․ և հրաւիրեցի առ իս, և ընդ որում․ փափագե ցայ լիապէս․ և կատարելապէս միաւորիլ․ և զուգակցիլ մտօք․ և կամօք, խոկմամբ․ և սիրով․ արագապէս թռուցեալ առ պա րանոց հոգւոյ իմոյ, այսինքն հաճեցեալ 'ի խոնարհութիւն իմ, զօրացոյց զմիտ իմ, և քաջալերեաց զսիրտ իմ․ փարեցեալ զինև գգուեաց զիս․ և զուարճացոյց ։ պաշա րեալ զիս առատ պարգևօք, ուրախացոյց զիս․ և հրճուեցոյց․ ընդգրկեալ զիս սի րով․ բերկրեցոյց․ և զմայլեցոյց զիս ։ շրջա պատեալ զիս հոյլիւք խնդութեանց․ և ու րախութեանց, մխիթարեաց․ սփոփեաց․ և զովացոյց զսիրտ իմ․ պարապեալ զիս զօ րութեամբք ձեռաց իւրոց, ներեմոյծ զիս 'ի խրախութիւն, յորում այնպէս արբե ցոյց զիս անուշագունեղիւ գինեաւ սիրոյ թէ ներածեցայ 'ի բերկրականագունեղ թմբրութիւն․ և քուն, խորագունեղիւ խաղաղութեամբ․ և լիագունեղիւ հան դարտութեամբ հանգուցեալ 'ի վերայ բազկաց սիրեցելոյն իմոյ ։ քունս այս, յոր

խորա

խորագունեղապէս. և անուշագունեղապէս
ներմոի, կարի յոյժ հաճոյացաւ. և ընդու-
նելի եղև փեսայի իմում. քանզի հաճեցաւ
նա 'ի քուն իմ։

ըն 4. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք եՏմի
'ի զօրութիւնս. և յուժգնութիւնս յան-
դաստանի. եթէ յառնիցէք, զարթուսջիք
զսէրն, մինչև կամեսցի. Լատիներէն այս
պէս է. երդմնեցուցանեմ զձեզ դստերք
եՏմի. զի մի յարուցանիցէք. և մի զարթու-
ցանիցէք զսիրեցեալն, մինչև ինքն կամիցի.
մեկ Փեսայն երկնաւոր հաճեցեալ 'ի քուն հար
սին, այսինքն 'ի խոկմունս կարմրացեալս
սիրով. 'ի խնդութիւնս. և 'ի բերկրութեա
նորին, զորս նա մտեալ 'ի քուն հանգստա
ւոր վայելէ. երդմնեցուցմամբ արգելու
զընտանիս, զի մի շշնջաւ. և հնչիւնիւ իւ
րեանց անհանգստացուցանիցեն. և ընդոս
տուցանիցեն զնա, այսինքն զի մի անխոհե
մութեամբ իւրեանց խափանիցեն զհանգս
տութիւն նորա, այլ թողլ տայցեն, մինչև
ինքն խոհեմաբար կամիցի յառնել 'ի քնոյ.
հարսն յետ բաւականապէս քնելոյն, յառ
նէ. և գնայ առ սովորական պաշտօնս իւրս
հոգալոյ զյանձնեցեալս ինքեան. բայց ոչ
գնայ միայն. և թողց սիրեցելոյ իւրոյ, ոչ
յառաջ. այլ ներյեցեալ 'ի վերայ սիրեցե
լոյ իւրոյ. քանզի արդ փեսայն երկնաւոր
ահեկաւ իւրով անպակաս ամրացուցանէ

զնա.

զնա. և մշտնջենաւորապէս աջով իւրով
ընդգրկէ զնա. և բերկրեցուցանէ. որ զնա
կազդուրէր. և զուարճացուցանէր 'ի խոր
հրդական քնոյ. նոյնն զնա կարողացուցա
նէ. և հրճուեցուցանէ 'ի յառաջադնացու
թեան իւրակութեանց. ուստի ընկերակիցք
նորա հիացեալք 'ի վերայ անսովոր խնդու
թեանց. և ուրախութեանց նորա, և զար
մացեալք 'ի վերայ նորոգութեան իւր. ա
ղաղակեն.

5. Ո՞վ է սա, որ ելանէ սպիտակացեալ. ըն
յեցեալ յեղբօրորդին իւր. 'ի ներքոյ խնձո
րոյ զարթուցի զքեզ. անդ երկնեաց զք
քեզ մայր քո. անդ երկնեցաւ, որ ծնաւ
զքեզ. Լատիններէն այսպէս է. ո՞վ է սա,
որ ելանէ յանապատէ, առատացեալ բեր
կրութեամբք, ներյեցեալ 'ի վերայ սիրե
ցելոյ իւրոյ. 'ի ներքոյ ծառոյ խնձորենւոյ
յարուցի զքեզ. անդ ապականեցաւ մայր
քո, անդ խախտեցաւ ծնող քո.

Ընկերակիցք հարսին զայս դիտեն ասել. մէկ
ո՞վ է սա, որ զարդարեցեալ այնքան հիա
նալի պարգևօք հոգևորօք, պայծառաց
եալ այնքան զարմանալի փայլմամբ սրբու
թեան, զուարթացեալ մեծաւ զգաստու
թեամբ, սպիտակացեալ 'ի վեր քան զձիւն
պայծառութեամբ շնորհաց. և առաքինու
թեանց, ճոխացեալ. և փարթամացեալ յոգ
նախումբ արդեամբք, 'ի յանապատէ այսր
աշխարհի.

աշխարհի․ և 'ի յամուլ մարդկային բնութենէ ուղղագունեղապէս, արագագունեղապէս, և բերկրականագունեղապէս ելանէ 'ի վեր առ երկնայինս, առ ծոց հօր յաւիտենականի, առատացեալ բերկրութեամբք ներքնովք, և արտաքնովք ներյեցեալ 'ի վերայ սիրեցելոյ իւրոյ, որ տարածեալ զբազուկս մարդկութեան․ և ածութեան իւրոյ, ընկալեալ․ և ընդգրկեալ է զնա․ և ամրացուցեալ զնա զօրութեամբ բազկաց իւրոց, դրէթէ կառօք վերացուցանէ զնա․ և 'ի վեր բարձրացուցանէ զնա։ ուստի նա վերացեալ մօտք առ ած․ և յափշտակեցեալ 'ի սէր նորա հրձուլի․ և բերկրի ասելով․ սիրտ իմ․ և մարմին իմ, նա և 'ի մէջ աշխատանաց․ և ցաւոց, և 'ի տապոջ հոգոց, ցնծացան առ ած կենդանի։ առ այսօսիկ ընտիր, և ազնիւ գովս հարսի, փեսայն երկնաւոր, վասն ստուգագոյն ապահովացուցանելոյ զնա․ և վասն հաստատագոյն ամրացուցանելոյ զխոնարհութիւն նորա, մինչ գնան 'ի միասին․ և ձեռն 'ի ձեռամբանք սիրոյ, այսինքն յափշտակին 'ի սէր իրերաց, ասէ․ լիս, սիրեցեալ իմ, զորքան գովս զքեզ քարոզիցեն։ բայց դու տակաւին մեծագոյն ես քան զամ մարդկային գով․ սակայն զգոյշ լեր, զի մի յառկացուցանիցես, և սեպհականեցես քեզ նա և զգոյշն լինչ զամ գովեստ,

զոր

զոր բոլոր ինձ առատրել պարտիս, յորմէ-
միայնոյ են քեզ այսոքիկ ամենեքեան, ոմ
խոստովանին ։ և վկայեն աղաղակելով նա
և ինքեանք այնոքիկ քոյք ընկերակիցք,
մինչ ասեն ։ Թէ դու առատացեալ բեր
կրութեամբք ելանես 'ի վեր, ոչ զօրու
թեամբք քովք ։ այլ իմովք ։ ոչ արդեամբք
քովք, այլ պարգևօք ։ և շնորհօք իմովք ։
ոչ հնարագիտութեամբ քով ։ այլ կարո
ղութեամբ, իմաստութեամբ, և բարու
թեամբ իմով ։ ոչ 'ի վերայ քո, այլ 'ի վե
րայ իմ միոյ ներյեցեալ ։ դու առաւել կա
խեալ կաս յինէն 'ի յամենեսին ։ և ընդ ա
մենեսին, քանթէ կախեալք իցեն շատա
ւիղք ։ և լոյս 'ի յարեգականէ, անդամք 'ի
մարմնոյ ։ և մարմին 'ի հոգւոյ, 'ի պահման ։
'ի յաճման ։ և 'ի գործարարութեան իւր
եանց ։ վասն զի 'ի քէն զոչ ինչ ունիս, ե
թէ ոչ զթշուառութիւն, զչարութիւն ։
և զաղտեղութիւնս ։ վասն որոյ զայս ճա
նաչումն, որով ճանաչիցես զքեզ ոչ ինչ
և 'ի միասին զխոստովանութիւն, որով խոս
տովանիցիս զշնորհս իմ, բոլորով սրտիւ
յանձնեմ քեզ փոխանակ առաջնոյ հիման
վասն հաստատելոյ ։ և հիմնելոյ քեզ զեր
ջանկութիւն ։ Նաև զի այս 'ի սրտի քում
խորագոյն ներսևաւիցի, յաճախապէս վե
րայիշեա զսկիզբն, և զառիթ սիրոյ մերոյ
և զորպիսութիւնս տեղւոյ ։ և անձին, ընկե
րակիցք

րակիցք քո աղաղակեն զքեզ ելեալ գոլ
'ի յանապատէ. և է յոյժ ճշմարիտ. քան
զի. եթէ ունիս 'ի մտի քում, ոչ 'ի պար
տիզի, կամ մրգարանի խմում, այլ 'ի տեղ
ւոջ սոսկացման. և լայնատարած անապա
տի, 'ի ներքոյ ծառոյ խնձորենւոյ յարու
ցի զքեզ 'ի մահուանէ առ կեանս, 'ի տկա
րութենէ առ առողջութիւն, 'ի թշուա
ռութեանց առ բերկրութիւնս, 'ի զազ
րութեանց առ գահ թագաւորութեան.
անդ, այսինքն 'ի ներքոյ այնր ծառոյ, ա
պականեցաւ, և խախտեցաւ մայր քո, և
մերձակայ, որ զքեզ ծնեցոյց. և հեռա
ւոր, այսինքն եւա, որ արտադրեաց զքեզ
'ի ծնօղս քոյս. վասն զի նա ապականեցաւ
մահաբեր թունով օձին, մեղօք անցաւո
րութեան ա՟ծայնոյ պատուիրանի, որով
նա և համայնք յետագայք նորա շաղախին,
ապականեին. և սպանեին. ոչ միայն ժամա
նակաւոր ապականութեամբ. և սպանմամբ
մարմնոյ, այլ և յաւիտենականաւ սպան
մամբ հոգւոյ. որում նա և այժմ սորա
դրեցեալ մնայիր. եթէ ոչ ես նախախնա
մեալ էի. և արեամբ. և մահուամբ իմով
'ի նման ծառոյ յարուցեալ էի զքեզ. անդ
երկնեաց զքեզ մայր քո հանդերձ ապակա
նութեամբ. ուրեմն յիշեա զվատթարու
թիւն սեռի քոյ. յիշեա զքեզ գոլ գի
ղացի. և դուստր հովուաց, որք սովորե

ցան բնակել 'ի գեղջս. և 'ի տեղիս անապատա
ցեալս, ուր երկիր է ջերմագոյն. և զի իցեն
ընդ հովանեաւ, սովորեցան նստիլ. նմ ջեղ
և ստանալ շաւիղս 'ի ներքոյ ծառոց. ար-
գուրեան յիշեա. և խորհեաց, թէ 'ի յոր
քան ցած. և խոնարհ տեղւոջէ վերացեալ
իցես 'ի յայնքան վսեմութիւն. և պայծա
ռութիւն 'ի ձեռն իմ, այսինքն ինև։
6. Դիր զիս իբրև զկնիք 'ի վերայ սրտի ըն
քո։ իբրև զմատանի 'ի վերայ բազկի քո.
վասն զի հզօր է իբրև զմահ սէր։ և խիստ
իբրև զդժոխս նախանձ. թևք նորա իբրև
զթև բոցոյ. և հրոյ։ ‖ Ատեներէն այսպէս
է. դիր զիս իբրև զկնիք 'ի վերայ սրտի
քո, իբրև զկնիք 'ի վերայ բազկի քո.
քանզի հզօր է իբրև զմահ սիրումն, խիստ
իբրև զդժոխս նախանձաւորութիւն. ղամ-
բարք նորա, ղամբարք հրոյ, և բոցոյ.
Այսպէս դնէ խօսիլ փեսայն երկնաւոր. ձե կ
դիր զիս իբրև զկնիք, այսինքն հանգոյն
կնքոյ, կամ դրոշմի, կամ այլոյ նշանի յիշե
ցուցողականի, 'ի վերայ սրտի քո, և 'ի վե
րայ բազկի քո։ զպատկեր իմ քանդակե
ցեալ 'ի լանջանցս, և 'ի բազկանցս առ
լանջ. և առ բազուկս առկախեցեալս,
տար անպակաս 'ի յիշատակ իմ։ արա, զի
համայնք մտածմունք, և խորհուրդք քոյք
համայնք սէրք, և փափագք քոյք, համայնք
բանք, և խօսք քոյք, և համայնք արարմունք

և գործք քոյք, այնպէս զիս մին երևեցուցանիցեն. և ինձ միում աղբեր. և հեղինակի այնքան բարեաց, զորս քեզ շնորհեալ եմ, նուիրեցին. և սեպհականիցին, որպէս թէ պատկեր, կամ կնիք իմ, զիս բարեպէս երևեցուցանող. իցէ ներտպեցեալ իւրաքանչիւրոց. արա, զի անպակաս յիշեցես զիս. և այնպէս ունիցիս զիս 'ի մտի քում, որպէս թէ կերպարան իմ անպակաս իցէ առաջի աչաց քոց. արա, զի ունիցիս զձև իմ 'ի յիղձս. և 'ի գործառութիւնս քոյս ամենայնս. արա, զի ունիցիս զկերպարան իմ, ոչ միայն 'ի խոկմունս, և 'ի յաղօթս, այլ և 'ի յամ գործս. և 'ի կենցաղավարութիւնս արտաքինս. արա, զի նշան իմ 'ի քեզ այնպէս սևեռիցի, որպէս սովոր են կնքել. և գրոշմել նշանաւ տեարց իւրոց խաշինք. և ծառայք. ներտպեա ըզ կերպարան իմ 'ի սրտի քում. և 'ի բազուկս քոյս, հանգոյն սիրողաց. որք զնշանս այնցիկ, զորս սիրեն սաստկապէս, ներդրոշմեն. և ներքանդակեն 'ի վերայ սրտի, կամ 'ի վերայ բազկաց իւրոց, զի այսու վկայեցեն զսէր, զոր ունին առ նոսա. և զնոսա ունիցին գրեթէ ներկայս ինքեանց. զայս դիտեմ քեզ զեկուցանել կամիմ, զի զքեզ բոլոր ներքոյ. և արտաքոյ տայցես ինձ, իբրև զաղախին տն քում. և արդ իբրև զհարս փեսայի քում, բոլորովին հնազանդելով

զանդերլով ա̃մ ակնարկութեանց իմոց. և
կատարելով զա̃մ հաճոյսն իմ. կամիմ, զի
յայտնապէս առաջի ա̃մ մարդկան. և ա̃մ
արարածոց ցուցանիցես. և երևեցուցանի
ցես զքեզ այդպիսի. կամիմ, զի յայտնի
ցես, թէ դու բոլոր իմ ես. և միայն իմ
ես. կամիմ, զի զքեզ բոլոր. և զա̃մ իրս,
որք 'ի քեզ գտանին, առ իս միայն վերա
բերիցես. կամիմ, զի ջանայցես ունիլ ընդ
իս չկատարելագունեղ նմանութիւն ըստ
ամենից իրաց ներքնոց. և արտաքնոց, որ
պիսի գտանի 'ի մէջ կնքոյ. և իրի կնքե
լոյ. նմանութիւնս այս սկսանի 'ի բնակա
նս, բայց աճի. և կատարի 'ի ձեռն բնա
զանցականաց. և մանաւանդ 'ի ձեռն ներ
քսագունեղի զուգակցութեան սիրոյ. և
'ի ձեռն որ անտի բղխէ, համակերպու
թեան ընդ ա̃մ իրս վարուց. ենչանաց.
ողղան, խաչի, բևեռաց, գանից, տիգի,
փշոց, անարգանաց. և նախատանաց. որք
որպէս եղեն իմք, այսպէս տենչամ, զի
լիցին քոյք նշանք. քանզի է հզօր իբրև
զմահ սէր. զայս գիտեմ ասել. գիտեմ,
զի խօսիմ զիրս խիստս. և դժուարս. բայց
սիրողի ոչ ինչ խիստ. և ոչ ինչ դժուար.
զի այս է բնութիւն. թէութիւն. և որ
պիսութիւն սիրոյ, զի իցէ հզօր իբրև զմ
մահ. ասէ ս̃ն օգոստինոս. լինի ընդդի
մութիւն հրոյ, լինի ընդդիմութիւն ա

լեաց.

լեաց, որոյ, արքայից, իշխանութեանց· գայ մին մաՀ, ո՜վ նմա ընդդիմանայ, ոչ ինչ է Հզօրագոյն քան զնա· վասն այնորիկ ուժից նորա սէրն բաղդատի· զի և նա սպանանէ, որ եղաք, զի լինիցիմք, որ ոչ էաք· սէրն քարոզի Հզօրագունեղ· զի բառնայ 'ի մէնջ զմ̃մ կեցութիւն, որ է յուլի, մարմնական· և աշխարՀական· շարաբառնայ զմեղս, մաՀացուցանէ զարմատս մեղաց, զցանկութիւնս· և զանկարգ ախտս 'ի բաց ձգէ· և բացամերժէ զիրս, որք ածեն առ մեղս· տարագրէ· և վերաՀատանէ, որք արգելուն զմեծագոյն բարին եթէ Համդիպեցի իր ինչ խիստ, թախանձիւ· և տաժանէչ, 'ի Համբերութիւն սիրեցելոյ կլանէ, պարտէ· և յաղթաՀարէ· զի լինիցի նմանագունեղ սիրեցելոյ, յօժար է յա՛ձնառնուլ զմ̃մ նեղութիւնս· և զմ̃մ աշխատանս· նա և զինքն երջանիկ մաՀոճամբ գրեթէ սպանանէ, մինչ զսիրտ 'ի յատուկ մարմնոյ անդրաբերէ 'ի յայլական թէ ոչ իրօք, ստուգապէս ըղձիւ· առաւել· և լաւագոյն կեցող 'ի սիրեցելումն, քան 'ի սիրողի· որպէս ասէր պղատոն· ուստի ասէ վէսայն երկնաւոր· ո՜վ սիրեցեալ իմ, ուրեմն և ոչ քեզ լիցի խիստ այսուՀետև այսպէս մեռանիլ· որ արդ թողեր ձնուլ ընդ իշխանութեամբ քով· ոչ լիցի քեզ խիստ մեռանիլ քեզ· և կէալ ինձ միում·

և

և միայնում, որում զքեզ բոլոր հնազան
դեցուցեր․ և ծառայեցուցեր 'ի յամենայ
նում իբրև․ ոչ լիցի քեզ խիստ նմանեցուցա
նել․ և կատարելապէս համակերպել զքեզ
ինձ միում․ քանզի կատարեալ սիրումն
այսպէս համօզէ, այսպէս հրամայէ․ և այս
պէս ստիպէ․ զնոյն ինչ ստիպէ նա և նա
խանձաւորութիւն, որ կամ է սաստիկ
սէր․ կամ սաստիկ ներգործութիւն, կամ
գործ սիրոյ, որ ասի նախանձ․ և է յոյժ
մեծ տրտմութիւն, կամ ցաւ զմտասուց,
կամ զանիրաւութենէ, որ եղեալ է սիրե
ցեալ իրի, հանդերձ սաստիկ ջանիւք վրի
ժելոյ զնա, կամ բացամերժելոյ․ Իւ է
խիստ և 'ի տևելն․ և 'ի հակամարտելն․ և
'ի յըմբռնելն իբրև զդժոխ, որ ըմբռնո
ղագունեղապէս ըմբռնէ, զոր միանգամ
ընկալաւ․ և պնտագունեղապէս տանջէ
զհոգիս, ոչ գոյ ստեղծեցեալ ուժգնու
թիւն ինչ․ որ կարիցէ հանել․ և զերծու
ցանել զնոսա 'ի ժանեաց նորա․ նմանա
ըմբռնողութեամբ սէրն կատարեալ, կամ
նախանձաւորութիւն հզօրագունեղապէս
և ամրագունեղապէս ըմբռնէ զմիտ, զոր
միանգամ կալաւ․ և ընդդէմ մարմնոյ, աշ
խարհի․ և սատանայի, զի մի զմիտ տարա
մերժիցեն 'ի մնաց, է պնտագունեղ․ և
անհաշտելի թշնամի, պատժօղ, հալածօղ․
և փչրօղ զամենեսեան․ և ոչ գոյ ստեղծեցեալ
ուժ-

ուժ լինչ. որ կարիցէ 'ի նմանէ չկամեցողէ
մերկացուցանել զայնքան գանձ։ Նախան
ձաւորութիւն նա և յայնմիկ է նման դժո
խոյ, զի տապ. և հուր երկաքանչիւրոյ որ
պէս է սաստիկ. և շարունակ. և մշտնջե
նաւոր, այսպէս լինի անյագ. և թէպէտ
զա՟մ իրս բոցակիզիցէ. և 'ի յինքն դարձու
ցանիցէ. և իւրեան նմանեցուցանիցէ, սա
կայն ոչ երբեք դադարի 'ի յառաւելագոյն
կիզմանէ. ուրեմն նոյն լիցի որպիսութիւն
սիրոյ. և նախանձաւորութեան քոյ, զի 'ի
կատարեալ նմանեցուցման իմ ոչ երբեք
նքտիցիս, ոչ երբեք յագիցիս. զամբարք,
կամ լապտերք նր՟, յս՟ սիրոյ են զամբարք
հրոյ. և բոցոյ, կամ բոցոյ այ՟, այսինքն.
մանաւանդապէս. և սաստկագունեղապէս
կիզօղք. ջերմացուցանօղք, լուսատուք,
այնքանոյ ուժգնութեան. թէ ո՛չ միայն
պարտեն զբոցս ցանկութեան. և ատելու
թեան, կամ սիրոյ աշխարհայնոյ, այլ և
յաղթեն. և մարեն զհրդեհմունս դժոխոյ
և բարկութեան այ՟։

ըն 7. „Ջուրք բազումք ո՛չ կարեն շիջուցա
նել զսէր. և գետք ո՛չ արգելցեն զնա.
եթէ տայցէ այր զա՟մ զկեանս իւր 'ի սէր
արհամարհանօք անգոսնեսցեն զնա. Լա
տիներէն այսպէս է. Ջուրք բազումք ո՛չ
կարասցեն շիջուցանել զսէր. և ո՛չ գետք
ամփոփեսցեն զնա. եթէ տայցէ մարդ

զա՟մ

զա՛մ ինչս տան իւրոյ վասն սիրոյ, իբրև
զոչ ինչ անգոսնեսցէ զնոսա։

Բ.յս իմացումն լինի. Ջուրք փորձութեանց, մէ.կ
հալածանաց, անձկութեանց. և տառապա
նաց, որք էին յոյժ բազումք, ոչ կարա
ցին երբեք շիջուցանել զսէրն կատարեալ.
բայց և ոչ ամբողջք գետք ա՛մ հակառա
կութեանց ամփոփեսցեն զնա, կամ զբոց
նորա, մինչ չկամի, մարեսցեն։ վասն զի
սէր ոչ երբէք անկանի։ այլ առաւել աճի.
և պայծառանայ հակառակութեամբք. որ
յայտ եղև 'իյոսէփ, 'իյոբ. և 'ի քս։ ուստի
ասէ փեսայն երկնաւոր. ո՛վ սիրեցեալ իմ,
վայելէ քեզ. զի սէր քո, որով սիրես զիս
լինիցի այնպիսի, այնքան հզօր. և այնքան
հաստատուն, որպէս զի ոչ երբեք ընկա
նիցեն, կամ շիջուցանիցեն զնա, կամ ցաւք
կամ տանջանք, կամ զարհուրանք, կամ
սպառնալիք, կամ պարգևք. և կամ մեծա
մեծք խոստմունք։ սէր քո, զոր ունիս
առ իս, պարտի լինիլ այնքան հզօր, զի մի
երբէք տկարանայցէ, այնքան հաստատուն
զի մի երբեք անկանիցի։ սէրն նախադա
սելի է ա՛մ իրաց։ եթէ մարդ տայցէ զա՛մ
գոյացութիւն տան իւրոյ վասն ստանալոյ
կամ պահելոյ, կամ վերաստանալոյ զսէր,
իբրև զոչ ինչ անգոսնեսցէ զայն ա՛մ գոյա
ցութիւն։ քանզի գանձս այս լաւագոյն է
քան զա՛մ գանձս. և քան զա՛մ իրս պատո
Հականագունե

ճականագունեղս. և ամ տենչալի ոչ կարէ համեմատիլ նմա, սէրն է անհուն. և անգին գանձ, քանզի որք վայելեն զնա, են մասնակիցք բարեկամութեան այ, ժառանգութեան այ. և ամ գանձուց երկնայնոց ամ կարասի տան քոյ վերահայեցմամբ առ սէրն, գրեթէ է ոչ ինչ. ուստի եթէ պիտոյանայցէ, պարտիս զնա կորուսանել վասն պահպանելոյ զսէր. միայն սէրն է գանձ քո. այս միայն զքեզ անչափապէս. և յաւիտենականապէս հարստացուսցէ. ուստի, ով սիրեցեալ հարս, ոչ պարտիս տրտմել, եթէ զքեզ ոչ հանապազ սփոփիցեմ ամ պարգևօք. և բարերարութեամբք իմովք անսովորականօք. և ոչ մշտնջենաւորապէս. և անխափան ըստ սովորութեան փոքրինչ եղբօր զիս քեզ ներկայ կացուցանիցեմ. և շարունակաբար համբուրիցեմ զքեզ. այս չէ գործ այսր ժամանակի. և ոչ աշխ այս ինձ հաճոյանայ. առաւել հաճոյանայ, զի վս սիրոյ իմոյ հրաժարեցիս նա և յայսմանէ գոյացութենէ քումմէ. և յայսցանէ բերկրութեանց քոց, զորս ոչ վասն այսորիկ առ հակիրճ ժամանակ ստորաքարշեմ 'ի քէն, զի նուաճեցի քեզ գանձ քո, այլ 'ի դիպողագոյն ժամանակ ծրարեմ. և վերապահեմ. զի հարիւրապատկեցելով տոկոսեաւ ածեցի քեզ. և մեծանայցէ փառաւոր ուրացմամբ. և յաղթութե

քո

'քո ինքեան նա եւ որքան առ պարգեւս իմ
այսոքիկ են օրէնք. եւ թէութիւնք մաքրա
գունեղի. եւ կատարելագունեղի սիրոյ, զորս
ես ամենեսին, թէ ըստ որում եմ ած,
թէ ըստ որում մարդ, դէպ 'ի քեզ 'ի յամ
ժամանակի մանրամասնաբար պահեցի. եւ
պահեցից 'ի յաւիտեան. այդպէս եւ դու,
եթէ կատարելապէս սիրես զիս, բոլոր ըն
թացիւ կենացդ քոց պահեսցես եւ դէպ 'ի
յիս, եւ դէպ 'ի յընկերս քոյս վասն սիրոյ
իմոյ, որք են եղբարք. եւ որդիք իմք։

8. Քոյր մեր փոքր. եւ ստինս ոչ ունի. զի՞նչ Բն
արասցուք քեռ մերում յաւուր յորում պատ
մեսցի նմա։ | ստինքն այսպէս է. քոյր
մեր փոքր. եւ զստինս ոչ ունի. զի՞նչ արաս
ցուք քեռ մերում յաւուր, յորժամ առ
խօսելի է։

Հարսն, որ զօրէնս զայնոսիկ ամենեսին Մեկ
արդեն խորապէս ներտպաւորեալ էր սրտի
իւրում, ապաւինեալ 'ի խոստմունս փե
սայի, վայրդնէ զզբաղական հոգ իւր
եան ինքեան. բայց փառեցեալ. եւ բոլո
քեցեալ բոցով եղբայրական սիրոյ, բոլոր
յափշտակի հոգւալ զփրկութիւն ընկերի.
եւ քանզի կողմն անկատարից, սկսանողաց
ծառայել այ, է մեծագոյն. եւ վտանգա
գոյն, նախ քան զամ իւր շտապեալ հո
գալ զկեցութիւն սոցին, ասէ. քոյր մեր,
այսինքն կոյտ ամ մանկագունից, ծառայել
այ

նոյ սկսանողաց, տակաւին փոքր է, այս
ինքն տկար է. և անզօր. և զատինս կրկնա
կի սիրոյ տակաւին չունի պարպատեցեալս
և ուռուցեալս կաթամբ իմաստութեան.
զի կարիցէ իմաստնացուցանել զինքն, կամ
զորդիս հոգևորս. տակաւին բաւականա
պէս չէ ներհմտացեալ. այլ կարօտանայ
հմտագունի ուսուցչի. հովուի. և դքսի
հոգևորի, որ զնա իմաստնացուցանիցէ.
հովուիցէ. և կառավարիցէ. զի՞նչ արաս
ցուք քեռ մերում, զի կարիցէ աճիլ, զար
գանալ, մեծանալ. և ստանալ զատինս, զի
ըմպիցէ զճշմարիտ. և զհաստատուն առա
քինութիւն. և իմաստութիւն, որով և ինքն
կատարելագործիցի. և այլք 'ի ձեռն նր̃.
զի իցէ պատրաստ պատասխանել յաւուր,
յորում առ խօսելի է այսինքն, յորժամ
առնելի է խօսակցութիւն զհարսանեաց.
քանզի դու խօսակցեսցիս ընդ նմա, 'ի
ներքուստ լուսաւորելով. և շարժելով,
զի թողեալ զայլ սիրելս, քեզ միում զինքն
բոլոր նուիրիցէ. խօսակցեսցին ընդ նմա
նա և աշխարհ, մարմին. և սատանայ. և
իւրաքանչիւրք բունաբարեսցեն զնա, զի
առնիցէ ընդ նոսա զհարսանիս. վասն որոյ
կարօտի խրատուց, ուղղման. և օգնակա
նութեան մերում. զայսմանէ հարցանեմ
զքեզ. աղաչելով. զի դու ես, որ աճեցու
ցանես. իցէ ևս պատրաստ պատասխանել
'ի

'ի յաւուր դատաստանի։

Թ․ Եթէ պարիսպ իցէ, շինեսցուք 'ի վե բն
րայ նորա մարտկոցս արծաթեղէնս․ եթէ
դուռն իցէ, յօրինեսցուք 'ի նմա տախտա
կս մայրս։ Լատիներէն այսպէս է․ եթէ
պարիսպ է․ շինեսցուք 'ի վերայ նորա ըզ
մարտկոցս արծաթեղէնս․ եթէ դուռն
է, շարայարեսցուք զնա տախտակօք նոճե
ղինօք։

Որպէս պատասխանէ փեսայն երկնա մեկ
ւոր․ եթէ քոյրն քո, զորմէ ձառեցեր․ է
պարիսպ․ այսինքն ունի զսիրտ արական,
հաստատուն կայուն, հզօր․ և ամուր․ որ
պէս զի կարիցէ իբրև զամուր պարիսպ
ընդդիմանալ վերաւազութեանց․ և որ
ձակմանց թշնամեաց․ և կարիցէ խորտա
կել զզօրութիւն նոցին, բացամերժելով
զնոսա 'ի յինքենէ, և 'ի յայլոց․ շինեսցուք
'ի վերայ նորա զմարտկոցս․ և զպատերազ
մանոցս արծաթեղէնս, այսինքն ամրացուս
ցուք զնա հզօր․ և ընտիր առաքինութեց
ամրոցիւք, որովք հզօրացեալ պահպանի
ցէ զինքն․ և զիւրս ապահովաբար, մենա
մարտիցի ընդդէմ թշնամեաց քաջապէս․
և յաղթահարիցէ զնոսա հզօրեղապէս։
բայց եթէ չունի զամրութիւն պարսպի․
և չէ քաջասիրտ․ այլ նմանի դրան, ընդ
որ բազումք կարեն անցանել․ և որ բա
ցեալ է ամենեցուն․ և որ հաղիւ կարէ
տանիլ

տանիլ զպահպանութիւն միոյ տան իւրոյ. չարայարեսցուք, և փակեսցուք զնա հզօրք, և ընտիր տախտակօք նոճեղինօք ածայնոյ երկիւղի. և խոհեմութեան. և այսպէս ամրացուսցուք. և ցանկեսցուք զտկարն. և զդիւրաբեկն. և հեռացուսցուք զառիթս փախչելոյ, մոլորելոյ, կամ սահելոյ 'ի ձեռս թշնամեաց. 'ի յասացելոցն երևի, թէ փեսայն երկնաւոր համոզէ, զի 'ի յառաջացուցանելն զփրկութիւն. և զկատարելութիւն ընկերաց, հայեցիմք 'ի խելահասութիւն, 'ի հանճարեղութիւն, 'ի քանքար. և 'ի զօրութիւն իւրաքանչիւրոյ. և խոհեմաբար յարմարեսցուք նմա զհոգևոր ներհմտութիւն.

բն 10. Ես պարիսպ. և ստինք իմ իբրև զաշտարակ: ես յաչս նորա իբրև գտեալ խաղաղութիւն. Յունարէնն այսպէս է. Ես պարիսպ. և ստինք իմ իբրև զաշտարակ. յորժամ եղեալ եմ առաջի նորա իբրև գտող զխաղաղութիւն:

մեկ Հարսն լուեալ զխրատ փեսայի, առժամայն համախորհէ օրինակաւ իւրով. զի ասէ. եղէ ես երբեմն. և արդ իսկ եմ պարիսպ: քանզի թէպէտ իցեմ տկար. և դիւրաբեկ բնութեամբ, սակայն եղեալ եմ քաջասիրտ 'ի ձեռն առատ շնորհացն ածոյ. քանզի շնորհք ածայինք արարեալ են զիս պարիսպ ընդդէմ հնարից սատանայի. և ամրացուցեալք են զիս ընդդէմ մեղաց.

մեղաց։ ոչ միայն շրջապատեցեալ եմ պարս
պօք Ած-այնոց շնորհաց. այլ և ունիմ յիս
զազնուագունեղ. և զբարձրագունեղ աշ
տարակս երկու։ զի երկու ստինք իմ են
երկու ամրոց։ զի են իբրև զաշտարակ
դաւթի, որ շինեցեալ է հանդերձ մարտ
կոցիւք. և յորում կախեալք են հազար
վահանք. և ամ նետք, և ամ սպառազինու
թիւնք զօրաւորաց։ երկու ստինք իմ են
երկնակ սէրն իմ, որով սիրեմ զԱծ. և
զընկեր վասն այ։ երկու սէրք իմ են ամ
րոց, աշտարակ. և մարտկոց. զի ամրացու
ցանեն ընդդէմ թշնամեաց, զօրացուցա
նեն ընդդէմ ախտից. և ապրեցուցանեն
զիս 'ի մահուանէ մեղաց, որք կարեն լի
նիլ ընդդէմ այ. և ընկերի։ վահանք, նետք
և սպառազինութիւնք իմք, են առաքինու
թիւնք իմք, որք ընկերակցեցեալք են
ընդ սիրոյ իմոյ։ դարձեալ երկու ստինք
իմք փափկագունեղք. և կակղագունեղք,
են իմաստութիւն իմ. և ուղղութիւն իմ
այսինքն սրբութիւն. և արդարութիւն
իմ, որովք զովանայ միտ իմ. և բերկրի
սիրտ իմ. և որովք զովացուցանեմ զմիտս,
և բերկրեցուցանեմ զսիրտս նա և այլոց։
որքա սանն ամրոց, աշտարակ. և մարտկոց
զի ամրացուցանեն, զօրացուցանեն. և կե
ցուցանեն զիս։ վահանք, և սպառազինու
թիւնք են առաքինութիւնք, և պարգևք,
որք

որք ներկերպաւորեն. և զարդարեն զմիտ-
և զկամս իմ. զզօրութիւնս զայս պարգե-
ւեաց ինձ փեսայն իմ երկնաւոր. յորմէ ե-
ղէ առաջի նորա գրեթէ գտանող զխա-
ղաղութիւն, զայս դիտեմ ասել. յորժամ
հարսնացայ խաղաղասէր սողոմոնի միջնոր-
դութեամբ շնորհաց. և պարգևաց նորին.
և ես եղէ խաղաղասէր. համդերձ ընտիր
շնորհիւ նորին 'ի միասին համդիպեցան
ինձ համայնք այլք բարիք.

Բն 11. Այգի եղև սաղօմոնի 'ի բեեղմաւոն.
ետ զայգի իւր ցպահապանսն. բերցէ այր
իւրաքանչիւր 'ի պտղոյ իւրմէ հազարս ար-
ծաթոյ. Լատիներէն այսպէս է. այգի
եղև խաղաղարարի 'ի յայնմիկ, որ ունի ըղ
ժողովուրդս. ետ զնա ցպահապանսն. այր
առբերէ փոխանակ պտղոյ նորա զհազար
արծաթեղէնս.

Մեկ Հարսն այսպէս խօսիլ դիտէ. այգի եղև
սողոմոնի, այսինքն խաղաղարար արքայի,
'ի բաալհամօն, որ նշանակէ զտէր ժողո-
վրդոց, այսինքն զնա, որ ունի ընդ ինք-
եամբ զժողովուրդս. արդ է անուն տե-
ղւոյ, կամ այգեստանի ոչ հեռի 'ի յերուսա-
ղէմէ, որ այլապէս ենգադդի ասիւր,
որ էր հռչակաւորագունեղ 'ի մէջ այգեաց.
և պարարտագունեղ առ ի պտղաբերելոյ
զպալսամին. զայս այգին իւր ետ ոմանց
մշակաց, զի գործիցեն զնա. և պահապա-
նաց

նաց, զի պահիցեն զնա. իսկ ինձ իբրև վերակացուն 'ի մէջ այլոց այգեաց եւ զայս զի կառավարիցեմ զնա հոգաբարձութե եղականաւ. այգիս այս է մեծ. և պարարտ և պտղաբեր ազնուագունեղի գինւոյ, քանզի այր, այսինքն այգեգործ, որ վարձեաց զնա, 'ի յամ ամի փոխանակ պտղոյ նորա, զոր անտի հաւաքէ, տուբերէ զհազար սկեղս արծաթեղէնս. և բաց 'ի յայսցանէ, տայ ևս զայլս երկերիւրս արծաթեղէնս այսոցիկ, որք պահպանեն զայգի այգիս այս, որ է այնքան ազնիւ, այնքան պարարտ. և այնքան սիրական երկնաւոր սողոմոնի. այսինքն խաղաղասէր արքայինյն, է յատուկ հոգին իւրաքանչիւրոյ. կամ հոգիք, որք յանձնեցեալք են հովուաց, կամ քրիստոնէական եկեղեցի. եթէ բարեպէս գործիցի այգիս այս, բերէ ըզպտուղ ոչ միայն տասնապատիկ, որ է մեծ կամ հարիւրապատիկ, որ է մեծագունեղ. այլ և հազարապատիկ, որ յաղթէ զամ համարումն.

12. Այգի իմ ինձ առաջի իմ. հազարք բն
սաղոմոնի. և երկերիւրք, որոց պահեն ըզ
պտուղ նորա. Լատիներէն այսպէս է.
այգի իմ առաջի իմ է. հազարք քո խաղա
ղարարի. և երկերիւրք այսոցիկ, որք պահ
պանեն զպտուղս նորա.

Յարան հեռաւի խօսիլ. այգիս այս ոչ ար մեկ
համարհեսցի.

համարձեացի, ոչ թողցի. և ոչ անփոյթ ա-
րարացի, որպէս 'ի մօտոյ պատմեցաւ զայն
մանէ միւսոյ, զոր ոչ պահեցի. այլ հանա
պազ է առաջի իմ. և հանապազ ունիմ զնա
առաջի աչաց իմոց, զի հոգայցեմ զնա
ծրագունեղապէս գործիլ. բոլոր անսամ
այսմիկ գործոյ, զմիտ իմ ոչ շրջեմ առ
այլ ինչ, ակն վերակացուէիս պարարեսցէ
զերկիր, զի զառատագոյն. և զգերազան
ցագոյն պտուղս բերիցէ. սակայն ո՛վ սի
րեցեալդ իմ. կամիմ, զի գիտիցես, թէ
ես ստանօր ոչ սահմանեցի առնել զիր
ինչ պատճառաւ շահուց, թէպէտ իրա
ւամբ. և հաճոյիւք քովք կարիցեմ. այլ
սահմանեցի, զի զոր ինչ առնիցեմ, առնի
ցեմ վասն սիրոյ քո միոյ. և միայնոյ. ու
րեմն կամիմ, զի համայնք. և ամբողջք
պտուղք լինիցին քեզ հազար արծաթե
ղէնք, զորս վաճառիչ այգւոյ յամ ամի տայ.
այսինքն, նախապետական. և նախնական
ռոճիկք մինչև 'ի յետին նաքարականն. ոչ
խաղաղարար, իցեն քոյք, 'ի փառս. և գո
վեստ քո միոյ. իսկ այլք երկերիւրք, այս
ինքն երկրորդական. և մատչական ռո
ճիկք տուիցեն այսոցիկ, որք 'ի գործելն,
և 'ի պահելն զայգին օգնեցին ինձ. ոչ կա
միմ, զի ոք գողանայցէ, յափշտակիցէ, և
խլիցէ զայն, որ քեզ արժելի է. ինձ զոչ ինչ
այլ վարձ խնդրեմ բաց 'ի քէն միոջէ. և

զի ծառայեցեմ քեզ. հաճոյանայցեմ քեզ.
և պտղաբերիցեմ քեզ։ այս մին լի է ինձ
և հաճոյագոյն, և անուշագոյն. և յոյժ պա
տուականագոյն քան զամ գանձս երկնի.
և երկրի։ ուրեմն զի առնիցեմ քեզ միում
զիր հաճոյագունեղ. ըստ կարողութեան
իմում գործեցից առաքինութեամբք զհո
գի իմ. և զհոգիս 'ի քէն ինձ յանձնեցելալս
արարից զայս ոչ վասն այլոյ իրի, եթէ ոչ
զի զքեզ սփոփիցեմ. և զքեզ բերկրեցու
ցանիցեմ, որ ես միայնակ վարձ, գին. և
երանութիւն իմ.

13. Որ նստիս 'ի պարտէզս, այլք ան բն
սան քեզ. զձայն քո լսելի արա ինձ. Լա
տիններէն այսպէս է. որ բնակեսդ 'ի պար
տէզս. բարեկամք ունկնդիրք լինին. արա
զիս լսել զձայն քո.

փեսայն երկնաւոր կարի յոյժ սփոփեցեալ մ. կ
այնքան ազնիւ վերոյիշեցելով ջանիւ հար
սին իւրեան միում աշխատելոյ. և հաճոյա
նալոյ, դիտէ այսպէս առ նա խօսիլ. թէ
պէտ դիտես ինձ միում աշխատիլ. և հա
ճոյանալ. սակայն այսու ինքեամբ հաճոյա
նաս բազմաց, նա և ամենից, որք են 'ի յեր
կինս, և 'ի յերկրի. և աշխատան քո է սի
րելագոյն. և հաճոյագոյն ամենեցուն։ ու
րեմն ով սիրական իմ. որ արդ բոլոր բնա
կիս 'ի հոգևոր պարտէզս. և անպակաս հո
սես զքրտունս 'ի գործեն զնոսա, գնա

յառաջ քաջապէս։ Եւ առաջացո՛ հզօրեղապէս, բարեկամք քոյք ամենեքեան եւ երկնայինք։ Եւ երկրաւորք 'ի միասին ընդ իս ունկնդիրք լինին, միթէ իցէ 'ի քէն նոր ինչ։ փափագելի զարդացման։ Եւ առաջացման քում, ուրախանան 'ի վերայ բարեաց քոց, ծափս հարկանեն վասն յաղթութեց, վասն աւարաց։ Եւ վասն յաղթանակաց քոց ուրեմն մինչ առքա ունկնդիրք լինին։ Եւ ծափս հարկանեն, արա զիս վերստին։ Եւ յաճախագոյն լսել զնոյն ձայն քո, զոր արդ լուայ, եւ զյոլովս նմանս ձայնս արժանիս քո, արժանիս հրեշտակաց, արժանիս այ, զձայնս մաքրագունեղի դիտաւորութեան ջերմեռանդագունեղի սիրոյ, հաստատագունեղի գովասանաց, եւ շնորհակալութեց, զձայնս խոնարհագունեղի խոստովանութե, յատկականի թշուառութեան, աղքատութեան։ Եւ ոչընչութեան քո։ զձայնս սաս պագունեղից աղաչանաց։ Եւ մաղթանաց, վասն քո, վասն ընկերի։ Եւ վասն բոլոր աշխարհի։ զձայնս ամբողջագունեղի հպատակութեան ակնարկութեանց։ Եւ հրամաննաց իմոց։ զձայնս զքեզ բոլոր ինձ յանձն առնելոյ, զձայնս զուարթագունեղի քարոզութեան բանին այ։ Եւ ներհմտացուցման ընկերի։ զձայնս կատարելագունեղի հնազանդութեան եւ ինձ։ Եւ այլոց վասն իմ։ զձայնս փափագեցելագունեղի համա-

հաւանութեան 'ի կատարումն ամուսնու-
թեան մերոյ հոգւորի առաջին բարեկա-
մաց, որք են ներկայք, զի լինիցին վկայք
վերջապէս զձայս լիագունեղի ուրախու-
թեան. և ցնծութեան 'ի վերայ անհուն
բարութեան իմոյ. և 'ի վերայ բարութե-
քոյ յիս։

14. Փախիր եղբօրորդի իմ. և նմանեաց բն
այծեմանց. կամ որթուց եղանց 'ի վերայ
լերանց խնկաբերաց ։ ‖ ատիներէն այսպէս
է. փախեր սիրեցեալ իմ. և նմանեաց այ
ծեման. և որթու եղանց 'ի վերայ լերանց
խնկոց.

Զարմն առժամայն հնազանդի. և շուտով մեկ
հատուցանէ զհաձոյագունեղ. և զքաղց
րագունեղ ձայն փեսայի խնդրողի. որ
զոր արդէն ասացեալ ձայնս ներ իւրեան
պարփակէ. և պարունակէ գերազանցապէս
զի ասէ. ով սիրեցեալ իմ. որ ես կեանք.
և ձանապարհ իմ. զի կեցուցանես. և ա-
ռաջնորդես. փախիր, ոչ թողլով զիս, որ
թարց քո զոչ ինչ կարեմ, զոչ ինչ ես կա
միմ. այլ զանսովոր պարգևս քոյս ինձ սոր
րաքարչելով. և առ այլս յարաբերելով ար
ժանաւորագոյնս քան զիս, առ լերինս խն
կոց, բարձունս, պտղաբերս. և զանուշա
հոտութիւն բուրօղս. կամ, եթէ առա
ւել կամիս, 'ի միասին ընդ իս փախիր առ
ատեղի առաւել բերկրական, ծածուկ,
մերձաւոր

մերձաւոր երկնից, և յարմար աղօթից. և
խոկման. այսինքն առ յատակ հոգւոյ իմոյ
որ է բարձրագոյն քան զամ լերինս. և
ազնուագոյն քան զամ խունկս. անդ զիս
բոլոր բոլորապէս տամ քեզ, առ զուգակ
ցեմ՝ քեզ ՚ի յաւիտեան զսիրեցեալն սիրեցե
լոյ, զհարսն փեսայի։ բայց և դիմեա նա
և առ այլս հօտս քոյս, որք ՚ի լերինս քոյս
հովուէին, և սփոփեա. և զուարճացո զնո
ներկայութեամբ. և պարգևօք քովք։ Սու
արագագունեղապէս փախիր առ այլս. և
վերստին դարձիր առ մեզ, հանգոյն այ
ծեման. և որթու եղանց։ զայս դիտեմ
ասել. լիցի ինձ հաճոյագունեղ. և բերկ
րականագունեղ. եթէ զշնորհս. և զպար
գևս, զորս ինձ անարժանագունեղի այն
քան առատապէս առատաձեռնես, բաշ
խեցես նա և այլոց ամենից մարդկան. բայց
նախ քան զամենեսեան այնոցիկ, որք ՚ի
քէն յանձնեցեալք են հոգաբարձութեն
իմոյ. զի ամենեքեան ՚ի միասին ընդ իս կա
տարելագունեղապէս քեզ ծառայիցեն,
հնազանդիցին, հպատակիցին. և հաճոյա
նայցեն. ամենեքեան մշտնջենաւորապէս
զքեզ գովիցեն, օրհնաբանիցեն, գովասա
նիցեն, դրուատիցեն, փառաւորիցեն, փա
ռաբանիցեն. երգաբանիցեն. և պաշտե
ցեն. ամենեքեան զքեզ խորհիցին. և մտա
ծիցեն. և սիրիցեն. ամենեքեան զքեզ
մինչ

մինչ 'ի վեր քան զա̃մ իրս խնդրեցին, բարձրացուցանիցեն. և քարոզիցեն ամենայն ուրեք. ամենեքեան քեզ փափագիցեն, զքեզ խօսիցեն. և վասն սիրոյ քո գործիցեն. ամենեքեան որոշեցեալք 'ի յիրաց երկրայնոց աղտեղեաց. և զազրից. և եղեալք վսեմագոյնք քան զիւր մարդկայինս. և վերնագոյնք քան զա̃մ արարածս, 'ի քեզ միում ծայրագունեղի. և միայնակի բարւոք իւրում 'ի յաւիտեան համահանգիցին. համայնք քեզ սիրելագունեղք աղաւնիք, թագուհիք. և հարսունք շարունակաբար ներյենուցուն, ներբնակիցին. ենթրվլղձանիցեն 'ի բազուկս. և 'ի գիրկս կոյս։ դարձեալ ասեմ, փախիր, զի ծանուցանիցեմ, թէ դու անհասանելի ես։ վասն զի ով սիրեցեալ իմ, այնքան անչափ. և անըմբռնելի ես, թէ անհասանելի ես 'ի յա̃մ հրեշտակաց. և մարդկանց. և թէ յաղթես զա̃մ ստեղծեցեալ գիտութիւն. և զա̃մ իմացողական զօրութիւն։ 'ի վերայ այսր իրի յոյժ ուրախանամ. և հրճուեմ։ քանզի յոյժ սիրեմ զբարիս քոյս։ բայց մինչ մտածեմ. և խորհիմ զվատթարութիւն, զանարգութիւն, զցածութիւն, զտկարութիւն. և զփոքրութիւն իմ, առաքինութիւն խոնարհութեան ստիպէ զիս աղաղակել. և գոչել. փախիր, սիրեցեալ իմ, 'ի յայնքան անարգէ ձայրէ. և անարժանէ ստեղծուածոյ. հե

ռացիր

ւացեր յինէն. զի զայնքան պարգեւս ո՛չ ար
դիւնաւորիմ, ո՛չ բաւականանամ տանել.
վասն զի շնորհես առատապէս առաւել
քան զբաւականութիւն. վասն որոյ ստի
պիմ աղաղակել. բաւական է տ̃ր, բաւա
կան է. դարձեալ ասեմ փախիր, զի ծա
նուցանիցեմ, թէ յետ յարութեան քո ո՛չ
մնացեր 'ի յերկրի, այլ ելացեալ վերհամ
բարձար 'ի յերկինս, հանգոյն այծեման
թռելով 'ի վերայ լերանց խնկոց երկնայ
նոց. թռուցեալ անցեր 'ի վեր քան զա̃մ
դասս հրեշտակաց. արագապէս հասեր
յաթոռ հօր. նստար ընդ աջմէ հօր,
ուր 'ի միասին ընդ նոյնոյ հօր. և հոգւոյն
սրբոյ ընդունիս զանուշահոտ բուրումն
խնկոց երանեցելոց հրեշտակաց. և ամենից
սրբոց. անտի գալոց ես դատել զկենդա
նիս. և զմեռեալս. ո՛վ սիրեցեալ իմ, արա
զի և ես ընդ քեզ փախիցեմ 'ի յերկինս,
արդ մտօք, զկնի մահուան հոգւով, յետ
յարութեան հոգւով. և մարմնով։



Վ Ե Ր Ջ։



Այս մեկնիչ վարդապետս կարողութ՟են․ և շնորհօք ա՟յ Պատրիարգս մայրաքաղաքիս Կոստանդինուպօլսի, տեսի զմեկնութ՟իս զայս երգոյ երգոց սողոմոնի, շարադրեցեալ 'ի հաւատարիմ բարեկամէն մերմէ Խաչատուր վարդապետէ երզրումեցւոյ, և ընթերցեալ հաւանեցայ · զի գտի զնա ըստ մեկնութ՟ն սրբոց մեծաց վարդապետաց եկեղեցւոյ · վ՟ն որոյ ետու հրաման, զի տպագրեսցի ·

Ամենազօր կարողութ՟ե հօրն երկնաւորի և շնորհօքն յ՟ի · և նպաստութ՟ե ոգւոյն սրբոյ յանկելեալ աւարտեցաւ գիրքս մեկնութեն երգոյ երգոցն սողոմոնի · շարադրեցեալ 'ի խաչատուրոյ երզրումեցւոյ ա՟ծաբան վարդապետէ · ըստ մեկնութե զանազանից Վարդապետաց եկեղեցւոյ 'ի խնդրոյ ումեծին ապիկար բանասերի, վ՟ն լուծանելոյ զտարակուսութ՟ն սրտի իւրոյ · և ամենից մանկանց եկեղեցւոյ լինիլ առիթ անտարակոյս մնալոյ 'ի բանս և 'ի մեկնութ՟իս այսմ ա՟ծայնոյ մատենիս · Որ և թէպէտ գտանիւր 'ի մէջ ազգիս մերոյ, մեկնութ՟ի գրքոյս այսորեն սակայն ոչ ա՟մ ուրեք, այլ 'ի տեղիս · տեղիս և այն ևս համառօտ և նրբազգաց որոյ վ՟ն տպեցեալ եղև սա զի յա՟մ ուրեք գտանիցի, և մի ոք փափաքող սորին 'ի տարակուսութե մնասէ · այլ ամենեքեան վայելեսցեն

ցեն զիմացումն և զօրութիւն երկնաւորան
և սիրալիր գրգոյս այսմիկ։ Կամակցութեամբ
և հաւանութեամբ մեծաւորաց. և սրբագրու
թեամբ ումեմն չնչին բանասիրի։

Թուին Քի 1701. և ըստ հայոց ՌՃԾ ին
'ի մարտի ԻԶ ին։ Բայց երբեւ անկեալ աղա
չեմ զամենեսին զի սիրով ընդունիցիք զսա
և միոյ յիշման առ Տր. ըմբռն համարեսջիք
զմատակարարսն և զաշխատողս և զնպաստ
հասողսն 'ի շարադրութեան և 'ի տպութեան սորին
և որք յիշէք յիշեալ լիջիք 'ի Քրիստոսէ։
Խանդակաթ սիրով ընթերցողք երբ խան
դակաթ լինիք սովաւ առ սերն յի. հաւէք
'ի նպաստ և օգնութիւն նպաստելոցն սորին։
Միով հայր մեղայիւ և ողջունիւ Ամէն։
Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի ա
նուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին
կամք քո որպէս յերկինս և երկրի. զհաց մեր
հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ
զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց
պարտապանաց, և մի տար զմեզ 'ի փորձու
թիւն. այլ փրկեա 'ի չարէն զի քո է արքայ
ութիւն զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն։

Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ
քեզ. Օրհնեցեալ ես դու 'ի կանայս, և
Օրհնեցեալ է պտուղ որովայնի քո Յս։
Սրբուհի մարիամ, մայր Այ. բարեխօսեա
վն մեր մեղաւորացս, այժմ և 'ի ժամու մա
հու մերոյ. Ամէն։